



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1898

Ա Պ Ր Ի Լ

1898 № 4

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	Երես	
1 ԱՐԱՍԽԱՆՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ.	403	Խօսէք աշխատէ՛ք ինչպէս գրում էք:
2 ՎԻԿՏՈՐ ՀԻԻԳՈՅԻՑ՝ Ա. ԽԱՏՈՒՐ.	407	Մանուկ (բանաստեղծութիւն):
3 ՀԱՅՆԷԻՑ՝ ԱՏՈՄ ՇԱՀԷՆ.	309	Բանաստեղծութիւններ: (Շար.)
4 ԳԵՄԻՐՃԵԱՆ, ԳԵՐԵՆԻԿ.	434	Կուրի ամիսն (բանաստ.):
5 ՄԱՆԻԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.	435	Խորտակած կեանք (վէպ, շար.):
6 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻՆՏԻՔ.	454	Յոյնած ծովը (բանաստ.):
7 ՉԵԽՈՎ, ԱՆ Պ.	455	Տանք (պատմածք):
8 ՄԵԼԻՍԵՅԵԱՆՑ, ՅԱԿՈԲ.	467	Սև ծովի ամիսին I.
9 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ.	477	Էտիւքիսի զաղափարը (շար.):
10 ՄԱՐԻ, ՆԻԿ.	489	Հալ վրացական լարաբերութիւնները անդիարում:
11 ՄԱՐ ՅԱՐ.	518	Շանթի «վերթին» վէպը:
12 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	526	Քեանքի ակնանքի տեսարաններ:
13 ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ.	533	Եկմալեանի ներդաշնակած «Պատա- րագի երգեցողութեան» առթիւ:
14 ՎԱՐԴԱՆՆԵԱՆՑ, ԳՐ.	535	Զուլի «Պարիզ» վէպը:
15 ԱՐԱՍԽԱՆՆԵԱՆՑ, Ա.	542	Ժամանակակ. Տեսութիւն:— Քաղա- քային ինքնավար. Կովկասում:
16 <i>Տարաբաշի Լուս.</i>	546	Մոլլի բանաստեղծը (Ալվազովսկի):
17 ՍԵԼԵԱՆ, Հ.	551	Թատրոնի շուրջը, XVIII
18 Շ.	554	Քաղաք. Տեսութիւն:— Խաղանոս-ամերի- կական պատերազմը:— Մարտագործ Արևելք:
19 ԽՐԲ.	559	Զանազան լուրեր:

Յայտարարութիւններ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротшильда, Гол. пр., а. № 41.

1898

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 4 1898

Ա Պ Ր Ի Լ

1898 № 4

ՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Կ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография М. Д. Ротиніанца, Гол. пр. д. № 41.

1898

საქართველოს

საგარეო საზღვარების დაცვის

სახელმწიფო

სახელმწიფო

სახელმწიფო

სახელმწიფო

Дозволено цензурою. Тифлиς, 25-го Марта 1898 г.

სახელმწიფო

სახელმწიფო

სახელმწიფო

სახელმწიფო

სახელმწიფო

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Թագաւոր Կայսրը, այս տարւայ մարտի 26-ին, հաստատել է մինխտորների կոմիտեի օրագիրը, որ հիմնւած է ամենահպատակ՝ 1) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի 1897 թւի զեկուցագրի և 2) Բագւի, Քութայիսի, Քիֆլիսի և Երևանի նահանգների ու Կարսի շրջանի դրութեան մասին 1897 թ. հաշիւների վրայ և որով կարգադրւած է՝

I. Թոյլ տալ Կովկասի սահմաններից Թուրքիա վերադառնալ, առանց պահպանելու մաքսային ձեւականութիւնները, այլ միայն տեղական ոստիկանութեան զլխաւորների վկայագրերով՝ Թուրքահայաստակ հայ գաղթականներից նրանց, որոնք ցանկութիւն կը յայտենն օգտւիլ չիշեալ թոյլտուութիւնից:

II. Տալ իրաւունք Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ 1) սոյն Բարձրագոյն հաւանութեան օրից մի տարւայ ընթացքում հեռացնել իրեն յանձնւած երկրի սահմաններից բոլոր թրքահայաստակ հայ գաղթականներին, որոնք ցանկութիւն չեն յայտնի օգտւիլ մինխտորների կոմիտեի ներկայ որոշման I կէտով սահմանած թոյլտուութիւնից, տալով կարօտեալներին՝ ըստ իւր հայեցողութեան՝ ճանապարհածախս նրանց համար հաւաքած նւէրներից և 2) յայտարարել այս մասին անյապաղ ընդհանրութեան գիտութեան համար:

ԽՕՍԼԻՔ ԻՆՉՊԵՍ ԳՐՈՒՄ ԻՔ

Հայոց նորագոյն գրականութիւնը գրեած է անձուկ վիճակի մէջ ընթերցողների այն շատ փոքրիկ կոնտինգէնտի պատճառով, որը զիմուժ է հայոց գրականութեան: Այդ հանգամանքը վերջ ի վերջոյ մահաուրիթ կը լինի հայոց գրականութեան համար, որովհետեւ սորա ծաղկումը մեծապէս կախած է այն ծաւալից, որ նա կարող է ունենալ: Գորոշը գրում է ընթերցողների համար, և ուր սոքա պակասեն—կը սահմանափակի նաեւ գրականութեան աչլ և աչլ ճիւղերին նւիրողների թիւը, կը սահմանափակի տպագրած գրքերի թիւը, իսկ տպագրողներն էլ կը հրատարակեն այնքան նւաղ քանակութեամբ, որ նոցա վաճառման արդիւնքը չի կարող գոհացնել հրատարակողներին ու հեղինակներին: Հետեանքը լինում է՝ կրճատումն գրականական գործունէութեան մինչև ծառայող minimum-ը, մինչև այն փոքրագոյն չափը, որից ներքեւ իջնելով՝ աչլ ևս անհնարին է որ և է գրականութիւն պահպանել, որ արժանի լինի աչդ անւան: Բայց հարկադրւած լինել կրճատել գործունէութիւնը մինչև աչդ նւաղագոյն չափը—աչդ արդէն ինքն ըստ ինքեան վտանգաւոր է, որովհետեւ աչդ նւաղագոյն չափի սահմաններում չի կարող մարդկային միտքը իւր բազմակողմանի ճիւղերով և իւր լիութեամբը արտայայտել:

Հայոց գրականութիւնը չի կարող յաւակնութիւն ունենալ մեծ ազգերի ճոխ գրականութեանը հասնելու. բայց ձգտել այն հանգամանքները ստեղծելու համար, որոնց մէջ գործելով գրականութիւնը կարող է յառաջադիմել,—ահա թէ ինչն է նւիրական պարտականութիւն աչդ գրականութեանը ներկայումս ծառայողների համար և ներկայիս սերնդին պատկանող այն անհատների համար, որոնք արդէն սովորել են գնահատել հայկական գրականութեան արժէքը:

Դոցա թիւը ներկայումս շատ տասնեակ հազարներ չեն,—եթէ այդքան լինէր՝ մեր գրականութիւնը շատ աւելի առաջ գնացած կը լինէր. բայց դոցա թիւը կարելի է զէթ մի-երկու հազարի որոշել:

Քանկագին գանձ, թանկագին զրամագլուխ, որի արդիւնաւորելը հայ գրականութեան համար միմիայն իրենցից է կախած: Եւ այդ արդիւնաւորելուց կախած է հայկական զրականութեան ամբողջ ապագան!

Ինչում պիտի կայանայ այդ արդիւնաւորելը? Հայերէն ընթերցողների թիւը շատացնելու մէջ այն մի քանի հազարների ձեռքով, որոնք ներկայումս, թէ որպէս գրողներ և թէ որպէս ինտելիգէնտ ընթերցողներ, այսպէս կամ այնպէս նախընտրած են հայկական գրականութեան: Եւ դորա համար պահանջում է միմիայն մի սովորութեան փոփոխութիւն, որի մասին և խօսք է լինելու:

Կանոնաւոր և զարգացող գրականութեան յատուկ է զրական լեզուն, որը իւր կատարելութեան համար պարտական է հէնց նոյն այդ գրականութեան: Յիսունական լեզվաններից այդ գրական լեզուն սխտմ է զարգանալ, և դորա զարգացումը և կանոնաւորելու պրոցէսը շարունակում է նաև այսօր: Այդ զարգացման յաջողութիւնը ուղիղ չարաբերական էր գրականութեան յատկութեան. ճոխ մտքերը յառաջացրել են նաև գրական լեզվի ճոխութիւն — իւր ընդունած բառերով, դարձեալներով ու տերմիններով, որոնց համար իբր աղբիւր ծառայել են թէ ժողովրդական բարբառները, թէ հին գրաբարը և թէ քաղաքակիրթ ազգերի գրականութիւնների մէջ հաւասարապէս ընդունած բառերը: Եւ, բացի բառերից, մեր գրական լեզուն, մտքերը ճշգրտութեամբ և նրբութեամբ արտայայտելու համար, պէտք է զոհէր մեր ժողովրդի արտայայտելու ձևերից ոմանք և, դորա փոխարէն՝ համակերպէր այն ձևերին, որոնց գորազանցութիւնը փորձած է մեզինց շատ աւելի առաջ գնացած ազգերի կողմից:

Եւ այս ամէնը եղել է մեր դրական լեզվի ընտանի զարգաց-

ման ճանապարհը, և թէև զարգացման այդ եղանակի դէմ եղել են արանջողներ և նոյն իսկ բողոքողներ՝ ոմանք ընդդէմ գրարարի, ոմանք ընդդէմ օտար բառերի, ոմանք էլ ընդդէմ ժողովրդական ոճերի, բայց սա հաստատ է, որ բոլոր յիշեալ փոխառումները՝ թէ ժողովրդականից, թէ գրարարից և թէ օտար լեզուներից՝ եղած են անհրաժեշտութեան արդիւնք. և այժմ հայոց գրական լեզուն իւր մեծ գծերով արդէն այնքան որոշւած է, որ նորա այսուհետև ունենալիք զարգացումը չի փոխելու նորա այժմեան ընդհանուր կերպարանքը, այլ գալու է միայն նորան նոյն ուղղութեամբ աւելի կա տարեւադործելու ու աւելի հարստացնելու:

Մի կողմից ուրեմն մեր նոր գրականութիւնը մշակել է իւր լեզուն: Բայց միւս կողմից մենք տեսնում ենք մի հանգամանք, որը ծառայում է այդ նոյն գրական լեզուն չքացնելու: Եւ հանգամանքի դառնութիւնը նրանումն է, որ մեր գրական լեզուն չքացնողը հէնց նոյն այն հասարակութիւնն է, որի սրտին այնքան մօտ է հայկական գրականութիւնը, հետևապէս և սորա մշակած լեզուն: Ինչպէս?

—Ահա այսպէս. մեղնում կարելի է ասել որ չկայ մի հասարակութիւն, որի համար մեր գրական լեզուն լինէր նաև մայրենի լեզու: Ծանօթ լինելով ամբողջ Անգրկովկասի հայութեան՝ մենք ցաւելով պէտք է վկայենք, որ նոյն այն զաւառաքարքառները, որոնցից մեր գրական լեզուն ստանում է իւր հիւթերից կարեւորագոյնը, խնդրւած է պահում ժողովրդի բերանում մեր գրական լեզուն, որովհետև բոլոր գաւառներում և բոլոր դասակարգերի մէջ խոսակցական լեզուն թէ հրապարակում և թէ ընտանիքներում ոչ թէ գրական հայերէնն է, այլ տեղական բարբառը: Եւ այդ այդպէս է ոչ միայն տգէտ ամբօխի նկատմամբ, այլ և գրական լեզուն գիացողների, գրականութիւնը յարգողների ու նորան կրկրպագողների նկատմամբ:

Երևանում խօսում են Երևանեան բարբառով՝ սորա հոգարաչափ թրքական բառերով. մոէք Ղարաբաղ, — ամենուրեք, նոյն իսկ զարգացած ընտանիքներում, խօսում են Ղարաբաղի բարբառով. գնա-

ցէք Գողթան — և կը գտնէք բոլոր ընտանիքներում զօկերէնը միակ տիրապետող. Շամախում, Գանձակում — իրենց յատուկ բարբառներով. Ալէքսանդրապոլ, Ախալցխա, Ախալքալաք — ունին իրենց բարբառը, և այլն: Կրկնում ենք, մեր խօսքը միմիայն տգէտ ամբոխի մասին չէ, այլ մանաւանդ այն անձերի, որոնք սնւում են հայոց գրականութիւնով: Պատեցէք Քիֆլիսի հայկական խաւերը, — և շուք կը հանդիպէք այս ցաւալի երևոյթին, որ միւլնոյն գաւառից եկած. ները, իրար հանդիպելիս, անպայման խօսում են իրենց գաւառաբարբառով և խորշում են իրար հետ զրուցել գրական լեզուով:

Ահա վտանգը ուր է թագնւած. մինչդեռ ամեն մի ինտելիգէնտ Փրանսիացի, ինտելիգէնտ գերմանացի, անգլիացի, ամեն մի ինտելիգէնտ ռուս խօսում է նաև իւր տանը այնպէս, ինչպէս կըզրէր, այնպէս, ինչպէս նոցա գրական լեզուն է թելադրում, — հայերիս մէջ մենք ականատես ենք հակառակ երևոյթի — հայերը խօսում են իրենց սահմանափակ բարբառներով և հայերէնը կարողանում են սովորել միայն գրքերից: Գրական լեզու մէջ ընդունւած բառերը, որոնք չկան բարբառներում, մնում են մանուկներին անյայտ: Նոցա համար գրական հայերէնը մի նոր տեսակի գրաբար է, զրոյց լեզու, որը պէտք է առանձին սովորել, այն էլ եթէ միայն սովորեն...

Յիսնական թականների միջերգը, երբ միայն նոր սկսում էր հաստատուել աշխարհաբարը, գրականութեան համար հոգս տանողները յայտարարեցին — զրենք այնպէս ինչպէս խօսում ենք. այսօր, մօտ կէս դար անց՝ մենք, այդ նոյն գրականութեան կեանքը աստհովիւ. համար, ստիպւած ենք զոչել — խօսենք այնպէս ինչպէս զրում ենք:

Մի սովորութեան փոփոխութիւն է, որ մենք պահանջում ենք ներկայ սերնդից: Եւ այդ նոր սովորութեան գործադրութիւնը պատկանում է այն մի երկու հազար հասակաւորներին, որոնք մեր նոր գրականութեան ջարդը ճանաչողներն են. և այդ գործադրութիւնը նոքա պիտի անեն, սկսելով մանուկներից, որոնց մայրենի լեզուն պիտի լինի ոչ թէ գաւառաբարբառը, այլ գրականը:

ՄԱՆՈՒԿ

(Ազատ Թարգմանութիւն)

ՎԴՈՏՈՐ ՀԻՆԳՕՂԻՑ - Ալէքսանդր ծատուրեանի

Այստեղից անցան անգութ տաճիկներ...
Ահա ամեն ինչ քարուքանդ, աւեր,
Քիտսը—գինու այգ երկիրն առատ,
Որ առաջ այնպէս ուրախ էր, ազատ.
Քիտսը, որն այգիներ, դաշտեր
Ոռոգում էին կապուտակ ջրեր,
Եւ ծովի ափին կոչսեր փափկատուն
Պար բռնած՝ հայտւմ ծովի հայելուն,—

Այդ երկիրն այժմ դարձած աւերակ,
Միայն հատած է այնտեղ մէն-մէնակ
Մի յոյն երեխայ չոր քարափներում,
Որբ, անտիրական, տխուր ու տրտում.
Եւ դաժան քամուց, անձրեւից նորան
Տալիս է այնտեղ անշուք ապաստան
Մի չոր մօրենի—նորա պէս մենակ,
Մուսցւած ահեղ ջարդի ժամանակ
Յ՛, խզճուկ մանուկ, որ ոտաբոբիկ
Այդ լերի ժայռերում հատած եւ լսիկ,—
Ասն, ի՞նչ տամ քեզ, որ քո աչիւրից
Նողշողուն, որպէս կապուտակն երկնից,
Ֆամաքի արցունք, և վարդ-շրթունքիդ

Խաղաչ մանկական երջանիկ ժըպիտ,
 Եւ զու մոռացած աղէտ, փոթորիկ,
 Նորից ձեռք առնես սիրած խաղալիկ:

Ասան ինձ, ասան, ինչ տամ քեզ, մանուկ,
 Որ ցրւին անհետ քո թախիծն ու սուգ,
 Որ ճոխ մազերիդ ալեծովի հիւսեր
 Դարձեալ զարդարեն քո ձերմակ ուսեր,
 Եւ ոչ թէ անշուք կախ ընկած այլպէս
 Մութ սաւերով պատեն քո սիրուն երես,
 Նման ուռենու լալկան ոստերին,
 Անգոր ու տխուր խոնարհւած գետին:

Ինչո՞վ փարատեմ քո լացն ու մոբմոք...
 Խօսիր, սիրելիս: Պարգև տամ արդեօք
 Քեզ սիրուն ծաղիկ—շուշանն Իրանի,
 Թէ անոյշ պտուղն այն Թիւրա ծառի,
 Որ միշտ եղեմի դրախտում աճելով
 Եւ հետո՛ւ, հետո՛ւ սուսեր սփռելով,
 Նմոյցն հրեղէն նորա սուտերի տակ
 Հարիւր տարի է սըլանում արագ...

Պուցէ զու ժպտանս, թէ նւէր տամ քեզ
 Փոքրիկ բլբուլին, որի երգն այնպէս
 Հնչում է քնքոյշ, շոյճում լսելիք...
 Օ՛, ասան—ծաղիկ, պտուղ թէ թռչնիկ
 Ուզում է սիրտըդ, մանուկ նազելի.
 «Բարեկամ»—ասաց նա դառն, թախծալի՛,
 Արեւելք յառած աչերն կտպուտակ,—
 «Ինձ պէտք է կեանք, պէտք է յաղթանակ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ՔԵՐԹԻԱԾՆԵՐ

ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷԻ: Թարգմանութիւն Ատոմ Շահէնի

(Շարունակութիւն ¹)

Դ Ա Ր Զ

(Heimkehr)

Երկաստարդութեան քանաստեղծութիւններ

Ա

Կեանքիս մէջ ատենով, աւանդ, շատ մթադին շողաց անուշ պատկեր մը. հիմա աներևութացած է անուշ պատկերը, ու ես խաւարով շրջապատուած եմ:

Տղաները, մութին մէջ, անհանգիստ կը լինին, կը վախնան, և իրենց անձկութիւնը փարատելու համար՝ կը սկսին բարձր ձայնով երգել:

Ես ևս, չիմար մանուկ, խաւարին մէջ կ'երգեմ այսօր. թէև երգս ներդաշնակօրէն չի հնչեր, կ'ազատէ իս սակայն սրտիս տագնապներէն:

¹) Տէս Մուրճ 1893 թ. № 1, 2—3:

Բ

Զգիտեմ ինչ է այս տխրութիւնը որ կ'ընկճէ իս: Հին ժամանակի պատմութիւն մը կայ, որ բնաւ չեմ կրնար հեռացնել մտքէս:

Օդը զով է, օրը կը մթնէ և Հռենոս կը սահի լռիկ. լեռան գագաթը մարը մոնող արեւին վերջին շողերովը կը փայլի:

Աղջիկներուն ամենէն գեղեցիկը նստած է հոն վերեւը, հրաշալիքն. կը փողփողին իր ոսկի զարդերը. իր ոսկի մազերը կը սանտորէ ան:

Ոսկի սանտրով մը կը սանտրէ ան իր ոսկի մազերը, և երգ մը կ'երգէ, երգ մը յափշտակիչ և անսովոր քաղցրութեամբ:

Մակոյկվարը իր փոքրիկ մակոյկին մէջ՝ խենթ ցաւով մը բռնւած կը զգայ ինքզինքը. չի տեսներ անդունդներն ու ժայռերը, լեռանը վրայ նստած աղւոր աղջիկէն զատ ուրիշ ոչինչ չի տեսներ ան:

Կարծեմ, ալիքները վերջը կլլեցին մակոյկվարն ու մակոյկը. ահա թէ ինչ ըրաւ Ղործելէյն իր երգով:

Գ

Սիրոս, իմ սիրոս տխուր է. մայիս ամիսը սակայն կը փայլի իր զւարթ պայծառութեամբը: Թմբի մը կրթնած՝ կեցեր եմ հին հրապարակի մը վրայ:

Վարը, քաղաքին գետակը կը հոսի կապուտակ, հանդարտ ու լռիկ. տղայ մը իր մակոյկովը գետը կը մտնէ և երգ մը կը մրթմրթայ:

Գետին միւս կողմը կը բարձրանան ու իրար կը խառնւին՝ նկարչային անկարգութեամբ մը՝ վիլլաներ, պարտէզներ, մարդիկ ու եղեր, և մարգերն ու անտառը:

Դեռառի աղախիններ ճերմակեղէն կը փռեն և կը վազվզեն մարգին վրայ: Ջրաղացքը արեւի ճառագայթի մը մէջ պարել կուտայ իր աղամանդեայ փողիները. անոր հեռաւոր մրմունջը կը հասնի մինչև իս:

Հինկեկ գորշ աշտարակի մը վրայ դիտանոց մը կայ. կարմիր հագուստով դեռատի պատանի մը ման կուգայ պատնէշին վրայ:

Կը խաղայ ան իր հրացանին հետ, որ արեւին դէմ կը փողփողի. կ'ուղղէ զէնքը, նշան կ'առնէ... Կը փափաքէի որ մէկ հարւածով իս մեռած գետին փռէր:

Դ

Կ'անցնիմ անտառէն ու կ'արտասուեմ Տորտիկը ¹⁾ Թառած է բարձր ճիւղերուն վրայ. կը ցատկոտէ ան ու. անուշիկ կ'երգէ. լինչո՞ւ տխուր ես:

Քոյրերդ, ծիծեռնակները կ'ըսեն քեզի թէ ինչո՞ւ տխուր եմ, սիրելիս. անոնք կը բնակին սիրուն փոքր բոցներու մէջ այնտեղ, ուր սիրելիս պատուհանները կը գտնւին:

Ե

Գիշերը խոնաւ է և մրկիտ, երկինքը՝ անասող: Անտառին խորը, լռիկ թափառելով կ'երթամ ծառերու տակէն, որոնց տե-
րէնքը կը խշրտան:

Հեռւանց պզտիկ լոյս մը չպիտի երևնայ այս կողմէն. հոն շատ տխուր է:

Վոյր մեծ-մայրը նստեր է իր կաշեայ թիկնաթոռին մէջ. չա-
րաշուք, անշարժ, քարէ արձանի մը պէս, ու բերնէն բառ մը չելլեր:

Անտառապահին շէկ մազերով տղան տուն կ'երթայ կուգայ. հրացանը պատէն կը կախէ, և բարկութեամբ ժպիտէ քահքահ մը կ'արձակէ:

Գեղանի մանող աղջիկը կուլայ և արցունքներով կը թրջէ դեր-
ձանը. իր ոտքերուն տակ, կաշկանձելով, կը կծկւի իր հօրը շունը:

Զ

Ճամբորդութեանս մէջ, երբ դիպածով կը պատահէի սիրելիիս ընտանիքին, անոր փոքր քրոջը, հօրը, մօրը,—իս ուրախութեամբ կ'ընդունէին:

Լուրեր կ'ուզէին ինծմէ, ու իսկոյն կ'ըսէին որ շատ փոխւած էմ, միայն դէմքս է տփոյն:

Տեղեկութիւններ կ'առնէի հօրաքոյրներու, հօրաքրոջ աղջիկ-
ներու և ուրիշ շատ մը ձանձրալի ընկերներու մասին, ինչպէս և շանը վրայ ալ, որ անուշ մը կը հաջէր:

Տեղեկութիւն կ'ուզէի նաև արդէն ամուսնացած սիրելիիս մա-

¹⁾ Grive.

սին, և բարեկամաբար կը պատասխանէին ինծի թէ ան տղաբերքի մէջ է:

Ու ես բարեկամաբար կը շնորհաւորէի, և սիրուն ժպիտով մը կ'աւելցնէի որ բարեհաճին սիրալիր կերպով հազար անգամ բարեւել իմ կողմէս:

Փոքր քոյրը կ'աղաղակէր յանկարծ. «Այն աղւորիկ, այն սիրուն շնիկը մեծցաւ ու կատընցաւ. Հռենոսի մէջ խեղդեցին ան:»

Պզտիկը իմ սիրելիիս կը նմանի, մանաւանդ երբ ժպտի. նոյն աչքերն ունի մօտ ալ, որ իս թշուառացուցին:

Է

Նստած էինք ձկնորսին տունը և ծովը կը դիտէինք: Իրիկան մառախուղները կը բարձրանային և զէպի երկինք կ'ելլէին:

Հետզհետէ վառեցին փարոսին լապտերները. հեռուն տակաւին նաւ մը կ'երևնայ:

Փոթորիկներու, ալեկոծութիւններու մասին կը խօսէինք, նաւազներուն և երկնքին ու ջուրին մէջ տարուբերող իրենց կեանքին վրայ կը խօսէինք, իրենց անհանդարտ կեանքին, որուն խառն է նաև ուրախութիւնը:

Կը խօսէինք հեռաւոր ծովեզրերու, հարաւին ու հիւսիսին և այն այլանդակ մարդոց վրայ որ կը բնակին այն երկիրներուն մէջ, ու այն այլանդակ բարքերու մասին որ կը տիրեն այնտեղերը:

Գանգէսի եզերքներուն վրայ՝ անուշ բուրումներ և լոյսեր միայն կան. հոն հսկայ ծառեր կը ծաղկին ու գեղեցկադէմ մարդիկ լուռ կը ծնրադրեն լուտաս ծաղկին առջև:

Լաբոնիոյ մէջ մարդիկ աղտոտ են, փոքրահասակ, ճզմած գլուխներով և ահագին բերաններով: Կրակին շուրջը կը տաքնան անոնք, ձուկ կ'իփեն, կը ծեծկւին և կը պոռպուան:

Աղջիկները լրջութեամբ մեզ մօտիկ կ'ընէին, և վերջը ամենքն ալ լռեցին: Նաւը այլ ևս չէր տեսնուեր. գիշերը շատ մթցեր էր:

Ը

Ձկնորսին աղւոր աղջիկը, ցամաք հանէ նաւակդ: Քովս եկուր, նստէ այստեղ, ու խօսակցինք իրարու ձեռք բռնած:

Սրտիս վրայ դիր սիրելի գլուխդ, և ոչ մէկ բանէ մի՛ վախ-
նար, դո՛ւն որ ամեն օր ինքզինքդ անվրդով կը յանձնես կատաղի ծովին:

Սիրտս ծովին շատ նման է: Ան ալիքներ, խութեր և փոթո-
րիկներ ունի, ու շատ ալ թանկագին մարգարիտներ կը քնանան
իր խորքը:

Թ

Լուսինն ելած է ու կը լուսաւորէ ալիքները: Սիրելիս առած
եմ բազուկներուս մէջ, և մեր սրտերը միասին կը բաբախեն:

Սիրուն աղջկան բազուկներուն մէջ կը հանգչիմ միայնակ, ծով-
եզրին վրայ: Է՛նչ կը կարծես լսել հովի մռնչիւնին մէջ: Ինչո՞ւ
կը դողդղայ սպիտակ ձեռքդ:

—Ձէ, լսածս հովի մռնչիւն չէ. ծովի ծաղիկներուն երգն է
ան, այն աղջիկներուն, իմ քոյրերուն, որոնք Ովկիանոսը ատենով
կուլ առած է:

Ժ

Հովը կը փչէ իր փողին մէջէն. ջուրի թաթառը կը խարա-
զանէ ալիքները կրկնակի հարւածներով, և ալիքները կ'ոռնան,
ալիքները կը մռնչեն ու կը գոռան:

Վերի մուկի ամպերէն հեղեղներ, անձրևի հեղեղներ կը թա-
փին. կարծես ծեր Գիշերը կ'ուզէ կլլել ծեր Ովկիանոսը:

Որորը ¹⁾ կուգայ կը կծկի կայմին վրայ և պզտիկ ճիւղեր, աղի-
ողորմ հեծեծանքներ կ'արձակէ: Խոր անձկութիւններ կը զգայ ան և
կը պատրաստուի դժբախտութիւն մը գուշակել:

ԺԱ

Փոթորիկը կըսկսի խաղալ նաւի կախ անկողնին հետ. կը սուլէ,
կ'ոռնայ, «հը՛շշ» կը մոմռայ փոթորիկը. ինչպէս նաւակը կը պարէ:
Գիշերը զւարթ է և ահաւոր:

Կատաղի ծովը ջուրի կենդանի լեռ մը կը ձևացնէ: Հոս խա-
ւաշուտ վիհ մը կը յօրանջէ. հոն ալիքները կը բարձրանան ճերմակ
աշտարակի մը նման:

¹⁾ Mouette, թռչուն:

Նաւին խորէն ճիւեր, անէծքներ և աղօթքներ կը լսէին: Պինդ փարած եմ՝ կայմին ու ինքնիրենս կ'ըսեմ. «Սակայն ես հանգիստ վիճակ մը պիտի ունենայի տանս մէջ»:

ԺԲ

Մութը կը կոխէ. մառախուղը կը ծածկէ ծովը: Ալիքները կը շաչեն խորհրդաւոր կերպով: Հեռուն, կոհակներուն ծոցէն կերպարանք մը կը կանգնի:

Ծովի պարիկն ¹⁾ է որ դուրս կ'ելլէ ալիքներէն. կուգայ մօտս կը նստի ան, ծովեզրին վրայ: Կիսովին բաց քողերու տակէն կ'երևնան իր սպիտակ ուսերը:

Կը գրկէ իս իր բազուկներովը և կը սեղմէ՝ ցաւցնելու աստիճան. «Շատ կը սեղմես դուն իս, ո՞վ ծովի գեղեցիկ պարիկ»:

—Այո, բազուկներովս կը գրկեմ, ուժով կը սեղմեմ՝ քեզ, տաքնալ կ'ուզեմ՝ քու մօտդ. շատ ցուրտ է այս գիշերս:

Լուսինը դալկահար կ'երևնար մըրկալից ամպերուն վերևը. «Նայւածքդ հետզհետէ աւելի կը պղտորի ու կը թրջի, ո՞վ ծովի գեղեցիկ պարիկ»:

—Ա՛լ աւելի չի պղտորի ու չի թրջի Նայւածքս, թաց ու պղտոր է ան, որովհետեւ ծովէն դուրս ելած ատենս՝ կաթիլ մը ջուր մնաց աչքերուս մէջ»:

Որորները՝ ողբական ճիւեր կ'արձակեն. ծովը ապառաժներուն կը զարնէ՝՝ գոռալով: «Յուզւած է սիրտդ կատաղի բաբախումներով, ո՞վ ծովի գեղեցիկ պարիկ»:

—Սիրտս յուզւած է կատաղի բաբախումներով, կատաղի բաբախումներով յուզւած է սիրտս. որսվհետեւ կը սիրեմ՝ քեզ այնքան, որ կարելի չէ ըսել, քեզ, իմ գեղեցիկ սիրահարս Ազամի ցեղէն»:

ԺԳ

Առաւօտուն տանդ առջևէն անցած ատեն, ուրախ կը լինիմ, աղւորիկս, երբ քեզ սլափող հանին առջև տեսնեմ:

Սևորակ աչքերովդ ինձի կը նայիս՝ կարծես սիրտս քննելու

¹⁾ Flé.

համար. «Ո՛վ ես դուն, և ի՞նչ բան կը պակսի քեզի, վշտահար դէմքով օտարական:

—Գերման բանաստեղծ մըն եմ, գերմանական բոլոր դաւառներուն մէջ ծանօթ: Երբ ամենէն հռչակաւոր անունները թւեն, կը թւեն նաև իմ անունս ալ:

«Եւ ինձի պակսածը, անդորիկս, չի գտնւիր բոլոր գերմանական դաւառներուն մէջ: Երբ ամենէն դժնդակ տառապանքներու մասին խօսին, կը խօսին նաև իմ ալ տառապանքիս վրայ»:

ԺԴ

Հեռուն ծովը կը շողար մարը մանող արևուն վերջին ճառագայթներուն տակ. նստած էինք ձկնորսին մենաւոր տանը առջև, համր ու միայնակ:

Մառախուղը կը բարձրանար, ալիքը կ'ուռեցնէր իր ծոցը. որորը մէկ կողմէն միւսը կը թռչտէր, և արցունքներ, սիրոյ արցունքներ կը թափւէին քու աչւններէդ:

Տեսայ որ ձեռքիդ վրայ կը թափւէին արցունքներդ, նետուցայ ծունկերուդ. սպիտակ ձեռքիդ վրայ կը սեղմէի շրթունքներս ու կը խմէի արցունքներդ:

Այդ ժամէն ի վեր մարմինս կը ծիւրի և հոգիս անհաշար կը մեռնի.—Այն դժբախտ կինը թունաւորեց իս իր արցունքներովը:

ԺԵ

Հորիզոնէն վարօք, նման մառախուղին կերպարանած պատկերներուն, կ'երևնայ քաղաքը՝ իր աշտարակներով՝ ծրարած իրիկւան վերջալոյսին մէջ:

Պաղուկ ու թեթև հով մը կը խորշոմեցնէ գետին գորշ երեսը. մակույկիս մէջ նստող նաւաստին կը շարժէ թիակները՝ միակերպ շարժումով մը:

Արևը անգամ մըն ալ դուրս կը հանէ իր ճառագայթները Սուերին գրկէն և կը ցուցնէ ինձի այն տեղը, ուր տուննով կորսնցուցի ան, որը ամենէն աւելի կը սիրէի:

ԺԶ

Կը բարեւեմ քեզ, մեծ և խորհրդաւոր քաղաք, որ երբեմն ծոցիդ մէջ կը պահէիր սիրելիս:

Խօսեցէք, աշտարակներ և դռներ, ուր է իմ սիրելին, ես ձեզի վստահացայ ան. պատասխանատու էիք ինծի անոր համար:

Աշտարակները յանցանք չունին. չէին կարող իրենց տեղէն շարժիլ, երբ սիրելիս իր սնտուկներով և խաւաքարտեայ տուփերով յանկարծ քաղաքը թողեր է:

Քաղաքին դուռներն են որ առանց խօսք մը ըսելու՝ թողած են մեկնի ան. զարմանքէն բաց մնացեր են՝ գեղանի յիմարին դուրս ելլելը տեսնելով:

ԺԷ

Իմ երբեմնի ճամբէս կ'երթամ նորէն, այն փողոցներով որ շատ լաւ կը ճանչնամ. սիրելիս տունէն կուգամ, որ այնքան տխուր և լքած է այսօր:

Ա'իս, ինչքան նեղ են փողոցները, ինչքան կարծր է սալաշատակը: Կարծես այս տուները պիտի ջախջախեն իս: Աճապարանքով խոյս կուտամ շուտ մը:

ԺԸ

Մտայ այն սրահը, ուր սիրելիս ինծի հաւատարիմ լինել երդւնցաւ: Այն տեղը, ուր երբեմն թափեցան իր արցունքները, տեսայ օձեր որ կը սողան:

ԺԹ

Լուռ է գիշերը, փողոցները հանդարտ են. սա է այն տունը ուր սիրելիս կը բնակէր: Շատոնց է որ քաղաքը թողած է ան. բայց տունը միշտ միևնոյն տեղն է:

Տարօրինակ բան. հոն մարդ մը կանգնած է, նայածքը յառած երկնքին, և որ կը զալարէ ձեռքերը սաստիկ կսկիծի մէջ: Սարսուցի անիկա տեսնելով... Լուսնակ լոյսով ճանչցայ որ ես եմ այդ մարդը:

Ո՛վ դուն, գունատ և գիշերայած ընկեր, ինչո՞ւ կը հետեւիս

սիրոյ լոյն ցաւերուն որ, այս միեւնոյն տեղը, այնքան գիշերներ տանջեցին իս:

Ի

Ինչպէս կրնաս դուն հանգստանալ հանգարտ, գիտնալով որ դեռ կ'ապրիմ ես: Հին բարկութիւնս կ'արթննայ, և ահա պիտի լսորտակեմ լուծս:

Գիտե՞ս դուն հին երգը: Օրին մէկը մարդ մը կուգայ՝ կէս գիշերին իր սիրելին գտնելու, և կը քաշէ կը տանի ան դէպի գերեզման: Հաւտան ինձի, ո՞վ աղւոր աղջիկ, աղւոր աղջիկ հրաշալիապէս աղւոր, կ'ապրիմ ես ու բոլոր մեռնողներէն աւելի զօրեղ եմ:

ԻԱ

Դեռատի աղջիկը կը քնէ իր սենեակին մէջ. լուսինը հոն կը նայի դողդալով: Դուրսը, ձայներ ու նւագարաններ վալսի եղանակ կ'երգեն:

Պատուհանէն տեսնել կ'ուզեմ թէ ո՞վ կրնայ այսպէս հանգըստութիւնս վրդովել:—Կմախք մը կայ հոն, որ ջութակով կը նւագէ ու կը պարէ:

Ատենով դուն ինձի խոստացար հետս պարել, ու խօսքդ չպահեցիր: Այսօր գերեզմանոցին մէջ պարահանդէս կայ. եկ՛ուր որ միասին հոն պարենք:

Ջարհուրելի ցանկութիւն մը կը գրաւէ աղջիկը և կը տանի տունէն դուրս. կը հետեւի ան կմախքին, որ կը քալէ իր առջևէն՝ երգելով ու ջութակ նւագելով:

Ջութակ կը նւագէ ան, կմախքը, կը ցատէ, կը կռնչեցնէ ոսկորները, և դէս ու դէն իր գանկովը շատ ու շատ ձախող մեծարանքներ կ'ընէ, լուսնակ լոյսով:

ԻԲ

Խորասուզւած էի տխուր երազանքներու մէջ և ակնապիշ կը դիտէի անոր կենդանագիրը. սիրելի պատկերը սկսաւ շարժիլ և ապրիլ:

Իր շրթներուն վրայ սքանչելի ժպիտ մը երեցաւ, և վշտի արցունքներ շողացին իր աչքերուն մէջ:

Իմ ալ արցունքներս հոսեցան այտերս ի վար:—Ո՛հ, չեմ կըրնար հաւտալ որ կորսնցուցած եմ քեզ:

Իգ

Ի՛նչ անբախտ Ատլաս եմ ես ինքս. աշխարհ մը պէտք է կրեմ, ամբողջ աշխարհ մը վշտերու: Ես կը կրեմ ինչ որ կարելի չէ կրել, ու սիրտս միշտ մօտ է խորտակելու կուրծքիս մէջ:

Ով գողո՞ղ սիրտ, դո՛ւն ես որ այսպէս ուղեցիր: Կ'ուզէիր կամ անհունապէս երջանիկ լինել կամ անհունապէս դժբախտ, ով գողո՞ղ սիրտ, ու հիմա թշուառութիւնն իսկ ես դուն:

Իդ

Կ'երագէի ես, լուսինը տխուր նայւածք մը կը ձգէր երկրին վրայ, և տխուր կը թւէին աստղերն ալ: Երազս տարաւ իս դէպի այն քաղաքը, ուր սիրելիս կը բնակէր շատ տարիներ առաջ:

Տարաւ իս անոր տունը. սանդուխին քարերը համբուրեցի, այն քարերը որոնց դպած են իր փոքրիկ ոտքն ու շրջազգեստին եղերքը:

Գիշերը երկար էր, գիշերը ցուրտ էր, քարերն ալ շատ սլաղ էին. պատուհանին առջև տեսայ սիրելիիս դէմքը՝ լուսնին շողերովը լուսաւորւած:

Իե

Ի՞նչ կ'ուզէ ինձմէ այն մենաւոր արցունքը. տեսողութիւնս կը պղտորէ ան: Հին օրերու արցունք մըն է աս՝ աչքերուս մէջ մնացած:

Այս արցունքը շատ մը փայլուն քոյրեր ունէր, որ բոլորը չքացան գիշերւան և հովին մէջ՝ վիշտերուս և ուրախութիւններուս հետ:

Աւանդ, սէրս ալ փարատեցաւ այն ատենէն ի վեր՝ սին շունչի մը պէս: Մենաւոր հին արցունք, չքացիւր դուն ալ քու կարգիդ:

Իզ

Անշնան տոգոյն լուսինը կ'ելլէ ամպերու մէջէն. զերեզմաննոցին քովը կը բարձրանայ քարոզչին տունը, մենաւոր և հանդարտ:

Մայրը Աստուածաշունչ կը կարդայ. զաւակը աչքերը յառած է կանթեղին. քնէն կէս մը թմրած՝ մեծ քոյրը կը փուփ աթուռին վրայ. փոքր քոյրը կ'ըսէ.

«Աստուածս, ինչպէս ձանձրալի է այստեղ: Մէկը թաղելու են, որ մենք տեսնելու բան մը ունենանք»:

Մայրը կը պատասխանէ կարգալը շարունակելով. «Կը սխալիս, միայն չորս մարդ մեռած են այն ատենէն ի վեր որ հացրդ թաղեցին, հունն, գերեզմաննոցին դռանը մօտ»:

Մեծ աղջիկը կը յօրանջէ. «Ձեմ՝ ուզեր, կ'ըսէ ան, անթուր թենէս մեռնիլ ձեր տանը մէջ: Վաղը Կոմսին մօտ պիտի գնամ, սիրահարւած է ան և հարուստ ալ է»:

Որդին քահնապետ կը ծիծաղի. «Ներք որսորդ կան, որ պանդոկ կուգան կոնծելու. ոսկի շինել գիտեն անոնք, և պիտի սովորեցնեն ինծի իրենց դադտնիքը»:

Մայրը Աստուածաշունչը տղուն դէմին կը նետէ, և գիրքը անոր նիհար գէմքին կը զարնւի. «Ուրեմն, դուն դատապարտւած, մեծ ճամբուն վրայ դո՛ղ մը ըլլալ կ'ուզես»:

Կը լսեն պատուհանի զարնւիլը, ու կը տեսնեն սպիտակ ձեռք մը որ իրենց նշաններ կ'ընէ. մեռած հացրն է ան, որ կեցած է հոն, զո՛ւրսը, քարոզչի իր սև վերարկուն մէջ:

Ի՛նչ

Օղը սոսկալի է. անձրև կուգայ, բուքը կը փչէ, ձիւն կը տեղայ. պատուհանին առջև նստած եմ և մութին մէջ կը նայիմ:

Կը տեսնեմ փայլիլը պղտիկ մենաւոր լոյսի մը որ դանդաղ կը քալէ. իր փոքրիկ լապտերովը պառաւ կին մըն է որ կ'անցնի փողոցէն:

Կուգայ ան, քայնիկէս կը կարծեմ, ալիւր, հաւկիթ և կարագ գնելու. իր սիրական դեռատի աղջկանը համար կարկանդակ մը կ'ուզէ թրել:

Սիրական դեռատի աղջիկը տոնն է, հանգիստ, մեծ թիկնաթուռն մէջ ընկողմանած. կէս քուն, քթթող աչքով մը կը դիտէ լապտերին լոյսը, ու իր մազերուն ոսկի գանգուրները կը ծփան իր անուշ և գեղեցիկ գէմքին վրայ:

ԻԸ

Ուրիշներ կը կարծեն որ շատ կը տառապիմ և սիրոյ ցաւէս կը մեռնիմ. ես ինքս ալ վերջապէս կը սկսիմ միւսներուն պէս կարծել:

Ո՛վ դուն մեծ աչւըներով սիրուն աղջիկ, միշտ քեզի ըսած եմ թէ քեզ ինչքան շատ սիրելի չեմ կարող արտայայտել, թէ սէրը կը հատցնէ սիրտս:

Բայց միայն իմ մենաւոր սենեակիս մէջն է որ այսպէս խօսեցայ. քու դէմդ, աւանդ, միշտ լռեցի:

Հոն չար հրեշտակներ կային, որ կը վազէին բերանս: Գեղեցիկ ու չար հրեշտակներուն պատճառով է որ, աւանդ, այսօր այնքան դժբախտ եմ ես:

ԻԹ

Շուշանաթոյր մատներդ անգամ մըն ալ կը փափաքէի համբուրել ու սեղմել սրտիս վրայ, և մեռնել՝ լռիկ արցունքներ թափելով:

Մանիշակաթոյր խոշոր աչքերդ կը տեսնեմ որ կը վառին դէմքերեկ ու գիշեր. իս տանջողը այդ աչքերդ են: Ի՞նչ կը նշանակեն այդ անուշ և կապոյտ առեղծաճները:

Լ

Երկուքն ալ իրար կը սիրէին. բայց ո՛չ մէկը չուզեց խոստովանիլ իր սէրը միւսին: Երկու թշնամիներու պէս կը նայէին իրարու, և մահամերձ էին իրենց սիրոյն պատճառով:

Իրարմէ բաժնւեցան վերջապէս և, հեռանց հեռու, միայն երազի մէջ կը տեսնէին իրար. երկար ատենէ ի վեր մեռած էին և իրենք հազիւ թէ գիտէին ատ:

ԼԱ

Բարեկամներս, երբ ձեզի ես դանդատեցայ այն ցաւերուս մասին, որոնց սիրտս ենթակայ է, դուք յօրանջեցիք և ոչինչ չըսիք ինձի. բայց երբ վիշտերովս շնորհալի յօրինւած ոտանաւորներ շինեցի, ինձի մեծ-մեծ դովեստներ շապլեցիք:

ԼԲ

Մարդ, մի՛ ծաղրեր սատանան: Կարճատև է կեանքը, և չա-
ւիտենական դատապարտութիւնը ժողովրդային սնոտի երեւակայու-
թիւն մը չէ:

Մարդ, վճարէ պարտքերդ. երկարատև է կեանքը, և շատ ան-
գամ ալ կրկին վարկ պիտի ունենաս, ինչպէս յաճախ ունեցեր ես
արդէն:

ԼԳ

Արեւելի երեք թագաւոր մոգերը ամէն զիւղաքաղաքի մէջ
կը հարցնէին. «է՛, տղաներ ու աղջիկներ, որն է Բէթլէհէմի ճամբան»:

Երիտասարդ կամ ծեր, ոչ ոք չէր գիտեր: Թագաւորները կը
շարունակէին իրենց ճամբան. անուշ և պայծառ լոյսով մը շողուն
ոսկի աստղի մը կը հետեւէին:

Ստողը կեցաւ Յովսէփի տանը վրայ. հոն մտան: Հորթը կը
մայէր, Մանուկը կը ճչէր, և թագաւոր մոգերը կ'երգէին:

ԼԴ

Զաւակս, երբ դեռ տղայ էինք մենք, երկու փոքր և զւարթ
տղաներ, կը մոնէինք հաւնոցը և յարդին տակը կը պահւելէինք:

Քիթէրէքի՛ւն կ'երգէինք, և երբ մարդիկ անցնէին, կը կարծէին
աքաղաղին ձայնն է աս:

Բակին մէջ սնուկներ կային, գորգերով կը ծածկէինք անոնք
և կը մոնէինք սնուկներուն մէջ. մեծ տուն մը կը շինէինք հոն և
հիւրեր կ'ընդունէինք:

Դրացնին ծեր կատուն շատ անգամ այցելութեան կուգար մեզի.
ամէն տեսակ պատիւներ ու մեծարանքներ կ'ընէինք մենք անոր:

Սիրալիր հոգացողութեամբ իրմէն լուրեր կը հարցնէինք. այն
ժամանակէն ի վեր՝ աշխարհի մէջ նոյնը ըրինք շատ մը ծեր կա-
տուներու հետ:

Յետոյ կը նստէինք, ծանրաբարոյ մարդերու պէս կը խօսէինք,
ինչպէս որ պատշաճ է. իրարու դանգատներ կ'ընէինք. մեր ժամա-
նակը շատ լաւ կ'անցնէր:

Սէրը, ու զգամտութիւնը, հաւատարմութիւնը, ինչպէս այս

բոլորը աներևութացան աշխարհէն. և սուրճը ինչքան սուղ է, ու
զրամը՝ ինչքան քիչ:

Մանկութեան խաղերը անցան, ու ամէն բան կը զրորակի և
կ'անցնի, զրամը, աշխարհը, ժամանակը, հաւատարմութիւնը, ու
սէրն ալ:

ԼԵ

Սիրտս կը ճնշւի, և երբեմնի օրերուն վրայ կը խորհիմ սաս-
տիկ կսկիծներով: Աշխարհը այն ատեն շատ դիւրեկան բնակավայր
մըն էր և կեանքն ալ՝ շատ անվրդով:

Այսօր ինչ տակնուվրայութիւն. ինչ խուժան, ինչ աղէտք է
աս. վերը Տէր Ասուածը վախճաներ է, վարն ալ սատանան է մեռեր:

Ու ամենքը տխուր, տհաճ կերպարանք մը ունին. ամէն բան
մեղկացած է և սառած: Առանց այն քչիկ մը սիրոյն, որ մեզի կը
մնայ, չպիտի լինէր ոչինչ, որուն վրայ կարենար հանգստանալ սիրտը:

ԼԶ

Ինչպէս լուսինը պսպղուն կ'ելլէ՝ ամպերու իր սև շղարշներուն
մէջէն, այնպէս իշատակներուս խաւարչուտ խորէն կը բարձրանայ
աչքերուս դէմ լուսաշող պատկեր մը:

Նստած էինք նաւի կամուրջին վրայ. Հռենոսի վրայով հպար-
տօրէն դէպի վար կը նաւարկէինք, և դետին եզերքները՝ ամառան
կանաչով պճնւած՝ կը փողփողէին արեւմուտքին կրակներովը:

Մտախոհ նստած էի գեղանի և հրապուրիչ տիկնոջ մը ոտքե-
րուն առջև. անոր անուշ և տփոյն դէմքին վրայ կարմիր ճառա-
գայթ մը, արևի կարմիր ճառագայթ մը կը խաղար:

Վիները ¹⁾ կը հնչէին, երիտասարդները կ'երգէին: Օ՛ հրաշալի
ցնծութիւն. երկինքը աւելի կապուտցաւ, ու լաջնցաւ իմ հոգիս:

Մեր առջևէն, առասպելական երեոյթներու նման, կ'անցնէին
լեռներն ու զղեակները, անտառներն ու մարդերը, և, կարծես
հայելիի մը մէջ, այս ամենքին փայլն ու ցոլացումը կը տեսնէի գե-
ղանի ընկերուհիս աչքերուն մէջ:

¹⁾ Luth.

ԼԵ

Սիրելիս տեսայ երազիս մէջ. տխրութենէն ընկճւած խեղճ
կին մըն էր. և անոր գեղեցիկ մարմինը, անքան շքեղապէս փթթած
երբեմն, կը կենար դէմս թոշնած բոլորովին:

Տղեկ մը կը կրէր իր բազուկին վրայ և ուրիշի մըն ալ ձեռքէն
բռնած էր: Անոր քալածքը, անոր նայածքը, զգեստները, ամէն
բան իր խեղճութիւնն ու վիշտը կը մատնէին.

Դողդոջուն քայլերով կ'երթար ան շուկայի հրապարակէն. հոն
կը հանդիպի ինծի. իս կը դիտէ, ու ես հանդարտ և տրաուս ձայ-
նով մը կ'ըսեմ իրեն.

«Բնակարանս եկոր. գունատ և հիւանդ ես. փութաջանու-
թեամբս և աշխատանքովս կը ճարեմ ուտելիքդ ու հագնելիքդ:

«Կ'ուզեմ նաև հսկել և խնամել այդ տղաները որ հետդ են,
քայց նախ քեզ, առաջին անգամ քեզ, ով խեղճուկ և անբախտ
մանուկ:

«Քեզի չպիտի պատմեմ թէ ես քեզ սիրած եմ, ու երբ դուն
մեռնիս, պիտի գամ լալ գերեզմանիդ վրայ:

ԼԸ

Սիրելի բարեկամ, ինչի՞ համար երգել միշտ միւսնոյն երգը:
Ուրեմն յաւիտեան այդտեղ կ'զգած մնալ կ'ուզես՝ թխսելով սիրոյդ
հին հաւկիթները:

Ա'իս. առ այնպիսի գործ մըն է որ վերջ չպիտի ունենայ եր-
բեք: Պատիկ վատեկները իրենց կեղեւները կը կոտրեն. կը գրգան, կը
թռչտին, և դուն քու փոքրիկ գրքիդ վանդակին մէջ կը դնես անոնք:

ԼԹ

Շատ անհամբեր մի՛ լինիք, եթէ ատեն-ատեն երբեմնի վիշտե-
րուս ձայները հնչեն նոր երգերուս մէջ:

Սպասեցէք, վշտերուս այս արձագանգը պիտի չքանայ, ու բա-
նաստեղծութեան նոր զարուն մը պիտի ցնցդկի ապաքինւած սրտէս:

Խ

Ժամս հասած է վերջապէս խելացի կերպով հրաժարելու չի-

մարութենէս. շատոնցւոնէ ի վեր հտպիտի 1) մը նման՝ ես ինծի հետ կատակերգութիւն կը խաղամ:

Շքեղ շքանշանները ռումանտիզմի բարձր ոճով նկարւած էին. ասպետական ոսկեշող վերարկու մը ունէի ես, ու վրայէս ամենանուրբ զգացումներու անուշ հոտեր կ'ելլէին.

Ախոս, հիմա որ խելօքցած եմ և հրաժեշտ տւած այն յիմար զգայնականութեանը. դժբախտ կրգգամ միշտ ինքզինքս, կարծես թէ նորէն կատակերգութիւն խաղայի:

Ո՛վ Աստուածս, խեղկատակելով և առանց գիտակցութեան արտայայտեցի ինչ որ կըզգայի իրապէս, և մահն ունէի կուրծքիս մէջ, երբ մեռնող ըմբիշին դերը կը խաղայի:

ԽԱ

Վիսվամիթրա թագաւորը առանց հանգստութեան՝ կը համբերէ ամէն տանջանքներուն. կռիւներու և ապաշխարհանքներու շնորհիւ կ'ուզէ ձեռք ձգել Վասիլթա քահանային կովը:

Ո՛վ Վիսվամիթրա թագաւոր, ի՞նչ անասուն ես եղեր դուն. այդքան կռիւ, այդքան ապաշխարանք, և բոլոր ատոնք կովի մը համար:

ԽԲ

Սիբրտս, ո՛վ սիրտս, շատ մի՛ տխրիր: Համբերէ՛ ճակատագրիդ. նոր զարուն մը քեզի պիտի դարձնէ ան, ինչ որ քեզմէ յափշտակած է ձմեռը:

Եւ թէ՛ քան բան ունիս տակաւին: Աշխարհը այդքան աղւոր է. ու նաև, սիբրտս, ամէ՛ն բան, ամէն ինչ որ հաճելի է քեզի՝ կրնաս սիրել:

ԽԳ

Ծաղկի մը նման ես, այդքան շնորհալի, այդքան դեղանի, այդքան ամբիժ կը նալիմ՝ քեզի, և անուշ տխրութիւն մը կը սարդի սրտիս մէջ:

Ինծի կը թւի թէ պէտք է ձեռքերս դնեմ գլխուդ վրայ և

1) Histrion.

աղօթեմ Աստծուն; որ քեզ պահէ միշտ անդրա՛ն շնորհալի, այգքան զեղանի, այգքան ամբիծ:

ԽԳ

Աղջիկ, դուն պիտի մեռնէիր, ու ես ամէն ջանք թափեցի որ քու սիրելի սիրտդ երբեք սէրէն չվառւի ինձի համար:

Սակայն այսքան դիւրին զբօսանք մը ունենալուս համար՝ տառապեցայ գրեթէ. ինքնիրենս շատ անգամ ըսի. «Ա՛խ, հակառակ ամէն բանի, իցիւ թէ դուն սիրէիր իս»:

ԽԵ

Գիշերը երբ սլառկիմ՝ անկողնիս վրայ՝ խաւարով ծածկւած, աչքերուս առջև անուշ, շնորհալի ու սիրելի պատկերի մը տատանիլը կը տեսնեմ:

Հազիւ թէ հանդարտ քուն մը փակած է արտեանունքս, երբ սիրելի պատկերը թեթեակի կը սարդի երազիս մէջ:

Բայց ան, առաւօտուն, չի շքանար երազներուս հետ. ամէն օր վրաս կը կրեմ՝ այգ պատկերը, սրտիս մէջը:

ԽԶ

Թող ձիւնը կուտակւի դուրսը աշտարակի մը պէս, թող տեղայ կարկուտը, թող հովը փչէ և թող ուրւականը ապակիներս ձաղկէ. ես չեմ տրտնջար, որովհետեւ սիրելիիս պատկերն ու գարնան ուրախութիւնը կը կրեմ՝ կուրծքիս մէջ:

ԽԷ

Գունատ դէմքս բաւականաչափ չարտացալտե՛ր կրած սիրոյ տառապանքներս: Կ'ուզես որ հպարտ բերանս խոտոտվանէր ատ՝ մուրացկանի ստորնացումով:

Ս'հ, իմ բերանս շատ հպարտ է. ան միայն համբուրել և ծաղրել դիտէ: Քանի մը հեգնութիւններ արձակէ թերեւս այն վայրկեանին, երբ սիրոս կսկիծէն խորտակւի:

ԽԸ

Կ'ուզէի մօտդ մնալ, կ'ուզէի հանգստանալ քովիկդ. բայց դուն կը մեկնէիր ածապարանքով. տեսնելիք շատ գործեր ունէիր:

Ըսի այն ատեն որ հոգիս բոլորովին քեզի նւիրւած է. սկսար բարձրաձայն խնդալ դուն՝ ծաղրական նշան մը ընելով:

Չանացիր գրգռել զայրոյթս, և նոյն իսկ, վերջին վայրկեանին, մնաս-բարովի համբոյրը մերժեցիր դուն ինծի:

Չկարծես որ կ'երթամ ինքնասպան լինելու՝ այսչափ տխուր բախտիս համար: Այս բոլորը, իմ սիրելի աղւորս, արդէն անգամ մը պատահած է ինծի:

ԽԹ

Շափիւղաներ են աչքերդ, անուշ աչքերդ, սիրելի աչքերդ: Շատ երնէկ այն մարդուն, որը սիրով կը բարեկեն աչքերդ:

Աղամանդ մըն է սիրտդ, ուրկից շքեղ շողիւններ կը ցայտեն: Շատ երնէկ այն մարդուն, որուն համար սիրտդ սիրով պիտի այրի:

Սուտակներ են շուրթներդ. կարելի չէ անոնցմէ աւելի աղւորը տեսնել: Շատ երնէկ այն մարդուն, որուն քու շուրթներդ սիրոյ խոստովանութիւն պիտի ընեն:

Ո՛հ, եթէ ես ճանչնայի այդ երջանիկ մարդը. ո՛հ, եթէ մինակ, միս-մինակ գտնէի անիկա հոն, անտառին խորը, իր երջանկութիւնը երկարատեւ չպիտի լինէր:

Ծ

Տարփատենչ խօսքերովս՝ ուղեցի կորզել սիրտդ, ու անիկա ուռկանիս մէջ առած, կըզգամ որ կատակը լուրջ բան մը կը դառնայ:

Եթէ հիմա, ինչպէս քու իրաւունքդ է, ծաղրելով հեռանաս դուն, դժոխքին բոլոր իշխանութիւնները պիտի մօտենան ինծի, և լրջութեամբ այս անգամ գլուխս հարւածով մը պիտի ջախջախեմ:

ԾԱ

Աշխարհն ու կեանքը քակւած կտորներ են. գնալ գտնել կ'ուզեմ գերման պրոֆէսոր մը որ կարգի դնէ այս ամէնը՝ խեղացի դրութեամբ մը: Իր պարեգօտովն ու գիշերւան գտակովը շէնքին ճեղքերը պիտի խզկէ ան:

ԾԲ

Այս իրիկուն շքեղ երեկոյթ մը ունիք. տունը ամբողջ լու-

սաղարդւած է: Վերը, սո՛ւ լուսաւորւած պատուհանին առջև՝ սուերի մը շարժիլը կը տեսնեմ:

Դուն չես տեսներ իս. մենակ եմ այստեղ, մուծին մէջ, քեզմէ վարձք: Քիչ մը աւելի պակաս սուղէ նայւածքներդ թախծալի սըրտիս մէջ:

Թախծալի սիրտս կը սիրէ քեզ, կը սիրէ ան քեզ ու կը խորտակւի. կը խորտակւի ան, կը բաբախէ և կ'արիւնոտի... Բայց դուն չես տեսներ:

ԾԳ

Կ'ուզէի որ բոլոր վիշտերս միակ բառով մը կարենային արտայայտուիլ. այդ բառը ուրախ հովերուն պիտի յանձնէի, որ զւարթօրէն պիտի առնէին տանէին:

Քեզի պիտի բերեն, սիրելիս, այս վիշտերով ակաղձուն բառը, ու դուն անոր հնչելը պիտի լսես ամէն ժամ, անոր հնչելը պիտի լսես ամէն տեղ:

Եւ հազիւ թէ զիշերւան քունը աչքերդ փակէ, այն վշտալից բառը պիտի հալածէ քեզ քու ամենէն խոր երազներուդ մէջ իսկ:

ԾԴ

Այսօր մանդներ ու մարգարիտներ ունիս. ունիս ամէն ինչ որ կ'ինքրուն ըզձանքը կը զրգռէ. ունիս նաև աշխարհին ամենէն զեղեցիկ աչքերը:—Սիրելիս, ի՞նչ կ'ուզես աւելի:

Գեղեցիկ աչքերուդ վրայ հազարաւոր երգեր յօրենեցի, որ չպիտի կորսուին: Սիրելիս, ի՞նչ կ'ուզես աւելի:

Գեղեցիկ աչքերովդ տանջեցիր իս, տանջեցիր ու կը մեռցնես... սիրելիս, ի՞նչ կ'ուզես աւելի:

ԾԵ

Ան որ առաջին անգամն է կը սիրէ, նոյն իսկ այն ատեն երբ չի սիրւիր, այն մարդը ասուած մըն է: Բայց ան որ երկրորդ անգամ կը սիրէ՝ առանց իր սէրը փոխարինելու՝ յիմարին մէկն է:

Ես այս կարգի յիմար մըն եմ, ու կը սիրեմ տակաւին առանց սիրւելու: Սրեւը, լուսինը և աստղերը կը ծիծաղին վրաս. ես ալ կը ծիծաղիմ անոնց հետ ու կը մեռնիմ:

ԾԶ

Բարի խորհուրդներ, բարի խրատներ տւին ինծի, և յարգանքի արտայայտութիւններով ճշեցին իս. միայն համբերութիւն ունենալու եմ, կ'ըսէին. իրենք կ'ուզէին պաշտպանել իս:

Բայց իրենց բոլոր պաշտպանութեամբը հանդերձ՝ քիչ մնաց որ անօթութենէս մեռնէի, եթէ չհասնէր քաջ մարդ մը որ արիաբար խնամեց իս:

Քաջ մարդ. անոր շնորհիւն է որ չմեռայ: Երբէք չսխալուի մոռնամ իր ինծի բրած ծառայութիւնները: Ափսոս որ չեմ կարող համբուրել անիկա, որովհետեւ այդ քաջ մարդը ես ինքս եմ:

ԾԷ

Յուլիսի ամենէն գեղեցիկ օրերուն բաժնեցայ ձեզմէ և յունւարին կրկին կը դռնեմ ձեզ: Այն ատեն շատ տաքցած էիք, այսօր ալ մրսած էք, և նոյն իսկ ցրտութեամբ կ'ընդունիք իս:

Քիչ ատենէն կրկին պիտի թողում ձեզ, չետոյ նորէն պիտի դառնամ, այն ժամանակ ոչ տաքցած և ոչ սառած պիտի լինիք: Պիտի կոխտեմ ձեր գերեզմանի քարին վրայ, և ես ու իմ սիրտս ծերացած ու աղքատացած պիտի լինինք:

ԾԸ

Խլեցայ ահաւասիկ գեղեցիկ շուրթներէն, խլեցայ ահաւասիկ գեղեցիկ բազուկներէն որ իս տարփահար կը գրկէին: Օր մըն ալ պիտի մնայի, բայց սուրհանդակը հասաւ իր ձիերով:

Ահա կեանքը, աղջիկ, շարունակական տրտունջ մը, շարունակական մնաս-բարով մը, շարունակական բաժանում մը: Սիրտդ չէր կարող ուժգնակի հետեիլ իմինիս. աչքերդ չէին կարող արգելել իս:

ԾԹ

Ամբողջ գիշերը, մութին, միայնակ կառքին մէջ մնացինք: Հանգչեցանք սիրտ սրտի վրայ. խնդացինք ու կատակներ ըրինք:

Յետոյ, երբ առտւան արշալոյսը երևցաւ, լնչպէս ապշած մնացինք: Մեր մէջտեղը նստած էր Սէրը, այն կոյր ճամբորդը:

կ

Աստուած գիտէ թէ ո՛ր կը բնակի այն յիմար աղջիկը: Հեղեղ-անձրևին տակէն, անէծքը բերանս, ահա վեր-վար կը վազեմ ամ-բողջ քաղաքին մէջ:

Պնացի պանդոկէ պանդոկ, և այն բոլոր կոպիտ սպասաւորնե-րէն տեղեկութիւններ ուզեցի:

Յանկարծ ան պատուհանի մը առջև նշմարեցի, նշաններ կ'ընէ 'ինձի' բարձրաձայն ծիծաղելով: Կրնայի՞ գուշակել, աղւորս, թէ դուն այդ շքեղ ապարանքին մէջ կը բնակիս:

կԱ

Թաղին երազներուս պէս՝ տուները կը շարւին երկար կար-գերով: Ես վերարկուիս մէջ փաթթւած՝ լռիկ կ'անցնիմ անոնց առջևէն:

Մայր-եկեղեցիին աշտարակը կէս-գիշեր կը հնչէ. աս այն ժամն է որ ատեն սիրելիս ինձի կը սպասէ իր հրապոյրներովն ու համ-բոյրներովը:

Լուսինը առաջնորդս է. բարեկամօրէն կը շողայ ան ճամբուս վրայ: Ահաւասիկ սիրուհիս սեմին առջևն եմ, և խնդութեամբ կը սրտամ:

Ննորհակալ եմ, ո՞վ լուսին, իմ հին բարեկամուհիս, ճամբաս աջդքան լաւ լուսաւորելուդ համար: Հիմա հրաժեշտ կուտամ քեզի. շողմ հիմա ուրիշներու համար:

Նեւ եթէ գտնես սիրահար մը որ լուռ կը չարչրկի իր սրտի ցաւերովը, մխիթարէ անիկա, ինչպէս մխիթարեցիր իս՝ երբեմնի տխուր ժամերուս:

կԲ

Եւ իսկոյն որ դուն իմ կինս լինիս, վիճակդ իրաւցընէ նա-խանձելի պիտի դառնայ: Միմիայն ժամանցներ, միմիայն հանդը-ներ ու հրճանքներ պիտի ունենաս:

Յանդիմանէ, եթէ կ'ուզես, յանդիմանէ և պուպոս, համբե-րութեամբ պիտի համակերպիմ. բաց երբ ոտանաւորներս չգովես, կը թողուամ քեզ:

ԿԳ

Ձիւնի պէս ձերմալ կուրծքիդ վրայ զլուխս ծռեցի, և կրցայ զաղանի իմանալ ինչ որ սիրտդ կը բաբախէ:

Կապոյտ-զգեստ հուսարները ¹⁾ փողը կը հնչեցնեն և ուրախ ներս կը մտնեն քաղաքին դուռնէն: Սիրելիս, իմ հոգիիս սիրելին կ'ուզէ լքել իս վաղը:

Դուն կ'ուզես լքել իս վաղը, բայց այսօր դեռ իմն ես դուն, և քու աղւոր բազուկներուդ մէջ կ'ուզեմ կրկնապէս երջանիկ լինել:

ԿԴ

Կապոյտ-զգեստ հուսարները փողը կը հնչեցնեն և ուրախ կը դիմեն դէպի քաղաքին դուռը: Կուգամ, սիրելիս, ու վարդերու փունջ մը կը բերեմ քեզի:

Սոսկալի շփինդ մը կայ: Այս ինչ բազմութիւն, ինչ շառաչիւն է զէնքերու: Քո՛ւ ալ պզտիկ սրտիդ մէջ շատ մը զինուորական կայաններ կային:

ԿԵ

Իսկապէս այդքան չարեացակամ ես դուն: Իսկապէս փոխւե՞ր ես բոլորովին: Ամբողջ տիեզերքին կ'երթամ գանգատել այդքան գէշ վարմունքիդ համար:

Ո՛վ ապերախտ շուրթներ, ըսէ՛ք, ի՞նչպէս կրնաք գէշ խօսիլ այն մարդու մասին որ, աղւոր օրերու մէջ, այնքան տարփատենչ համբուրած է ձեզ:

ԿԶ

Ա՛խ, ահաւասիկ նորէն այն աչքերը, որ երբեմն կը բարեւէին իս բարեկամաբար, ահաւասիկ նորէն այն շուրթները, որ կեանքս քաղցրութեամբ կը լեցնէին:

Նոյն ձայնն է աս, որ երբեմն այնքան սիրով կը լսէի: Ե՛ս միայն նոյնը չեմ. շատ փոխւած դարձայ այստեղ:

Ինկած իր աղւոր սպիտակ բազուկներուն մէջ, որ սիրով ինձի կը փարին, հոն իր սրտին վրան եմ, տխուր և ձանձրացած:

¹ Hussard, հունգարացի ձիաւոր զինուոր:

ԿԷ

Քիչ անգամ, բարեկամներս, հասկցաք դուք իս. քիչ անգամ նաև ես կարողացայ ձեզ հասկնալ: Այն օրը միայն, երբ իրարու պատահեցանք ցեխի մէջ, այդ օրը առանց դժւարութեան հասկըցանք իրար:

ԿԸ

Երգեցիկ ներքինիները ¹⁾ տրտունջ յայտնեցին, երբ բարձրացուցի ձայնս. ըսին որ երգս շատ աններդաշնակ էր:

Ու ամենքը մէկանց շնորհալի կերպով լսեցուցին իրենց սրընգահար ձայները և իրենց փոքրիկ բիւրեղեայ գեղգեղանքները: Շատ սուր և շատ յստակ էր իրենց երգը:

Անոնք սիրոյ ըղձանքները, սէրն ու անոր վայելքները կ'երգէին, և կ'իները արցունք կը թափէին՝ բոլորովին նւաղուն՝ արւեստի այս հրաշալիքին առջև:

ԿԹ

Սալամանգի բուլլւարներուն վրայ օդը անուշ ու գգւող է. հոն է որ կը պտըտիմ ամառ իրիկունները շնորհալի ղոնայիս հետ:

Բազուկս անցունցի անոր ճկուն մարմինն շուրջը, ու բախտաւոր մատներս կը զգան անոր ծոցին հպարտ յուզումը:

Բայց վրդովիչ մրմունջ մը կը սահի թմբիներու տերևներուն մէջէն, և տրտում ջրաղաց մը չարութեամբ տխուր գուշակութիւններ կը քրթմնջէ:

Ախ, սինե'օրա, ահա թէ ինչ կ'ըսէ այդ նախագուշակութիւնը: Օրին մէկը ակադեմիական վճիռով պիտի վռնդւիմ, ու ան Սալամանգի բուլլւարներուն վրայ չպիտի երթանք միասին պտըտելու:

Հ

Մօտս կը բնակի դոն Հէնրիկէզը, որը նաև «գեղեցիկ ասպետ» կ'անուանեն: Մեր սենեակները իրարու մօտ են, միայն պարզ պատ մը մեզ իրարմէ կը բաժնէ:

¹⁾ Castrat.

Սալամանդի տիկիներուն սրտերը կրակ կ'իյնայ, երբ ասպետը անցնի փողոցներէն, հնչեցնելով իր կօշկախթանները, ոլորելով իր պիտերը և առաջնորդելով իր շուներու ջակատը:

Սակայն, իրիկեան լուռ ժամերուն, նստած է ան միայնակ, կիթառը՝ ձեռքը և անուշ երազները՝ հոգիին մէջ:

Կը զարնէ լարերը դողդղալով և իր ցնորքին կը յանձնէ ինքզինքը... Ա'խ, այս գաշնաւորումներուն խորհումները գարշա՛նք կը պատճառեն ինծի:

ՀԱ

Հազիւ թէ իրար տեսած էինք, և արդէն քու աչքերէդ, քու ձայնէդ կը հասկնայի որ ինծի անձնէդ լեւ գունը եթէ մայրդ այնտեղ չլինէր, այն անիծւած մայրդ, ես կը կարծեմ որ այն վայրէկանին իրար պիտի համբուրէինք:

Ու վաղը, ահա նորէն քաղաքէն կը հեռանամ և ճամբաս ձեռք կ'առնեմ: Խարտեաշ աղջիկս այնտեղ, պատուհանին առջև կեցած՝ իս պիտի դիտէ, և ես սիրալիւ քարենք պիտի զրկեմ իրեն:

ՀԲ

Արեւը կը բարձրանայ արդէն լեռներու վրայով. ոչխարներու հօտին զանգակիկներուն ձայնը կը լսւի հեռուն: Ո՛ր իմ սիրելիս, զառնուկս, արեւս, սէրս, ինչքան կ'ըղձամ անդամ մըն ալ տեսնել քեզ:

Աչքերս վեր կ'առնեմ, կը նայիմ՝ անհանգիստ սպասումով մը... Մնաս բարով, անգորս, կը հեռանամ ես այս երկրէն. — Զն՛ր յոյս, ոչ մէկ վարադոյր կը բարձրանայ: Ա՛յ կը հանգչի դեռ, կը քնէ ան... Ի՛մ վրայովս երազ կը տեսնէ հաւանականաբար:

ՀԳ

Հալլէի մէջ, շուկայի հրապարակին վրայ, երկու առիւծ կը կանգնին: Ափսոս, Հալլէի հպարտ առիւծներ, ինչպէս ցոկակապ անօցուցած են ձեզի:

Հալլէի մէջ, շուկայի հրապարակին վրայ, մեծ հսկայ մը կը կանգնի: Սուր մը կրէ ան, բայց չի կրնար շարժիլ, երկիւղը քարացուցած է անիկա:

Հալլէի մէջ, շուկայի հրապարակին վրայ, մեծ եկեղեցի մը կը բարձրանայ: Բուրջէնշաֆտն ¹⁾ ու Հանդմանշաֆտը ²⁾ եկեղեցի խառնել են՝ իրենց բարեպաշտական աղօթքը կատարելու:

ՀԴ

Ամառ իրիկուններու վերջալոյսը կը տարածւի անտառին ու կանաչ մարգին վրայ: Ոսկի լուսինը, կապոյտ երկնքի բարձունքէն, իր պայծառութեամբը կ'ողողէ բուրումներով խնկաժ մթնոլորտ մը:

Ծղրիդը կ'երգէ աղբիւրին քով. բան մը կը սարսուռայ ջուրին ծոցը. ճամբորդը շնչառութեան նմանող շշուկ մը կը լսէ գիշերւան լուութեանը մէջ:

Վարը, միայնակ, աղբիւրի ջուրին մէջ կը լացւի գեղեցիկ պայքը. իր բազուկները, իր ճերմակ և շնորհալի ուսերը կը պսպղան լուսին շողերովը:

ՀԵ

Գիշերը կը տարածւի այս անծանօթ ճամբաներուն վրայ. սիրտս հիւանդ է, մարմնիս անդամները յոգնած են: Ախ, գէթ դռն, լուռ օրհնութեան մը պէս, իմ անուշ լուսին, լոյսդ կը սըփռես վշապ:

Անուշ լուսին, քու շողերովդ կը վանես դուն գիշերւան սարսափը: Կըզգամ որ բոլոր վիշտերս կը չքանան, և այտերս՝ կը ծածկւին շողերով:

ՀԶ

Յուրի գիշերը՝ մահ է. ճնշիչ օրը կեանք: Մուխը կ'իջնէ, քունս կուգայ. օրը բոլորովին յոգնեցուց իս:

Մնկողնիս վրայ ծառ մը կը բարձրանայ. փոքրիկ սոխակը կ'երգէ հոն. միայն սէր կ'երգէ ան, և ես կը լսեմ այդ երգը երազներուս մէջ իսկ:

ՀԷ

Ըսէ, ո՛ր է այն աղւոր սիրելիդ որ դուն այնքան լաւ կ'երգէիր երբեմն, երբ մոգական բոցեր կը տոչորէին սիրտդ:

— Այդ բոցերը մարեցան. սիրտս սառն է և ախուր. ու այս գրքս՝ լը սափորն է ուր կը հանգչին սիրոյս աճիւնները:

(Շարունակելի)

¹⁾ Գերման ուսանողութիւնը: ²⁾ Գերման գիւղացիները:

ԿՈՒՐԻ ԱՓԻՆ

ԳԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃԵԱՆԻ

Նստած եմ լուռ գետի ափին.
Նա վշշում է, հանդարտ հոսում,
Եւ հով տալով սրտիս տապին՝
Նա խօսում է. ի՞նչ է ասում...

Աւիքները անդուլ երգով
Նսկերին են զարկում այս լուռ,
Ցեղցեղում են, փախչում շարքով,
Անկերջ գալիս, գնում են,—հւր...

Հէնց այդպէս են անքուն մնում
Խոր-խոր մտքերս այս յորդ ու բիր.
Հէնց այդպէս են գալիս, գնում
Երազներըս, օրերս,—և հւր...

Հէնց այդպէս է իմ երգն օտար...
Երգով անդուլ սիրտ եմ ծեծկում,—
Սիրտն իմ առաջ լուռ ու ժէ՛. քնոր,
Իսկ ես մրմռենջ, անբոյն, անբոյն...

Հոսանքին եմ նայում «խուր».
Նա աչքերս է իր հետ տանում.
Ես մնւթն ու խոր՝ լսում եմ լուռ,—
Նա իմ առաջ կեանքս է պատմում...

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ՂԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

ՄԵՍԵ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻԱՍԹԱՓՈԻՄՆԵՐ

(Շարունակութիւն ¹)

XVII

Վաղուց է Ոսկերչեանը ոչ նա՛մակ ոչ տեղեկութիւն ունէր իւր հօրից: Թշուռ ծերունու լքեալ վիճակը որդու մշտական հոգսերի և մտատանջութեան առարկան էր: Ինչպէս բարւոքել խեղճի զրութիւնը? Ինչպէս անել, որ նա գոնէ իւր վերջին տարիները հանգիստ անցկացնի, կարիք չզգայ, ապրուստի համար նեղութիւն չքաշի?

Ով է նայում ալեորին? Կայ արդեօք հարեանութեան մէջ մի սրտացաւ անձ, որ չզլանար խնամք տանել նորա մասին? Տեսնես, կարողանում է նա շաբաթը մի երկու-երեք անգամ թէյ խմել, որ նա այնքան սիրում է, կամ տաք կերակուր ուտել, որ այնքան ան-

¹) Տէս «Մուրճ» 1897 թ. № 1—12 և 1898 թ. № 2—3:

հրաժեշտ է ծերունուն? Ով է թեթևացնում նորա տխրութեան ժամերը, մի երկու բերան զրոյց անելով նորա հետ և սիրտը շահելով? Գոնէ ոչժը ներսում է, առաջւայ պէս, առաւօտ և երեկոյ ցնալ բազար և, զերանի վրայ նստելով, խօսք ու զրոյց անել իւր նման ալեոր և պատկառելի ծերունիների հետ?

Այս տեսակ հարցերը մնում էին անպատասխան, որովհետև Ոսկերչեանը, ինչպէս ասացի, երկար ժամանակ է նամակ չէր ստանում իւր ծննդավայրից, կարծես զետնի տակ անցած լինէր այդ գիւղը:

Ահա շուտով երկրորդ ամիսը կը լրանայ, որ հայրը ընդհատել է իւր նամակագրութիւնը որդու հետ: Արդեօք ինչ է պատճառը? Կարելի է, հայրը բարկացել է, որ իւր զաւակը այլ ևս փող չէր ուղարկում վերջին ամիսները? Կամ դուցէ հիւանդ է խեղճը?... Ախ, ինչ լինում է, թող լինի, միայն թէ հիւանդ չլինի!... Այսպիսի մտքեր էին պաշարում Ոսկերչեանին և սիրտը լցնում մորմոքիչ ցաւով և խղճահարութեամբ:

Նա գրեց մի քանի անգամ, և պատասխան չեկաւ: Նորա անհանգստութիւնը աճելով աճում էր: Նա սկսեց նոյն իսկ մտածել, թէ արդեօք մի բան չէ պատահել ծերուկին: Վերջապէս նա վճռեց հեռագրով տեղեկութիւն հարցնել իւր հօրից: Բայց որովհետև այդ ևս չօգնեց, նա այնպիսի մտառանջութեան մէջ ընկաւ, որ մի քանի օր խելագարի էր նմանում: Երկու անգամ իրար վրայ դասի չգնաց: Գիշերները քնում էր շատ ուշ և ժամերով անց ու դարձ էր անում անկիւնից անկիւն: Ցրւած էր այն աստիճան, որ լուցկիների տուփը ձեռքումը բռնած՝ երբեմն լուցկի էր որոնում պապիրոսը կպցնելու: Քիչ էր մնում գլխարկը մոռանար և գլխաբաց դուրս գար փողոց:

Վերջապէս մի օր նամակ եկաւ Ոսկերչեանի ծննդավայրից: Բայց նորա հօր ձեռքը չէր. հօր սովորական գիմումը չէր, որովնա սկսում էր իւր գրութիւնը. «Ամենասիրելի ջան իմ Արտաշէս... Գողթովն ձեռքով չէր գրւած նամակը, և տառերը միացած չէին իրար հետ անընդհատ շղթայով: Գիրը գրւած էր ծանր, կարծես երկաթեայ ձեռքով, իւրաքանչիւր տառը որոշ, միմեանցից զատ: Չնայած բոլոր կոպիտ ուղղագրական սխալներին, պարզ երևում էր,

որ նամակագիրը ուշադրութիւն է դարձրել ոճի վրայ, որը նա աշխատել է մօտեցնել կիսապարբար և կիսագռեհիկ գրութեան ոճին:

«Ինչու հօրս փոխարէն ուրիշն է գրելը? անցաւ Ոսկերչեանի մոքով, և սա ամենից առաջ կարդաց ստորագրութիւնը «Ասատուր Գիւլեան»։ Դա Ոսկերչեանի հարեանն էր:

Գրութիւնը բռնել էր մեծադիր և կապտաւուն թերթի բոլոր չորս էջերը և գրեթէ սկզբից մինչև վերջ միալար խրատ ու նախատինք էր:

Ինչու Արտաշէսը մոռացել է իւր ծերացած հօրը? Ում խնամքին է նորան յանձնել? Ով է նորան կերակրողը? Որտեղից է փող ճարում նա մի կտոր հաց առնելու համար? Մարդ ունենայ մի չափահաս որդի և իւր ծերութեան հասակում երեսի վրայ ընկած լացով անց կացնի օրը և մի օգնութիւն չստանայ զաւակից? Վայ նորան, ով խղճմտանք չունի. անխիղճ մարդուն Աստուած պատժում է թէ այս և թէ հանդերձեալ կեանքում: Ամօթ չէ որա ջահէլ հասակին? Շատերը որդիք ունին, բայց որն է Արտաշէսի նման? Քանիսը կայ, որ զլիններին խփես, մի կտոր աչք չի դուրս գալ, բայց իրանց ծնողներին էլ են պահում, իրանց էլ են պահում ու սեօրւայ համար փող էլ են կարողանում ետ զցել: Իսկ ինչ է շինում Արտաշէսը? Ինչի մի գործի չի կաշում? Երբ պիտի թողնի իւր օջինքազ արեւտը? Դա մարդու հաց չի տալ: Ժամանակ է, որ նա խելքը գլուխը հաւաքի ու խեղճ հօր նամուսը գետնովը չտայ:...

Եւ այլն և այլն և այլն:

Այս բոլոր հարցական և բացականչական նախատինքից ու խրատներից յետոյ գթասիրտ նամակագիրը աւելացնում է հետևեալը. «Եթէ ես չլինէի, հօրդ ոսկորները հիմա փտած կ'լինէին գերեզմանի մէջ: Եւ ապա թէ՛ նա է, որ միշտ ձեռք է հասցնում ծերունուն, իւր մօտ ճաշի կանչում, խանութից հարկաւոր եղած բաները ուղարկում և միշտ սիրտ տալիս ու մխլթարո մ անտէր պլեորին:

Վերջումը նա խնդրում է Արտաշէսից մի որ և է կարգադրութիւն անել ծերունու խնամատարութեան մասին:

Երբ Ոսկերչեանը աւարտեց նամակի ընթերցումը, նորա կրծքի

վրայից կարծես մի ծանր քար ընկաւ, չնայած գրեածի պարսաւական ոճին:

Փառք Աստծուն—մտածեց նա—բարի մարդիկ անպակաս են աշխարհիս երեսին: Հարեանք, ճիշտ է, այնքան էլ լաւ համբաւ չունի գիւղամիջում, բայց, ով գիտէ, կարելի է նորան նախանձում են, որ այնքան ճարպիկ է և կոպէկ կոպէկ կարողացել է բաւական մեծ հարստութիւն զիջել: Եթէ նա չքար սիրտ լինէր, ինչպէս նորան համարում են, ապա ուրեմն ինչ բանից դրդւած այնչափ հոգացողութիւն պիտի ցոյց տար մի ծերուկի վերաբերմամբ, որը, բացի հարեան լինելուց, ուրիշ ոչ մի կապ չունի նորա հետ? Շարունակ հրաւիրում է ճաշի, անհրաժեշտ պիտոյքները միշտ հասցնում է նորան. նորա սրտաշահ խօսակիցը այդ դրացին է: Մ'հ, որքան երախտապարտ է Արտաշէսը այդ բարեսիրտ մարդու առաջ!

Ոսկերչեանը անչապազ պատասխանեց ստացած նամակին: Արտաշատն իւր հարեանին խորին շնորհակալութեան զգացմունքը, նա ինդրում է նորանից շարունակել նաև այսուհետև իւր մարդասիրական խնամքը ծերունու մասին. միևնոյն ժամանակ նա խոստանում է ժամանակով կրկնապատիկը հատուցանել նորա բարութեան փոխարէն:

Նոյն այն ժամին, երբ Ոսկերչեանը գրում էր նամակը, ներքևի յարկից լսում էր աղմուկ, որի մէջ խառն էին երգ և ծիծաղ, խօսակցութիւն և կատակներ:

Ներքև բնակւում էին նորա նախկին դասընկերները: Վերջնական քննութիւնները աւարտած և հասունութեան վկայականները գրպանների մէջ, նոքա հրաժեշտի քէֆ էին սարքել իրանց մի քանի ընկերների հետ: Սոքա հրաւիրել էին և Ոսկերչեանին. բայց որովհետև սա ուշանում էր, նոքա սկսեցին ձեռնափայտերով բաղխել առատադը:

Ոսկերչեանը հասկացաւ, որ իրան կանչում են, ու արագացրեց դրէի շարժումը: Երբ նամակը պատրաստ էր, նա իսկոյն տարաւ, ձգեց մօտակա պոստարկիլը և վերադառնալով այլ ևս չբարձրացաւ վերև, այլ գնաց ուղղակի իւր ընկերների մօտ:

Սեղանի շուրջը բոլորել էին ջահէլ երիտասարդները: Ուտեստը համեստ էր, գինին առատ:

Ոսկերչեանին ընդունեցին ուրախ զոչիւններով: Պարզ էր, որ բոլորեքեան տաքացել և հիանալի տրամադրութեան մէջ էին: Խօսքերը խլում էին իրար բերնից: Մէկի սրախօսութիւնը ընդհանուր քրքիջ էր յարուցանում: Լուրջ ճառախօսութիւնները յաջորդում էին կատակներով: Սենեակը թնդում էր բարձրաձայն խմբերգից: Վիճաբանութիւնը տաք էր և երբեմն սուր կերպարանք էր ստանում:

Ապագայ ուսանողների թիւը կը հաւասարէր Քրիստոսի աշակերտների թիւին, եթէ Ոսկերչեանն էլ իւր ընկերների տոկոսնութիւնը և բաղդը ունենար: Այստեղ կային բոլոր ֆակուլտետների ներկայացուցիչները՝ մի լեզւագէտ, մի մաթեմատիկոս, երկու բնագէտ, չորս բժիշկ և երեք իրաւաբան:

Սկզբում Ոսկերչեանը միայն ուտում, խմում և լսում էր. երբեմն միայն գլորում էր մի սրախօսութիւն, ի մեծ զւարճութիւն իւր զրացիների: Խօսք ու զրոյցը այժմ վերաբերում էր դպրոցական թարմ յիշողութիւններին: Ապագայ ֆիլոլոգը պատմում էր, թէ ինչպէս մաթեմատիկայի զրաւոր քննութեան ժամանակ մի ամբողջ ժամ խնդրի վրայ իզուր քրտնելուց յետոյ, արդէն իւր բանը պլրծած էր համարում, եթէ հարեան ընկերը իրան շուտ հասցնէր զրչահատը, որի մէջ խոթած էր վճռած խնդիրը: Ապագայ բժիշկը ասում էր, թէ պատմութեան քննութեան ժամանակ վերցրեց մի տոմսակ, որից նա մի հատ խօսք չէր կարող հաղորդել ունկնդիրներին, բայց ճարպիկութեամբ տոմսակը փոխեց և ազատեց վտանգից: Մի երրորդը, որ զեռ ևս բնական գիտութիւնների հոտը չ'աւած՝ արդէն սիրահար էր այդ գիտութիւնների և որը զեռ այժմ էլ լաւ չէր ըմբռնում oratio recta՝ի oratio obliqua՝ի տարբերութիւնը, նկարագրում էր իւր առևտոգաֆէն, որ կատարել էր յունարէնի և լատիներէնի քերականութիւնների վրայ: Ոսկերչեանը նկատեց, որ ինքը վաղուց է մի այդպիսի փառաւոր զոհ է մատուցել կրակին, թէև, քերականութիւնների փոխարէն, նետել է հնոցը եռանկիւնաչափութիւնը իւր երկու քոյրերի (այսինքն հանրահաշիւի և երկրաչափութեան) հետ: Դորա դէմ բողոք յայտնեց բնագէտներից մէկը, առարկելով, թէ մաթեմատիկան ամենաճիշտ գիտութիւններիցն է և բնաւ արժանի չէր այն վիճակին, որին նութարկել է Ոսկերչեանը: Նորան պաշտպանեց բժիշկներից մէկը, որը

մի քանի անգամ թերթած էր փիլիսոփայութեան պատմութիւնը՝ Ոսկերչեանը կամեցաւ հակառակել, բայց երբ բժիշկը, իւր խօսքերին կշիռ տալու համար, մէջ խոթեց Կոնտին և նմաններին, Ոսկերչեանը այլ ևս իրան անգոր զգաց և լռեց:

—Ну, also не деритесь! Կատակեց երիտասարդներից մէկը՝ ցանկանալով վերջ դնել վիճաբանութեան:

Այս խօսքերը արտասանւեցին այնպիսի առանձնացատուէ ձևով, որ բոլոր ներկայ եղողները մտաբերեցին իրանց բարի և ծեր զերմանացի ուսուցչին և ուրախ ծիծաղեցին:

Նոր կերակուր եկաւ մէջտեղ, որ սքանչացման բացականչութիւններ խլեց շատերի բերնից. պատառաքաղները իրար զարնեցին, և ապա իւրաքանչիւրը ախորժակով սկսեց վայելել իւր վերցրած համեղ պատառ:

Քիչ յետոյ վեր կացաւ երիտասարդներից մէկը և կարմիր գինով լի բաժակը ձեռքումը բռնած՝ խօսեց.

—Պարոններ, ես մի կենաց պիտի առաջարկեմ...

—Լուութիւն!... լսեցէք!... դուքին սեղանի այս ու այն ծայրից:

—Պարոններ, — շարունակեց ձառախօսը, — ութը տարուց աւելի մենք ընկերներ ենք եղել, և մեզ միացնողը եղել է գիտութեան ընդհանուր ծարաւը: Որքան քաղցր և անմռանալի տարիներ! Այն օրից, երբ մեր մէջ ծագեց գիտակցութիւնը, մենք լինչ եռանդով և ինչպիսի սիրով անձնատուէ եղանք մեր սեփական անձի կրթութեան գործին: Զարգացնել մեր միտքը և հոգով ազնւանալ — դարձաւ մեր պատանեկան հասակի կէտ նպատակի: Իսկ մեր ասուածութիւնն էր իդէալը, որը մեզ տաքացնում էր և ոգևորում: Այսօրուայ մեր քէֆը մեր անցած տարիների վերջին օրն է, մի ամբողջ պատմութեան վերջաբանը: Այս օրւանից մենք իրար հրաժեշտ պիտի տանք և իրարից բաժանւենք: Մենք պիտի ցրենք զանազան համալսարաններ. մեր ընտրած մասնագիտութիւններն էլ տարբեր են: Զորահինգ տարուց յետոյ մենք արդէն բժիշկ ենք, կամ փաստաբան, կամ բնագէտ և այլն. Կեանքի մէջ տարբեր պիտի լինին մեր պարապմունքները, տարբեր մեր ընտրած ասպարէզները և, գուցէ, մեր բնակութեան տեղերն էլ տարբեր: Կը յաջողի արդեօք այն ժամա-

Նախ մեզ մի անգամ էլ այսպէս ընկերաբար մի սեղանի նստել? Ես կասկածում եմ: Բայց որքան տարբեր էլ լինին մեր պարապմունքները, որքան հեռու էլ լինինք իրարից, այնուամենայնիւ, ես կարծում եմ, կայ մի ընդհանուր ասպարէզ, որ անխախտ կը պահէ մեր մէջ ընկերական կապերը: Դա հասարակական գործունէութեան ասպարէզն է: Խմենք ուրեմն մեր այս սեղանակից ընկերների կենացը և ցանկանանք, որ միմեանց կրկին հանդիպենք այդ ազնիւ ասպարիզի վրայ!... Միահամուռ կեցցէներր խլացրին ճառախօսի ձայնը, այնպէս որ վերջին բառերը ոչ ոք չլսեց, թէ և ամենքը հասկացան ասելիքը: Բաժակները զարնեցին իրար, շատերը միմեանց հետ համբուրեցին: Տաքացած ճառախօսը, որի աչքերը փայլում էին հոգեկան յուզմունքից և ոգևորութիւնից, դադարեց բաժակը, լուրջ դէմքով իւր տեղը նստեց, և ձեռքն առնելով հաւի բուդը, սկսեց մաքրադարդել մնացորդը:

Ամենքը ուրախ էին: Մէկը սկսեց կլկլացնել solo, և միւսները ձայնակցում էին:

Տխուր էր այժմ միայն Ոսկերչեանը, և այնքան տխուր, կարծես աշխարհը զլխին սևացաւ: Նրբէք իւր կեանքումը նա այն աստիճան չէր նախանձել մէկին, որպիսի նախանձ զգաց այժմ իւր սրտի խորքումը դէպի այս ընկերական շրջանը: Նա զղշում էր, որ մասնակցել է այս ուրախութեան: Ով է ինքը? Նա ինչի համար է եկել այստեղ?... Քիչ էր մնում, որ արտասուէր. բայց իրան զսպեց: Միայն մէկը նկատեց Ոսկերչեանի տրամադրութեան յանկարծակի փոփոխութիւնը և ասաց.

—Շատ մի' մտածիր, Արտաշէս: Խմի՛ր գինի. in vino veritas!

Ոսկերչեանը ժպտաց շինծու ժպիտով:

—Խմի՛ր, ասում եմ, —կրկնեց ընկերը. եթէ ոչ—տուգանք կը խմես:

Երբ Ոսկերչեանը, չկամենալով ընդհանուր ուշադրութեան առարկայ դառնալ, պարպեց բաժակը, միևնոյն երիտասարդը առաջարկեց նորա կենացը հետեւեալ խօսքերով.

—Պարոններ, լսեցէք, ուշադրութիւն!... Ես Արտաշէսի կենացն եմ առաջարկում... Թէպէտ ես անկեղծ ցաւում եմ, որ մեր ընկերը հնարաւորութիւն չունեցաւ մեզ հետ աւարտելու իւր ու-

սուժը բայց մխիթարական է այն, որ նա ուսումը թողնելով, չկորաւ կեանքի ալիքների մէջ, այլ գործում է այն ասպարիզում, որ մարդուն հաց չէ տալիս, բայց օգտակար է դարձնում հասարակութեան համար: Միայն ցանկանա՞նք, որ շուտ չվհատի, շուտ չծերանայ, այլ երիտասարդ լինի, քանի երիտասարդ է!...

Ներկայ եղողներից մէկը սկսեց. „gaudeamus igitur, juvenes dum sumus“ յայտնի ուսանողական երգը: Բայց խմբերգը դուրս եկաւ անկանոն, որովհետեւ ձայնակցողներից շատերը դեռ չգիտէին խօսքերը կամ գիտէին հատ ու կտոր:

Ոսկերչեանը մի երկու խօսքով իւր շնորհակալութիւնը յայտնեց և աւելացրեց հետեւեալը.

— Ես ձեզ երանի եմ տալիս և, եթէ կ'ուզէք ուղիղն ասեմ, մինչև անգամ նախանձում եմ: Բայց, շնայած դորան, ես ձեզ բոլորիդ սրտանց մաղթում եմ բարի ճանապարհ դէպի alma mater և ձեզ այնպիսի յաջողութիւն եմ ցանկանում, որպիսին ես կը ցանկայի իմ ամենամօտ բարեկամիս!... Թէև իմ յոյսերը ինձ միշտ խաբում են, բայց, եթէ այս անգամ յոյսս չխաբեց, Աստծով, տարիներից յետոյ, մենք իրար կրկին կը հանդիպենք հասարակական ասպարիզում!...

Ահաւասիկ այսպէս էին ուրախանում նորաւարտ երիտասարդները: Երկար տեւեց այս քէֆը, և, երբ սեղանից վեր կացան, շատերի մէջ դեռ ոյժ էր մնացել պար բռնելու, թուչկոտելու և հազար ու մէկ գծութիւնների ու չարածճի կատակների համար:

Բոլորի արիւնը եռում էր և զօրեղ հոսանքով զարնում էր երեսներին: Անհանգիստ շարժողութիւնը լրացրեց այն, ինչ որ կիսատ էր թողել ոգելից ըմպելիքը: Ոմանք հազիւ կարողանում էին ոտի վրայ կանգնել, երերւում էին: Մի քանիսի ձայնը խզւել էր, և կոկորդները քերւում էին: Մէկի գլուխը պտոյտ էր գալիս և սաստիկ ցաւում, այնպէս որ ձեռքը ձակաւոր վրայից չէր հեռացնում: Միւսը տարածւել էր մահճակալի վրայ և անքում էր: Մի երրորդը, որը լուրջ ժամանակ խելօք և հեղահամբոյց էր, այժմ աչնպէս կատաղել ու վայրկեանցել էր, որ մօտենալ չէր լինում: Հասցնում էր բռունցքը կամ աքացի էր տալիս: Մի անօրինակն էլ կար, որ սկսած խօսքը ծամծմելուց յետոյ հազիւ հազ կարողանում էր

արտասանել, մօտենում էր այս կամ այն ընկերոջ, ցուցամատը խոթում դէպի աչքերը և ասում.

—Դու... դու, յիմ... յիմար ես...

Եւ ընկերը պիտի խոստովանէր, որ յիմար է, եթէ չէր կամենում նորա ապտակի ոյժը փորձել իւր երեսի կամ ծոծրակի վրայ:

Խելքը գլխին միայն մէկն էր մնացել: Նա էլ փորը բռնած՝ շարունակ ծիծաղում էր, շարունակ քրքշում:

Ոսկերչեանը այնքան թուլացել և անզգացացել էր, որ դիակի էր նմանում. գոյնն էլ սաստիկ զցել էր: Մեծ ոյժ գործ դրին ընկերները, մինչև որ կարողացան բարձրացնել նորան աստիճաններով և ներս տանել սենեակը, ձգել մահճակալի վրայ:

Երբ առաւօտեան աչքերը բաց արեց, տեսաւ, որ լաւ մրսած է և պառկելու հիւանդ. գանգը ճաքում էր սաստիկ զլխացաւից, նոյնպէս և աչքերի շրջանակը. ամբողջ մարմինը ջարդւած, վիզը և ուսերը բռնւած. գլուխը ծուած էր մնացել մի կողքի վրայ:

Նորա հիւանդութեան մասին հարեան ընկերները իմացան միայն երեկոյեան, երբ՝ զարմացած այն արտասովոր լուրթեան վրայ, որ թապաւորում էր վերին յարկում, բարձրացան վերև ու դեռ ևս դրան ետևից լսեցին Ոսկերչեանի տնքոցը:

Նոքա յանդիմանեցին իրանց ընկերոջը, որ ինքը այս դրութեան մէջ է և իրանց մի կերպ իմաց չէ արել, մինչդեռ բաւական էր մի երկու անգամ ոտը խփել յատակին: Յետոյ հարցրին թէ նա, ի հարկ է, այդ օրը ոչինչ չէ դրել բերանը? Հիւանդը պատասխանեց, թէ բոլորովին ակորժակ չունէր: Երիտասարդներից մէկը վազեց ներքև և բերեց Ոսկերչեանի համար մի բաժակ թէյ: Հիւանդը մի քանի կում արաւ և ետ դրեց բաժակը: Քիչ յետոյ ընթրիք բերին նորա համար, ոչինչ չկերաւ: Նա չէր կամենում ոչ խօսել, ոչ լսել. շարունակ տնքում էր: Ընկերները ցանկացան բժիշկ բերել, Ոսկերչեանը թթւացրեց դէմքը և ասաց.

—Հարկաւոր չէ... կ'անցնի:

Նորա հիւանդութեան երկրորդ օրը եկաւ ֆալչեանը և շատ զարմացաւ, երբ տեսաւ նորան անկողնում պառկած: Նա մի քանի հարցումներ ուղղեց հիւանդին, բայց սա այնքան ակամայից, այնպիսի տհաճութեամբ էր պատասխանում, որ նա բարւոք համարեց

առժամանակ լուել: Նստեց և ուշի ուշով սկսեց նայել Արտաշէսի դէմքին: Ստացած տպաւորութիւնը երկիւղ ազդող էր: Հիւանդի երեսը բաց լեղակի պէս կապտել էր, քիթը սրւել, աչքերը ցած ընկել իրանց խորշերի մէջ, իսկ ականջները թաղանթի նման բարակել ու կիսաթափանցիկ էին դարձել:

Նա մտածեց. «Բժշկի օգնութիւնը անհրաժեշտ է, բայց որտեղից փող ճարեմ?»

Նորան յայտնի էր, որ Գարեգին Զառիկեանը և Արտաշէսը իբար հետ շատ մօտ են եղել և, յամենայն դէպս, նա սիրաջօժար կը գայ իւր բարեկամին այցելելու:

Առանց մի խօսք ասելու Ոսկերչեանին, Ֆալէեանը գնաց և մի ժամից յետոյ վերադարձաւ Զառիկեանի հետ: Վերջինս չափազանց տխուր և անհանգիստ էր, երբ մտաւ սենեակը: Երևի, լրատուն վտանգաւոր է ներկայացրել նորան Արտաշէսի հիւանդութիւնը:

Երբ Ոսկերչեանի աչքին երևաց Գարեգինը, մի վայրկենի մէջ մի քանի զգացմունքներ վեր կացան նորա սրտումը՝ և ուրախութիւն, և ներքին ամօթ, և ջերմ շնորհակալութիւն... Թոյլ ժպիտ խաղաց դէմքի վրայ, և, դաստակը կրթնելով բարձին, կամենում էր նստել և իւր յարգանքը մատուցանել իւր կարօտած և թանկագին բարեկամին:

Գարեգինը մօտ քաշեց աթոռը, նստեց և, ձեռքի ափը դնելով հիւանդի ճակատի վրայ, քիչ յետոյ հարցրեց.

—Քանի օր է, որ սլառկած ես, Արտաշէս?

Ոսկերչեանը բաւարարութիւն տւեց այս հարցին: Զառիկեանը կրկին մի քանի ուրիշ հարցեր տւեց, և ասլա ոչինչ չխօսեց: Երեք ռուպէ շարունակ սենեկի մէջ այնպիսի լռութիւն էր տիրում, որ սլարդ լսում էր ճանճի ձայնը, որը՝ սարդի ոստայնի մէջ ընկած պարբերաբար ծւում էր և դադարում:

Գարեգինը շտապեց բժշկի ետեւից, չնայած, որ Արտաշէսը աշխատում էր հաւատացնել, թէ աւելորդ է, այնպէս էլ կ'անցնի:

Շուտով բժիշկն էլ եկաւ: Երբ նա հիւանդին քննեց և մօտեցաւ սեղանին դեղատոմս գրելու, Զառիկեանը կամաց հարցրեց.

—Վտանգաւոր չէ?

—Ի հարկէ ոչ, — պատասխանեց բժիշկը. միայն հարկաւոր է լաւ պահպանել:

Ֆալչեանը խոստացաւ հսկել հիւանդին և մօտիցը չհեռանալ, մինչև որ կը կազդուրւի: Բժիշկը վերջացրեց իւր գործը և հեռացաւ: Ֆալչեանը վազեց դեղատուն և բերեց դեղերը: Երկուսով միասին խմացրին գեղը: Գարեգինը երեք մանէթ փող թողեց սեղանի վրայ (դեղերի փողն էլ նա էր տւել) և խնդրեց, որ Ֆալչեանը նեղութիւն կրի առնել հիւանդի համար, ինչ հարկաւոր լինի: Ֆալչեանը կրկնեց, որ ինքը գիշերը պիտի մնայ Արտաշէսի մօտ, որպէս զի լաւ պահպանէ նորան:

—Այո, եթէ այդքան բարի կը լինիք, — ասաց Գարեգինը և, առողջութիւն ցանկանալով հիւանդին, դուրս եկաւ ու զնաց:

Յետոյ երեւացին Ոսկերչեանի հարեան ընկերները: Նոքա ճանապարհորդական շորեր ունէին հագած. երեկոյեան գնացքով պիտի մեկնէին իւրաքանչիւրը իւր հայրենիքը, ծնողների մօտ, որպէս զի ամառը անցնելուց յետոյ՝ ուղեորէին Մոսկւայի համալսարանը: Հրաժեշտ տւին իրանց ընկերոջը, մաղթեցին նորան կատարեալ առողջութիւն և յաջողութիւն ու, առանց աւելորդ թուկէներ կորցնելու, շտապ հեռացան Արտաշէսի մօտից:

Ֆալչեանը մնաց Ոսկերչեանի միակ հոգատարը և խնամողը: Գիշերը քնեց աթոռների վրայ, ճրագը չհանգցրեց, հիւանդի ամեն մի ձայնից զարթնում էր և կանխում ու կատարում նորա ամեն մի ցանկութիւնը:

Այսպէս տեւեց երեք-չորս օր: Այս ժամանակամիջում Գարեգինը մի քանի անգամ այցելեց իւր բարեկամին և խօսք չէր գրտնում իւր շնորհակալութիւնը յայտնելու Արտաշէսի անձնէր ընկերոջը: Ոսկերչեանը շուտով առողջացաւ: Հիւանդութիւնից յետոյ նոր եռանդ էր զգում նա իւր մէջ: Հոգեկան տրամադրութիւնը շտտ կարգին էր: Գրելու և առհասարակ գործելու մեծ փափագ կար ներսը: Հաւատը դէպի մարդը նոր ջերմութիւն էր ստացել սրտումը, և ոգևորութեան թուկէները աւելի ստէպ և աւելի յարատե դարձան:

Նա ուրախ էր, որ իւր տկարութիւնը պատճառ դարձաւ Գարեգինի հետ կրկին մտերմանալու: Իսկ Ֆալչեանի վրայ նա միանգամայն զարմացած էր մնացել: Ուրեմն այդ թշուառ մարդու սըր-

տուժը դեռ մնացած է եղել մի անկիւն, ուր թագնւած է ամենա-
անգին բանը աշխարհիս երեսին—եղբայրական սէրը? Տէր Աստուծ,
դա այն մարդը չէ, որի շրթունքը աջ ու ձախ հայհոյելու միայն
վարժած էր և փրփրում էր, երբ մարդկանց անիրաւութեանց մասին
բերան էր բաց անում?։.. Արի աշուհետե ու հասկացիր մարդ
ասած արարածին!

Նորա հիւանդութեան ժամանակ եղած դասը ձեռքից դուրս
եկաւ։ Բայց զորա փոխարէն, Պարեզինը նորա համար երկու նոր
դաս գտաւ, երեսուն և հինգ մանէթ վարձատրութեամբ, Սաստիկ
ուրախ էր Ոսկերչեանը այդ բանի համար, որովհետեւ յոյս ունէր,
որ իւր հօրն էլ իւրաքանչիւր ամիս կարող է փող հասցնել։

Նա արդէն մի նոր երկասիրութիւն էր ծրագրում։ Դա պիտի
լինէր պատմական դրամա Արտաշէս Երրորդի որդու կեանքիցը, վեր-
նագիրը՝ «Արտաւազդ II»։ Նա հաւատացած էր, որ զեղեցիկ թատր-
երգութիւն պիտի դուրս գայ, որովհետեւ սիւժէտը հոյակապ էր։

Բայց շուտով մի դէպք պատահեց, որից ամեն բան տալիս ու
վրայ եղաւ։

Հեռագիր ստացաւ նա իւր ծննդավայրից հետեւալ բովանդա-
կութեամբ. «Հայրդ ծանր հիւանդ է. շտապիր»։ Հարկանի սոորա-
գրութիւնն էր։

«Գնալ թէ ոչ?» — ահա այն հարցը, որ ծագեց նորա զլխումը։
Հեռագիրը կարդալուց յետոյ։ Երկար ժամանակ մտատանջութեան
ու վարանման մէջ էր նա և չգիտէր, ինչ անէր։ Ծանր էր նորա
համար ձեռքից թողնել դասերը, որոնք մի քանի ամսուայ ապահո-
վութիւն էին խոստանում։ Ծանր էր զրկւել այն չարմարութիւնից,
որ ներկայացնում էր բանաստեղծական բնակարանը։ Բայց միևնոյն
ժամանակ հայրը «ծանր հիւանդ է»։ Նա ծեր է, և, եթէ նորան
անբախտութիւն պատահի, էլ չի տեսնիլ նորան չաւիտեանս յաւի-
տենից։

Վերջի վերջոյ որդիական սէրը և պարտաճանաչութեան զգաց-
մունքը հանեցին նորան դժար գրութիւնից, և նա սկսեց ճանա-
պարհորդութեան պատրաստութիւններ տեսնել։

Բայց ճանապարհածախսի խնդիրը նոր հոգսերի և մտատան-
ջութեան առարկայ դարձաւ նորա համար։ Դիմել Զատիկեանին նշա-

նակում է ի չարը գործ դնել նորա բարութիւնը: Ո՛չ, նորան այս անգամ պէտք է հանգիստ թողնել: Դիմեց ծանօթներին. շատերը մերժեցին: Միայն երկուսից ստացաւ հնգական ռուբլի: Գրաւ դրեց ժամացոյցը, որի համար տւին արժէքի երրորդ մասը: Բայց պիտի կարողանայ արդեօք իւր ժամանակին գրաւը թափել? այդ դեռ հարց է: Այսքան չարչարանք, մտածում էր Ոսկերչեանը, այսքան նեղութիւններ մի որեւիցէ քստն մնալի համար?... Խաչտառակ կեանք!...

—Վաղը ես գնում եմ հայրենիք, — ասաց նա, տեսնելով փողոցում փախեանին:

—Ինչու այդպէս յանկարծ? հարցրեց ընկերը զարմանքով:

—Հայրս ծանր հիւանդ է, — եղաւ. Ոսկերչեանի տխուր պատասխանը:

XVIII

Մայիսի վերջերում Ազատեանի ծանօթները յաճախ պատահում էին նորան Աշխէն Զառիկեանի հետ միասին զբօսնելիս և արդէն խօսում էին որոշ շրջաններում, թէ նոքա նշանւել են:

Այս լուրը ճիշտ չէր, բայց հեռու չէր իսկութիւնից: Բանը այն է, որ Ազատեանի վաղուցւայ իղձ ու փափազն էր միանալ այդ գաղափարական և վերին աստիճանի աշխոյժ օրիորդի հետ: Միայն չէր վստահանում առաջարկութիւն անել: Կը համաձայնէն արդեօք նորա մայրը և եղբայրը — դա ծանր ու բարակ մտածելու խնդիր էր: Մանաւանդ կասկածաւոր էր նա Գարեգինի վերաբերմամբ: Նա տեսնում էր, որ Գարեգինը իր հետ սառն է, և, չնայած իւր բոռը ցանկութեան, անկարելի է լինում նորա հետ մտերմութիւն հաստատել:

Բայց ինկատ առնելով օրիորդի մօր փափուկ բնաւորութիւնը և եղբօր այն գիծը, որը թույլ չէր տալ նորան բռնանալ ուրիշի զգացմունքի վրայ, Ազատեանը հակած էր կարծելու, որ իւր առաջարկութիւնը, յամենայն դէպս, զօրեղ արգելքների չի հանդիպելու: Վերջապէս զարնանային մի գեղեցիկ օր նա բաց արաւ սիրտը օր. Աշխէնի առաջ:

Բոսաբանական այդումն էին: Ազատեանը ձեռքումն ունէր մի գեղեցիկ ալ վարդ: Աշխէնը ասաց, թէ սաստիկ հոտաւէտ է երևում

վարդը, որովհետև հեռից զգում է նորա անուշ բոցը: Ազատեանը խնդրեց, որ ընդունէ իրանից այդ ծաղիկը: Աշխէնը վերցրեց, շնորհակալութիւն առաւ և սկսեց հոտ քաշել: Ազատեանը ասաց.

— Եթէ իմանամ, որ իմ սիրտն էլ դուք նոյնքան ուրախութեամբ կ'ընդունէք ինձնից, ես կը հանեմ սիրտս և ձեզ կը տամ: Աշխէնը կարմրեց և ոչինչ չպատասխանեց:

Երկուսի սրտերը սկսեցին ուժով բաբախել: Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին: Երբ զբօսնողների աչքից հեռացան և մօտն մի ատերաշատ և նեղ ծառուղի, Ազատեանը շարունակեց այն, ինչ որ կիսատ էր թողել: Նա յայտնեց իւր ջերմ համակրութիւնը, որ տաճում է գէպի օրիորդը, և աւելացրեց.

— Զգիտեմ, արդեօք ես ևս արժանացել եմ փոխադարձ համակրութեան ձեր կողմից:

Աշխէնը կրկին շառագունեց և, առանց նորա դէմքին նայելու, ժպտալով ասաց.

— Կարող էք վստահ լինել իմ փոխադարձ համակրութեան վրայ:

Այս սիրային բացատրութիւնների ժամանակ նոքա կանգնած էին մի բաղնիքապատ կանաչ հովանու մօտ: Ազատեանը առաջարկեց նստել այնտեղ: Եւ առանձնութեան մէջ, հետաքրքիր աչքերից հեռու, սկսեցին նոքա իրանց մտերմական խօսք ու զրոյցը: Ազատեանը երկար խօսեց «ամուսինների հաւասար իրաւունքներից», յայտնեց, թէ ինչպէս է ինքը հասկանում «կեանքի ընկեր» ասածը, և նորա բախտաւոր ունկնդիրը նորա իւրաքանչիւր խօսքը իբր պատգամ էր ընդունում:

Նոյն օրը Աշխէնը հաղորդեց մօրը Ազատեանի առաջարկութեան մասին: Մայրը ասաց, որ ինքը այդ մասին կը խօսի Քարեզինի հետ: Բայց ամենից առաջ նորա գործը եղաւ կողմնակի կերպով տեղեկութիւններ ժողովել Ազատեանի վերաբերմամբ. ունի նիւթական ապահովութիւն թէ ոչ, ինչպիսի՞ ծնողների զաւակ է և այլն: Իւր ձեռք բերած տեղեկութիւնների հիման վրայ նա մի յայտնի կարծիք կազմեց իւր ապագայ փեսացուի մասին և յետոյ միայն խօսեց իւր որդու հետ:

Շատ չդարմացրեց Քարեզինին մօր հաղորդած լուրը: Նա տեսնում էր, որ իւր քրոջ և Ազատեանի ծանօթութիւնը այն աստի-

ձանի մտերմութեան է հասել, որին յաջորդում են սիրային բացառութիւններ և առաջարկութիւններ: Ամենևին անսպասելի չէր այն, ինչ որ հաղորդեց մայրը:

Գարեգինը երկմտութեան մէջ էր և չգիտէր, ինչ պատասխան տալ: Նա ինքը անձամբ շատ էլ լաւ կարծիք չուներ Ազատեանի մասին: Նորա աչքում այդ երիտասարդը անտանելի էր, իբր զրչի մարդ: Բայց միևնոյն ժամանակ մտածում էր. միթէ նա, լինելով անհամակրելի մամուլի և գրականութեան մէջ, անպատճառ անտանելի սէտք է լինի նաև իւր ընտանիքի համար, ամուսնական կեանքի մէջ? Ով կարող է հաստատ ասել, թէ Ազատեանը կը լինի անսէր և անհաւատարիմ ամուսին—նա, որ այնքան յաճախ ջատագովել է և ջատագովում է կին-մարդու իրաւունքները?

Գարեգինը, մտածելուց յետոյ, երկար խօսեց մօր հետ, և ահա ինչ ասաց նորան ներկայ խնդրի առիթով: Աշխէնը կրթւած և չափահաս աղջիկ է և իրաւունք ունի պահանջելու, որ ապագայ ամուսնու ընտրութիւնը իրան և միայն իրան թողնուի: Հետեւեալ արգելի նորան այդ քայլն անելու չպիտի թոյլ տան իրանց ոչ մայրը ոչ եղբայրը: Բայց, ի հարկէ, վերջիններիս բարոյական պարտականութիւնն է հոգալ նորա ապագայ վիճակի մասին, և այդ հոգալը կարող է կայանալ միայն և միայն բարի խորհուրդների մէջ: Աշխէնին հարկաւոր է հասկացնել, որ նորա ընտրած երիտասարդի արժանաւորութիւնները ենթադրական բաներ են, իսկ մի քանի թերութիւնները Ահնրեւ են. որ նա արժանի է աւելի լաւ մարդու կեանքի ընկերը լինելու: Սակայն, եթէ նա հաստատ վճռել է իւր ընտելիքը, ոչոք նորա ձեռքը չպիտի բռնի:

—Ե՛հ, որդիս, եթէ այդպէս է, լաւ է չ'ընդունենք,—ասաց մայրը, Գարեգինի խօսքերը լսելուց յետոյ:

Բայց Գարեգինը կրկնեց, որ Աշխէնին հարկաւոր է իւր կամքին թողնել և ոչ մի կերպ չբռնանալ նորա զգացմունքի վրայ:

Այդ մասին մայրը աւանձին խօսակցութիւն ունեցաւ իւր աղջկայ հետ: Նա ասաց, որ Գարեգինը այնքան էլ ուրախ չէ նորա արած ընտրութեան վրայ: Աշխէնը պատասխանեց հեգնութեամբ և զսպւած զայրոյթով.

—Ինչպէս կը բարեհաճէք:

Եւ ուրիշ ոչինչ: Եւ մի րոպէ աւելի չուզեց մնալ մօր մօտ: Եւ անմիջապէս հեռացաւ իւր սենեակէ: Մայրը գնաց նորա ետեւից, և խօսակցութիւնը շարունակեց այնտեղ:

Մայրը տասց.

— Դու գիտես, Աշխէն ջան, որ մենք քո լաւն ենք ցանկանում...

— Այդ գիտեմ, — ընդհատեց նորա խօսքը Աշխէնը:

— Խօսք չկայ, այդ Ազատեանը լաւ տղայ է, վատ չէ, անուն էլ ունի հանած, բայց դու արժանի ես աւելի լաւ և աւելի...

— Աւելի հարուստ տղի, այնպէս չէ? Նորից հեգնեց աղջիկը:

— Ոչ թէ աւելի հարուստ, այլ աւելի մեծ ուսումով...

— Կ'ուզէի իմանալ, թէ այն որ համալսարանականիցն է նա պակաս? Եւ այսպէս մօր ամեն մի առարկութիւնը ջարդ ու փշուր եղաւ Աշխէնի կտրուկ և լակոնական պատասխաններով:

Դիմադրութիւնը թոյլ էր, և սէրը յաղթութիւն տարաւ: Առաջարկութիւն անելուց յետոյ շատ չսպասեց Ազատեանը: Երբորդ օրը քաղաքային պոստով տուացաւ մի նամակ, որով օրիորդը ուրախութեամբ յայտնում էր մօր և եղբօր համաձայնութիւնը:

Շուտով նոքա իրանց նշանի մատանիները փոխանակեցին:

«Աշխէնը նշանել է Ազատեանի հետ», «Ազատեանը նշանել է օր. Զառիկեանի հետ» — այս լուրը համարեա նոյն օրը տարածեց քաղաքում ծանօթ շրջանների մէջ, և սկսեցին բարի և չար գուշակութիւնները նոցա ամուսնական կեանքի վերաբերմամբ: Բախտաւոր կը լինին թէ անբախտ? Յարմար զոյգ է զա թէ անյարմար? Այսպիսի հարցեր շատ երիտասարդների գլուխներ էին զբաղեցնում: Երբ Ոսկերչեանի ականջին հասաւ այս լուրը, նա սաստիկ զարմացաւ, ախ քաշեց և ասաց.

— Ափսոս Աշխէն!

Սեռմեանը սրտանց ուրախ կը լինէր, որ օր. Զառիկեանը իւր ամուսնութեան հէնց առաջին ամսից յետոյ հիասթափութիւն կրէր և բաժանէր Ազատեանից, այդ ճշտօտ համակրելի երիտասարդից, որպէս զի նա քիչ փորձելի և աշխարհիս լաւն ու վատը կարողանաց իրարից զանազանել:

Միևնոյն օրերում, երբ Զառիկեանների տանը հոգսերի և լուրջ խորհրդակցութեան առարկայ էր զարձել Աշխէնի վիճակի հարցը,

Գարեգինի միտքը զբաղւած էր նաև մի ուրիշ կարևոր գործով: Իւր տեղումը եւ յիշել եմ, որ Զառիկեանին յանձնւած դպրոցի համար հոգաբարձական ընտրութիւն պիտի կատարէր: Ընտրութիւնը կատարւեց, բայց ոչ յաջող՝ ուսումնարանի շահերի տեսակէտից: Ընտրւածներէից մէկը Սեւումեանի մօտիկ ծանօթն էր, իսկ միւսը՝ «սեահոգու» ազգականը: Գեռ եւ թեմակալ առաջնորդից չհաստատւած, նորընտիր հոգաբարձուները սկսեցին հեռւից հետամուտ լինել դըպրոցի ներքին գրութեան: Քննութիւնների ժամանակ մէկը կամ միւսը անպատճառ ներկայ էր լինում: Զառիկեանի համար անկասկած էր, որ իրան յանձնւած հիմնարկութեան վրայ առամներ կան սրած: Նա շուտով համոզւեց, որ իւր պաշտօնավարութեան վերջին օրերը եկել են: Եւ հաճողից նորան հետեւեալ հանգամանքը:

«Ժամանակի» մէջ լոյս էր տեսել մի յօդւած, որի մէջ ամենամռայլ գոյներով էր նկարագրւած Զառիկեանին յանձնւած ուսումնարանը: Այնտեղ, ի միջի այլոց, ասւած էր. «Մի քանի օր շարունակ ներկայ լինելով հարցաքննութիւններին, եկայ այն տխուր եզրակացութեան, որ պատուելի ուսուցիչները ոչինչ չէին արել: Մանուանդ թոյլ էին մի քանի ուսուցիչների քննութիւնները: Եւ հասկանալի է, թէ ինչու: Եթէ մանկավարժը իւր ուշ ու միտքը տայ կեր ու խումի, քէֆերի և թղթախաղի, նորա աշակերտները, բնական է, ոչ մի առաջդիմութիւն չեն կարող անել: Բացի այդ, մեզ յայտնի է հաստատ աղբիւրից, որ ուսուցիչներից մէկը թոյլ է տալիս իրան ծեծել աշակերտներին և բարբարոսաբար է վարւում աշակերտահինների հետ. ծեծը նորա մանկավարժութեան մէջ առաջին տեղն է բռնում: Թուք և ամօթանք թող լինի դոցա վարձատրութիւնը: Շնորհիւ այդպիսի ծոյլ և անգործ մարդկանց և, երևի, հսկողութեան ու դիսցիպլինայի բացակայութեան, այդ դպրոցը հասել է աննախանձելի դրութեան և կարօտ է արմատական վերանորոգութեան»: Ստորագրութեան տեղ կար միայն երեք ասուղ:

Այս յօդւածի հեղինակը նոյն այն «սեահոգին» էր, որին Զառիկեանը արձակեց անցեալ տարի և որը այժմ լիացոյց էր, որ իրան տապալողները շուտով իրանք պիտի տապալւին:

Երբ նոր հոգաբարձուները ստանձնեցին իրանց պաշտօնը, նոցա

առաջին գործը եղաւ առաջարկել Զառիկեանին ազատ կացուցանել, ամբողջ խումբը և կազմել նորը, ըստ բարեհայեցողութեան հոգաբարձութեան և նոցա ցուցմունքների համաձայն: Աւագ ուսուցիչը կորակի մերժեց այդ առաջարկութիւնը և ներկայացրեց իւր հրաժարականը: Զառիկեանի օրինակին հետևեցին նորա բոլոր պաշտօնակիցները:

«Առահողին» գրաւեց Գարեգինի տեղը, և նորան յանձնարարեցին նոր խումբ կազմել:

Այս քաշեց Զառիկեանը, երբ իմացաւ, որ իւր փայփայած հիմնարկութեան ղեկը անցնում է մի խարդախ հոգու և սահմանափակ գլխի տէր մարդու ձեռքը:

Տխուր և մտախոհ թեք էր ընկած նա դահլիճումը բազմոցի վրայ և ընչացքի ծայրերն էր կրծում: Աշխէնը և Մարիամը միմեանց թե առած՝ անց ու դարձ էին անում այնտեղ: Բոլորն էլ լուռ էին: Գարեգինի միտքը դպրոցի շուրջն էր պտտում, քոյրը իւր ցնորքներով տարւած էր հեռու իւր կեանքի ապագայ ընկերոջ հետ, իսկ կինը մտածում էր այն փոփոխութիւնների մասին, որոնք պիտի կատարէին մօտ ապագայում շնորհիւ երկու հանգամանքների՝ իւր ամուսնու դպրոցից հեռանալու և Աշխէնի մարդու գնալու:

Այդ ժամանակ դահլիճը մտաւ Ազատեանը: Անփոյթ կերպով գլխարկը նետեց պատուհանի վրայ և սեղմեց Աշխէնի ձեռքը, որը նորան տեսնելուն պէս՝ առաջն էր վազել: Յետոյ նա բարեկեց տիկին Մարիամին, թոթւեց Գարեգինի ձեռքը և ծիծաղելով ասաց.

—Շնորհաւորում եմ, բարեկամ. լաւ են մաքրել ձեր բունը!

—Ինչ արած: Մեր ամեն բանը այսպէս է:

—Մենք թոյլ վարւեցինք, և մեր հակառակորդները յաղթեցին: Բայց ոչինչ. հերթը մի օր մեզ կը հասնի: Թող տարին լրանայ, ես ինքս անձամբ ներկայ պիտի լինիմ հարցաքննութիւններին, և այն ժամանակ փոխարէնը կ'աշխատենք հատուցանել: Այն պէս ջախջախեմ այդ տափակ գլուխները!...

—Ե՛հ, ինչ որ էլ լինի, դա ինձ ցաւ չէ պատճառում: Մենք մրցում ենք, մե՛ք իրար միս ենք ուտում, իրարից վրէժ առնում, բայց չենք մոռցնում, որ մէջտեղ փնասւում է մատաղ սերունդը:

—Ուղղութիւնների մրցումը անհրաժեշտ և անխուսափելի է զիտակցութեան հասած ժողովրդի համար:

—Գիտակցութեան հասած? զարմանքով և շեշտով արտասանեց Գարեգինը: Հէնց բանն էլ այդ է, որ մենք զեռ ևս զիտակցութեան չենք հասած: Մենք գտնուում ենք քաղաքակրթութեան այն աստիճանի վրայ, որ գոյութեան կռիւը համարեա միշտ շփութում ենք ուղղութիւնների և զաղափարների մրցման հետ:

Եւ այսպէս գնալով վէճը սաստկացաւ: Ազատեանի և Գարեգինի հայեացքները տարբերուում էին երբեմն նոյն իսկ հիմնական կէտերի մէջ: Առաջինի լաւատեսութիւնը և միւսի չոռետես կարծիքները կարմիր և սև թելերի պէս որոշուում էին երկուսի ընդդիմախօսութիւնների միջից: Մարիամը և Աշխէնն էլ մէջ մտան. մէկը պաշտպանում էր իւր ամուսնուն, միւսը իւր նշանածին:

Այս վիճաբանութիւնը երկար չտևեց. մայրիկը եկաւ, և խօսակցութեան նիւթը փոխեց: Խօսքը պսակի մասին էր: Ազատեանը յայտնեց, որ ինքը վաղուց է չէ տեսել իւր հայրենիքը և վճռել է այս ամառ անցկացնել այնտեղ. ներկայացել է յարմար առիթ: Աշխէնին իւր ծննդավայրը ցոյց տալու, ուստի առաջարկում է շուտով կատարել պսակը: Մայրիկը ասաց, որ աւելի լաւ է յետաձգել այդ աշնան սկզբներին: Բայց Ազատեանը հաստատ էր իւր որոշման վրայ, և Աշխէնն էլ դորան հակառակ չէր:

Խորհուրդ արին, նշանակեցին հարսանիքի օրը, և սկսեցին պատրաստութիւններ տեսնել:

Հետեւեալ օրը ցերեկայ գնացքով Ոսկերչեանը մեկնեց Թիֆլիսից դէպի իւր ծննդավայրը: Միակ անձը, որ բարի ճանապարհ մաղթեց նորան կայարանում, Գարեգին Զառիկեանն էր: Փալչեանը չհասաւ: Երբ նա շնչասպառ երևաց տախտակամածի վրայ, գնացքը արդէն սլանում էր...

(Նորունակիլի)

ՅՈՐՆԱԾ ԾՈՎԸ...

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱՅԵԱՆԻ

Թոշնած ծովը փրփուր բերնին
Ափին ընկած կը հեաց.
Ժէռ ափերից մոժը քիչ-քիչ
Ծովի վրէն կը սողայ:
Վէրքը սրտիս անաէր, անտուն՝
Կեանքից հեռու եմ փախեր.
Կ'ուզեմ ապրիմ վայրի ափում—
Ապրիմ մէ'նակ, անընկեր:

Աստղունք մէկ-մէկ ելան, բազման
Երկի փէրուզ աթոռքում.
Աստղերի պէս երգերս ելան
Հագուս մնայլ խորքերում.
Սրտիս լարերն տրտում-տրտունջ
Թոշնած կեանքս երգեցին.
Հովը հեաց մեռնջ ու մրմունջ,
Աստղունք վրէս լացեցին:

Ամպերն ընկան ծովի վրէն
Հազար բերնով ջուր խմին.
Թռաւ որորն խոլոր ծովէն,
Ծըււաց, նստաւ թուխ քարփին:
— Ես էլ քեզ պէս, տխուր որոր.
Աչերս արցունք ու անքուն
Կը թափառեմ ոլոր-մոլոր
Կեանքի հեռու ափերում:

Տ Ա Ն Ը

ԱՆ. Պ. ՉԵՄՈՎԻ. Թարգմ. Լեւոն Թումանյանի

—Գրիգորյեվենք մարդ էին ուղարկել, ինչ որ գիրք էին ուզում, բայց ես ասացի, որ դուք տանը չէք: Յրեւել լրագիրն ու երկու նամակ էր բերել: Ի դէպ, Եւզենիյ Պետրովիչ, ես ձեզ կը խնդրէի ուշադրութիւն դարձնէք Սերեոթայի վերայ. այսօր ու մէկէլ օրը ես նկատեցի, որ նա ծխում է. երբ ես սկսեցի նրան ամօթանք տալ, նա, ըստ իւր սովորութեան, խցեց ականջները և բարձրաձայն երգեց, որպէս զի խեղդի իմ ձայնը:

Եւզենիյ Պետրովիչ Բըկովսկին, նահանգական դատարանի պրոկուրորը, հէնց նոր էր եկել տուն և դուրս էր քաշում իւր ձեռնոցները. նա նայեց այդ տեղեկութիւնները տուող դատարարակուհուն և ծիծաղեց:

—Սերեոթան ծխում է... ուսերին արեց նա:—Երևակայում եմ այդ թղուկին պապիրոսը դնչին: Քանի տարեկան է որ:

—Եօթ տարեկան: Ձեզ այդ լուրջ բան չի երևում, սակայն նրա հասակում ծխելը փնասակար և վատ սովորութիւն է, իսկ վատ սովորութիւնները հարկաւոր է արմատախիլ անել հէնց սկզբում:

—Կատարեւապէս ճիշտ է. սակայն նա որտեղից է ձեռք գցում թութուներ:

—Ձեր սեղանից:

—Հա: Որ այդպէս է՝ ուղարկեցէք նորան ինձ մօտ:

Դատարարակուհու գնալուց յետոյ Բըկովսկին նստեց գրասեղանի առաջ բազկաթուռի վերայ, աչքերը խփեց և սկսեց մտածել: Նա Սերեոթային, ինքն էլ չը գիտէր ինչո՞ւ, պատկերացնում էր իւր երե-

Լաւայութեան մէջ ահագին, արշինանոց սպալիրոսը զնչին, մխիթուլաների մէջ կորած, և այդ ծաղրանկարը ստիպում էր նորան ժպտալ. միևնոյն ժամանակ դաստիարակչուհու լուրջ, մտադրաղ դէմքը զարթեցրեց նրա մէջ այն կիսով չափ մոռացած հեռաւոր անցեալի յիշողութիւնները, երբ դպրոցում կամ մանկանոցում ծխելը մի տարօրինակ և անբացատրելի սարսափ էր բերում մանկավարժների և ծնողների զլխին: Ճիշտ որ սարսափ էր այն: Տղերանցը անխղճաբար զանակոծում էին, դուրս էին քշում գիմնապից, ալլանդակում էին նրանց կեանքը, թէև մանկավարժներից և հայրերից ոչ մէկն էլ է չը գիտէր, թէ ո՞րն է խկապէս ծխելու վնասն ու յանցաւորութիւնը: Մինչև անգամ շատ խելօք մարդիկ էլ երկար չէին մտածում մաքառել այն ախտի դէմ, որը իրենք էլ չէին հասկանում: Եւ զենից Պետրովիչը յիշեց իրանց գիմնազի դիրեկտորին, այն չափազանց կրթած և բարեսիրտ ալեւորին, որը գիմնազիստի ձեռին պապիրոս տեսնելիս այնպէս էր վախւորում, որ զունատում էր, անյապաղ մանկավարժական արտակարգ ժողով էր գումարում և վճռում էր յանցաւորին արտաքսել: Երևի այդպէս է հանրակեցութեան կարգ ու կանոնը. ինչքան էլ որ անբացատրելի լինի չարիքը—այնքան էլ անսպորոյն և կոպտ կերպով են մաքառում նորա դէմ:

Պրոկուրորը մտաբերեց այդպիսի դուրս արածներից երկու-երեքին, նրանց յետագայ կեանքը և չէր կարող չը խորհել նաև այն մասին, որ շատ անգամ պատիժը աւելի է չարիք հասցնում, քան թէ նոյն ինքը յանցանքը: Կենդանական օրգանիզմը ընդունակ է շուտափոյթ չարմարելի, ընտելանալ և սովորել շունչ քաշել ինչ տեսակ ասես մթնոլորտի մէջ. այդպէս որ չը լինէր՝ մարդ ստիպւած պիտի լինէր իւրաքանչիւր րոպէ զգալ, թէ ինչքան անմիտ բովանդակութիւն է ունենում շատ անգամ նրա խելացի կարծւած գործունէութիւնը և թէ դեռ ինչքան քիչ խոհական ճշմարտութիւն և հաստատամտութիւն կայ մինչև անգամ իրանց հետեւանքներով ահաւոր այնպիսի պատասխանատու գործունէութիւնների մէջ, որպիսիք են՝ մանկավարժականը, իրաւաբանականը, զրականը...

Եւ ղոյնանման թեթեւ, ցիրուցան մոքեր, որոնք երևան են գալիս միայն յոգնածութիւնից դադար առնող ուղեղի մէջ, սկսե-

ցին եռալ Եւգենիյ Պետրովիչի գլխում։ չէս էլ իմանում, թէ որտեղից ու ինչի համար են առաջ զալիս այդ տեսակ մոքերը։ Երկար էլ կանգ չեն առնում մարդու գլխում և, կարծես, սողալով անցնում են մարդու ուղեղովը երեսահոն, առանց խորը թափանցելու։ Այդ տեսակ ազատ, առտնին մոքերը մի տեսակ կոմֆորտ, դիւրեկան չարմարութիւն են կազմում այն մարդկանց համար, որոնք ստիպւած են լինում ժամերով, մինչև անգամ օրերով մտածել պաշտօնապէս ու միեւնոյն ուղղութեամբ։

Երեկոցեան ժամը ինն էր։ Վերեւ, առաստաղից դէնր, երկրորդ չարկում մէկը անց ու դարձ էր անում անկիւնից անկիւն, իսկ նրանից էլ վերև՝ երրորդ չարկում չորս ձեռներ զաշնամուր էին ածում։ Ման եկող մարդու ոտնաձայնը, որի ջղաձգական քայլւածքին նայելով, կարծես, մտատանջութեան մէջ լինէր կամ սաստիկ ատամնացաւով բռնւած, և զաշնամուրի միակողմանի հնչիւնները երեկոցեան անդորրութեանը տալիս էին մի տեսակ քնէածութիւն, որը տրամադրում է ծոյլ-ծոյլ խորհրդածութիւններ անելու։ Երկու սենեակ դէնը, մանկանոցում, խօսում էին դաստիարակչուհին և Սերեոֆան։

— Հայրիկը եկել է, երգում էր նա։ Հայրիկը եկել է։ Հայրիկը...

— Votre père vous appelle, allez vite! (Ձեր հայրը ձեզ կանչում է, շուտ արեք զնացէք!) Ճշաց դաստիարակչուհին, վախեցրած թռչունի պէս ձևալով։— Ձեզ հետ չեն։

«Սակայն, ինչ ասեմ ես նրան» մտածեց Եւգենիյ Պետրովիչը։

Դեռ նրա մոքովը ոչինչ չէր անցել, երբ առանձնասենեակը մտաւ իւր Սերեոֆա որդին— եօթ տարեկան մի երեխայ։ Նա այնպիսի արարածներից էր, որի ինչ սեռի պատկանելը կարելի է լինում գուշակել միմիայն հագի շորերով. մի վախուկ, սպիտակերես, փուխր երեխայ էր... Նա թոյլ էր մարմնով, ինչպէս ջերմանոցի բանջարը. նրա ամեն ինչն էլ սովորականից մեղմ էր և քնքոյշ— թէ շարժւածքը, թէ գանդուր մազերը, թէ հայեացքը և թէ թաւշէ կուրտիկը։

— Բարով, հայրիկ ջան. ասաց նա մեղմ ձայնով, բարձրանալով նրա ծնկների վերայ և արագութեամբ համբուրելով նրա վիզը։— Դու ինձ կանչել էիր։

—Սպասեցէք, Սերգէյ Եւզենեւիչ, պատասխանեց պրոկուրորը, դէն անելով նրան իրանից։—Նախ քան համբուրելը՝ մեզ հարկաւոր է խօսել և լրջօրէն խօսել... Ես քու վերայ բարկացած եմ ու այլ ևս քեզ չեմ սիրում... այդպէս էլ իմացած կենաս, բարեկամ, ես քեզ չեմ սիրում և ոչ էլ դու իմ տղան ես... այդպէս։

Սերեօփան աչքերը յառած նայեց հօրը, ապա իւր հայեացքը դարձրեց սեղանին և ուսերին արեց։

—Ախար ես քեզ ինչ եմ արել, հարցրեց նա, տարակուսած աչքերը թարթելով։ Ես այսօր ոչ մի անգամ էլ է չեմ եղել քու առանձնասենեակում և ոչ մի բանիդ էլ է չեմ զիպել։

—Հէնց նոր Նատալիա Սեմեօնովնան դանդաղում էր, որ դու ծխում ես։ Ճիշտ է այդ, դու ծխում ես։

—Հա, ես մի անգամ ծխել եմ... Այդ ուղիղ է...

—Դէ տեսնում ես, դու դեռ սուտ էլ ես խօսում, ասաց պրոկուրորը յօնքերը կիսելով և այդպիսով քողարկելով իւր ժպիտը։ Նատալիա Սեմեօնովնան երկու անգամ է նկատել քեզ ծխելիս։ Ռերեմ դու բռնւում ես վատ մեղքի մէջ. համ ծխում ես, համ ուրիշի սեղանից թութուկն ես վերցնում, համ էլ սուտ ես ասում։ Երեք մե'ղք։

—Գրուտ որ է, մտաբերեց Սերեօփան. և նրա աչքերը ժլպտացին։ Ուղիղ է այդ, ուղիղ է։ Ես երկու անգամ եմ ծխել. մէկ այսօր, մէկ էլ առաջ։

—Տեսնո՞ր, որ երկու անգամ է, ոչ թէ մի անգամ... Ես քեզնից շատ ու շատ անբաւական եմ։ Առաջ դու լաւ երեխայ էիր, իսկ այժմ, ինչպէս տեսնում եմ, դու փչացել և վատ տղայ ես դարձել։

Եւզենիյ Պետրովիչը ուղղեց Սերեօփայի օձիքը և մտածեց. «Էլ ինչ ասեմ ես սրան»։

—Հա, բն, լաւ բան չես անում, շարունակեց նա։ Ես քեզնից այդ չէի սպասում։ Մէկ որ՝ դու իրաւունք չունես մօտենալ ուրիշի սեղանին և այնտեղից վերցնել թութուկը, որը քեզ չէ պատկանում։ Ամէն՝ մի մարդ իրաւունք ունի օգտուել միմիայն իւր ունեցած-չունեցածից, իսկ ով որ վերցնում է ուրիշինը՝ նա... լաւ մարդ չէ։ (Ա՛յն չեմ ասում սրան, մտածեց Եւզենիյ Պետրովիչը)։

վիւր)։ Օրինակ, Նատալիա Սեմեօնովնան մի շորի սնդուկ ունի. այդ սնդուկը նրանն է. և մենք, այսինքն թէ ես, թէ դու, իրաւունք չունենք նրան ձեռք տալու, որովհետեւ այն մերը չէ... Այդպէս է, թէ ոչ։ Դու էլ փոքրիկ ձիան պատկերներ ունես... Ես հօ նրանք չեմ վերցնում։ Շատ կարելի է, որ ես կամենայի էլ վեր առնել, բայց... չէ որ նրանք իմը չեն, այլ քոնն են։

—Վերցրո՛ւ, թէ որ ուզում ես. ասաց Սերեօթան յօնքերը բարձրացնելով։—Աստծու սիրուն, հայրիկ, մի՛ քաշել, վեր կալ. այն դեղնագոյն շնիկն ի՞նչ է, որ քու սեղանի վերայ է, անց էլ է իմը, ես հօ մի բան չեմ ասում... Ինչքան կուզի՝ թող մնայ այնտեղ։

—Դու ինձ չես հասկանում, պատասխանեց Բըկովսկին։—Այն շնիկը, որ, ասում ես, դու ընծայել ես ինձ, այժմ նա իմն է և ես նրան ինչ էլ որ ուզենամ՝ կ'անեմ. իսկ ես հօ քեզ թուլութուն չեմ ընծայել. թուլութունը իմն է։ (Տեղին չեմ հասկացնում ես սրան, մտածեց պրոկուրորը. «այն չէ, իսկի էլ այն չէ»)։ Եթէ որ իմ սիրտը ուզէ ուրիշի թուլութուն քաշել, այն ժամանակ ես պարտաւորաժամենից առաջ թոյլութուլութուն կ'առնեմ...

Բըկովսկին սկսեց բացատրել իւր որդուն, թէ ի՞նչ ասել է Բեպիականութիւնն, ծուլօրէն խօսքը-խօսքի հետ կապելով և մանկական լեզւին յարմարելով։ Սերեօթան մոիկ էր անում նրա կրճէին և ուշի ուշով ականջ դնում նրա ասածներին (նա սիրում էր երեկոները հօր հետ զրոյց տալ), յետոյ արմունկը սիւն տւեց սեղանի մի ծայրին և սկսեց իւր կարծաւոտ աչերը պլշացնել թըղ-թերի ու թանաքամանի վերայ։ Նա իւր հայեացքը ման ածեց սեղանի երեսին, յետոյ կանգ առաւ սոսնձի սրակի վերայ։

—Հայրիկ, սոսինձը ինչից են շինում, հարցրեց նա յանկարծ, մօտ բերելով սրակը աչքերին։

Բըկովսկին առաւ նրա ձեռից սրակը, էլի զրեց իւր տեղը ու շարունակեց.

—Մէկ էլ որ՝ դու ծխում ես... այդ շատ վատ ես անում. եթէ ես ծխում եմ՝ դա դեռ ես չի նշանակում, թէ առհասարակ կարելի է ծխել։ Ես ծխում եմ, և միեւնոյն ժամանակ զիտեմ, որ խելօք բան չեմ անում. դորա համար էլ ես ինձ նախատում եմ և

չեմ սիրում. (գինչ խորամանկ մանկավարժ եմ եղել ես, մտածեց պրոֆուրորը): Թուֆունը սաստիկ վնասում է մարդու առողջութեանը, և ո՞վ որ ծխում է՝ նա սովորականից աւելի շուտ է մեռնում: Առաւել ևս վնասակար է ծխելը քեզ նման փոքրիկ երեխաների համար: Քու կուրծքը թոյլ է, դու դեռ չես պնդել, իսկ թուֆունի ծուխը թուլակազմ մարդկանց մէջ թոքախտ և այլ հիւանդութիւններ է առաջ բերում: Հրէ, Իգնատից քեռիդ թոքախտից չմեռան. նա որ չծխէր, գուցէ մինչև այսօր էլ կենդանի լինէր:

Սերեոժան մտախոհաբար նայեց ճրագին, մոտով շօշափեց նրա լուսամտիովը և հոգւոց քաշեց:

— Իգնատից քեռին լմա ջուր թակածել գիտէր, ասաց նա. նրա ջութակը այժմ Գրիգորյեանց տանն է:

Սերեոժան նորից արմուկը սիւն տւեց սեղանին և մոքի հետ ընկաւ: Նրա գունատ դէմքի վերայ մի այնպիսի արտայայտութիւն էր տպաւորւել ու սառել մնացել, որ կարծես թէ նա մի ինչ որ բանի ականջ դնելիս կամ, թէ չէ, իւր սեպհական խոհերի զարգացմանը հետեւելիս լինէր. վիշտ և վախի նման մի բան էր, որ երևաց նրա խոշոր, անթարթ աչքերի մէջ: Թերևս նա այժմ մտածում էր մահւան մասին, որը շատ ժամանակ չկար՝ ինչ խել տարել էր նրա մօրը և Իգնատից քեռուն: «Մահը մայրիկներին և քեռիներին տանում է այն միւս աշխարհը, իսկ նրանց զաւակները և ջութակները մնում են երկրում. ննջեցեալները ապրում են երկնքում՝ աստղերին մօտիկ և այնտեղից մօտիկ են տալիս երկրին. տեսնես նրանք էլ են կարօտ քաշում...»

«Ի՞նչ ասեմ սրան» մտածում էր Եւգենից Պետրովիչը. «սա ինձ չի լսում. երևում է, որ ոչ իր յանցանքն է մի մեծ բանի տեղ դնում, ոչ էլ իմ ասածները. էլ ես ինչպէս մի բան մոցնեմ սրա գլուխը»:

Պրոֆուրորը տեղիցը վեր կացաւ և սկսեց առանձնասենեակում անց ու զարձ անել:

«Առաջ, մեր օրովը, այդպիսի հարցերը վճռում էին շատ հասարակ կերպով, մտածում էր նա. «Գորսում էին ամեն մի լակոտի, որը բռնւում էր ծխելիս: Որը փոքրոգի էր ու վախկոտ՝ թող»

Նուժ էր ծխելը, որն էլ մի քիչ սրտոտ էր ու խելքով՝ ծեծը ուտելուց յետոյ թուլթունը ման էր ածուս կօշիկների ճակերի մէջ, իսկ ծխելիս քաշուժ էր դէպի ցախանոցը։ Այդտեղ էլ որ նրան բռնէին ու ծեծէին, նա ձգուժ էր դէպի դետափը... և այդպէս շարունակուժ էր նա՝ մինչև որ մի քիչ կը թափովանար, կը մեծանար... Մայրս ինձ զրաժ ու քաղցրաւենի էր տալիս, որ ես չծխեմ։ Այդպիսի միջոցները այժմ բանի տեղ չեն դրուժ և անբարոյականացուցիչ են համարուժ։ Ժամանակակից մանկավարժը, տրամաբանութեան վերայ հիմնելով, աշխատուժ է, որ երեխան բարի սկըգբունքները իւրացնի ո՛ր թէ ահու, ո՛չ թէ աչքի ընկնելու, կաժ պարզեատրելու ցանկութիւնից, այլ դիտակցօրէն։

Աինչդեռ նա ման էր դալիս ու մտածուժ, Սերեօթան բարձրացաւ, կանգնեց սեղանի մօտի աթոռի վերայ և սկսեց նկարել. սեղանի վերայ յատկապէս նրա համար մի դաստայ թուղթ և մի կապոյտ մատիտ էր դրած, որպէս զի նա պէտքական թղթերը չփչացնի և թանաքամանին չդիպչի։

—Այսօր մեր աղախինը քալաժը զոխահան անելիս մատը կտրեց, ասուժ էր նա, միւսնոյն ժամանակ մի տնակ նկարելով և յօնքերը շարժելով։ Նա այնպէս ճաաց, որ մենք բոլորս էլ վախեցանք և վազեցինք խոհանոցը։ Ի՛նչ յիմարն է եղել նա. Նատալիա Սեմեօնովնան նրան հրամայուժ էր մատը սաուը ջրի մէջ թաթախել, իսկ նա դրել էր բերանն ու ծծուժ... Եւ հնց էր նա կեղտոտ մատը դնուժ բերանը։ Այդ անվայել է, չէ, հայրիկ։

Յետոյ նա պատմեց թէ ինչպէս ճաշին բակը մտաւ արգանածողը մի փօքրիկ աղջկայ հետ միասին և թէ ինչպէս այն աղջիկը, ածելիս, միւսնոյն ժամանակ հաժ երգուժ էր, հաժ պարուժ։

«Սա իրան յատուկ մտածողութեան եղանակն ունի, խորհուժ էր պրոկուրօրը. «Սրա գլխուժ կայ մի սեփական աշխարհիկ, և սա էլ իրան համեմատ է մի բան կարեւոր դատուժ, միւսը՝ ո՛չ. սրա ուշք ու միտքը գրաւելու համար բաւական չէ միայն սրա լեզւին յարմարելի, այլ պէտք է որ կարողանաս մտածել այնպէս, ինչպէս որ սն է մտածուժ։ Սա շատ լաւ կը հասկանար ինձ, եթէ ես իսկապէս թուլութիւս ափսոս գացի, խռովէի, լացի... Այդ է, որ մայրերը անփոխարինելի են կրթական գործուժ, որ նրանք ընդունակ

են զգալ, լաց լինել և խնդալ երեսաների հետ միասին... Տրամաբանութիւնով և բարոյական խրատներով բան չի դառնալ: Հիմա, ես սրան էլ ինչ առեմ, ի՞նչ:

Եւ Եւզենիյ Պետրովիչին, որ իւր կեանքի կէսը անց էր կացրել ամեն տեսակ մեղքերի և յանցանքների առաջն առնելու համար պատիժներ յօրինելու վարժութեան մէջ, տարօրինակ և ծիծաղելի էր երևում, որ նա, այն փորձառու իրաւագէտ տեղովը, կորցրել էր զլուսը և չգիտէր՝ ի՞նչ ասէր երեսացիին:

—Քեզ հետ եմ. արի, դու ինձ ազնիւ խօսք տուր, որ այսուհետեւ էլ չեմ ծխիլ, ասաց նա:

—Ազնիւ խօ-ճ-ճօք. երգեց Սերեոժան, մատիտը պինդ սեղմելով և կռանալով նկարի վերայ: Ազնիւ խօ-ճ-ճօք:

«Գիտէ՞ արդեօք սա, թէ ի՞նչ ասել է «ազնիւ խօսք», հարց տւեց ինքն իրան Բըկովսկին. ո՛չ, ես վատ դաստիարակ եմ. եթէ որ հանկավարժներից կամ մեր դատաստանական ծառայողներից մէկն ու մէկը այստեղ լինէր և իմանար՝ թէ ի՞նչ է անցնում այս ժամին իմ մոքովը, նա ինձ փալասի տեղ կը դնէր և երևի կ'ասէր, որ ես հէնց զուր տեղն եմ խելքիս զօր տալիս... Ել չէր ասիլ, թէ այս տեսակ չարատանջ հարցերը դպրոցումն ու դատարանումը աւելի հեշտ են լուծւում, քան թէ տանը. տան բանը ուրիշ է. այստեղ դու գործ ես ունենում այն մարդու հետ, որին չափիցը դուրս սիրում ես, իսկ սէրը պահանջող է և բարդում է խնդիրը. եթէ որ այս լակոտը իմ տղան չլինէր, այլ լինէր իմ աշակերտը կամ թէ մեղադրեալը, ես այնքան էլ չէի վախվախիլ և իմ մշտ քերը չէին խառնուիլ իրար...»

Եւզենիյ Պետրովիչը նստեց գրասեղանի առաջ և Սերեոժայի նկարներից մէկը դէպի իրան քաշեց: Այդ նկարի մէջ պատկերացրած էր կոտուրը թեքած մի տնակ, որի ծխնելոյզից մուսը, կայծակի պէս ծռմուկելով, գնում էր մինչև թերթիկի միւս ծայրը. տան դռան առաջին կանգնած էր աչքերը կէտերով նշանակած մի զինուոր, ձեռքին էլ մի հրացան, որը նման էր 4 թւանշանին:

—Մարդը տանիցը բարձր լինել չի կարող, ասաց պրոկուրորը. մի մտիլ արա՛, քու նկարի մէջ կոտուրը զինուորի ուսերովն է գալիս: Սերեոժան բարձրացաւ նրա ծնկների վերայ և երկար շարժ-

ւում էր, որպէս զի յարմարութեամբ նստիւ—Ո՛չ, հայրիկ, ասաց նա, նայելով իւր նկարին: Եթէ որ զինւորին պստիկ նկարենք, նրա աչքերը էլ տեսնել չի լինիլ:

Հարկաւոր էր մէկ էլ հերքել նրա ասածը: Իւր որդու վերայ արած ամենօրեայ դիտողութիւններից յետոյ պրոկուրորը եկել էր այն համոզմանը, որ երեխաները, վայրենիների նման, ունին իրանց յատուկ զեղարւեստական հայեացքն ու ինքնուրոյն պահանջները, որոնցից հասակն առած մարդիկ չեն կարողանում գլուխ հանել: Ուշագրութեամբ դիտող հասակաւորի համար Սերեօթան կարող էր անբնական երեւալ: Նա կարելի և խելացի էր. դռնում մարդուն տանից բարձր նկարելը, առարկաներից զատ՝ իւր սեփական զգայութիւններն անգամ մատիտով արտայայտելը: Օրինակ, օրքեստրի ձայնը նա պատկերացնում էր օդային, ծխանման կէտերով, իսկ շուրջը—ուրապտոյտ թելի նման... Նրա խելքով հնչիւնը սերտ առնչութիւն ունէր ձևի և գոյնի հետ, այնպէս որ՝ տառերը ծաղկացնելիս՝ նա իւրաքանչիւր անգամ, առանց փոփոխելու «Լ» հընչիւնին զեղին գոյն էր տալիս, «Մ»-ին՝ կ'սմբի, «Ա»-ին—սև և այլն:

Մի կողմը զգնելով նկարը, Սերեօթան էլի եռեռաց հօր ծնկների վերայ, անյարմար դիրք բռնեց և այս անգամ զբաղւեց նրա միտքով: Առաջուց նրան մի լաւ սղալեց, յետոյ մէջտեղիցը երկու արեց և սկսեց սանրել, բակենի ձև տալով նրան:

—Այսպէս դու նման ես Իւան Ստեպանիչին, կմկմացնում էր նա, իսկ այժմ՝ դու նման կ'լինես... մեր դռնապանին: Հայրիկ, այդ ինչեւ են դռնապանները դռան առաջ կանգնում, որ գողերին ներս չը թողան:

Պրոկուրորը զգում էր նրա շնչառութիւնը իւր երեսին, ու մի կողմին էլ իւր թուշը հա քսում էր նրա մազերին, և հետզհետէ նրա հոգին լցւում էր մի տեսակ մեղմ, այնպիսի մեղմ ջերմութեամբ, որ կ'ասես ոչ թէ մենակ նրա ձեռները, այլ ամբողջ հոգին էլ հետը կպած լինէր Սերեօթայի կուրտի մախմուրին: Նա իւր աչքերը զցում էր երեխայի խոշոր ու թուխ աչքերի մէջը, և նրան թւում էր, թէ նրանց լայն բիրբրից նայում են իրան և՛ մայրը, և կինը—բոլորն էլ. կարծես մէկին սիրելիս լինէր:

«Ի՛նչ արի և ծեծիր սրան... մտածում էր նա... արի և պա-

տիժներ յօրինիր սրա համար. Ո՛չ, դաստիարակութիւն տալը մեր բանը չէ. առաջւայ մարդիկ պարզ էին, քիչ էին միտք անում, և հէնց դրանից էր, որ ամեն մի հարց էլ վստահ կերպով էին վճռում: Իսկ մենք չափից դուրս շատ ենք մտածում, տրամաբանութիւնը մաշել է մեզ... Մարդ որքան շատ է զարգացած լինում, որքան երկար է խորհում ու նրբութիւնների մէջ ընկնում, այնքան էլ նա վճռողական և ուշադիր է լինում և աւելի է վախենում գործի կոչելիս: Եւ ճշմարիտ, մի քիչ որ խորը մտածենք, կը տեսնենք թէ մարդ իր մէջ ինչքան մեծ քաջութիւն և հաւատ պիտի ունենայ, որ յանձն առնի ուսուցանել, դատել, հաստ-հաստ գրքեր շարադրել...

Խփեց ժամի տասը:

—Ե՛հ, որդիս, քնելու ժամանակ է, ասաց պրոկուրորը. բարի գիշեր ասա ու գնա քնիր:

—Ո՛չ, հալորիկ ջան, նօթերը կիտեց Սերեօժան. ես դեռ էլ կընստեմ. մի բան պատմիր լսեմ. հէքեաթ ասա:

—Ասեմ. միայն հէքեաթը պրծայ թէ չէ՝ իսկոյն պիտի դնաս քնելու:

Եւ գենից Պետրովիչը սովորութիւն ունէր ազատ երեկոները Սերեօժային հէքեաթ ասել: Գործունեաց մարդկանց շատերի նման նա մի ոտանաւոր էլ է բերան չը գիտէր և ոչ մի հէքեաթ չէր պահել իր մօտին, այնպէս որ ամեն անգամ մի բան պատմելիս ստիպւած էր լինում իրանից յօրինել: Սովորաբար նա սկսում էր ընդունւած խօսքերով—ւրինում է չի լինում և այլն, որից յետոյ նա բարդում էր ամեն տեսակ անմեղ յիմար-յիմար բաներ, և սկիզբը ասելուց յետոյ՝ չէր իմանում թէ ի՞նչ է ասելու մէջտեղը և ինչպէս պիտի վերջացնի: Պատկերները, անձնաւորութիւնները և գրութիւնները վերցնում էր պատահաբար, յանպատրաստից, իսկ Ֆաբուլան ու բարոյական խրատը իրանք իրանք էին դուրս գալիս, պատմողիցը անկախ: Սերեօժան սիրում էր այդպիսի յանպատրաստից արած պատմութիւնները, և պրոկուրորը նկատում էր, որ ինչքան համեստ և անպաճոցճ էր դուրս գալիս պատմածքը, այնքան էլ ուժեղ կերպով էր նա ներգործում երեսխային:

—Դէ ականջ դիր՝ ասեմ, սկսեց նա, աչքերը առաստաղին զցելով:

—Լինում է չի լինում, առաջւայ ժամանակը մի շատ ալեւոր թա-

գաւոր է լինում, երկնքն ու ճերմակ միրուքով և... այսպիսի մեծ քեղերով: Նա ապրում էր մի ապակեայ պալատի մէջ. այդ պալատը այնպէս էր շողշողահար գալիս արեւի տակին, որ, կ'ասես, մի մեծ ու պարզ սառուցի կտոր լինէր: Պալատն էլ, ախպօրս ասեմ՝ որ դու ես, մի շատ ու շատ մեծ պարտէզի միջի էր, որտեղ դուրս էին եկել նարինջը, կեռասը... Ծաղկում էին վարդն ու շուշանը և երգում էին նախշուն-նախշուն թռչուններ... Հնա... ծառերիցն էլ ապակեայ բոժոժներ էին քաշ արած. քամին վեր էր կենում թէ չէ՝ այդ բոժոժները այնպէս անուշ ձայն էին ածում, որ մարդ ականջ դնելուց չէր կշտանում: Գիտես, ապակին մետաղիցը աւելի փափուկ և քնքոյշ ձայն ունի: Ե՛, էլ ինչ կար... հնա, պարտէզումը շաղրաններ էլ կային... Միտդ է, դու պէտք է որ շաղրան տեսած լինես Սոնեա մօրաբորջի տանը. իսկ և իսկ նրանի նման էին թագաւորի պարտէզի շաղրանները, միայն թէ նրանք աւելի մեծ էին և նրանց ցրտիւնը ձեռում էր ամենաբարձր բարդիների կառարներին:

Եւզենից Պետրովիչը մի քիչ մտածեց ու շարունակեց.

—Մերունի թագաւորը մի մինուճար տղայ ունէր. նա իւր հօր թագաւորութեան միակ ժառանգն էր և դեռ քեզ նման փոքրիկ էր. շատ լաւ երեսայ էր. իսկի խռովել չը գիտէր, ժամանակին պառկում էր քնելու, իղանի վրի բաներին էլ ձեռը չէր տալիս. — մի խօսքով շատ խելօքն էր: Մի բան էր վատ. որ նա ծխում էր... Սերեօժան լսում էր լարւած ուշադրութեամբ, անթարթ աչքերը դրած հօր աչքերի մէջ: Պրոկուրորը շարունակում էր ու մի կողմից էլ մտածում, թէ յետոյ ինչ ասի: Նա երկար դէս ու դէն ընկաւ, խօսքերը ծամծմեց և վերջացրեց այսպէս.

—Թագաւորի որդին ծխելուցը թոքախտ ընկաւ ու մեռաւ դեռ 20 տարեկան հասակում: Զատամեալ ու հիւանդոտ ծերուկը քնաց անտէր-անտիրական: Մէկն ու մէկը չկար որ նրա տէրութիւնը կառավարէր և պալատը պաշտպանէր: Թշնամիները եկան, ծերուկին սպանեցին, պալատն աւերեցին, և այժմ՝ պարտէզի մէջ ոչ կեռաս կայ, ոչ թռչուն, ոչ էլ բոժոժներ... Այդպէս, ախպէր ջան...

Այդպիսի վերջաւորութիւնը Եւզենից Պետրովիչին ծիծաղելի և միամիտ երևաց, սակայն ամբողջ հէքեաթը Սերեօժայի վերայ ուժեղ տպաւորութիւն թողեց. վիշտը և վախի նման մի բան կրկին ան-

զամ պատեցին նրա աչքերը. մի վայրկենի չափ նա նայում էր մտախոհ դէպի խաւար լուսամուտը, յետոյ ցնցւեց ու ասաց նւազած ձայնով.

— Էլ ես չեմ ծխիլ...

Երբ նա բարի գիշեր ասաց ու գնաց քնելու՝ հայրը յամբ քայլերով ման էր գալիս անկիւնից անկիւն և ժպտում էր:

«Հիմա մեզ կ'ասեն, որ ներկայ դէպքում զործ տեսաւ գեղեկութիւնը, գեղարեստական ձեւը», խորհում էր նա. «Թող նրանց ասածը լինի, բայց այդ միտիթարական չէ. այնու ամենայնիւ այդ իսկական միջոցը չէ... ինչո՞ւ չպէտք է բարոյական խրատն ու ճշմարտութիւնները ներկայացնեն իրանց հում դրութեամբ, այլ խառնուրդ տւած, անպատճառ շաքարով համեմած ու ոսկիջրած, ոնց որ պիլիւլները: Այդ անբնական է, աչքակապութիւն է, կեղծիք է, խաբէութիւն է...»:

Նա մտաբերեց երդւեալ դատաւորներին, որոնց հարկաւոր է լինում անպատճառ «ճառ» ասել հանդիսականներին, որոնք պատմութիւնը ըմբռնում են ժողովրդական քերթածների և պատմական ռումանների միջոցով. յիշեց և իրան, որ կեանքի խորհուրդը դուրս էր բերել ոչ թէ խրատներից ու օրէնսդրութիւններից, այլ առակներից, վէպերից, բանաստեղծութիւններից...

Դեղը քաղցրահամ պիտի լինի... Ճշմարտութիւնը—գեղեցիկ... Եւ մարդիկ Ադամայ դէսը իրանք իրանց զցել են այդ մոլորութեան մէջ... Սակայն... Թերեւս այդ ամենը բնական է ու այդպէս էլ պէտք է որ լինի... Մի՞թէ բնութեան մէջ նպատակաշարմար խաբէութիւններ, իլլիւզիաներ քիչ կան...

Նա սկսեց աշխատել, իսկ տանու, ծոյլ խորհրդածութիւնները դեռ շարունակում էին եռալ նրա գլխի մէջ: Առատաղից դէնը, երրորդ յարկում, արդէն կտրւել էր դաշնամուրի ձայնը, բայց երկրորդ յարկի բնակիչը դեռ զարթուն էր և չէր դադարել անկիւնից անկիւն ման գալ...

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

(Յիշողութիւններ ու տեղեկութիւններ թիւրքահայ գաղթական-ներէ կեանքից ու աշխարհից)

Յ ԿՈՐ ՄՈՒՐԱԳԵՆՅՈՒ

Վաթսունական թւերն էին, մեզանից մօտ 30 տարուց աւելի առաջ, Նոր էին վերջացել կովկասի լեռնալիճ պատերազմները, Չերքէզիալի ու Արմազիալի մահմէդական լեռնականները նեղուելով ռուսական նուաճումներից, որոնք հետզհետէ աւելի ու աւելի աարածուում էին իրանց անմատչելի լեռներում, մի կողմից՝ չը կարողանալով տանել Նոր կարգերն ու պահանջները, միւս կողմից՝ չարունակ հրաւեր ստանալով դիմացի Թիւրքիալից թողնել հալընիքը և գաղթել իր ձեռքի տակ, ուր սուլթանը խոստանում էր նրանց ամեն կերպ օգնութիւն հասցնել, իր հովանաւորութեան տակ առնելով նրանց, — ստիպում է նրանց թողնել Սև ծովի արևելեան ափերը, և գաղթել դէպի իրանց հաւատի աշխարհը, Անատոլիա, Սև ծովի հարաւային ափերը, մասնաւորապէս Տրապիզոնի նահանգը:

Այդ հրաւերը մարդասիրութեան ձաւնը չէր, որ Իսլամի խալիֆան ուղղում էր իր հեռաւոր կրօնակիցներին: Դա թիւրքական բռնութեան ու անխիղճ քաղաքականութեան մի Նոր հնարք էր, որով թիւրքը մտածում էր իր ամենախաղաղ, տիրասէր ու հպատակ հալ ժողովրդին դատական ու տնտեսական ծանր պայմաններով ամեն կողմից խեղդելուց լետու, տեսնելով որ դեռ էլի խեղճ հալը սիրում է իր հալածական հալընիքը, դեռ էլի տաք սրտով կպել է նա իր հողին ու աշխարհին, թէև նա աշխտեղ հանգիստ չէր գտնում և ոչ էլ ազատ շունչ քաշում, մտածում է զրկել նրան ալդ վերջին ու միակ լուսից էլ, նրա սիրած քաղցր հալընիքից, նրա գեղեցիկ տեղերը խելով նրանից և բնակեցնելով օտար ավերից եկած վալրենի լեռնացիներով: Ուրիշ կերպ չէ կարելի բացատրել այն կրկնուող գաղթական շարժումները, որ ալնքան մեծ չափով տեղի ունեցան Փոքր Ասիայում, մասնաւոր Սև ծովի հարաւային ափերում, վաթսունա-

կան թւերի վերջում, լեռնային պատերազմներից չեռու։ Հալը, տեսնելով աւազակ լեռնցիներին, որոնք խալամի մոլեռանդութիւնով վառւած՝ ամեն տեսակ հակամարդկալին գործերը նւիրագործած էին համարում, որոնց համար գողութիւնը, մարդասպանութիւնը, աւազակութիւնն ու չափշտակութիւնը մի խեղճ, ողորմելի քրիստոնեայ ազգի վերաբերմամբ թուլատրւում էր ու խրախուսւում նոյն իսկ տէրութեան անխիղճ ու տմարդի քաղաքականութիւնով, չը կարողացաւ տանել այդքան նեղութիւններ։

Ուրիշ բան չէր մնում հալին՝ նեղութիւններից փախչելու, ապրելու և ազատւելու համար իր նախապաշարւած գիտակցութիւնով—բայց եթէ թողնել հայրենիքը ու գաղթել օտարութիւն։

Սև ծովի ափերի հաչ գաղթականների նոր բնակութեան տեղերի ու նրանց ներկայ վիճակի մասին խօսելուց առաջ, ես կ'աշխատեմ ծանօթացնել ձեզ նրանց հետ դեռ ծովի ափերից չը հեռացած, նոյն իսկ հայրենա-կան տեղերի վրայ։ Ափսոս որ ես բազմ չեմ ունեցել անձամբ շրջելու նրանց հայրենական գաւառները, որպէս զի կարողանալի աւելի ստույգ ու մանրամասն տեղեկութիւններ տալ ձեզ նրանց հայրենական կեանքի տխուր վիճակի վրայ։ Բայց և այնպէս կարող եմ ասել, որ զրա փոխարէն իմ տեղեկութիւնները ես աշխատել եմ քաղել՝ ինչքան կարողացել եմ՝ աւելի ստույգ ու կենդանի աղբիւրներից, գաղթական հայերից, երկար տարիների ընթացքում հազար-հազար անգամ հարցնելով ու խօսակցելով հարիւրաւոր գաղթական ծերերին, կանանց ու երիտասարդներին, որոնց աղե-խարշ մրմունջով պատմած տխուր պատմութիւններն ու տեղեկութիւնները աշխատել եմ շուտով դրի առնել և պահել ինձ համար իբրև լիշատակ երկար տարիներ նրանց մէջ անցկացրած օրերից։

Սև ծովի կովկասեան ափերի հաչ գաղթականները, համարեա ամեն-քը, բացի մի շատ փոքր աննշան մասից, թիւրքահաչ գաղթականներ են, եկած Սև ծովի Անատոլիական ափերից, գլխաւորապէս Տրապիզոնի վի-լայէթի հալաբնակ վիճակներից և մասամբ էլ Սինոպի կողմերից։ Դրանք, համարեա ամենքը, շատ աննշան բացառութիւնով, խօսում են մի առան-ձին, ինքնուրույն հաչ բարբառով, որ նմանութիւն չունի թիւրքահայերի ոչ մի բարբառի հետ, և իրանք էլ խիստ որոշում են իրանց կազմւած-ով մի բարբառի հետ, և հալաբնակ վիճակներից, կամ ինչպէս իրանք գաղթականներն Աւելի դրանք լատին են Համլէնցի, կամ ինչպէս իրանք գաղթականներն Աւելի դրանք լատին են Համլէնցի անունով։ Այդ անունով են ճանաչւում Սև ծովի ոչ են ասում, Հոմլէնցի անունով։ Այդ անունով են ճանաչւում Սև ծովի ոչ միայն գաղթական, այլ և հայրենական ափերում մնացող հալերը, որտե-ղից եկել են և մեր գաղթականները, Դրանց մէջ համլէնցի չճանաչւած-ները շատ քչերն են, ընդամենը մի քանի տուն, որոնք գլխաւորապէս

քաղաքացիներ են, եկած Տրապիզոնից և՛ ալլ վիլայէթի ծովափի միւս քաղաքներից, Դրանք ինչպէս հալոնիքում, նոյնպէս և ալստեղ՝ Կովկասեան ասիայում, գիւղերում չեն մնում, ալլ քաղաքներում ու մի քանի նաւահանգիստ աւաններում, խօսում են համէլէնցիներից ջոկ նաև ուրիշ բարբառով, որ թէև աւելի պարզ ու հասկանալի է, միւս կողմից սաստիկ խառն ու աղճատած է թիւրքական բառերով ու դարձւածքներով, Մինչդեռ համէլէնցիները, որ թէ ալստեղ և թէ հալոնիքական ասիայում համարեա միմիայն գիւղերում են ապրում, գիւղացիներ են, ոչ միայն Տրապիզոնի ամբողջ վիլայէթում, ալլ և դրա սահմանից հեռու, Սինոպի գաւառում, խօսում են ամենքն էլ միատեսակ, մի առանձին բարբառով, որ միմիայն նրանց մէջ կարելի է լսել, ուրիշ ոչ մի տեղ։ Տրապիզոնում և ծովափի միւս քաղաքներում էլ գուցէ լինեն համէլէնցիներ, որոնք ժամանակով եկած հաստատւած լինեն ալլ քաղաքներում։ Բայց մեծ մասը ալլ քաղաքացի հալերից, գոնէ Տրապիզոնի հալերի նկատմամբ, ինչպէս կարծու է Բժշկեան վարդապետը, Վենետիկի Միսթարեաններից, պէտք է որ եկած լինի Պարսկաստանից։ Ալլ եզրակացութիւնը նա հանում է քննելով Տրապիզոնի հալոց եկեղեցիների զանազան լիշատակարանները, որոնց մէջ պատահած մարդկանց ու դրամի անուանիւն և մի քանի բառերը ալլ կարծիքն են հաստատում ¹⁾։ Մասնաւորապէս ես էլ լսել եմ, որ Տրապիզոնում մինչև ալսօր էլ կան մի քանի հալ ընտանիքներ, որոնք աւանդաբար ընդունում են, որ իրանց պապերը Պարսկաստանից են եկել։ Կովկասեան ասիայի հալերի մնացած մի շատ աննշան մասն էլ մեր Կովկասի կողմերից են, որոնք մենակ կամ ընտանիքով առևտրական ու պաշտօնական գործերով պայապում են քաղաքներում ու նաւահանգիստ աւաններում, դրանք ժամանակաւորապէս են մնում ալլ տեղերում։ Կան մի քանի տուն հալ էլ մեր կողմի հալ գիւղացիներից, ալլ է՝ Հին-Նախիջևանի շրջակալ հալ գիւղերից, որոնցից մի քանի տուն ինձ պատահեց տեսնել սրանից մի քանի տարի առաջ Չէրնոմորի սահմանից էլ ալլ կողմը, Մակոպի մօտերքը։

Իմ լիշողութիւններս վերաբերում են միմիայն թիւրքահալ Համէլէնցի գաղթականներին, որոնց մէջ ես ալլ քան տարի ապրել, զգացել ու մտածել եմ նրանց հալոնական դառն վիճակի ու տխուր ապագայի վրա և որոնց ես ալլ քան անկեղծ ու սրտանց սիրել եմ։ Կս երբէք, երբէք նրանց չեմ մոռանալ։ Խեղճ, հալածւած ու մոռացւած հալեր... Ուտտի և ես մանրամասն գրելու և նկարագրելու եմ միմիայն նրանց ու իրանց հալոնական տեղերը, թողնելով մի կողմը մեր կովկասցի գաղթականներին, որոնց մասին ես շատանալու եմ մի քանի կարճ ակնարկութիւններով։ Թիւրքահալ-

¹⁾ Բժշկեան «Պատմութիւն Պոնտոսի», Վենետիկ 1819։

վերի հայրենական տեղերի իմ արած նկարագրութիւնների մէջ, ես բաց եմ թողնելու միայն Տրապիզոնի և ծովեզրեայ միւս քաղաքների ու նրանց հաջ լնակիչների մանրամասն նկարագրութիւնը, թէ՛ նրա համար, որ Սև ծովի ափերի հաջ գաղթականների մասին խօսելիս անշուքան անհրաժեշտ չեմ գտել, և թէ՛ նրա համար, որ դրանց մասին մեր գրական-նութեան մէջ կան արդէն մի քանի տեղեկութիւններ ¹⁾:

Սև իսկապէս հայկական ոգին, հայկական կեանքն ու քուլտուրան, նրա հայրենիքի վիճակը, նրա քաջածնեքը, նրա աշխատանքն ու տանջանքը, նրա ապագան ու ձգտումները—այդ բոլորը Կովկասեան ափերի հայերի մէջ կարելի է տեսնել միայն Համլէնցի թիւրքահաջ գաղթականների մօտ, որոնք Կովկասեան ափերի բազմալեզու և բազմատեսակ գաղթական ազգերի մէջ մի առանձին, ինքնուրույն ու պատուաւոր տեղ ունին բռնած, աջուպէս որ ափերի հաջ գաղթական միւս տարրերին՝ Կովկասցի և ոչ Համլէնցի, թուով շատ քիչ ու աննշան գաղթականներին անտես ու անուշադիր անելը ոչ մի կերպ չէ կարող ազդել խնդրի ուսումնասիրութեան վրայ:

*
* *

Ամենից առաջ ես ուզում եմ բացատրել, թէ ինչու համար այդ թիւրքահաջները թէ աշտեղ և թէ հայրենական ափերում Համլէնցի են ասուում: Համլէնցի—նշանակում է Համլէնից եկած. բոլոր գաղթականները այդ աւանդութիւնը պահել են, թէ իրանց նախապապերը մի ժամանակ ապրելիս ևս եղել այժմեան կեցած ափերից հեռու, Համլէնում. բայց Երբ, ռոտեղից և ինչի են եկել-հաստատուել նրանք աշտեղ,—այդ համարեա թէ նրանցից ոչ մէկը չէ կարող բացատրել ձեզ: Գոնէ ես շատ շատ ծերերի եմ հարցութորձել այդ մասին, բայց նրանցից մէկից միայն իմացել եմ, որ Համլէն եկողները Անիից են փախել: Այդ աւանդութիւնը, որ Համլէն եկողները Անիից են գաղթել, պատահել է ինձ կարգաւ և մեր մի քանի գրողների մօտ ²⁾: Ահա թէ ինչ են գրում նրանք. Անիի վերջին կործանումից չետոյ (1319 թ.) հայերի մի մասը անցնում է Վաս-

¹⁾ Սև ծովի թիւրքական ափերի, մասնաւորապէս Տրապիզոնի վիլա լէթի մի քանի քաղաքների նկարագրութիւնը անում է Սրուանձտեանցը իր «Թորոս-Աղբարի» I հատորում. նույնպէս մասամբ Ն. Սարգսեանցը «Այց թիւրքաց-Հայաստանին» գրքում (Տրապիզոնի մասին). դրանց մասին տեղեկութիւններ կարելի է գտնել նույնպէս Բժշկեանի «Պատմութիւն Պոնտոսի» գրքում, թէև աշտեղ այդ տեղեկութիւնները շատ հին են ու միակողմանի. լոկ քաղաքների նկարագրութիւններ են, առանց ժողովրդի կեանքի վիճակագրութեան:

²⁾ Բժշկեան, Ալթունեան, Ս. Հալկունի:

պուրսկան, աչնտեղից Պարսկաստան և վերջը աչնտեղից էլ Հաշտարխան. իսկ մի մասն էլ Համամ հաջ իշխանի առաջնորդութիւնով գալիս է Տրապիզոնի նահանգը, հին Խաղտիքը, որտեղ իշխանը չինուժ է Համամաչէն կամ Համչէն աւանը, ուր ժամանակի ընթացքում հաշիւը բաղմանալով ու տարածելով Համչէնցի անունն են ստանում. Համամի մասին համչէնցի ծերերից մէկից լսել եմ, որ չորս հազար հոգով եկել է Համչէնի կողմերը, բաւց թէ որտեղից էր եկել ալդտեղ, նա ալդ չգիտէր: Նրա ասելով՝ նրանք 4 տարի խաղաղ ու անվրդով ապրելիս են եղել Համչէնի անմատչելի լեռներում, բաւց չկարողանալով ապրուստ գտնել ալդ տեղերում, նրանց մեծ մասը կամաց-կամաց ցրւում է աւելի դէպի հիւսիս-արեւմուտք, սկսած Րիզէից մինչև Սինոպ. մնացածները մնում են: Բաւց վերջը նրանք էլ չեն գլխանում. սկսում են մահմէդական սարսափներն ու զազանութիւնները. սուր ու թուր են խաղացնում հաշերի գլխին, բռնի կերպով նրանց հատից դարձնելու համար: Հալածանքներից աղատուելու համար նրանց մեծ մասը նորից վախճում է, մի մասը զոհւում է բռնաւորի սրին, իսկ մնացորդներն էլ գոյութեան իրաւունք ստանալու համար՝ ստիպւում են մահմէդականութիւն ընդունել: Թէ իսկապէս Համչէնը գոյութիւն է ստանում Համամ անունով անձից և կամ Անիից եկած հաջ գաղթականներից թէ ոչ, ալդ ես հաստատ չգիտեմ: Համչէնցի գաղթականներից լւմ լսածս միայն աչն է, ինչ որ վերեն էլ ասեցի: Աչն է, որ նրանք ամենքն էլ ընդունում են, որ իրանք Համչէնցի են, ալսինքն որ իրանց պապերը մի ժամանակ Համչէնում են ապրել և վերջը աչնտեղից գաղթել դէպի Տրապիզոնի ափերը. ընդունում են, որ գաղթել են կրօնական հալածանքներից ու թիւրքական սարսափներից աղատուելու համար. իսկ թէ քանի տարի նրանք կարողացել են խաղաղ ապրել իրանց լեռներում, երկար ժամանակ ապահով ապրել են, թէ ապրուստի ու նեղը մնալուն համար՝ իրաւի դեռ հազիւ չորս տարին անցած, սկսել են ցրւել—ալդ բոլորը հարցեր են. հաստատ չգիտեմ, որ ասեմ:

Համչէնի վիճակը գտնւում է Տրապիզոնի վիլայէթի Լադիստանի սանջակում, քաղաքական բաժանմունքով՝ կազմելով մի առանձին գաւառաւան՝ նահիլէ, ընկնում է Սպերի և Րիզէի մէջ տեղը ¹⁾: Ինչպէս պատ-

¹⁾ Թիւրքիայի քաղաքական բաժանմունքներն են վիլայէթ, որ համապատասխանում է ռուսաց նահանգներին կամ աւելի ճիշտը՝ վիճակներին (область). վիլայէթի կառավարին է վալի (նահանգապետ, կամ աւելի ուղիղ՝ գեներալ-նահանգապետ). հաշիւը նրան ասում են՝ կուսակալ: Վիլայէթը բաժանւում է մի քանի սանջակների (շրջան, գաւառ). սանջակը կառավարում է միւլթիսարիֆը (գաւառապետ). կամ ինչպէս հաշերն են ասում՝ կառավարիչը: Սանջակի մասերն են կազանիքը (գաւառամաս, գաւառակ). կազալի գլխաւորը ասւում է գալմագամ (գաւառապետ,

մում են՝ ալդ վիճակը չորս կողմից պաշտպանւած է հսկայ լեռներով ու անտառներով. բնականից պաշտպանւած մի լեռնաշխարհ ու անտառաշատ երկիր է, որ չէր կարող չգրաւել հալածանքներից փախչողներին: Բայց Համլէնի լեռների վրայ շինւած բերդերի աւերակները ցոյց են տալիս, որ հալի կեանքը ալդտեղ էլ աչնքան ապահով չէ եղել. նա իր գոյութիւնը պահպանելու համար ալդտեղ էլ ստիպւած է եղել անընդհատ կռիւ մղել թրքական բռնութեան դէմ, գուցէ մասամբ ևս շրջակայ մոլեռանդ լազերի ու լոյների և երբեմն էլ թերևս իրարու դէմ: Ընդունենք, որ շատ էլ անմատչելի ու աղահոլ դիրք է ունեցել Համլէնը. ինչ կարող էր անել և ինչքան պիտի զիմանար հալութիւնից կտրւած ու հեռու մնացած ալդ վիճակը: Հարաւից նա Պարխարեան լեռներով կտրւած է եղել Էրզերումից ու Բաբերդից, արևելքից լազերի երկիրն է, իսկ հիւսիսից ու արևմուտքից նա մատնւած է եղել Օֆի ու Սիւրմէնէի կրօնամուկ լոյների ատելութեանը: Մի խօսքով չորս կողմից թշնամիների մէջ մնացած, հալութիւնից կտրւած՝ մի խուլ ու մոռացւած տեղ, մոռացւած ամենքից, նոյն իսկ հալ առաջնորդների ու քահանաների ալցելութիւնից ու մխիթարութիւնից զրկւած, ալիկոծւած, մոռացւած անցն աստիճան, որ ինչպէս գրում է պ. Ս. Հակոբնին չիր «Սև Գետացիք» վերնագրով հետաքրքիր նկարագրութեան մէջ՝ 36 գիւղի համար հաղիւ մի քահանայ է եղել ¹⁾ և ալդ սոսկալի ու աններելի մոռացութեան ենթարկւած է եղել ալդ վիճակը աչն էլ աչնպիսի ժամանակ, երբ նոյն պ. Ս. Հակոբնու ասելով, ունեցել է 8—10 հազար տուն զուտ հալ բնակիչ: Հասկանալի է, թէ ալդ հանդամանքներում մալք-երկրից կտրւած ու ամենքից մոռացւած ալդ վիճակը ինչքան ժամանակ պիտի զիմանար:

Տասնութերորդ դարի սկզբներից արդէն թիւրքերի աչքը Համլէնի հալերի վրայ է: Մի կողմից Պոլսից Տրապիզոն քաշւած ենիչէրիները, միւս կողմից տեղական մոլեռանդ թիւրքերը իրանց բարբարոս կառավարութեան օգնութիւնով մի աչնպիսի կատաղի կրօնական հալածանք ու բռնութիւններ են գործ դնում հալերի դէմ, որ ամեն բան մոռացնել են տալիս նրանց.

Ալիկոծւում է ամբողջ վիճակը. նահատակւում են շատերը. գետերը արիւն են հոսում. հալածանքներից ազատւելու համար մնում էր կամ

участковый начальник), կաղանկը բաղկացած են մի քանի նահիյէներից (համայնք, գիւղերի խումբ. волость, общество). զրանց պետերն են միւղիրները (համայնական տանուտէր, волостной старшина). վերջապէս նահիյէները բաղկացած են առանձին-առանձին գիւղերից, որոնք չանձնւում են մուխթարներին (տանուտէր, գէս): Այս բաժանումների մասին տես Մուրճ 1895 № 11, էջ 1483-1490.

¹⁾ «Արարատ». 1895 թ. № № 7, 8.

փախչել, կամ ընդունել ենիչէրիների կրօնը: Ակսւում է մի սոսկալի իրա-
րանցում, փախչող փախչողի է լինում. չրջակալ անմատչելի անտառները,
ուր դուցէ հաղարաւոր տարիննր ժարդու ձալն չէր լսել, լցւում են հաչ
փախտաւաններով, որոնք անօթի, ծարաւ, սիրելիներից ու ազգական-
ներից զրկւած, ստիպւում են օրերով ահով ու վախով ճանապաղ կտրել ան-
անցանելի անտառների միջից, փտտից թշնամուց հաւածւած... Խեղճ ազգ-
ինչ սև ու դառն օրեր ասես, որ չէ տեսել իր կիանքում:

Ինչպէս երևում է՝ հալերին բնաջինջ անելու քաղաքականութիւնը
աջնքան էլ նոր բան չէ և իր սկիզբը դարեր առաջ է առել: Դա միմի է
չէ ապացուցանում ալն բանը, որ հալերին բնաջինջ անելու քաղաքակա-
նութիւնը կապ չունի որ և է քաղաքական ձգտումների հետ և առհասա-
րակ մեր ազգի ինքնաճանաչութեան խնդրի հետ, ալ որ դրա գլխաւոր
պատճառը իսլամական նեղ ու հակամարդկային աշխարհացոցութեան
մէջ է: Ով մահմէդական չէ՝ նա մարդ չէ և արժանի չէ որ ապրի,—ալս է
ասում դարերից ի վեր իսլամական ոգին. և այդ աններող, հակաքուլտու-
րական ոգին է, որ հարիւր հազարներով զոհեր է տարել ու դեռ մինչև
այսօր էլ տանում է հալ թշւառ երկրից:

Ակսած մօտիկ Կարադէրէից, Սիւրմէնէից ու Րիզէից մինչև Կիրա-
սոն, Օրդու, Իոնիա, Թերմէ, Չարչամբա—ցրւում են նրանք. իսկ վերջերը,
մի քանի տարի ցետո՛ջ Չարչամբաից մի հատւած էլ անցնում գնում է հե-
ռաւոր Սինոպի կողմերը: Այսպիսով Կարադէրէից ու Ղալիստանի ափերից
սկսած մինչև Ջանիկի (Սամոնի) սանջակի հեռաւոր ծալերը, Տրապիզո-
նից արևմուտք, ծովով մի օրւալ ճանապարհ նրանից հեռու, և նրանից էլ
ալն կողմը մինչև հեռաւոր Սինոպի ափերը փռւում, կորչում են նրանք.
մի աննշան մասն էլ անցնում է Բարերդի կողմը, Փախչողը փախչում է.
մնացողների մի մասը կոտորւում է, իսկ մեծ մասն էլ անտէր ու անճար
մնալով՝ որը երեսանց՝ ստիպւում է ուրանալ հաւատը և ընդունել մահ-
մեդականութիւնը: Ուրանում է հաւատը, բայց լեզուն ու հալերեանաւնդ շատ
սովորութիւններ ու վիշտակներ դեռ երկար ժամանակ սրտից չէ հա-
նում: Նոյն իսկ պաշտօնապէս ենիչէրական կրօնը ընդունելուց ցետո՛ջ էլ՝
դեռ շատ տարիներ վառ են մնում նրա սրտի մէջ քրիստոնէական հա-
ւատի կայծերը. բայց ախոս որ նրանց վրալ մտածող ու հոգացող չէ լի-
նում: Դեռ մինչև վաթսուհական թւերը, ինչպէս պատմում է պ. Ս. Հաչ-
կունին, ալդ կորած ու մոռացւած վիճակի մէջ եղել են ալնալիսի ջերմե-
ռանդ հաչ կանալք, որոնք մարդկանցից ծածուկ իրանց երկխանց զրկե-
լիս են լինում Տրապիզոն՝ հալերի մօտ, որպէս զի ալդ անմեղ խեղճերը
գոնէ հալութիւնից դուրկ չմնան, խաբելով իրանց էրկիներին, թէ երե-
խան կամ ջուրն ընկաւ, կամ գալլը տարաւ: Սրանից մի երեսուն տարի
առաջ Նոմուրալի վիճակի (Տրապիզոնի սանջակում) Գալաֆկա դիւղում

հալ մահմէդականներէց մի քանի տուն նորից մալքենի եկեղեցու գիրկն են մտնում. իսկ մի 20—30 տարի սրանից առաջ ալղալիսի ծածուկ քրիստոնեաները շատ են եղել Համշէնի կողմերը, աւելի՛ կանանց մէջ. ալսօր նրանք էլ կորած են ուրիշ շատ հազարաւոր հալերի նման և անցած են հալ ազգի ռիսերիմ թշնամիների կարգը:

Նոյն վիճակն է հասնում և Կարաղէրէ—Սիւրմէնէ փախած Համշէնցիներին, ուր նոյնպէս մահմէդական բռնութիւններից՝ հալը կորցնում է հաւատը, թէն մի առժամանակ պահպանելով լեզուն ու սովորութիւնները: Ալղխեղճ վիճակը, ուր միւսերկու հարիւր տարի առաջ հարիւրի չափ հալ գիւղեր է ունեցել, ալսօր հալիւ մի 60 տուն հալ-քրիստոնեալ բնակիչ ունի. միւսներից որը փախել, որն էլ ուրացել է հաւատը:

Նոյն բռնութիւններն են գործ դրել Լաղլիստանի վիճակում ցրած բոլոր համշէնցիների վրայ. ալսպէս՝ Համշէնից Քիզէ փախած հալերն էլ չկարողանալով ապրել տեղական մոլեռանդ լաղերի մէջ, թողնում, փախչում են արևմուտք, Տրապիզոնի կողմերը. մինչև հիմա էլ կան Տրապիզոնում մի քանի հալ ընտանիքներ, որոնց պապերը Քիզէից եկած լինելուն համար՝ «Նրիզէլի» մականունն են կրում: Խալամական մոլեռանդութեան զոհերիցն է և Լաղլիստանի Օֆի գաւառակը, ուր նոյնպէս թիւրքական բռնութիւններից ստիպւած՝ հազարաւոր լոյն տներ մահմէդականութեան գիրկն են ընկնում. առաջւան մոլեռանդ ու հալերին ռիսերիմ օրթոդոքսներին տեղ՝ մոլեռանդ միւսլիմաններ են դառնում, բայց էլ իրանց լեզուն չեն մոռանում:

Մոռանալ լեզուն, մոռանալ աչն բոլորը, ինչ որ գրել ու տպել է դարերի ընթացքում ժողովրդի սրտի ու հոգու մէջ,—դա աչն քան էլ հեշտ բան չէ և գուցէ երբէք էլ չպատահէր, զոհն հալերի վերաբերմամբ ասեմ, եթէ միաչն աչն մարդիկ, աչն դասակարգը, որոնց ձեռքին է ժողովրդին մտաւոր-հոգեոր խնամք տանելը, իրանց ստիպալի ու աններելի անտարբերութիւնով և քարացած խղճով չմոռացնէին նրան: Հալ կինը իր որդկերանցից ձեռք է քաշում. տարիներով նրանց կարօտն է քաշում, էրկան խաբում է, իր ձեռքով որդուն իր մօտից հեռացնում, զգում է նրան օտար տեղ. ո՞վ գիտէ՝ նրան ինչ կը պատահի աջնտեղ. բայց նա ալղ բոլոր վախն ու կարօտը աչքի առաջ առած՝ զրկում է նրան, որպէս զի գոնէ նա էլ իր նման կորած չմնալ և հալութիւնից ու «լոյս-հաւատից» չկտրուի:

1820-ից մինչև քառասնական թւերը, ամբողջ 20 տարուց աւելի, Համշէնի ու Կարաղէրէի թիւրքացած, բայց հալախօս Համշէնցիները քահանայի երես չեն տեսնում: Ալղ թւերին նորից կրկնում են թիւրքական բարբարոսութիւնները, որոնք ալս անգամ նպատակ են ունենում արգելել բոլորովին հաւատուրաց Համշէնցիներին հալերէն խօսելը, զանազան ճնշումներով ու սուղանքով աշխատելով մոռացնել տալ ժողովրդին իր

մարեանի լեզուն: Նրանց ջանքերն աշողում են հետզհետէ, նրանք լեզուով էլ ձուլում են բարբարոս ազգի հետ Սասոր արդէն, ինչպէս Նկարագրում են ալցելուները, հալախօսութիւնը քանի գնում պակասում է նրանց մէջ, թէև նրանց տիպարը, բարքերը, բնաւորութիւնը, մի քանիսի մականունները, այս և այն տեղի անուններն ու մի քանի հալեհաւաւոր սովորութիւնները պարզ կերպով լիչեցնում են նրանց հալի ծագումը:

Յիչեցնում են ու տխրեցնում. երևի մէկ օր էլ նրանց վիճակած կը լինի կանգնել թիւրք գազանների շարքում և, իսլամից կուրացած, չճանաչել իրանց հալ եղբորը, սուր ու կրակ թափել նրա գլխին և իրանց ձեռքով քանդել ու ամալացնել իրանց սեփական հալերնիքը... Այդ վիճակը հեռու չէ, և այդ կողմերում ապրող այն Համչէնցիներին, որոնք թէև անունով ու հաւատով դեռ ևս հալ են հաշոււմ, բայց հալերէն ոչ մի խօսք չգիտեն և կորչելու վտանգի մէջ են:

Եւ ասիտոս չէ, որ մի ալցալիսի առողջ ու ընտիր տարր, ինչպիսին է առհասարակ լազիստանի հալը, իսլամի մեր ազգի գրկին: Մեր բոլոր ճանապարհորդները հիացմունքով են պատմում դրանց քաջազնական ոգին: Պ. Լ. Սարգսեանցը իր գեղեցիկ վիշողութիւնների մէջ ¹⁾ բերում է մի քանի կտոր իր հալ-լազ ուղեկցի խօսքերից, որոնք քիչ միտթալութիւն չեն հալի կտրած սրտի համար: Հալ-լազը պատմում է, որ տաճիկները ոչ միայն իրանց չեն անարգում ուրիշ տեղերի հալերի պէս, այլ նրանցից վախում էլ են: Նրա ասելով՝ լազ հալուհիները մինչև անգամ թիւրք տղամարդկանցից սրտոտ են: Եւ առհասարակ լազիստանի հալը, մանաւանդ թուրքացածը, աւելի քաջ է, քան թէ ալգ երկրի միւս բոլոր թուրքացած ազգերը՝ վրացին, լազն ու լոնը ²⁾: Դեռ մօտերս մի հալ ճանապարհորդ, շրջելով Տապիզոնին մօտիմկ տարերը, ուր հալ լազերն են ապրում, հետեւալ ոգևորւած խօսքերն է ասում. «Լազիստանը մի շատ հեռաքրքիր երկիր է. կարծես այս երկիրը բոլորովին անկախ մի երկիր է. ամենքը գինւած, ամենքը բարձր խօսող, համարձակ, ամենքը անվախ. այնպէս որ վանի, Էրզրումի, Բաղէշի և Մուշի խեղճ, ցած խօսող, վախկոտ և ստրկացած հալերին տեսնողի համար լազերի ալց չատկութիւնները տարօրինակ են երևում և նորութիւն թւում» ³⁾:

Հալ մահմէդականների մասին շատ է խօսել Արծրունին: Ամենքս լաւ լիշում ենք այն կենդանի ազգասիրութիւնից բղխած եռանդուն ու ոգևորւած էջերը, որ գրել է Արծրունին 80-ական թւերից սկսած, ալսինքնաչն օրերից, երբ ծագեց մեր մէջ ազգութեան ու կրօնի խնդիրը: Արծրունին

¹⁾ «Ալց թ. Հալստանին». Մուրճ 1889.

²⁾ Ս. Հալուհի, «Սե-Գետացիք». («Արարատ». 1895 թ. № 7, 8).

³⁾ «Մշակ». 1890. № 76. Նամակ Տապիզոնից:

միշտ քարոզել է, որ հայախօս մահմէդականներին պէտք է հաջ համալել, առաջարկել է կազմել մի քարոզչական-միախօնէրական ընկերութիւն, որի նպատակը լինէր—ալգ մոլորւած ոչխարներին դարձնել հալութեան գիրկը։ Գծբախտաբար ալգ ազգասիրական հրաւէրը մինչև այսօր անապատի ձաչն է մնացել, չնաչելով, որ մեր մի քանի ճանապարհորդներն ու գիտնական գիտողութիւնները պարզ կերպով ցույց տւին, որ Արծրունու չալտնած մտքերը հաջ-մահմէդականների վերաբերմամբ՝ բոլորովին ճիշտ են և արժանի ամենալին համակրութեան։

Ինչպէս վերին էլ ասեցի, հաջ գաղթականին եթէ ոչ արդարացիներու, գոնէ չմեղադրելու համար, ամենից առաջ պէտք է մօտենալ, ճանաչել նրան, նույն իսկ հայրենի ավերից չհեռացած, հայրենական տեղերի վրայ։ Մեղադրելուց առաջ թող միանգամ նեղութիւն տանք մեզ հարցնելու, թէ ինչո՞ւ համար է հաջ գաղթում իր հայրենիքից։ Իրաւ հալը չէ սիրում հայրենիքը, ճանձրանում է հայրենական տեղից և գնում է օտարութիւն՝ բախտ որոնելու, թէ ուրիշ պատճառներն են նրան ստիպում Գուցէ նա հող չունի. կարելի է իր հարուստ ու գեղեցիկ հայրենիքում նրան աղքատ են թողնում, ծանր տուրքերով խեղդում, մարդկալին իրաւունքից զրկում, ունեցածը խլում. մի խօսքով կենդանի թաղում ու սպանում նրան իր սւերակ դարձած հայրենիքում... Այս բոլորը գիտենալու համար՝ պէտք է տեսնել հալին դեռ չգաղթած՝ իր հայրենիքում, տանն ու դուրսը, դաշտում ու ճանապարհին, բանելիս ու խօսելիս, հալածելիս ու տանջելիս թիւրք մեծաւորից մինչև ամենափոքր զաւիտիալի մօտ, օրէնքի ու արդարութեան առաջ, բանտում ու ջարդակիս, լալիս ու մեռնելիս, լուսահատելիս ու գաղթելիս... Յիշեցէք, որ աւելի լաւ է մեղաւորին արդարացնել, քան անմեղին դատապարտել։ Գուցէ եթէ ալգ բոլորը լաւ գիտենանք, աչքան չենք մեղադրել հաջ գիւղացուն գաղթելու համար։ Ի՞նչ ալգ պաշմանները լաւ գիտենալու համար՝ ամենից առաջ պէտք է գնալ նրանց մօտ, նրանց հայրենիքը. չրջել, ալցելել ծալրէ ծալր նրանց բնակած տեղերը, տեսնել գիւղացուն իր կեցած տեղի, իր ապրած հողի վրայ։

Գրա համար էլ ես սկսում եմ Սև ծովի ավերի հաջ գաղթականների հայրենական ավերի տեղադրութիւնը, օգտւելով իմ լսած-խմացածներից, երկրի տեղագրական նկարագրութեանը կցելով ժողովրդի տնտեսական կեանքի վիճակագրութիւնը։ Ամենից առաջ ես սկսում եմ Տրասպիդանի վիլալէթի հալաբնակ տեղերի նկարագրութիւնից, որ Համլէնցիների բուն կենդրոնն է և մալր-երկրից հեռանալուց չստո՞ւ առաջին տեղը։

(Շարունակելի)։

ԷԻՈՒԻՏԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ, ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

Բնագիտութիւնը հսկայաքաջ չառաջ դիմեց: Խոշորացոյցը ոչ միայն բաց արտւ միաբջիշ ²) էակների անծանօթ աշխարհը, այլ և թափանցեց բջիշի ներքին էութիւնը, ուսումնասիրեց նրա շինւածքը, պրոսոպլադմային տարրերի դասաւորութիւնը, մերջապէս բջիշի սննդառութիւնն ու բեղմնաւորումը: Հիմնեց բջիջային թէօրիան: Միկրոսկոպական բջիջները, որոնցից կազմւած է ամեն մի կենդանի մարմին, անկախ ինքնուրոյն էակներ են թէ իրենց ձևով և թէ պաշտօնով: Զուր չէ Բրիւլլէն անւանում նրանց «տարրական օրգանիզմներ», Վիրխովը՝ «կեանքի օճախ», Դաւըլինը՝ «կենդանի միւստրներ»: Ամեն մի բարդ կենդանի մարմին ներկայացնում է մի կազմակերպւած սոցիալական ամբողջութիւն, մի պետութիւն, որի քաղաքացիներն են բջիջները: Խնչպէս ամեն մի պետութեան մէջ, այնպէս էլ ամեն մի կենդանական կամ բուսական մարմնում բջիջ-քաղաքացիները որոշ չափով և՛ անկախ են անհատապէս, և՛

¹) Տես Մուրճ 1897 թ. № 2—12, և 1898 թ. № 1, 2—3:

²) Մարմինը (բուսական և թէ կենդանական) բաղկացած է բջիջներից, որոնք տեսնւում են մանրադիտակի (միկրոսկոպի) տակ:

³) Առաջին հիմնադիրն էր բուսաբան Շլադէն, ապա կենդանական աշխարհի վրայ տարածեց այդ թէօրիան կենսաբան Շվան, Վիրխովը աւելի ընդարձակօրէն զարգացրեց բջիջային թէօրիան:

գտնուում են փոխադարձ կապակցութեան մէջ, շնորհիւ աշխատանքի բաժանման սկզբունքին: Հէկկելը աւելլու հեռու է տանում րամեմատութիւնը: Կենդանու մարմինը—ասում է նա—իր խիստ կենտրոնացումով կարող է ընդունել որպէս մի բջիջային միապետութիւն, իսկ բոյսը, որի կենտրոնացումը աւելի թույլ է, ներկայացնում է բջիջային հասարակապետութիւն: Եւ ինչպէս որ քաղաքական գիտութիւնները վկայում են մեզ մարդկային հասարակութեան աստիճանական կատարելագործումը նախնական վայրենի հորդաններից մինչև քաղաքակիրթ մարդկութիւնը, նոյնպէս և կենդանիների ու բոյսերի համեմատական անատոմիան հաստատում է բջիջային պետութիւնների նոյն աստիճանական պրոգրէսը: Ամենաստորին աստիճանի վրայ գտնուում են ջրի մուռը (algue) և սունկը, կորալները և սպունգները. այդտեղ դեռ կենտրոնացում չկայ, աշխատանքի բաժանութիւնը սաղմնային է: Սյդ դրութիւնը յիշեցնում է մարդկային սկզբնական հորդանները: Հապա բոլորովին հակառակ կողմը, էւոլիւցիայի գագաթին բարձրանում է յաղթանդամ, ճիւղաւորած ծառը, որը մի զօրաւոր բջիջային հանրապետութիւն է,—և ողնայարաւոր կենդանին, որ ներկայացնում է մի հրաշալի միապետութիւն: Կենտրոնացումը պէտք է անսպառնալ կապի միապետութեան հետ... Բայց չմոռանանք, որ Հէկկելը գերմանացի գիտնական է: (Հէկկել, «Փորձ բջիջային հոգեբանութեան»):

Էւոլիւցիայի գաղափարը դարձաւ գիտնականների անպայման նշանաբանը, նրանց զեկավարող սկզբունքը ամեն մի բիոլոգիական (կենսաբանական) հարցում: Օր օրի վրայ հարստացաւ էւոլիւցիական վարդապետութիւնը նորանոր ֆակտերով ու թէօրիաներով: Հէկկելը, ինչպէս տեսանք, Դարւինից աւելի հեռու գնաց մոներների գիւտով, որը բաւականաչափ լոյս սփռեց կենքի ծագման վրայ: Բացի այդ, նա հիմնեց և ուրիշ թէօրիաներ բիոլոգիական մեծ կշիռ ունեցող: Դրանցից ամենաշանաւորն է այն՝ որ ամհատի սաղմնային զարգացումը համաոտաւի կրկնում է նրա ամբողջ կտոհմի կամ ըողոր պապերի էւոլիւցիան: Ամեն մի օրգանիզմ

ենդանի թէ բոյս՝ իր կեանքի արշալոյսին մի կտոր պրոտոպլազմա է, որ յետոյ ձևաւորելով՝ դառնում է բջիջ։ Վերջինս ինքնաբերաբար բաժանւում է նախ 2-ի, ապա 4-ի, 8-ի, 16-ի և այլն. կազմակերպւում են բջիջային համախմբումներ, որոնք աստիճանաբարբարդանում ու կերպարանափոխւում են, և այդ կերպարանափոխութեան զանազան աստիճանները համապատասխանում են զանազան կենդանիների ձևերին, սկսած մոնէրներից զէպի աւելի բարձրը (տես Մուրճ 1897 թ, 7—8)։ Մարդ-էակը ևս, ինչպէս ամեն ուրիշ օրգանիզմ, իր սաղմնային դրութիւնից աստիճանաբար զարգանալով՝ մի քանի տարւայ ընթացքում անցնում է այն հսկայական շրջանները, որ իր պապերը (ամբողջ մարդկային սեռը) անցել են միլիոնաւոր տարիների մէջ։ Կարծում ենք պարզ է՝ միլիոնաւոր տարիներ են հարկաւորւել, մինչև որ մարդկային սեռը առաջացել է անասնական տեսակներից։ Իսկ երեխան, որ մօր արգանդի մէջ սկզբում մի անկերպարան պրոտոպլազմա է, (յիշեցէք, որ երկրագնդի առաջին բնակիչներն էլ եղել են հէնց նոյնպիսի անկերպարան մոնէրներ), մի քանի տարւայ մէջ արդէն մարդկային կերպարանք է առնում։ Մի սքանչելի օրէնք է դա, որ սահմանել է Էրնստ Հէկկելը. այդ օրէնքը ընդհանրապէս ճիշտ է համարւում այսօր, թէպէտ և մերժւում էր այնպիսի մի մարդուց, ինչպիսին էր Կարլ Ֆոխտը։

Ուրիշ կարգի դիտողութիւններ էւոլիւցիոնիզմի նկատմամբ։ Առաջներում օրգանական էւոլիւցիան բացատրելու համար չափից դուրս մեծ և բացառիկ կարևորութիւն էին տալիս «գոյութեան կռիւն»։ Այսօր շեշտում են առանձնապէս և մի ուրիշ Ֆակտի վրայ, որը գոյութեան կռիւ լրացուցիչն է (corrélatif) և որի անունն է՝ «համերաշխութիւն յանուն կռիւ» (accorde pour la lutte), մի բան, որ Ռարինը ևս աչքից չէր թողել, բայց նրա խոշոր աշակերտները համարեա մոռացութեան էին տւել։ Շնչաւոր արարածները ոչ թէ միայն աւերիչ կռիւ են մղում իրար մէջ, այլ և համախմբւում են, ընդհանուր համաձայնութեան են գալիս (օրինակ ամեն մի առանձին տեսակի անհատները) չարձակողական կամ պաշտպանողական նպատակով։ Ինչպէս որ կռիւն ու մրցութիւնն են էւոլիւցիայի մի զօրեղ Ֆակտոր, նոյնպիսի մի Ֆակտոր է նաև համ-

երաշխութիւնը, որը մանաւանդ մարդկային հասարակութեան էությունիւցի մէջ խիստ կարևոր է:

Վերջապէս, այսօր մի ուրիշ լրացուցիչ թէօրիա է ասպարէզ գալիս, որը կոչւում է զարգացման մեխանիզմ (Entwickelungsmechanik) և որը մեծ դեր ունի խաղալու էությունցիական վարդապետութեան մէջ: Նրա ներկայացուցիչն է՝ Վիլիամ Ռու, Հալլէի համալսարանի պրոֆէսորը: Ըստ պ. Ռուի՝ փոփոխականութիւնը և էությունցիական կենդանի աշխարհում չեն առաջանում միմիայն ժառանգականութեան և արտաքին յարմարման պայմաններից, այլ նրանք բխում են հէնց բջիջների համախմբումից, նրանց աստացիացիացից: Մինչև օրս կենդանի մարմինների փոփոխականութիւնը բացատրւում էր յարմարման (adaptation) իրողութիւնով, որը իր կողմից պայմանաւորւում էր արտաքին միջավայրին և աննդառութեան որպիսութիւնով: Հապա Ռուն փորձերով հաստատեց, որ այդ փոփոխականութիւնը կատարւում է և անկախ արտաքին միջավայրից, շնորհիւ սոսկ ներքին պատճառների, կամ աւելի որոշ՝ շնորհիւ բջիջների (մարմինը կողմող բջիջների) մեքենայական փոխադարձ ներդործութեան: Պարզեմք: Չկան երկու բջիջ որ բացարձակ կերպով նման լինեն իրար: Ուրեմն եթէ բազմաթիւ բջիջներ համախմբւած լինին (ինչպէս այդ կայ բոլոր բազմաբջիջ մարմիններում), նրանց միջև, շնորհիւ իրենց տարբեր ներքին բաղադրութիւնների, միշտ տեղի կ'ունենայ փոխադարձ ազդեցութիւն և հակազդեցութիւն, մինչև որ վրայ կը հասնի լիակատար հաւասարակշռութիւնը: Ռուն փորձեր է արել զանազան կենդանիների սաղմերի վրայ: Արտաքին միջավայրի պայմանները միշտ միևնոյնը պահելով, նա փոփոխել է սաղմի (embryo) կամ նրա դարգացման աւելի բարձր դրութիւնների (morulla, gastrula) ներքին կազմը, օրինակ՝ զգուշութեամբ դուրս հանելով ամբողջ բջիջակոցից մի հատ բջիջ, կամ նրա կորիզի մի մասը, — և հետևանքը եղել է այն՝ որ փորձի ենթարկւած այդ սաղմից զարգացել ու կերպարանաւորւել է ոչ այն կենդանին, որ պէտք էր առաջանար սաղմի բնական և անարգել էությունցիացով, այլ բոլորովին տարբեր մի էակ: Փոփոխւում է բջիջների համախմբումը, աստցիացիան — դրանով փոխւում է և մարմնի էությունցիացի ընթացքը, և այդ ամենը

անկախ միջավայրի պայմանների պատճառով: Կրկնակի փորձերը համոզել են Ռուին, որ բջիջների փոխադարձ, զուտ մեքենայական (կամ ֆունկցիական) ներգործութիւնը ինքն ըստ ինքեան մի խոշոր ֆակտոր է մարմինների զարգացման համար, որ ազդեցութիւնն ու հակազդեցութիւնը բջիջների մէջ յշտապես տեղի ունին, յընթացս ամբողջ էուլիւցիայի՝ սաղմնային դրութիւնից սկսած դէպի կատարեալ օրգանիզմը. որ այդ փոխադարձ ազդեցութիւնների միջոցին բջիջներից շատերը ոչնչանում են ու դուրս քշւում, որովհետեւ թոյլ են, չեն կարող դիմանալ իրենց պաշտօնակիցների մեքենայական զրգուռմանին. որ ուրեմն գոյութեան կռիւը և բնական ընտրութիւնը մղւում են նոյնպէս և մարմինների ներսում, հէնց բջիջների միջև:

Երկու խօսք ևս կլասիֆիկացիաների (համակազմութեան) մասին: Նախկին կլասիֆիկացիաները զօլոգիայում (կենդանաբանութիւն), որոնք ընդհանրապէս արեւստական էին, հիմնւած այս կամ այն երկրորդական կամ սխալ ընդունած առանձնատիպութիւնների վրայ, ոչնչացան ու տեղի տւին նոր կլասիֆիկացիաների, որոնք, թէպէտ և սուբյեկտիւ ու դիւրափոփոխ՝ այնուամենայնիւ անհամեմատ աւելի մօտ են ճշմարտութեան:

Նկնողանալան թագաւորութիւն: Նա ունի անթիւ ստորաբաժանումներ, որոնք՝ ըստ տարածւած տերմինոլոգիայի՝ դասաւորւում են հետեւեալ կարգով. Ճիւղաւորութիւն (ընդունւում է 8 խոշոր ճիւղաւորութիւններ). ք) Դասակարգ (օրինակ ասում են՝ ողնայարաւորների ճիւղաւորութիւնը ունի հինգ դասակարգ՝ ձկներ, երկակենցաղներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ), գ) կարգ (ordre), դ) Ընտանիք. ե) սեռ (genre), զ) Տեսակ (օրինակ՝ ընտանի շունը մի տեսակն է canis սեռի). Ապա գալիս են և վարիացիաները (օր. նոյն ընտանի շունը ունի բազմաթիւ վարիացիաներ):

«Մի հրաշալի իրողութիւն է սա—գրում է Դարւին,—որ բոլոր կենդանիներն ու բոյսերը բոլոր երկիրներում ու ժամանակներում այնքան սերտ ազդակից են իրար, որ նրանք կազմում են ամենու-

րեք համախմբումներ, որոնք ստորադրւած են ուրիշ համախմբումներին: Միւսնոյն տեսակի վարիացիաները շատ սերտ ազգակցութեամբ շղթայւած են միմեանց. միւսնոյն սեռի տեսակները աւելի քիչ և անհաւասար կերպով են ազգակից և կազմում են սեկցիաներ ու ենթասեռեր: Զանազան սեռերի տեսակները դեռ աւելի քիչ են իրար ազգակից, սեռերը իրար մէջ՝ աւելի ևս քիչ, և, համախմբւելով՝ կազմում են նրանք ենթաընտանիքներ, կարգեր, դասակարգեր և այլն, շրջանների մի անվերջ շղթայ: Ն[թ]է հիմնւելու լինինք այն ենթադրութեան վրայ, որ ամեն մի տեսակը ստեղծագործւել է ուրիշից անկախ, — ոչ մի հնար չեմ տեսնում բացատրելու այդ մ.ծ իրողութիւնը կենդանիների կլասիֆիկացիայի մէջ. բայց իմ կարծիքով, նա պարզապէս բացատրւում է ժառանգականութիւնով և բնական ընտրութեան խառնակ ներգործութիւնով ¹⁾»:

Բաժանումները կամայական ու ժամանակաւոր են. ամեն մի կլասիֆիկացիա գիտութեան ժամանակակից վիճակի թարգման ու արտայայտութիւն է: Ոչ մի բացարձակ սահման չի կարելի գնել տեսակի ու սեռի, սեռի ու ընտանիքի միջև: Բայց այդ բաժանումները դիւրացնում են ուսումնասիրութեան գործը:

*
* *

Այժմ ապրողներից անցնենք մեռածների: Անկարելի է լուսաբանել էւոլյուցիայի ընթացքը առանց պալէօնտոլոգիային դիմելու: Նա անբաժան կերպով կապւած է շերտագիտութեան հետ (ստրատիգրաֆիա, տես Մուրճ 1897, 11—12): Ինչպէս արդէն յիշել ենք, նեպոտունական (ջրալին) շերտերի սկզբնաւորութիւնը պատկանում է այն հեռաւոր նախապատմական անցեալին, երբ ջուրը հեղուկ դրութեամբ երևացել է երկրիս մակերևոյթին: Զրի երևալն էլ ամենայն հաւանականութեամբ զուգադիպւել է կենդանի մարմինների ծագման շրջանի հետ, որովհետեւ խոնաւութիւնը կեանքի առաջացման անհրաժեշտ պայմանն է կազմում: Գէօլոգիական (երկրային) շերտերի զոյացման պատմութիւնը բաժանում են երևակայութեամբ հինգ խոշոր շրջանների, որոնցից իւրաքանչիւրը ամփոփում է մի-

¹⁾ Դարւին. Տեսականների ծագումը:

քանի ստորաբաժանումներ: Ամեն մէկը այդ շրջաններից ունեցել է իր յատուկ կենդանիներն ու բոյսերը, որոնց դիակները (զանգեր, առամներ և այլն) քարացած դրութեամբ գտնուում են այսօր համապատասխան շերտերի մէջ: Շերտերը բաղկացած են կաւից, կաւիճից, կամ աւազից, քարածուխից և այլն:

1. Սկզբնական շրջան (*âge primordial*)

2. Առաջնական շրջան (*âge primaire*)

3. Երկրորդական »

4. Երրորդական »

5. Չորրորդական շրջան:

Շերտերը դասաւորուում են զուգահեռաբար: Յաճախ հանդիպում են երկու շերտերի արանքում հատաքարի (գրանիտ) կամ խաչաւանդի ժայռերի, որոնց մէջ չլիւծւած կենդանական մնացորդների հետքեր: Կրանք կաղմել են անշուշտ երկրային կեղևի ամենասկզբնական խաւը և հրաբխային ժայթքումներից յանկարծակի վեր են սլացել, ճեղքելով նեպտունական (ջրային) շերտերը:

Սկզբնական շրջան: Ամենակարատեւն է և ամենահեռաւորը: Նրա տեղութիւնը դերազանցում է մնացած չորս շրջաններինը միասին առած: Այդ ահագին ժամանակամիջոցը համապատասխանում է երեք տեսակ շերտերի գոյացման, ա) Լաւրէնտեան շերտ (ամենաստորինը կամ ամենախոր ընկածը) բ) Կամբրեան (նրանից բարձր), գ) Սիլուրեան (աւելի բարձր): Սկզբնական շրջանը օրգանական կեանքի (բոյսերի ու կենդանիների) սկզբնաւորութիւնն է. կամբրեան և սիլուրեան շերտերում մենք տեսնում ենք արդէն ջրային ամենապարզ կենդանիների ու բոյսերի հետքերը, որոնք կաղմել են այն հեռաւոր շրջանի Ֆլորան (բուսականութիւն) ու Ֆաունան (կենդանիներ): Կան միայն լայնատարած ջրիմուռի ու փամփշտուկի անտառներ մանրիկ, զանգաղուրկ կենդանիներով՝ կորալներով, ծովաստղերով և այլն, — բայց դեռ ևս չլիւծւած մի ողնայարաւոր էակ, ոչ մի զեռուն անգամ:

Առաջնական շրջան: Ձկների տիրապետութիւնն է: Կան երեք կարգի շերտեր՝ Դեւոնեան, Աժխային և Պէրմեան, որոնց մէջ զբոսնում են առատօրէն ձկների մնացորդներ. սլատահում են նաև միջատների, սողունների հետքեր: Բայց անասնական թագաւորութեւն

երկու ամենաբարձր դասակարգները՝ թռչուններն ու կաթնասունները՝ բացակայում են դեռ։ Քարածուխի հաստ շերտերը, որոնք շահագործելու անսպառ աղբիւր են ներկայացնում արդի քաղաքակրթութեան համար, վկայում են հինաւուրց ժամանակների ճոխ, համատարած բուսականութիւնը, որ անտարակոյս աճել է կլիմայական հրաշալի պայմաններում։

Երկրորդական շրջան։ Թագաւորում են սողունները։ Նրանք տարածւած են ամբողջ երկրագնդի մակերևոյթին, ցամաքի վրայ և ովկիանոսներում, նոյն իսկ օդային մթնոլորտում։ Թռչունների կարպետներն են դրանք։ Ամենի ծովային վիշապներ, հսկայամարմին թռչկան սողուններ, կէս-սալամանդր, կէս-կոկորդիլոս, 30-40 արշին երկայնութեամբ ահագին ակռաներով՝ թափառում էին ծովի ու ցամաքի վրայ, սաւառնում էին մթնոլորտում։ Այսօրւայ ամենահսկայ փիղը թզուկ է այդ տարօրինակ թռչուն-սողունների դիմաց։ Նրանք ունին թևեր, բայց թռչուն չեն կարող կոչւել, ունին երկայնաձիգ պոչ ու ակռաներ, բայց սողուններ չեն։ Ահա ձեզ մի լաւ ֆակտ արիւնային մօտ ազգակցութեան՝ թռչունների ու սողունների միջև։ Երկրորդական շրջանի վերջերում հետզհետէ անհետանում են այդ զարհուրելի, հրէշային կենդանիները և տեղի են տալիս թռչուններին ու կաթնասուններին։ Բուսական աշխարհը կազմւած էր ասեղնաւոր կամ կոնաբեր անտառներից։

Երրորդական շրջան։ Կաթնասունների թագաւորութիւնն է։ Ննթաղում են, որ մարդը ևս ծնունդ է առել այդ շրջանի վերջերում, որպէս արդիւնք մարդանման կապիկների էւոլիւցիայի։ Երկրի մակերևոյթը և կլիմայական պայմանները մեծամեծ փոփոխութիւններ են կրում։ Եւրոպական ցամաքը շատ տեղեր ազատւում է ջրերից։ Բարձրանում են լեռնաշղթաները (որչափ դանդաղ է կատարւել այդ ամենը — ինքնին հասկանալի է), տիրում է հարուստ, բազմատեսակ բուսականութիւն։ Նախկին ահարկու սողունների տեղ երևում են օձերն ու մողէսները, կոկորդիլոսներն ու կրիաները։ Յամաքը կտրուած էր անհամար ճահիճներով ու հովիտներով, ուր թափառում էին եղջերուների, անտիլոպների (յամոյր) հիպպոպոտամների (գետաձի) ահագին սուրունները։ Կային վաղկան թռչուններ, մի տեսակ նախաշրջեղեղեան ջայլամներ։ Պատահում էին

վիթխարի կաթնասուններ, ինչպէս Մաստոգոնտը (այժմեան փղի նախահայրը), Դինօթերիումը, որի միայն գլուխը մօտ երեք արշին երկայնութիւն ունէր: Բազմանում են այդ շրջանում կապկային տեսակները. բայց երբ կամաց-կամաց ցուրտը վրայ է հասնում, նրանք սկսում են չեւել գէպի Աֆրիկա:

Ձորորորդական շրջան: Սկսւում է մի նոր էրա. մարդու և քաղաքակրթութեան տիրապետութիւնն է: Կատաղի սառնամանիքները տարածւում են գրեթէ ամբողջ Եւրոպայի վրայ: Մարդու հետ միաժամանակ ապրում են մամմուտ կոչւած փիղը, քարանձաւային արջը (Höhlenbär), հսկայ եղջերուն և այլն: Այդ շրջանը չնչին է համեմատած ամբողջ նախընթաց պատմութեան հետ և կազմում է այդ վերջինի տևողութեան միմիայն կէս տոկոսը: Բայց և այնպէս զիտնականները հաշւում են չորրորդական շրջանի տևողութիւնը մինչև 100.000 տարի: Համեմատեցէք այդ թիւը Ասուածաշնչի վկայութեան հետ, որի համեմատ՝ ընդամենը հինգ-վեց հազար տարի է անցել այն օրից, ինչ աշխարհ են եկել Ադամն ու Եւան:

Ձորորդական շրջանը բաժանւում է երկու պերիօդի՝ 1) Դիլիվիալ (ջրհեղեղեան) և Ալլիվիալ (յետ-ջրհեղեղեան):

Գէօլոգիական շերտերի միջին հաստութիւնը հաշւում են մօտաւորապէս 130.000 ոտնաչափ, որից 70.000-ը միայն Սկզբնական շրջանի բաժինն է, 42.000-ը առաջնական շրջանի, 15.000-ը երկրորդականի, 3.000-ը—երրորդականի և թերևս միայն 500—700 ոտնաչափ չորրորդական շրջանի համար (Հէկկել): Կարելի է դիտել, թէ մի ամբողջ դարում ջրի հոսանքներից ինչ հաստութեան տիղմ կը գոչանայ որոշ միջավայրում, և ըստ այնմ հաշիւ երկրային կեղևի պատմութեան ամբողջ տևողութիւնը: Ոմանք առաջարկում են հարիւր միլիօն տարի, ոմանք—դեռ աւելի: Թւերը խիստ չարաքերական են. մաթեմատիկական ճշտութեան մասին մակերևոյթը տարբեր կէտերում տարբեր գէօլոգիական պայմաններ է ներկայացնում: Եթէ դարերի սխալ անգամ թոյլ տանք, հաշիւ չպիտք է առնել, աչքի առաջ ունենալով, որ երկրային կեղևի սկզբնաւորութեան օրից միջև մեր օրերը ամբողջ չաւիտենականութիւն է անցել:

Պալէօնտոլոգիայի այդ վերը յիշած բոլոր վկայութիւնները մի^օթէ խոշոր ապացոյց չեն աստիճանական էւոլիւցիայի համար: Սկզբնական շրջանում մենք տեսնում ենք միայն ամենաստորին կենդանի էակներ, որոնք եղել են ուրեմն երկրագնդիս անդրանիկ բնակիչները: Նրանք այսօր ևս անհամար բազմութեամբ լողում են ծովերի ու գետերի խորութիւնների մէջ: Այս յաջորդաբար երևան են գալիս նեպտունական շերտերում աւելի բարձր կենդանիների ու բոյսերի մնացորդներ՝ ձկների, սողունների, թռչունների: Այդպիսի օրգանական աշխարհի այդ մեռած ու բրածոյ ներկայացուցիչները անխօս վկաներ չեն կենդանական թագաւորութեան աստիճանական կատարելագործման, որ կատարւել է միլիօնաւոր տարիների ընթացքում էւոլիւցիայի անսասուն օրէնքների համաձայն: Դեռ երկրի մակերևոյթի հազիւ $\frac{1}{1000}$ մասը ենթարկւած է պալէօնտոլոգիական հետազոտութիւնների: Բաց ժամանակի ընթացքում նրանք կը տարածւեն նաև Ասիայի, Աֆրիկայի և ուրիշ անծանօթ աշխարհների վրայ, երբ աւելի կը ծաւալւի քաղաքակրթութիւնը, երբ երկաթուղին կը թափանցէ ամեն տեղ: Կը գտնւին հետզհետէ կենդանական բրածոյ մարմինների նոր-նոր տեսակներ և վերջապէս կը հաստատուի ամբողջովին այն խոշոր բիօլոգիական փակօր, որի անունն է՝ արիւնակցութիւն կենդանական աշխարհը լցնող բոլոր մանր ու խոշոր մարմինների: Դա կը լինի Դարւինիզմի լիակատար չաղթանակը: Այսօր այդ ուղղութեամբ, այն, շատ բան է արւած, բաց զիստ շատ աւելի բան կայ անելու: Դեռ վիճում են և բազմութիւ հիպոթէզներ են առաջարկում այն մասին, թէ որն է արդեօք ողնաշարաւոր կենդանիների մօտիկ նախահայրը: Ոմանք առաջարկում են որդերի մի տեսակը, ոմանք ամֆիօքսուսը (Amphioxus) ուրիշները տիւնիսիէ (Tunicier) կոչւած կենդանիներին և այլն: Դեռ չի լուծւած նոյնպէս, թէ որն է մարդու ամենամերձակ որդիանայրը, հաստատապէս չի գտնւած նշանաւոր մարդ-կապիկը: Այո, դեռ չը լուծւած հարցեր շատ կան, սակայն և այնպէս, չը նայած Դարւինական թէօրիայի անկատար լինելուն, չը նայած զօլոգիական բազմութիւ միջին տեսակների բացակայութեան, այնուամենայնիւ, երբ դիտում էք բիօլոգիական ամբողջ էւոլիւցիան, հէնց ներկայ փոփոխական, սուբյեկտիւ կլասիֆիկացիաների համեմատ, սկսած

միաբջիջ էակներից մինչև կենդանական սանդուղքի բարձրագոյն աստիճանները—արևի պէս պարզ ցոլանում է ձեր առջև արիւնսկցական այն կայքը, որ շղթայում է բոլոր գոյութիւն ունեցող կենդանական տեսակները, և կոյր պէտք է լինել տեսակների անշարժութիւնն՝ կամ հակադարձինից՝ քարոզելու համար:

Պեղումները անընդհատ շարունակում են: Նրանք բաց արին հինաւուրց քարաժայռերի մէջ փետուրաւոր սողուններ և երկայն պոչաւոր թռչուններ, որոնք լոյս են սփռում այդ երկու տեսակների արիւնային սղգակցութեան վրայ: Նրանք տւին մեզ քարացած կապիկների շատ տեսակները Նվէյցարիայում, Յունաստանում և ուրիշ տեղեր. իսկ բրածոյ կապիկների գոյութիւնը վաղուց հերքում էին: Նրանք երևան հանեցին զանազան վայրերում նախամարդու քարացած կմախքները, որոնք մնացել էին ստորերկրեայ շերտերի մէջ հազարաւոր և դուրս հարիւր հազարաւոր տարիներ առաջ. բրածոյ մարդու (*homme fossile*, ископаемый человек) գոյութիւնը աւելի ևս մոլեռանդ կերպով հերքում էին Կիււիէն և իր երկրպագուները: Պալէօնտոլոգիան, վերջապէս, մի ուրիշ նշանաւոր գիւտ արաւ երեք տարի առաջ: Ֆրանսիացի գիտնական Դիւբուա գտաւ Եւաա կղզում պեղումների միջոցին մի ինչ որ կմախքի մնացորդներ, որոնք յիշեցնում են մեր իսկական նախահօր, վաղուց փափաղած մարդ-կապիկին (*Pithecantropus erectus*): Այդպէս է ըստ պարոն Դիւբուայի և շատ ուրիշների վկայութեան: Գիւտը վիճելի է: Բոլոր նշանաւոր բնագէտները թերևս դէմ չաջանեցին իրենց կարծիքները: Դժբաղդաբար այդ գիւտը ներկայացնում է ենթադրական մարդ-կապիկի չնչին բեկորները՝ միայն զանգի մի մասը, ձախ երանքը և մի հատ առամ, որոնք ճիշտ գաղափար չեն տալիս: Բայց որ մարդ-կապիկը գոյութիւն է ունեցել որևէ ժամանակ, որ նրա ոսկորները հանգչում են գէօլոգիական շերտերի մէջ—դա աներկբայելի է, և նրա գտնելը՝ միայն ժամանակի հարց:

Միթէ մարդ-արարածը կարող է բացառութիւն կազմել ընդհանուր տիեզերական էոլոլիցիայի մէջ. միթէ նա կորող է դուրս մնալ ամբողջ օրգանական զարգացման օրէնքներից: Ոչ մի հիմք չըկայ, որ արդարացնէր այդ ենթադրութիւնը, ընդհակառակը՝ բոլոր ֆակտերը նրա դէմ են խօսում: Եւ իրաւ, որչափ անմիտ կը

լինէր կարծել, որ Եւոլիւցիայի թելը ձգւելով նախնական չարդ մօ-
նէրներից մինչև կապիկների երևալը՝ յանկարծ կտրւել է, և որ
մարդը աշխարհ է եկել, որպէս մի առանձին (ոչ-բնական) ստեղծա-
գործութեան արդիւնք։ Այդ վերջին կարծիքն էին դաւանում փիլի-
սոփաներ և գիտնականներ մինչև Եւոլիւցիոնիզմի հաստատուիլը։
Մարդը բանական արարած է, կենդանին՝ անբան, մարդը օժտւած
լեզուով, կենդանին անլեզու է, մարդը գիտէ գործիք բանեցնել, կեն-
դանին՝ ոչ։ մարդը հոգի ունի, զգացմունք, փտակցութիւն, սէր ու
անձնագոհութիւն, մարդը ունի կրօն, վերացական զաղափարներ և
այլն և այլն, կենդանին զուրկ է այդ բոլորից. այս էր տիրապետող
հայեացքը վաղեմի ժամանակներում։ Հայերս էլ հաստատել ենք «անա-
սուն» և «ասուն» բառերը, որոնք արտայայտում են նոյն, ըստ երևոյ-
թին, արմատական տարբերութիւնը, նոյն «խոր անդունդը» մար-
դու և կենդանիների միջև։ Աստուածաբանական փիլիսոփայութիւնը
մանաւանդ ջանք է թափել միշտ աւելի խորացնելու այդ անդունդը։
Դեքարտը, որ փիլիսոփայութեան պարագլուխներից մինն է, ուրիշ
կերպ չէր ուզում անւանել կենդանիներին, բայց եթէ pure machine
(զուտ մեքենայ)։ Սոսկ նախապաշարմունքը չէր, որ խօսում էր Դէ-
քարտի մէջ, այլ, հաւանօրէն, կոմպրոմիսի աստուածը։ Եթէ Դեքարտը
ընդունէր նոյնպէս, որ կենդանիների հոգին ևս անմահ է, ինչպէս
մարդունը, դա կը լինէր զարհուրելի սրբապղծութիւն 17-րդ դա-
րում, ուր կրօնը և նրա սպասաւոր կղերը խիստ զօրաւոր էին։

Այսօր ևս շարունակում են կրօնական խաւարի ու տգիտու-
թեան արբանեակները ամեն տեղ պոռալ ու հաւատացնել, որ Դար-
ւինի վարդապետութիւնը և մասնաւորապէս մարդու ծագման թէօ-
րիան անաստուած է, անբարոյական։ Զէ որ մարդուն արար Աստուած
ըստ պատկերի իւրումն։ Այդպէս՝ ըստ թէօլոգների. իսկ այսօրեայ
հասարակական գիտութիւնը հաստատում է, որ ընդհակառակը՝
մարդն արար զԱստուած ըստ պատկերի իւրումն։

(Շարունակելի)

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

ՊՐՈՓ. ԴԻԿ. ՄԱՐԲԻ ԼՈՒՍԵՐԵՆՈՒԹԵԱՄԲ

Հայ-վրացական յարաբերութիւնների մասին գրական բանակուի նորագոյն շրջանի պատմութեան մէջ իբր կուլմինացիական կէտ պիտի նկատուի վրացի բանաստեղծ իշխան Ակակի ծերեթելիի յօդւածը, որ նա հրատարակեց իւր խմբագրած և իւր անունով «Ակակիի ժողովածու» («Ակակիս Կրեթուլի») կոչւած ամսօրեայ հրատարակութեան սոյն տարւայ յունեարի տետրում: Յօդւածի վերնագիրն է՝ Արմնիա, Հայաստան և Սոմխէթի: (Վերջինս Հայաստանի վրացական անունն է): Ակակի Ծերեթելին իւր այդ յօդւածի մէջ յենեում է մասամբ մի պատմական համառօտ տեսութեան վրայ հայերի անցեալի մասին, որ գրել է մի, ինչպէս Ակակին է ասում՝ «երիտասարդ վրացի գիտնական»: Այդ տեսութիւնը մի կոմպիլացիա է, որի մէջ նորա կազմողը ցոյց է տալիս քիչ ու միչ ծանօթութիւն մի քանի արեւելագէտների աշխատութիւնների հետ, և կատարեալ անտեղեկութիւն հայագիտութեան մէջ, և գրւած է— ասում է հեղինորէն պրոֆ. Մարրը—մի կուարար ձևով, որը յատուկ է «համարձակ գիտնականներին», որոնք գիտութիւններով չեն ծանրաբեռնւած:

Ս. Պետերբուրգի համալսարանի արեւելագիտութեան պրոֆեսոր Ն. Մարրը, իւր իսկ ասելով, գրւած նոյն իսկ «համակրութիւնից դէպի վրաց տաղանդաւոր բանաստեղծը» և և մանաւանդ նորա անկեղծութեան, ուղղամտութեան և գրական ուղղութեան մէջ ունեցած անկախութեան համար, բարեւոք դատեց նորա անարդար դատողութիւնները հայերի մասին հերքել: Այդ իւր առաջին յօդւածը, «Վրաց բանաստեղծ Ակակին» Հայերի մասին» խորագրով, պ. Մարրը

տպեց Թիֆլիսում հրատարակող «Նովոե Աբազրենիե» («Նոր Տեսուկիւն») ռուսաց օրաթերթում (5 և 6 փետրւարի թւերում): Պր. Մարրի այդ ընդդիմախօսութեանը պատասխանեց Ալակի Մերթեւիլին իւր «Ժողովածուի» մէջ, որին ապա յաջորդեց պրոֆեսոր Մարրի մի բազմաբովանդակ պատասխանը, այս վերտառութեամբ՝ «Փոխանակ պատասխանի հրապարակախօս-քանաստեղծին», որ և այսօր լիակատար թարգմանութեամբ առաջարկում ենք Մուրճի ընթերցողներին: (Ռուսերէնը տպեց նոյն «Նովոե Աբազրենիե» թերթի 31 մարտի և 2^ա ապրիլի թւերում):

Թէև այս մեր թարգմանած յօդւածում կրկնում են առաջին ընդդիմախօսութեան մէջ շօշափւած կէտերը, բայց և այնպէս, աւելի մեծ լիակատարութեան համար, աւելորդ չենք համարում այստեղ գնել պ. Մարրի առաջին ընդդիմախօսութեան համառոտութիւնը:

I

Պ. Ն. Մարրի առաջին ընդդիմախօսութիւնը

(Քաղաժաբար)

Ալակիին (այս անունով պէտք է հասկանալ Ալակի Մերթեւիլի), կրկնելով մի «երիտասարդ վրացի գիտնականի» (որի անունը չի տրւած) խօսքերը, պնդում է եղել թէ՛

«Սլոմեան հալերը չունին ոչ մի ազգային անուն և չեն ունեցել ոչ մի ազգային պատմութիւն՝ մինչև Հայոց Նկեղեցու բաժանւիլը օրթողոքս եկեղեցուց», և հեզնում էր որ «հալ պատմութիւնների հաղորդածները հալկական հնագույն ժամանակների մասին հեքեաթներ են միայն»:

Մարրը պատասխանում էր այս վերջին կէտի նկատմամբ, թէ ոչ միայն եւրոպացիք (Գուտշմիդ, Բաուսգարտներ, Կառլէռ և այլք), այլ և նշանաւոր չափով իրենք հայերը (Ք. Պատկանեան, Տաշեան, Գարագաշեան, Գալուստ Տէր-Մկրտչեանց, Խալաթեանց և Եւրիշներ) խիստ քննադատութեան են ենթարկել հայոց պատմութիւնները, բայց ոչ թէ հերքելու համար հայոց պատմութիւնը, այլ սորան աւելի գիտական հիմքերի վրայ դնելու համար: Դորա հետ ի միասին Մարրը յայտնում էր թէ՛

Ամենահին ժամանակներում և այսպէս մինչև X դարը Քր. ժեսոյ վրաց գրականութիւնը գտնուում էր հաջոց գրականութեան զգալի ազդեցութեան ներքոյ: Բաւական է ասել որ սուրբ գրքերի առաջին վրացերէն թարգմանութիւնները կատարուցին հալերէն լեզւից, և ալդ ապացուցանում են ոչ թէ հալերը, այլ աշնպխի գիտ-հականներ, որոնք կատարելապէս անտարբեր են հալ-վրացական հա-կաճառութիւններին: Վրաց եկեղեցական գիրը, եթէ տւած էլ չլինի հալ Մեսրոպը (ժամանակակից հայագիտութիւնը չի ուզում պնդել այդ, որպէս կարծում է Ակակի'ն), բայց նա, անկասկած, կաղմեց հալոց աչքբենարանի օրինակի համեմատ, և, ըստ էութեան, հալոց պատմագիրների հաղորդածը իրականութեանը բնաւ չի հակասում: Եթէ քրիստոնէական քուլտուրայի աշնքան հիմնական գործօնները Վրաստանում, որպէս եկեղեցական դիրն է և սուրբ Գիրքը, վրացիք հալերից ստացան, ուրեմն կարելի է երևակայել թէ ինչ էր հալոց լուսաւորութեան ազդեցութիւնը հին վրացիների վրայ և այն էլ մի աշնպխի ժամանակ, երբ հալոց եկեղեցին ապրում էր տիեզերականի հետ միենոյն կեանքով:

Ակակի'ն պնդում էր՝ թէ

«Հալերի դէպի վրացիք գիտակցաբար տաժած ատելութեան ապացույցներից մէկը Գլինի ժողովի 596 թ. վճիռն է, որը արգելում է հալերին հաղորդակցուել վրացիների հետ որեւէ կերպ, ի բացառած առետուրը»:

Մարրը դորան պատասխանում էր թէ աւելի ևս խիստ Ֆանա-տիկոական վերաբերմունքի դէպքեր են եղել վրացոց կողմից դէպի հալերը, և իբր օրինակ, Մարրը յիշում էր Վրաց տարեգրութիւն-ններից այն դէպքը, երբ վրաց հոգեւորականութիւնը քսոմնելի կեր-պով (շան միջոցով!) քննել տւեց թէ որն է աւելի լաւ կրօնը՝ հալոցը թէ վրացը: Իսկ ինչ վերաբերում է ակնարկւած վճիռն, որը Ակակի'ն հալոց «սրբազան օրէնք» է յայտարարում, Մարրը յայտնում էր ինչ աշնպխի վճիռ Գլինի ժողովում չի կայացած, այլ դա հալոց Աբրա-համ՝ կաթողիկոսի մի շրջաբերական էր:

Ակակի'ն պնդում էր՝

«Եթէ հալոց պատմութեանը նայենք, վրաց ինքնուրուջութիւնը ոչ մի ժամանակում չի չելու արժանի չէ»:

Մարրը դորան պատասխանում էր, որ ինքը

«ոչ մի հալ պատմագրի, ոչ մի հալ գրողի մօտ չի հանդիպել աշնպխի տողերի, ուր վրացոց ինքնուրուջութիւնը ալդ ատուծան կասկածի

ենթարկած և ծաղրած լինէր: Ընդհակառակը եթէ չլինէին հաշն-
դինականները, վրացոց անցեալի նշանաւոր մասը չաւիտեանս անթա-
փանցելի խաւարով ծածկւած կըլինէր»:

Մարրը պատասխանում էր ուրեմն թէ հայ պատմագիրները
այդպիսի բան չեն ասել, և որ գուցէ Ակակին ակնարկում է ժամանակա-
գիրների այն հաղորդածը, թէ վրացիք մի ժամանակ հայերէն էին
խօսում: Բայց այդ տեղեկութիւնը կայ միմիայն Վրաց տարեգրու-
թիւնների մէջ. իսկ հայերից ով այդպիսի բան ասել է, այդ էլ
միայն մի յիշատակարանում, որ թարգմանւած է վրացերէնից:

Ակակին ապա յարձակւում էր պրոֆ. Պատկանեանի վրայ.

«Դեռ երէկ չէր որ նոցա (հայերի) գիտնական Պատկանովը
ապացուցանում էր թէ վրացիք պատմութիւն չունէին, թէ այդ հե-
ղինակեցին նոքա միայն XVIII դարում, Վախթանգի ժամանակ. և
այն էլ հալոց հեքեաթի հիման վրայ»:

Մարրը պատասխանել էր այդ կէտին պրոֆ. Պատկանեանի
վաստակները վրացագիտութեան մասին թւելով այսպէս՝

«Պետերբուրգի համալսարանի հանգուցեալ պրոֆեսորը, ռուսաց
գիտնական, ծագումով հաշ Պատկանովը, առաջին անգամ խիստ գի-
տական կրիտիկալի ենթարկեց Վրաց տարեգրութիւնները, ցոյց տեց
այդ յիշատակարանի մէջ խոշոր անաքրոնիզմներ, պարզեց մի շարք
ֆակտերի անգորութիւնը, որոնք հիմնւած են անկասկած վիպանա-
նական (էպոնիմ) եղանակի վրայ, որ իրեն լաւ ծանօթ էր հաշ
պատմագիրներից, մասամբ, որպէս պէտք է ենթադրել, օտար
հերոսների սխրագործութիւնները «վրացիացնելու» վրայ, ու ականք
կելպով ապացուցեց, որ Վրաց տարեգրութիւնները այն ձևով, ինչպէս
միայն նորա օրերում չալոնի էին հիւրպական գիտութեանը, չամե-
նայն դէպս արտադրութիւն են XVIII-դարի, և որ աւելի հին խմբ-
բագրութիւնը՝ առաջիմ ծանօթ միմիայն հաշկական թարգմանու-
թեամբ, հազիւ թէ XI-դարից աւելի հին լինի»:

Ապա Մարրը, վկայելով որ այս միտքը թէ վրաց պատմու-
թեան սկզբնական ժամանակների աղբիւրները առասպելական բնա-
ւորութիւն են կրիլ, դեռ Պատկանեանից էլ առաջ հարկանցօրէն
յայտնել է վրացի Բաքրաձէ, շարունակում էր այսպէս.

«որպէս աշակերտ հանգուցեալ» պրոֆեսորի (Պատկանեանի), «պար-
ծանքով խոստովանում ենք նորա ծառայութիւնը գիտութեան առ-

ջն. և, բացի այդ, անձնապէս հետաքրքրելով գիտական վրացագիտութիւնով, մենք առանձնապէս երախտագէտ ենք դէպի նորա լիշատակը. մտքի աշն կենդանութիւնը, որ նոյն այդ ջօղածով առաջ բերւեց վրաց գիտական գրականութեան մէջ, դարկ տւեց որ խընդիրը վրաց պատմութեան աղբիւրների մասին՝ լրջօրէն մշակւի և նպաստեց, ի միջի այլոց, որ վրաց տարեգրութիւնները իրենց ամենահին խմբագրութեամբ լուս աշխարհ տեսնեն, որոնք և փառաւորապէս հաստատում են Գ. Պ. Պատկանովի հիմնական մտքերը»:

Ակաղին գրում էր՝

«Հապա նոցա (հայերի) դրդմամբ չէր որ Գրէնը հրապարակապէս յայտնեց թէ Թամար թագուհին հայերի և օսերի ինտրիգների շնորհիւ դահ բարձրացեց, իսկ վրացիք այդ ժամանակ, XII-դարում, ներկայացնում էին մի փոքրիկ անբան ամբոխ, զուրկ նշանակութիւնից»?

Մարրը առ այդ յայտնում էր որ բնաւ չի կարելի Գրէնի անունը Պատկանեանի անուն հետ մի շարքում դնել. Գրէնը կարեորութիւն չի ներկայացնում արեւելագիտութեան մէջ, և որ նա չէր կարող հայերի, որպէս և ոչ օսերի դրդմամբ այդպէս գրած լինել. և ոչ էլ հայերն են հետաքրքրում Գրէնի կարծիքներով:

Ակաղին գրում էր՝

«Հայոց լրագրին ու ամսագրերը չեն որ ապացուցանում են, իբր թէ վրաց լեզուն աջնքան աղքատ է, որ նորանով չի կարելի բարդ մտքեր խոսնել. որ իբր թէ նոյն իսկ բառերը վրացիք հայերէնից են վերցրել, մինչդեռ բոլորովին ալ բան են ասում եւրոպական գիտնականները (?) և նոցա թւում հէնց նոցա (հայերի) համար հեղինակ պ. Գատտէրիսը, որի կարծիքով հայոց լեզուն չի էլ կարելի ուսումնասիրել եթէ ոչ վրացերէնի օգնութեամբ»:

Մարրը պատասխանեց որ հայկական մամուլի մէջ, որպէս ամեն տեղ, գրում են և հիմնաւոր և անտեղի ջօղածներ, առաջինները լուրջ գորղներ ի հրապարակասանների, երկրորդները՝ թեթեամիտ հեղինակների ձեռքով. բայց թէ վրացերէնով մարդավարի վերպով արտայայտւել անկարելի լինի—այդպիսի բան նա չի կարողացել հայոց թերթերում. և ապա աւելցնում էր՝

«Մենք, ասում է Մարր, գրականապէս կարող ենք պնդել, որ ոչ մի լուրջ հայ գրող իրեն չի թուլ տալ վրացիների մասին աջնքան վալ-

բենի բաներ գրել, որքան ալդ առած է հայերի մասին Ակակի'ի, վրաց անկասկած առաջին մեծութեան գրողի խօսածում:

Վերաբերեալ այն բանին, որ վրացիք հայերէնից ըստեր են փոխառել, ասում է Մարր, այդ միանգամայն ճիշդ է, և այդ ընդունել են ու ցոյց են տւել այնպիսի վրացիք, որպէս XVІІІ դարի վրացի գրող Սաբա-Սուլիսան Յրբելիանի և XIX դարի լեքսիկոգրաֆ վրացի Գ. Ի. Չուբինով: Մարրը նաև անկասկածելի է գտնում, որ հայոց լեզուն աւելի մեծ ազդեցութիւն է արել վրացերէնի վրայ, քան այդ ցայժմ պարզւած է: Մարրը աւելացնում էր որ վրաց լեզուն ևս մի յայտնի չափով ազդեցութիւն արել է հայերէնի վրայ, և Վենետիկան Միթարեանները իրենց (Հայկազեան) մեծ բառարանում հաճութեամբ նշանակում են վրացական ծագում ունեցող իրենց յայտնի բառերը:

Վերաբերեալ Փրանսիացի արևելագէտ Գատտէյրիասին պ. Մարրը պատասխանում էր, թէ նա բնաւ այդքան համարձակ միտք չի յայտնել թէ իբր հայերէնը չի էլ կարելի ուսումնասիրել առանց վրացերէնի: Հայկաբանների մեծագոյն մասը չգիտէր և ոչ էլ այժմ գիտէ վրացերէնը, և ոչ էլ վրացերէն գիտենալը շատ նարաստեց Գատտէյրիասի հայերէնագիտութեանը, որ նա, եթէ դատելու լինենք նորա թարգմանութիւններով, բաւականին միջակ գիտէր: Գատտէյրիասը իւր ուշքը դարձրել էր ոչ թէ հայերէնը իւրացնելու, այլ նորա լեզւաբանական կազմութիւնը ուսումնասիրելու վրայ, որի համար և նա ուշք էր դարձրել վրաց լեզւի վրայ: Բայց թէ ինչ կապ էր գտել նա հայոց և վրաց լեզուների մէջ, դա մի գաղտնիք է, որ նա իւր հետ գերեզման տարաւ: (Մարրի ստորև թարգմանաբար տւած խօսածում այդ մասին աւելի որոշակի խօսք է լինելու): Պր. Մարրը յայտնում էր նաև թէ ինքը ևս հասել է այն եզրակացութեան, թէ վրացերէնը առաջնակարգ նշանակութիւն ունի հայոց լեզւի պատմութիւնը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար: Հայերի համար, աւելցնում էր պ. Մարրը, դա զուտ գիտական խնդիր է, որ նոքա չեն խառնում ազգայնական խնդիրների հետ:

Ակակի'ն ի վերջոյ գրում էր՝

«Որպէս ապացոյց (իրենց անարդար լաւակնութիւնների) նոքա (հայերը) մատնանիչ են լինում վրացական տաճարների և վանքերի:

վրայ, որոնց վրայից քերել են վրացական արձանագրութիւնները և փոխանակ «Դաւիթներին» և «Բագրատներին» փոխադրել են «Արշակներ» և «Մարշակներ»:

Մարրը առ այդ նշատել էր, թէ դա ընդհանրացումն է մի բացառիկ դէպքի, որը այն էլ դեռ ստուգութեան կարօտ է և քիչ հաւանական. «հայ ժողովուրդը ինքը ակնածութեամբ է վերաբերում դէպի ամեն մի գրութիւն քարերի վրայ, ինչ լեզուով որ նա լինի». իսկ հայկական ինտելիգենցիայի մէջ, որ հասարակութեան ազն է ու նորա ղեկավարը, դէպի օտարի և թէ իրենց հնութիւնները տածած յարգանքը կազմում է նորա անբաժնի ամենահամակրելի գծերից մէկը»:

Ապա պ. Մարրը աւելցնում էր՝

«հայկական կրթած հասարակութեան մէջ ֆիլոլոգիան ունի արդէն հարիւրաւոր ներկայացուցիչներ, որոնք լսել են թէ ուսուց և թէ մանաւանդ գերմանական պատմաբանների, հնագէտների, ազգագրագէտների, լեզագէտների և այլն», և որ նուքա «անկախ գերմանական լեզաբանական դիտութիւնից, վաղուց արդէն չարգանք են ցոյց տւած դէպի արձանագրութիւնները, և ոչ միայն դէպի իրենցը, ալ և դէպի օտարներինը: Հալոց գիտնական վարդապետները խնամքով ժողովում էին վրաց արձանագրութիւնները և մինչև անգամ տպագրում, և դեռ աւելի էլ վաղ, քան իրենք վրացիները սկսեցին լուրջ ուշադրութիւն դարձնել վրացական արձանագրութիւնների վրայ»:

Ի՞նչ օրինակ հայոց այդ հաճոյական վերաբերմունքի դէպի վրացական արձանագրութիւնները, պ. Մարրը առաջ էր բերել հայրներսէս Սարգիսեանի «Վրաց արձանագրութիւնները և այլն», որ Բրոսէի բացատրութիւններով հրատարակեց Գիտութեանց կայսերական Ակադեմիան 1864 թ., Ս. Պետերբուրգում: Պր. Մարրը հայերի այդ վերաբերմունքի համար առաջ է բերում նաև իւր անձնական փորձերից մի դէպք:

Ինչպէս արդէն ասացինք, պ. Ն. Մարրի այդ ընդգիմախօսութեանը սխառասխանեց Ալլալի Ծերեթելին իւր «Ժողովածու»-ի փետրւարի (VІІ-րդ) թւում, որին յաջորդեց պրոֆ Մարրի մի երկ-

րորդ յօդաժը, ուր նա նոյն խնդիրները աւելի ևս որոշ քննութեան առարկայ է շինում: Դորանով մեր ընթերցողները կը ծանօթանան նաև Ակակի Ծերեթելիի առարկութիւնների հետ, որոնք, պէտք է կարծել, կամ շատ տարածւած են և կամ գոնէ հաւատ են գրաւում վրաց նոյն իսկ ինտելիգէնտ համարւող հասարակութեան մէջ:

II

Պ. Ն. Մարրի երկրորդ ընդդիմախօսութիւնը

(Ամբողջութեամբ)

Ինձ համար դժար է կարդալ արիւնոտ էջերը, Որոնք ցեղական գծութիւններից են խօսում, Որպէս դժար է տեսնել մալլ գէմքերը Ընտանիքի, ուր հնուց խռովութիւն է տիրում:

Ա. Պլէշէն, «Լրագրեր կարդալուց յետոյ»:

Մենք ներողութիւն ենք խնդրում ընթերցողներից որ երկրորդ անգամ յարուցանում ենք մի խնդիր, որը մեր նախընթաց յօդաժում (Նովոե Օբոգրենիե №№ 4841—4842) կարծում էինք թէ սպառեցինք. այդ մենք անում ենք Ակակիի նոր սխալ պնդումների առիթով, (տես «Ակակիս Կրեթուլի» վրաց ամսագիրը, 1898, № VII, էջ 55—69), սխալներ, որոնց մի մասը ակամայ են, մասամբ սակայն անկասկած գիտակցական են: Որպէս անցեալ անգամ, այժմ էլ մենք կը խօսենք ըստ էութեան, բնաւ չզիպչելով ոչ (ներկայ) հայ-վրացական յարաբերութիւններին, ոչ էլ մեր լսելիքին խորթ այն խօսելու տոնին, որ թոյլ է տւել իրեն իշխանը իւր ընդդիմախօսութեան մէջ ¹⁾:

¹⁾ «Ակակազ» լրագրում (№№ 60 և 61) Ակակիի տպած իւր վրացերէն յօդաժի (ռուսերէն) փոխադրութիւնը տարբերում է տոնի սաստկութիւնով, որը անցնում է ամեն սահման: Մենք կարող էինք սպասել, եթէ ոչ կատարելապէս կորրէկտ, գէթ վաշիւոչ տոն դատողութիւնների մէջ թէ գործի և թէ անձերի մասին: Մեր վկայաբերութիւնների համար մենք աչքի առաջ ունինք իշխան Ա. Ծերեթելիի վրացական բնագիրը: Ման. Հիդ.

Մենք լաւ հասկանում ենք, որ զժլար է զիտական շահերի շրջանից դուրսը կանգնած մարդկանց համար սեղմել այն սահմանների մէջ, որ պահանջում է զիտական տեսակէտը, և ինքն իրեն չմոռանալ: Դա մանաւանդ բնական է մի այնպիսի շրջանում, որի ամենալաւ մարդիկ եսասէր զրգուժմեր են վերագրում այն աշխատաւորներին, որոնք անցեալի մասին մեծ ջանքով զիտական ճշարտութիւն են որոնում, ամեն տեսակ զրկողութիւններ կրելով:

Ոչ զիտական հոգս և ոչ զիտական աշխատանք ճանաչելով, Կողքիսի երգիչը *) չի հրաժարւում սակայն այնպիսի խնդիրներ քննել, որոնցից ամեն մէկը առանձին վերցրած պահանջում է երկարատե պատրաստութիւն և բազմաթիւ տեղեկութիւններ ու զիտելիքներ նորան վճռելու համար: Մենք, ի հարկէ, մտադիր չենք լրագրի էջերում հերքել որևիցէ մէկը այն բազմաթիւ պատմական-գրականական խնդիրներից, որ շօշափում է Ակակիին: Նախ մենք մեզ բաւականաչափ տեղեկ չենք համարում բոլոր խնդիրներում: Իսկ երկրորդ, մասնագիտական նկատողութիւնների համար պահանջում է մասնագիտական պատրաստութիւնով ընթերցող հասարակութիւն:

Ակակիին յանդիմանում է մեզ որ մենք բաւականաչափ ուշք չենք դարձրել նորա կարծիքի վրայ Դաւիթ Կուրոպաղատի մասին (Կրեբուլի էջ 56). իբրեւ թէ բաւական չէր որ մենք առհասարակ նորա յօդուածի վրայ ուշք ենք դարձրել և կարծես մենք պարտաւոր ենք դողմայօրէն որոշ կարծիք յայտնել ամեն մի պատմական և գրական խնդրի մասին, նոյն իսկ այնպիսի խնդրի, որը կատարելապէս ձեռնհաս անձի կողմից բազմակողմանի զիտական քննութեան չի ենթարկւած: Եթէ Հայաստանի և Վրաստանի անցեալի մէջ ամեն բան այնքան պարզ լինէր, ինչպէս այդ ներկայացնում է իրեն իշխան Ակակին, եթէ ոչ միայն մի բարդ խնդիր, ինչպիսին է Դաւիթ Կուրոպաղատի պէս պատմական տեսակէտից համեմատապէս խոշոր անձի նշանակութիւնը, այլ և եթէ կատարելապէս մի պարզ հարց «Վարդ-ի Սրբոյն Գէորգ Զօրավարի» 1) հայերէնից վրացերէն թարգմանութեան մասին կարելի լինէր վճռել առանց լայն արեւելագի-

*) Իշխան Ակակի Ծերեթելի: Ծան Մուրճի խմբ.

1) Զօրավար հայերէն նշանակում է «ВОЕВОДА», ինչպէս անւանւում է

տական կրթութեան, առանց մասնագիտական տեղեկութիւնների, առանց բազմակողմանի հմտութեան բազմալեզու սկզբնական աղբիւրների նկատմամբ, և առանց նախնական սև աշխատանքի,— ապա հարկ կ'ա՞յ արդեօք ասելու, որ վրացական ազգային-հայրենասիրութիւն անող գիտնականները վաղուց ճանաչւած կը լինէին իբրև գիտութեան մղիչներ արևելագիտութեան մէջ, և նոցա պարագլուխ պատուով կարող էր կանգնել Ակակիին!

Իսկ առաջժամ մենք հաճութեամբ զոհում ենք մի քանի ժամ, որ երկրորդ անգամ ակներև կերպով ցոյց տանք, որ Ակակիին յանձն է առել դատելու մի այնպիսի գործի մասին, որի վրայ նա ոչ մի հասկացողութիւն չունի: Եթէ Ակակիին քննէր իսկապէս շնորհալոյ օրերի և ոչ անցեալ դարերի» խնդիրները, ինչպէս այդ պնդում է նա իւր գրառքի մի տեղում (Կրեբուլի, էջ 60), ապա, կրկնում ենք նորից, մենք ձայն չէինք հանիլ: Բայց նա մտնում է մեր գիտական ասպարէզը, կամենալով իւր ժամանակակից, ազգային-ազգասիրական և առօրեայ կեանքի հայեացքները—լինեն նոքա գուցէ և ճիշտ, այդ քննելը դուրս է մեր գիտական շահերից—հիմք ծառայեցնել վճռելու համար անցեալի խնդիրները. բայց այդպիսի մի վարւողութիւն ոչ մի կերպ չի կարելի արդարացնել:

Ակակիին, օրինակ, հաւատացնում է, որ անցեալում վրացիք ոչ մի վատութիւն չէին անում հայերին. (Կրեբուլի, էջ 61): Որ վրացիք անցեալում շատ յաճախ լաւ յարաբերութիւնների մէջ էին հայերի հետ, դա ոչ միայն նոր բան չէ, այլ և ապացուցւում է ամենից առաջ այն քուլտուրական հաղորդակցութիւնով, որի վրայ մենք շեշտում էինք, և որը այնքան մոլեռանդաբար ժխտում է Ակակիին: Իսկ թէ վրացիք անցեալում իբր թէ ոչ մի վատութիւն չեն արել հայերին, այդ մասին Ակակիին բնաւ պետքական չէ իբր դատաւոր. նախ որովհետև իշխանի հասկացողութիւնը «վատի» մասին, երբ խօսքը վրացոց յարաբերութիւնների մասին է դէպի հայերը, մեզ թւում է ոչ-ճիշտ. և երկրորդ, և այդ մեզ համար մանաւանդ կարևոր է, իշխանը դորա մասին դատելու նախապատրաստութիւնը չունի:

Ս. Գէորգը հալոց սուրբերի վարքագրութիւնների մէջ. այդ հալոց բառը վերցրել է վրացի թարգմանիչը ի հարկէ հալոց բնագրից: Ծան. 2եդ.

Աւելի ևս միակողմանի է Աղաղիկն, երբ նա ապա պնդում է, թէ անցեալում վրացիք քանիցս պատերազմել են հայոց կրօնի և ազգութեան համար և որ իրենց տաճարներն ու սրբավայրերը զիջում են եղել հայերին. (Կրեթուլի, էջ 61-62): Եթէ դորանով Աղաղիկն ուզում է ասել թէ հնումը հայերը արիւն չեն թափել վրացիների համար և սոցա տաճարներ չեն նւիրել, ապա նա կառարեւապէս սխալուում է: Մենք տաճարներ ենք ճանաչում, օրինակ՝ Ս. Գէորգ եկեղեցին Անիում, որ մի հայ էր կանգնեցրել, ինչպէս այդ վկայում է ժամանակակից արձանագրութիւնը, որ քանդակած է քարէ պատի վրայ, և որը զիջանել է վրացիներին, որոնք նորա սւաղը օժտել են արձանագրութիւններով:

Պէտք է արգելօք ապացուցել, որ եթէ վրաց թագաւորութիւնը ղիմացաւ մինչև դարիս սկիզբը, դորա համար վրացիք նշանաւոր չափով հայերին են պարտական, որոնք կրում էին քրիստոնէութեան ընդհանուր թշնամիների առաջին ամենամեծ հարւածները, ծառայելով այդպիսով իբր պատենշ Վրաստանի համար՝ նորա համար բաց և վտանգաւոր կողմից: Երբ հայերը վերջնականապէս ընկան և գերիացան պարսիկների ու տաճիկների ձեռքում, ապա ճակատագրական ժամը հասաւ նաև հարևան երկրի համար. վրացի ցեղերը մէկը միւսի յետեւից սկսեցին մահմեդականութիւն ընդունել, և սկսեց վրաց թագաւորութեան երկարատե ազդեցիկան, որ բարեջաշդութեամբ վերջացաւ Վրաստանի միացումովը Ռուսիային *):

Բայց ինչ հարկ կայ այս ամենի մասին խօսել այն մարդոց հետ, որոնց կուրուծիւնը այն տեղն է հասնում, որ մեր անկեղծ ցանկութիւնը՝ ցրել այն մթութիւնը, որ տգիտութիւնը սփռում է Վրաստանի անցեալի վրայ՝ շտապում են բացատրել այնպիսի շարժառիթներով, որոնք, առնւազն ասենք՝ մեզ անհասկանալի են, և մասնաւորապէս մեր անբարեացակամութիւնովը դէպի վրացիք:

*) Վրաստանի թուլանալու և վերջնական անկման անհրաժեշտութեան ու պատճառների մասին տես Մուրճ 1895, № 11, «Ա. Արասխանեանց. Վրաստանի անցեալը» չօդածի վերջին էջերը: Պրոֆ. Մարրի ալստեղ չափում կարծիքը կայ նաև մեր այդ չօդածում, աւելի ևս լայն ըմբռնումով: Ծան. Մուրճի Խմբ.

Վրաց բանաստեղծը, ակներև է որ, չի հասկանում, թե գիտնականը կը դադարէր գիտնական լինել այն լուպէից, երբ նա կ'վճռէր ծածկել գիտական ճշմարտութիւնը այն պատճառով, որ դա վնասակար կը լինէր իւր ցեղակիցներին *)։ բացի այն որ եթէ վնաս հասնէր՝ դա չէր գալ ճշմարտութիւնից, այլ միայն ճշմարտութիւնը արհամարելուց։

Եւ, վերջապէս, մեր այդ ո՞ր խօսքերն են վկայել մեր անբարեացականութիւնը դէպի վրացիք?! Միթէ միայն այն ժամանակ մենք կը դասէինք վրացիների բարեացականների շարքը, եթէ ծածկէինք այս դառը ճշմարտութիւնը, որ վրացիք իրենց անցեալը չգիտեն, և կամ որ աւելի վատն է՝ նոքա այդ գիտն միակողմանի կեղծ-ազգասիրական լուսաբանութեամբ, և որ նոցա հարկաւոր է, այդ բանի վրայ լուրջ ուշք դարձնելով, հաղորդակից լինել գիտական շարժմանը արեւելագիտութեան մէջ?

Ինչ կայ վատ այն բանում, որ, ինչպէս ասացուցել ենք և ապացուցում ենք, վրացիք հնումը ենթարկում էին հարևանների քուլտուրական ազդեցութեան և ոչ միայն յունների, այլ և հայերի, ասորեստանցիների, արաբների և պարսերի կողմից, իրենց կարողութեան չափ աշխատում էին փոխառնել նոցանից լաւ, լուսաւոր, ազնւացնող տարրերը։ Միթէ աւելի լաւ կը լինէր, եթէ մէկը պարզէր, որ անցեալում վրացիք ապացուցեցին իրենց անմատչելիութիւնը իրենց շրջապատող բազմատեսակ քուլտուրաներին, և որ եթէ նոքա որեւէ բան փոխ էին առնում իրենց հարևաններից, այդ էլ միայն, Ակակիի՝ի պէս դատելով (էջ 66-67), միայն բացասական գծերն էին¹⁾, որոնք որպէս պէտք է կարծել՝ նոցա ցեղին աւելի մատչելի էին? Կամ գուցէ մենք չպէտք է ապացուցէինք, որ

*) Իս երևի ակնարկ է այն հանգամանքի վրայ, որ ինքը պրոֆ. Մարրը, թէև անգլիական նախահօրից է, բայց և, որքան գիտենք, կիսա-վրացի է մայրական կողմից ու վրաստանցի է։ Ծան. Մուրմի խմբ.

¹⁾ Այդ առթիւ տես ներքև, ուր խօսքը հայերէնից փոխ առած բառերի մասին է։ Ծան. Հեղ.

հին-վրացական աշխարհիկ գրականութեան լաւագոյն յիշատակարանները պարսկերէնից են թարգմանաւծ? Ուրեմն մենք պէտք է հաւատացնէինք, թէ վէպը Վիսի և Բամինի մասին մի թարգմանութիւն չէ պարսկերէնից, թէև համեմատութիւնը պարսկերէնի հետ մեզ համոզեց այդ բանում¹⁾: Ուրեմն մենք պէտք է ապացուցէինք թէ XII դարի վրացական վէպը Ամիրան-դարեջանիանի թարգմանութիւն չէ պարսկերէնից, թէև նորա հիմքում դրած է պարսկական ազգային տեղեկեցիա, և ալլն: (Տես Ն. Մարր. Պարսից ազգային տեղեկեցիան վրաց «Ամիրան-դարեջանիանի» վէպի մէջ. «Журналъ Минист. Народн. Просвѣщенія». 1895 թ. յունիս: Համեմատել նաև մեր մի այլ քննադատական նկատողութիւնը նոյն ամսագրում, նոյն թւականի):

Ուրեմն նաև ապագայում, պէտք է կարծել, պէտք չէ որ մենք հանգամանօրէն պարզենք (եթէ միայն ով և իցէ մեզնից առաջ այդ լանէ, որ նոյնպէս կարելի է) թէ յայտնի պոէման «Ընծենաւորը» իւր պարսկական բնագիրն ունի, և որ Շոթա Ռուստաւելի'ն ստեղ-

¹⁾ Ի դէպ. Ակակի'ն աշխատում է թուլացնել նշանակութիւնը մեր այն խօսքի թէ Պատկանով ունէր խիստ գիտական վերաբերմունք, ոչ պակաս քան դէպի վրացականը, նաև դէպի իւր հայրենի հայկական չիշատակարանները. Ակակին ալլ անում է այս նկատողութիւնով, թէ Պատկանովը ձեռք դարկեց խորենացուն բացասական կողմից քննադատելու իբր թէ եւրոպացի գիտնականների կարծիքներից դրդւած: Դիցուք ալլ այդպէս է. թէ հալերը հասունացել են արդէն մինչև այն աստիճանը, որ ոչ միայն սատնասրտութեամբ լսում են այն գիտնականների կարծիքը, որոնք քանդում են իրենց աւանդական հալեացքները հին հայկական գրականութեան լաւագոյն չիշատակարանների մասին, այլ և նոքա իրենք՝ գիտութեան շահերի համար՝ աշխատում են հակաաւանդական ոգով. մինչդեռ վրացիք ոչ միայն չեն ուզում լսել գիտապէս պատճառաբանած կարծիքները նոյն իսկ մի աշնպիսի շահագրգիռ հարցի մասին, որպիսին է պարսիկների քուլտուրայի աղղեցութիւնը վրացիների վրա, այլ և աշխատում են աւելն կերպ մթաղնել, օրինակ, մի աշնպիսի անվիճելի իրողութիւն, որպիսին է Վիսի և Բամինի մասին վէպի թարգմանութիւնը պարսկերէնից վրացերէն. (տես մեր յօդւածը «Պարսկական գրականութեան վրացց վրա արած ազդեցութեան խնդրի վերաբերեալ» Журналъ Министерства Народнаго Просвѣщенія, 1897, մարտի տետր):

ծեց իւր «Ընծենաւորը» պարսկական պոէմայի վրացերէն արժակ թարգմանութիւնից. չպէտք է մենք այդ պարզինք արդեօք, թէև չիշատակարանի ուսումնասիրութիւնը մեր մէջ դիտական համոզմունք է կազմել տալիս, թէ դա ականերև թարգմանութիւն է պարսկերէնից ¹⁾: Մենք չպէտք է ապացուցէինք, որ Վ. արք. Պետրոս Իւերացուն, վրաց թագաժառանգի, յայտնի պալեստինեան դործիչի Մ. րդ դարում, թարգմանւած է վրացերէն ասորերէնից, թէև թէ արտաքին և թէ ներքին նշանները խօսում են յօգուտ այդ իրողութեան: (Տես Ն. Մարր. „Житие Петра Ивера“, հրատ. կայսերական ուղղափառ պալեստինեան ընկ., Ս. Պետերբուրգ, 1896 թ., հատ. VI, տետր երկրորդ, էջ XXI և յաջորդները): Նոյն պատճառով էլ մենք ըստ մեր կարեաց չպիտի պարզէինք վրաց Բարադամ և Յովսափ բարոյախօսական վէպի ասորական ծագումը. (տես Նիկ. Մարր. «Հայ-վրացական նիւթեր Զարադամ և Յովսափ բարոյախօսական վէպի պատմութեան համար. Записки вост. отд. имп. арх. обш. Ս. Պետերբ. հատոր XI էջ 56 և յաջորդներ)

Այդ դեռ քիչ է. բանից դուրս է գալիս որ մենք ուրիշներին պիտի հաւատացնէինք, թէ վրաց զրականութիւնը ազդել է հայոց զրականութեան վրայ, և ոչ հակականը՝ վրացերէնի վրայ, չնայած որ հայ-վրացական զրական յարաբերութիւնների պատմութեան մէջ, որպէս այդ երևում է մեր անձնապէս պարզած իրողութիւն-

¹⁾ Մի տեսակ չարախնդութեամբ քանիցս լիշատակել են, թէ մեր հետախուզութիւնները Բրիտանական թանգարանում պարսկական պոէմայի մասին, որը իւր վերնագրով կարող էր երեալ իբր «Ընծենաւորի» բնագիրը, ցանկացած հետեանք չուեց մեր պնդածի մտքով. կարծես թէ Բրիտանական թանգարանի ձեռագրի մէջ մենք որոնած լինէինք տպացույցներ «Ընծենաւորի» պարսկական ծագումի, մինչդեռ մենք որոնում էինք հաստատութիւն աչն տպացույցների, որոնք բղիտում են նոյն իսկ Շոթա Բուրթաւէլի՛ի պոէմայի ուսումնասիրութիւնից, տպացույցներ, որոնք միանգամայն բաւական են ամեն մէկին, որը ծանօթ է զրական լիշատակարանների համեմատական ուսումնասիրութեան մեթոդի հետ: Քանիցս նա և պնդել են թէ իբր «ականերև» կերպով անհիմն են մեր կարծիքները Ընծենաւորի մասին, չնայած որ մեր այդ կարծիքները դեռ ևս տպած էլ չենք! Ծան. Հեղ.

ներից, հայերի ազդեցութիւնը վրացիների վրայ եղել է թէ աւելի ուժեղ եւ թէ աւելի արդիւնաւէտ! Չէ որ խնդիրը հայերի ազդեցութեան մասին վրացիների վրայ՝ միայն մի, թէեւ էական, մասն է այն ամբողջ գիտական սինթեզի, որին մենք հասել ենք կամ հասնում ենք քրտնաջան աշխատութիւնների շնորհիւ! Եւ հետաքրքրական է թէ յանուն Ռիդեալների առաջարկում են մեզ ետ կանգնել մեր ամենազուտ գիտական համոզմունքից, և յայտարարել այն, որի անկաշուկութեան մասին Ֆակտերը համոզել են մեզ! Մենք ի լոյս ենք հրաւիրում Ալալիին և նորանով առաջնորդւող ընթերցողներին, և շատ ափսոս, եթէ ով և իցէ վախենում է այդ լոյսից. բայց գոնէ թող զուր տեղը մեզ քարշ չտան դէպի... միջնադարեան գիտական մտածողութեան խաւարը: Թող զուր տեղը չաշխատեն մեզ շեղել մեր գիտական դիրքից, ներկայացնելով մեզ իբր պաշտպան ինչ որ հայկական շահերի: Եթէ մեր կարեաց չափ բողոքը գիտական ճշմարտութեան ազուադման դէմ միմիայն հայերի օգտին դուրս եկաւ, — դա մեր մեղը չէ: Մեզ մնում է ափսոսալ միայն նոցա, որոնց շահերը գիտական շահերին հակառակ եղան:

Այժմ գանք գնահատելու Ալալիի պատասխանը:

Ալալիին ոչ մի էական առարկութիւն չարաւ մեր յօդւածի կէտերին, թէ վերաբերեալ այն բանի, որ մոտցածին է հանրահայկական ռաբազան օրէնքը, որը իբր թէ պատուիրում է հայերին թշնամութիւն վրացիների հետ, և թէ վերաբերեալ այն բանի, որ հայկական աղբիւրները Վրաստանի պատմութեան համար բաւականաչափ չեն գնահատւած, և թէ վերաբերեալ ոյ. Գրէնիին, որը իբր թէ Թամար թագուհու մասին գատողութիւն է աւել հայերի թելադրութեամբ, և կեղծւած արձանագրութիւնների մասին, որ իբր թէ հայերը դնում են վրաց տաճարների վրայ, և թէ վերջապէս վերաբերեալ պրոֆեսոր Պատկանովի նշանակութեան Վրաց տարեգրութիւնների քննադատութեան համար:

Ալալիին իւր առարկութիւնների մէջ այդ կէտերի նկատմամբ ոչ մի նոր ֆակտ առաջ չբերաւ, որը նշանակութիւն ունենար, և

որը արժանի կերպով ի նկատի առնւած չլինէր մեր անցեալ յօդ-
ւածի մէջ. նա առաջ չբերաւ նաեւ ոչ մի նոր աղբիւր:

Ակակի'ն իրեն նեղութիւն չուեց կարդալու պրոֆ. Պատկա-
նովի գրչին պատկանող քննութիւնը Վրաց տարեգրութիւնների, և
կամ, եթէ նա այդ նեղութիւնը իրեն տւեց, ապա ցոյց տւեց իւր
անպատրաստ լինելը նորան զնահատելու համար, որ նոյնպէս կա-
րելի է այն հանգամանքների պատճառով, որ բացատրւած են ներքեւ:
Ակակի'ի առարկութիւնների մէջ յիշեալ հինգ կէտերի դէմ նորու-
թիւնը միայն մեր մուտրի նուրբ բաշխումներն են և գործին
չնւիրւածի համար զժւար ըմբռնելի աղաւաղումները, որ նա
անում է մեր ապացոյցների նկատմամբ: Հեղինակի փոքր ինչ զւար-
ճասէր տրամադրութիւնը տեսնելով, մենք հակամէտ ենք այդ ըն-
դունելու իբր կատակ, որպէս «կատակ» է համարում նա վրաց ժամա-
նակագրի այն ընդարձակ պատմութիւնը՝ թէ ինչպէս վրաց և հայոց
հաւատները փորձի ենթարկւեցին շան միջոցով: Պէտք է իմանալ, որ
դա ոչ թէ մի թուուցիկ նկատողութիւն է, ինչպէս Ակակի'ն է հաս-
կացնել տալիս, այլ մի ամբողջ զրամա է, որը սիրով պատմում է
վրացի ժամանակագիրը պատմութեան ձևով, տեղ-տեղ դիալոգնե-
րով: (Տես Грузинскія Лѣтописи, հրատար. Պետերբուրգի գիտու-
թեանց ակադեմիայի, հատ. I, էջ 312—317 և Փրանսիական թարգ-
մանութիւնը էջ 450-455): Լաւագոյն կրօնի փորձելը շների միջո-
ցով միմիայն ծայրագոյն մոմէնտն է այն զրամայի, որ սարքեց վրացի
կաթողիկոս Յովհաննէսը: Դրաման իաղացւում է հանդիսաւոր ժո-
ղովում, ներկայութեամբ հզօր թագուհի Քամարայի, որը սակայն
անզօր էր կռւելու վրացի կաթողիկոսի Փանատիկոսութեան դէմ¹⁾:
Վճռում են շների առաջը գցել ոչ թէ հասարակ նշխար, այլ Գառն

¹⁾ Ակակի'ին դիւր չի գալիս, որ հանգուցեալ Պատկանովին՝ Ս. Պե-
տերբուրգի համալսարանի պրոֆեսորին, ռուսաց և ոչ հայոց գիտնական
ենք անւանում, և այդ առիթով անարժան կասկածներ է թող տալիս
իրեն թէ մեր հասցէին և թէ հանգուցեալ վաստակաւոր արեւելագէտի հաս-
ցէին, որը իւր ամբողջ կեանքում օժանդակել է Ռուսիայում հաւաքիտու-
թիւնը գիտնական հիմքի վրայ դնելուն, և որը արեւելագէտների մէջ մեծ
համբաւ ունէր որպէս ռուսաց գիտնական: Առանց քննելու, մի փոքր մեղմ
ասած՝ այն հնարովի բաները, որ բարդում են պրոֆ. Պատկանովի գիտ-

Աստուծոյ (Վրաց տարեգրութիւն, էջ 315 և 316, Ֆրանսիական թարգմանութեան էջ 453 և 454), այն է թէ՛ ում Գառան կ'ուտի շունը՝ այդ կրօնը պէտք է ճանաչել յաղթած: Հայերը խնդրում են որ իրենց հանգիստ թողնեն, բայց անողոք կաթողիկոսը իւր ասածի վրայ պինդ կանգնեց: Վերջ ի վերջոյ փորձը կատարում է, իհարկէ, յօգուտ վրացոց, և «անարդարութեան մէջ բռնւած» հայերը, շատ հայեր, հարկադրւում են հրաժարել իրենց հաւատից:

Այս տեսարանը, որը, ըստ Ակակիի՝ ճշմարտ զգուշացում էր, զաւրճաբան բանաստեղծի կարծիքով մի լեզենդա է, կատակի համար մշտցրած Վրաց տարեգրութեան մէջ:

Երբ կարծեցեալ վճիռը Դւինի ժողովի — այդ սխալը Ակակիին պէտք է ընդունէր — դուրս եկաւ ոչ թէ Դւինի ժողովի վճիռ, այլ հայոց կաթողիկոսի մի կոնդակ VԷ-րդ դարից, որ աւանդել է մեզ X-րդ դարի հայոց մի պատմագիր, այդպիսի մի «իրողութիւն» Ակակիին յայտարարում է իբր «հանրահայկական սրբազան օրէնք» հայոց ատելութեան լնդդէմ վրացիների. բայց երբ վրաց կաթողիկոսը XII-րդ դարում վրդովեցուցի՝ եղանակով յիշոցներով վիրաւորում է հայերի կրօնական զգացմունքները, և այդ մասին դրամատիզմով լիբը պատմութիւն են տալիս Վրաց տարեգրութիւնները, ապա դա կատակ է, լեզենդա է! Երբ ռուսաց գիտնական Պատկանով քննադատաբար կասկածի ենթարկեց Վրաց տարեգրութիւնների տեղեկութիւնները նախնական պատմու-

նական համբաւի վրայ, կանգ առնենք վրաց բանաստեղծին անհանգստացնող մի մանրութիւն վրալ. Ակակիին ըստ երեւութիւն չի հասկանում կամ չը հասկացող է ձեռնում, որ թէև Պատկանովը հալ էր, մինչև անգամ գիտնական հալ, բայց հայոց գիտնական նորան չի կարելի անւանել, որպէս ալդ անում է Ակակիին. որովհետև Պատկանովը անցել էր ռուսական դպրոց և ներկայացուցիչ էր ռուսաց արեւելագիտութեան: Ուղղագրելով Ակակիի աշխարհը, մենք կամեցանք միալն ցույց տալ դարձւածի անճշտութիւնը, որը գուցէ ակամալ էր, գուցէ և կամովին: Ակակիին երեւակալում էր թէ դրաւջով երկու բանի միանգամայն էր խփում — հայկական ազգայնութեան և մեր հանգուցեալ ռուսացի «հայկական» գիտնականութեան:

Շան. Հեղ.

թեան մասին, դա, Ակակիի կարծիքով, մի յանցանք էր, որ արել է մի հայ՝ շնորհիւ հայկական ատելութեան դէպի վրացիք. իսկ երբ վրացի Ակակի նոյն¹⁸⁸ ¹⁸⁹ «անսխալական» վրաց տարեգրութիւնների հաղորդածը ժամանակակից անցքերի մասին կատակաբանութիւն ու լեզենդա է անւանում, այդ, որպէս պէտք է կարծել, ճշմարտութիւն պաշտպանելու համար կատարւած մեծ սրլորագործութիւն է! Ակակիին սակայն մոռանում է, որ թէկուզ նա լեզենդա էլ լինի, յիշեալ պատմութիւնը այնուամենայնիւ վրացական լեզենդա է, և որպէս այդպիսին՝ նա վկայութիւն է տալիս թէ որպէս Փանտիկոսաբար էին տրամադրւած վրացի շրջանները, որոնց մէջ ծագել է այդ լեզենդան, որի կարեւրութիւնը Ակակիին աշխատում է ուրանալ:

Յետոյ, Ակակիին, պարզ է որ, չգիտէ կամ իրեն չգիտենալու է դնում, որ վրացիք, որպէս ուղղափառ ժողովուրդ, իրենց յարաբերութիւնների մէջ դէպի հայերը ղեկավարւում էին տիեզերական ժողովների վճիռներով, և որ նոքա, վրացիք, հարկ չունէին ժողովներով կանոններ սահմանել ընդդէմ հերետիկոսների, որպիսիք հայերն էին ճանաչւած վրացոց մէջ: Հայերի, որպէս հերետիկոսների հետ, զանազան տիեզերական ժողովների բաղմամբիւ վճիռների զօրութեամբ, հէնց օրինակ ժողովային վճիռների 58-րդ յօդւածի համաձայն, ըստ Եւֆրիմիոս Ափոնացու վարկածի՝ վրացիք չէին կարող ամուսնական կապերի մէջ մտնել, և այլն:

Մենք ցանկութիւն չունինք ներկայումս աւելի մանրամասնօրէն քննել իւր շատ կողմերով փափուկ խնդիրը վրաց հոգեւորականութեան անհամբերատարութեան մասին դէպի հայերը, այդ՝ «եթեմանդամ անիծեալ հայերը», ինչպէս հեղինակաբար ասում է վրաց տարեգրութիւնների մէջ (մասն I, հրատ. գիտութեանց ակադեմիայի, վրացական բնագիր, էջ 312, իսկ Փրանսիական թարգմանութեան էջ 450): Բայց մի՞թէ կարելի է զորանից դուրս բերել հանրավրացական «սրբազան օրէնք» հայերի դէմ? Մենք այդ չենք կարծում, չնայած որ կան դէպքեր ականջատնի Փանտիկոսական վերաբերմունքի հատ-հատ վրացիների կողմից դէպի ամեն ինչ որ հայկական է, ինչպէս այդ, օրինակ, երևում է Ակակիի վերջին յօդւածներում: Բայց մենք զանց ենք առնում այդ և նման առարկութիւնները:

նորա անկալուն են և ներելի: Իսկ մեզ դէմ եղած այլ ասարկութիւնների մասին քիչ է ասելը թէ անկալուն ու սնանկ են: Եւ Ակակիի՝ փաստաբանութեան բնաւորութիւնը մենք աւելի լաւ ենք համարում զոկումէնտային եղանակով սլարգել, թողնելով այլոց նորա զնահատութիւնը:

Ակակիին կամ ճանօթ չէ Սուլիան Օրբելիանու բառարանի հետ, և կամ զարմանալի սխալ է անում (տես Կրեբուլի, էջ 66) թէ Օրբելիանին իբր թէ չէր ընդունում որ վրացերէն լեզուն հայոց բառեր փոխ առած լինի: Որպէս զի մեր ասածը հաստատենք, բաւական է չիշեալ բառարանում որոնել բառերո՝ արակի, արջասալի, ասալարգի, ըագինի, ըանջարի, պարի և տասնեակ այլ բառեր, որոնց վրացի լեզուիկոգրաֆը բոլորովին ճիշդ կերպով հայերէնից փոխառած է ընդունում, այսպիսի խօսքերով՝ դա հայերէն բառ է, կամ՝ այդպէս է կոչւում հայոց լեզուում:

Ակակիին կամ չի կարդացել Վրաց տարեգրութիւնները և կամ զարմանալի սխալ է գործում, երբ պնդում է (տես Կրեբուլի, էջ 63) թէ վրացական բնագրում իբր թէ գրւած է՝ «վրացիք միշտ վրացերէն էին խօսում», և իբր թէ «վրացերէն» բառը հայերէն դարձնողը հայ թարգմանիչն է եղել: Ահա վրացերէն բնագիրը մեր ուսերէն թարգմանութեամբ ¹⁾. «Մինչև այժմ քարթլոսեանների (այսինքն վրացիների) լեզուն հայերէնն էր, որով և խօսում էին. բայց երբ վերը չիշած անթիւ, օտար ցեղերը հաւաքւեցին Վրաստանում, այն ժամանակ վրացիք թողին հայերէն լեզուն և բոլոր այդ ցեղերից (ցեղերի լեզուների խառնուրդից) կազմւեց վրաց լեզուն»:

Այդպէս է տպւած և այդպէս է հասկացւած այդ տեղը հանգուցեալ ակադեմիկոս Բրոսսէի կողմից (Hist. de la Géorgie, I, վրացերէն բնագիր, էջ 25, ֆրանս. թարգմ. էջ 31):

¹⁾ Վրացերէնը և ուսերէն թարգմանութիւնը մենք բաց ենք թողնում, դնելով նորա տեղը հայերէն բառացի թարգմանութիւնը:

Հանգամանորէն լինելու համար աւելցնենք, որ վրացերէն մի քանի ձեռագրերում «հայոց»-ի տեղ դրած է «վրաց»։ Բայց այդ սրբագրութեան անտեղի լինելը ակներև է, որովհետև այդպիսով կը ստանայինք այս նախադասութիւնը. «մինչև այժմ քարթլոսեանս ների (այսինքն վրացիների) լեզուն վրացերէն էր»։ և այն ժամանակ միտք չէր ունենալ վերջում ասել թէ յետոյ վրացերէնը կազմուեց։ Անկախ դորանից, հայոց լեզւի մասին չէ որ նորից ասուում է, թէ «վրացիք թողին հայոց լեզուն», որ առաջ խօսում են եղել։ և այդ խօսքը պահպանւած է բոլոր վրացական ձեռագրերում։ Վերջապէս այդպէս էր հասկացել այդ տեղը նաև արքայազն Վախուշտ, վրացի արքայազնը (Վրաց պատմութիւն, Թիֆլ. 1885, էջ 35), ասելով թէ «մինչև այժմ Վրաստանում էր (գործածութեան մէջ) հայոց լեզուն, բայց այդքան ցեղերից (ցեղերի խառնուրդից) սկսեցին խօսել վրացերէն»։

Որպէս տեսնում է ընթերցողը, Վրաց տարեգրութիւնները երկու անգամ հաստատում են այն, ինչ այնքան համարձակութեամբ ժխտում է Ակակի՛ն։ Դժար է երևակայել մի աւելի ցաւալի բան *):

Ակակի՛ն ցոյց է տալիս որ կատարելապէս անտեղեակ է լեզուագիտական աշխատութեան եղանակների մասին, երբ նա առաջարկում է մեզ («Վերբուլի», էջ 66) որ մեր ձեռքը վերցնենք XX-րդ դարի վրացի հեղինակ Իւան Զիրչիմելի՛ի բառարանը, որպէս զի համոզւենք թէ հնումը իբր թէ հայերէնը չէ ազդել վրացերէնի

*) Մի թերթում, որը նշանակւած է մեծ հասարակութեան և ոչ մասնագէտների համար, մեզ թուում է որ պրոֆ. Մարրը, առաջ բերելով Վրաց տարեգրութիւնների միջից այդ՝ անշուշտ ամեն սովորական ընթերցողին զարմանալի թւացող կտորը, պէտք է, որպէս մենք կարծում ենք, նաև մի փոքր կանգ առնէր և բացատրէր թէ արեւելագէտները ինչ մեկնութիւն են տալիս այդ տողերին, կամ, աւելի լաւ ասած, Վրաց տարեգրութիւնների մէջ ո՞ր ժամանակի համար է ասւած, թէ նոր ցեղեր եկան Վրաստան և նոցա խառնուրդից զուացաւ վրացերէնը, իսկ մինչև այդ՝ իբր թէ վրացիք խօսում էին հայերէն։ Մենք առաջիմ տրամադիր ենք կարծելու, որ խօսքը չափ հին ժամանակների մասին է, երբ իրենք հայերը թերևս կաղմակերպած չէին այն լեզուն, որ լատոյ դառաւ հիմք նոցա գրական լեզւի։

վրայ, այլ, ընդհակառակը, վրացերէնն է ազդել հայերէնի վրայ: Պարզ է որ Ակակիի՝ անյայտ է, որ այդպիսի խնդիրների լուծումը բառարաններում չեն որոնում, որ բառարաններով չեն մշակում: այդ տեսակ լեզագիտական խնդիրները, այլ զրական յիշատակարանների և կամ ժամանակակից բարբառների հիման վրայ: Ի դէպ, վրացիների իսկական ազդեցութիւնը հայերի վրայ, որի մասին Թուրքիկ կերպով յիշեցինք մեր անցեալ յօդաձում, վերաբերում է X-րդ դարից յետովաջ ժամանակին, այն է XII—XIII-րդ դարերին:

Ակակիի՝ ըստ երևութին, չի հասկանում մեզ, երբ նա աշխատում է (Վրերուլի, էջ 66) Թուլացնել—աւելցնենք՝ որ անյաջող կերպով—լեքսիկոգրաֆ Գ. Չուբինովի հեղինակութիւնը հայերէնից վրացերէն փոխառած բառերի նկատմամբ: Չուբինովի և Սուլիսան Օրբելիանու վրայ մենք յենում էինք միմիայն էնդուր, որ ցոյց տանք թէ կար ժամանակ, երբ լուսաւորած վրացիք չէին վախճնում ընդունել հայերէնի ազդեցութիւնը վրացերէնի վրայ: Իսկ ինչ վերաբերում է այդ անվիճելի իրողութեան՝ այդ խնդիրը վճռելու համար անհրաժեշտ նիւթերը մեզ անձնապէս այնքան մատչելի են, որ հարկ չունինք այլոց հեղինակութիւններին դիմելու:

Նոյնպէս չի հասկանում Ակակիի՝ (Վրերուլի, էջ 50-60) կամ ձևանում է թէ չի հասկանում մեր վկայաբերութիւնները պ. Ժորդանիայից: Մենք յենեցինք պ.պ. Ժորդանիայի և Բաքրաձէի վրայ (պատմաբան Բաքրաձէի մասին Ակակիի լռեց) ոչ թէ ապացուցելու համար մեր կարծիքի առանց այն էլ ակներև ճշտութիւնը Աբրահամ կաթողիկոսի կամ Դւինի Ժողովի կարծեցեալ վճռի մասին, այլ ցոյց տալու համար Ակակիի, որ նաև վրացիների մէջ կան մարդիկ, և այն էլ ներկայ խնդրում անկասկած աւելի ձեռնհաս քան նա, որոնք հայոց կաթողիկոսի յիշեալ կոնդակը իւր գործնական նշանակութիւնը վաղուց կորցրած են համարում¹⁾:

¹⁾ Իսկ մենք վկայում ենք, որ ներկայիս հաջ ընթերցող հասարակութիւնը Աբրահամ կաթողիկոսի ազգ կոնդակի մասին առաջին անգամ տեղեկութիւն կ'ունենան հէնց Ակակիի մոլեգնոտ «մերկացումների» շնորհիւ:

Ակազիի անտեղի նկատողութիւնը պ. Ժորգանիայի դէմ թէեւ չի վերաբերում մեր շօշափած խնդրին, բայց և այնպէս պէտք է իւր արժէքով դնահատուի, որովհետեւ դա նոյնպէս բնորոշում է Ակազիի եղանակները և նորա սրախօսութիւնների արժանաւորութիւնը: Ակազիին գրչի մի հարւածով անհիմն է յայտարարում պ. Ժորգանիայի կարծիքը թէ Դւինի ժողովի կարծեցեալ վճիռը՝ հայերի և վրացիների մէջ ամեն հաղորդակցութիւն կտրելու մասին՝ գործնական նշանակութիւն չստացաւ. պ. Ժորգանիան իւր կարծիքը հաստատելու համար յենում է վրաց կաթողիկոս Արսէնի լուութեան վրայ այդ կէտի նկատմամբ. և այդ բանը Ակազիին զւարթ տրամադրութեան մէջ է դնում: Նա համեմատում է պ. Ժորգանիային գալոց դարերի այն զարմանալի գիտնականի հետ, որը պ. Ժորգանիայի և Մարրի աշխատութիւնների մէջ աստեղագիտական դիտողութիւններ չգտնելով, կըսկսէր ապացուցանել թէ XIX դարի վերջում երկնային լուսատուներ չկային: Ակազիի սրախօսութիւնը շինովի է, որովհետեւ Արսէնը, վրացի կաթողիկոսը, X. րդ դարի հոգեւոր մատենագիրը, անկասկած տեղեակ անձն է և նա կազմեց հայ-վրացական եկեղեցական գիտութիւնների պատմութիւնը (տես Ֆ. Ժորգանիա, Материалы և այլն, 1893, էջ 313 և յաջորդները). և ահա, երբ այդ Արսէնը լուում է Դւինի ժողովի կարծեցեալ վճիռի մասին, ուրեմն այդ վճիռը իսկապէս նորան անյայտ էր, և ուրեմն նորա ժամանակ այդ «վճիռը» գործնական նշանակութիւն չունէր:

Ակազիին, չկարողանալով երկու լեզուների համեմատական ուսումնասիրութեան զուտ լեզագիտական նշանակութիւնը գանազանել քուլտուրական-պատմական հետազոտութեան խնդիրներից՝ բնական է որ հակասութիւն է գտնում (տես Կրեբուլի էջ 67-68) մեր դատողութիւնների մէջ Ֆրանսիացի արեւելագէտ Գատտէյրիասի (Gatteyras) մասին: Նախ և առաջ Ակազիին բանը այնպէս է դուրս բերում, կարծես թէ մե՛նք չենք առաջ բերել հէնց նոյն այն տողերը, որ նա կարծում է թէ կարող է մեզ դէմ իբր զէնք ծառայեցնել: Բայց այդպէս են պոէտի եղանակները: Յետոյ, Ակազիին զարմանում է, թէ այդ ի՞նչպէս մենք ծաղրում ենք Ակազիի յենւիլը Գատտէյրիասի վրայ, քանի որ մենք ինքներս նորանից դու աւելի ուժով պնդում ենք թէ վրացերէնը մեծ նշանակութիւն

ունի հայերէնի ուսումնասիրութեան համար: Ըստ Ակակիի, մեր կողմից այդտեղ կազուխտիկա է թոյլ տրւած: Մինչդեռ ինդիքը շատ պարզ է: Գատտէյրիսը ընդունելով որ վրացերէնը նշանակութիւն ունի հայերէնի քերականութեան համար, այն էր ցոյց տալիս, որ Ֆրանսիական գիտնականը այդտեղ ցեղակցութիւն էր նկատում: Միմիայն կատարեալ պրոֆանը կարող է պնդել, որ երբ լեզւագէտը յայտարարում է թէ մի լեզու քերականական կողմից մի ուրիշ լեզուի համար նշանակութիւն ունի, ուրեմն իբր թէ իսկոյն պէտք է եզրակացնել թէ մի լեզու քուլտուրայէս ազդել է միւս լեզուի վրայ. սանսկրիտ լեզուն ահագին դեր է կատարում, օրինակ, սլաւեան լեզուների քերականական կազմի մէջ, բայց վերին աստիճանի վայրենի բան կըլինէր այդ իրողութեան վրայ հիմնել հնդկացիների պատմական-քուլտուրական ազդեցութիւնը սլաւեանների վրայ: Գիտութիւնը, որպէս յայտնի է, ճանաչել է հայոց լեզուն որպէս արիական, և իրաւամբ: Մեր լեզւագիտական աշխատութիւնների մէջ մենք աւելի հեռուն գնացինք և այն համոզման եկանք, որ հայոց լեզուի մէջ կայ մի խաւ, որը ցեղակից է վրացերէնին, և այդ խաւը, որը բնաւ եկամուտ չէ և բնաւ վրացերէնից չէ վերցրած, տարրալուծելու համար՝ վրացերէնը իրօք հիմնական նշանակութիւն ունի: Վրացերէնի ու հայոց լեզուների այդ գենետիկական կապը ցոյց է տալիս ոչ թէ վրացոց քուլտուրական ազդեցութիւնը հայոց վրայ, և ընդհակառակը, այլ այն, որ յանձին թէ հայերի և թէ վրացիների՝ մենք տեսնում ենք յետնորդներ երկու եղբայրական ազգերի, որոնք յետոյ բաժանւեցան այլ և այլ ազգագրական և լեզւաբանական, և մասամբ քուլտուրական և քաղաքական ներգործութիւնների շնորհիւ: Այնպէս որ վրացերէնի նշանակութիւնը հայերէնի ուսումնասիրութեան համար բնաւ չպիտի համեմատել այն ազդեցութեան հետ, որ ունեցել է հայոց լեզուն վրաց գրականութեան վրայ և որը երևում է մի շարք հայոց բառերից հին-վրացական գրականութեան չիշատակարանների և, դորա շնորհիւ, նաև վրաց խօսակցական լեզուի մէջ. ազդեցութիւն, որը ցոյց է տալիս թէ վրացիք մի ժամանակ կախումն են ունեցել հայոց քրիստոնէական քաղաքակրթութիւնից: Հետեւապէս, Ակակիին մոլորւում էր, երբ, աշխատելով ցոյց տալ վրացերէնի բառարանական

գերազանցութիւնը հայերէնից՝ վկայութեան էր կանչում Գատտէյ-րիասին, որը հետաքրքրուում էր վրաց լեզուի մորֆոլոգիայով:

Բայց այդ դեռ քիչ է: Որպէս յայտնի է, Գատտէյրիասը ապացուցում էր այն միտքը, թէ վրաց լեզուն իբր թէ հազդին շահեկանութիւն է ներկայացնում, որպէս ոչ-կատարեալ կցողական (ազդուտինաութիւն)-լեզաբանական տիպարի մի նմուշ. իբր թէ վրացերէնի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս ինչ-որ առանձին սկզբնական ֆակտեր, որոնք կարեւոր են ընդհանուր լեզագիտութեան մէջ՝ պարզելու համար այն կապը որ կայ մարդկային լեզուի և անասունների ձայնական ընդունակութիւնների մէջ ¹⁾:

Վրացի բանաստեղծը դորանից յետոյ էլ պիտի զարմանայ, թէ ինչու մենք անտեղի համարեցինք նորա վկայաբերութիւնը Գատտէյրիասից, երբ նա աշխատում էր ապացուցել վրաց լեզուի կատարելութիւնը և հարստութիւնը?

Ակակի՛ն, պարզ է որ, քիչ է տեղեակ իւր մայրենի լեզուի պատմութեանը, երբ վստահանում է հաստատել (տես Կրեթուլի էջ 66), թէ դեռ ևս X դարում վրաց լեզուն հայկական ազդեցութիւնից զերծ էր: Այդ ժամանակները, արդարեւ, որպէս այդ արդէն առաջին յօդաձում ասացինք, հայոց լեզուի ազդեցութիւնը թուլանում է, շնորհիւ Աֆոնեան դպրոցի աշխատութիւններին, և վրաց լուսաւորեալ հասարակութեան մէջ ծագում է ընդդիմութիւն ամեն բանին որ հայկական է. բայց, այնուամենայնիւ, հայոց ազդեցութիւնը վրացիների վրայ, որ առանց ապացոյցի ժխտում է Ակակի՛ն, ոչ միայն մնում է իբր հարուստ ժառանգութիւն նախկին էպոքից, այլ դեռ շարունակում է աճել: Իբր ապացոյց բաւական է չիշել այն, որ X դարի վրացի գրող Դաշի, մի նամակում առ եպիսկոպոս Անտոն, բաղկացած 11 տողից, ²⁾ գործ է ածում վրաց յիշատակա-

¹⁾ Gatteyrias, Etudes linguistiques sur les langues de la famille géorgienne. Revue de Linguistique, հատոր XV, 1882, էջ 371-372. «Ainsi se renoue par l'étude du langage la chaîne ininterrompue qui rattache l'homme aux autres animaux, և այլն (էջ 372):

²⁾ Такайшвили, Три историческія хроники, Тифлисъ, 1890, էջ XIII.—Жордания, Хроники և այլն Тифлисъ, 1893, I, էջ 101. Վերջին հրատարակութիւնը լաւագոյն ընթերցումներով:

բաններում աչնքան հազագիւտ հայկական բառեր, որպէս ճոճըցնո—նշդեհ, ջճցճոճժ—եպերանք, յոջո—արփի, Յոժոջո—պիտակ, ջճճո—վեհ, ջոյճնո—վախա, ճճոճո—դրովատ:

Ակակի՛ն, անշուշտ աւելի ևս քիչ տեղեակ լինելով Ասուածաշունչի գրքերի թարգմանութեանց պատմութեանը, յանձն է առնում մեզ սովորեցնել, ի միջի աչլոց, այն խնդրի մասին, թէ վրացիք ինչ լեզուներից են վրացերէն թարգմանել սուրբ Գիրքը (Կրեքուի, էջ 58-59): Մեզ, որ մենք դեռ ուսանողական նստարանից աստիճանաբար ուսումնասիրում ենք այդ բարդ խնդիրը, համեմատական կերպով ուսումնասիրելով ձեռագրերը՝ յունականը, հրէական, ասորականը, հայկականն ու վրացականը, մենք որ, համեմատելով հայկական թարգմանութիւնները ասորական բնագրերի հետ, հետամուտ ենք գտնելու ասորական ազդեցութիւնը հայոց սրբագրած սուրբ Գրքի մէջ և նիւթեր ենք ժողովում բնորոշելու համար հայոց գրականութեան պատմութեան նմանողական էպոքը,—մեզ այժմ Ակակի՛ն յանդիմանութիւն է շարտում՝ երեսներիս, իբր թէ մենք կամենում ենք լռութեան տալ ասորական քուլտուրի ազդեցութիւնը և որ իբր մենք պատրաստ ենք սիրիցիներին հայեր ցոյց տալ: Ահա թէ ուր կարող է հասցնել մի մարդու վստահութիւնը, թէ կարելի է դատել ամեն բանի մասին, ոչ մի բանից տեղեակ չլինելով:

Մենք, ի հարկէ, այստեղ չենք քննելու քիչ մշակած հարցը հայոց Ասուածաշունչի ասորականից թարգմանած լինելու մասին, որ պահպանւած է միայն սրբագրած ձևով ¹⁾, և հայերէնից արած հին-վրացական թարգմանութեան մասին, որ նոյնպէս քանիցս ենթարկւել է սրբագրութեան: Բոլորովին բաւական չլինի եթէ ասենք որ զուր ջանք է, երբ ոչ միայն ժխտում են վրաց Ասուածաշունչի թարգմանած լինելը հայերէնից, այլ և երբ աշխատում են Փանտաստիկական «հիպոթէզներով» մթնացնել այս իրողութիւնը, որ հայոց Ասուածաշունչը ականջալսնի կերպով ազդել է վրաց թարգմանութեան վրայ ²⁾:

¹⁾ Պրոֆեսոր Խալաթեանցը պատրաստում է էջմիածում նորերս գտած «Մնացորդաց գրքերի» տեքստը, որը, դատելով մի քանի նշաններից, ներկայացնում է եթէ ոչ ասորերէնից ամենահին թարգմանութիւնը, գէթ նորան ամենամօտ վերսիան:

²⁾ Մեր մանրութների մէջ մենք արդէն տպագրել ենք և տպագրում

Բայց ոչ միայն բանաստեղծին չվերաբերող խնդիրներում, ուր դեռ կարելի է արդարացնել նորա անգիտութիւնը, այլ և այնտեղ, ուր խնդիրը բոլորովին սլարզ է և ենթակայ չէ որ և է կասկածի, Ակակին, պատական երգիչը իդէալական հին-վրացական կեանքի, ցոյց է տալիս զարմանալի անտեղեկութիւն հին-վրացական իսկական գրականութեան: Ակակին անխուով դէմքով մեզ դուրս է կանչում, (Կրեթուլի էջ 58), որ մենք ցոյց տանք հայերէնից կատարած թարգմանութիւններից որ և է մէկը, ի բաց առած մէկը, միմիայն մէկը՝ Մխիթարի հետաորութիւնը:

Մենք կարող ենք ցոյց տալ հայերէնից վրացերէն կատարած տասնեակ թարգմանութիւններ, բայց բաւականանում ենք մի քանիսով: Ամենից ճակատին յիշենք Սաղմոսների մեկնութիւններ Եպիփան Կիպրացու, X-րդ դարի թարգմանչի հետաքրքրական նամակով: Նամակը (տես Փորգանիա, Քրոնիկներ, 1893 էջ 99—101) հետաքրքրական է նրանով, որ նա վկայում է այն հակահայկական տրամադրութիւնը, որ սկսում էր հաստատուել վրաց հոգևորականութեան մէջ, մի բան, որ չի խանգարել վրացուն հայերէնից թարգմանել իրեն հետաքրքրող յիշատակարանը: Այդ թարգմանութիւնը մաղաղաթեան ձեռագրով պահպանւում է Քիֆլիսում, Վրաց մէջ գրագիտութիւն տարածելու ընկերութեան գրադարանում: 2) Գրիգոր Տաթևացու Բարոզները. 3) Արիստոտէլի Ստորոգութիւնը, թարգմանութիւն հայերէնից վրաց Կաթողիկոս Անտոնիոսի. 4) Ստորոգութիւն մեկնութեամբ Ղաւիթ Անյաղթի, թարգմանութիւն Դոսիֆէոսի.

ենք հիւթեր խնդրի մասին: Կոնիքիւրի վաղուց լուս տեսած աշխատութեան մէջ՝ The Growth of the Peschittâ version of the New testament (The Amerikan Jurnal of Theology, October 1867, հատոր I, № 4), նւիրած չատկապէս նոր կտակարանական գրքերին, շատ ճիշդ միտք է արծարծում թէ նոյն իսկ վրացական չորս աւետարանների գրքերը ոչ թէ ինքնուրոյն թարգմանութիւն է լուծարէնից, որպէս ումանք կարծում էին ցաւով, այլ մի հին թարգմանութիւն է, որը սրբագրւել է լեռն լուծական բնագրի համեմատ: Կոնիքիւրը բաւականանում է պարզելով որ հալոց և վրաց թարգմանութիւնները կախումն ունին միևնոյն ասորական տէքստի ցուցակից, որը, աւելացնենք մեր կողմից, մեր հաւաքած նիւթերի հիման վրայ վճռւում է լոգու ալն բանի, որ վրացական տէքստը կախումն ունի հայերէն տէքստից:

5) Պատմութիւն Հայոց. 6) Մանկութիւն Քրիստոսի. 7) Դատաստանագիրք Մխիթար Գոշի. 8) Բժշկարաններ և այլն: Ի վերջոյ ասենք, որ լեքսիկոգրաֆ Սուլիսան Օրբելիանին կազմել է Համառօտ համաբարբառք Աստածաշունչի, մասամբ հայկական աղբիւրից, եթէ դատելու լինենք մեզ մօտ գտնուող ձեռագրի հետեւալ գրութիւնից, որ արւած է եկեղեցական գրերով. «Համաբարբառք հին և նոր կտակարանի, համառօտութեամբ թարգմանեց հայերէնից և լատիներէնից Սաււա Օրբելիանի» և այլն:

Ակակիւն, վերջապէս, մեր լեզագիտական հայեացքները տատանելու համար, անտեղեկութեան մարգարիտներ է իցոյց դնում, մէկը միւսից լաւ: Այսպէս, օրինակ, հայերէն «մանգաղ» և վրացերէն «մանգալի», որոնք երկուսն էլ հանրասեմական ծագումից են (եբրայերէն մագալ, ասորերէն մագլա, արաբերէն մինջալ) Ակակիւն դուրս է բերում վրացերէն «մկա»—հնծել բառից: Կամ, օրինակ, վրացերէն «բանակի»—քանակ Ակակիւն համարում է նւագեցրած ձեւը վրաց «բինա» (քնակարան) բառի, չհասկանալով որ «բանակի» հայերէնից վերցրած բառ է, իսկ «բինա»—արաբերէն «բինա» բառն է, որ տաճկերէնում էլ գործ է ածւում, և նշանակում է շինութիւն, որից և դոնհիկ հայերէնում և նոյնպէս վրացերէնում նշանակում է տանիք, տուն, ընակարան ¹⁾:

Կամ, օրինակ, Ակակիւն յայտնում է (Կրեբուլի էջ 67), թէ մի լեզւից մի այլ լեզւի մէջ ընդունած բառերը իբր թէ բացառապէս այնպիսիներ են, որոնք փոխառնող լեզւի մէջ չկան: Մինչդեռ մի ազգի մի այլ ազգի վրայ արած քուլտուրական ազդեցութեան ուժգնութիւնը հէնց նրանով էլ արտայայտւում է, որ ազդեցութեան ենթարկւած ազգութիւնը փոխ է առնում նոյն իսկ այնպիսի բառեր, առանց որոնց նա հեշտութեամբ կարող էր կառավարւել, եթէ իւր մտաւոր զարգացումը անկախ լինէր. բայց ուրիշի գրական և այլ ազդեցութիւններով գերւած խելքի համար մայրենի բառերը թւում են ոչ բոլորովին արտայայտիչ և արհա-

¹⁾ Թողածի հեղինակ պրոֆ. Մարրին դիտել ենք տալիս որ նաև Բնակել, Բնակարան, Բնիկ հայերէն գրական բառերը նոյն «բինա» խօսքի իմաստն են պարփակում իրենց մէջ: Ծան. Մուրճ'ի խմբ.

մարում են, և ժամանակի ընթացքում բոլորովին մոռացում են:

Ակակի՛ն այս միտքն է յայտնում (Կրեբուլի էջ 67) թէ վրացիք փոխ են առել հայերէնից այսպիսի — fi done! — բառեր, ինչպէս ժըճֆօ (ծոմձի) ժլատ, թափնայլ (մամանկալի) կաւատ, ձեռնաօ (աւազակի) աւազակ, խեղճի (սաստիկի) զատաղի, որոնց համար իբր թէ վրացերէնում չկային սեփական բառեր: Կանգ չենք առնում այն բանի վրայ որ Ակակի՛ն, չիմանալով հայոց լեզուն, առաջին երկու բառերը հայերէն է ընդունում, թէև առաջինն նմանհայերէնում բառ չկայ, և, ընդհակառակը արմատական վրացերէն բառ է, որը ունի բարբառներում մի այլ ձև լըճֆօ (ղոմձի), իսկ երկրորդ բառը, իշխանը, ըստ երևութիւն Չուբինովի վրայ հիմնելով, որը հէնց այդտեղ սխալում է, նոյնացնում է մանակալ *) բառի հետ, որը հայերէնում վարդի նշանակութիւնն ունի և բնաւ կապ չունի վրաց թափնայլ (մամանկալի) բառի հետ:

Բացի դորանից, իրականութիւնից մի րոպէ աչք շուռ տանք և համաձայնենք Ակակի՛ի ռոմանտիկական հայեացքի հետ վրացիների իբր մի իդիլիական ազգի մասին, որի կուսական հեղութիւնը ոչ միայն աշխարհք չի բերել ոչ մի աւազակ, ոչ մի կատաղի անհատ, այլ որը նոյն իսկ երբէք չի եղել մթաղնած աւազակութեան ու արիւնսարբութեան հասկացողութեան ստերովն անգամ: Ճշմարիտ է արդեօք, թէ վրացիք հայերից վերցրած լինեն բառեր միայն այնքան ստոր հասկացողութիւնների համար, որպէս աւազակութիւն, արիւնսարբութիւն և այլն? Անշուշտ այո, եթէ լսելու լինինք Ակակի՛ին. բայց դա խորին մոլորութիւն է, որովհետև հէնց սուրբ Գրքի և Տարեգրութիւնների տէքստերի մէջ մենք գտնում են հայերէն ծագումից այնպիսի բառեր, ինչպէս մշակ, սպիտակ, ժամ, քաղաք, վախճան, ամբարտաւան, համբոյր, սենեակ, զատիկ, կազմ, կարգ (որից և վրացերէն ջանքաբեղում — կարգադրութիւն, յաջոյս — կարգի բերել), ծէս, մատեան, պատիւ, ճշմարիտ և հարիւրաւոր այլ բառեր: Հապա եթէ մի հայ, իւրացնելով Ակակի՛ի լեզւաբանական հայեացքները սկսէր ապացուցել, թէ վրացիք փոխ են առել հայերից վերոյիշեալ բառերը, թէ նոքա վայրենի բարբարոսներ էին, որ

*) Գործածականն է մանկալ = գութանի մաճը բռնող: Ման. խմբ.

հասկացողութիւն չունէին ոչ մշակութեան, ոչ սպիտակութեան կամ մաքրութեան, ոչ քաղաքային կեանքի, ոչ կարգ ու կանոնի, ոչ պատմութեան, ոչ պատուի, ոչ ճշմարտութեան մասին, և որ եթէ վրացիք ունէին «սիմարտլէ» և «սինամբլիլէ» բառերը, բայց դոքա նշանակում էին՝ առաջինը—վրացական ճշմարտութիւն, իսկ երկրորդը—իմնրէլական ճշմարտութիւն, տարբեր՝ հանրամարդկային ճշմարտութիւնից, որի համար Աստածաշունչի լուսաւոր թարգմանիչները հարկադրւած էին կաղմել Յեմաճոցծա (Ճէշմարիտէքա) (օրինակ, Ղուկ. I, 13), որ կազմւած է հայոց «ճշմարիտ» բառից: Հայը այդ դէպքում կարող էր, ի միջի այլոց, յենւել Ակակիի վրայ, որպէս վրացական-իմնրէլական ճշմարտութեան նախանձախնդրի վրայ:

Յամենացն դէպս, իւր եղանակներով, որոնք ներկայ յօդւածում բաւականաչափ մերկացան, վրաց բանաստեղծը ախար նոյնպէս ճշմարտութեանն էր ձգտում, բայց իւրատեսակ ճշմարտութեան, որը ոչ մի ընդհանուր բան չունի ոչ այն ճշմարտութեան հետ, որը մենք մեր սլարտքը համարեցինք յայտնել կովկասեան լուսաւորեալ հասարակութեան առջև, նկատելով նորա շրջանում մի վերին ասորիճանի տիտուր Երեմիայի նշաններ—նշաններ ազգային անհամբերատարութեան դէպի նոյն իսկ անցեալ կեանքի ճշմարտութիւնը:

Ի վերջոյ ցանկալի կը լինէր, որ Ակակիին հաւաարիմ մնար իւր խօսքին (Կրեբուլի էջ 69) և այլ ևս մեզ հետ խօսքի չբռնէր, որովհետեւ մենք չենք կտրող ախորժով խօսել այն մարդու հետ, որը խեղաթիւրում է ուրիշի մտքերը և ապացոյցները, աղաւաղում է Ֆակտերը, չունի բաւականաչափ տեղեկութիւններ՝ հասկանալու համար զիտական արգումէնտների նշանակութիւնը, և, ի լրումն ամենայնի, թոյլ է տալիս իրեն, խնդրից դուրս գալով՝ ինսինուացիաներ անել խօսակցի հասցէին:

15 մարտ 1898 թ. Ս. Պետերբուրգ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՇԱՆԹ. — Վերժին. վէպ. «Մուրճ» 1897 թւի №№ 9, 10, 11—12
և 1898 թ. № 1.

«Մուրճի» 98 թւի լուծարի հա-
մարում վերջացաւ պ. Շանթի նոր
վէպը «Վերժին» վերնագրով: Վէպի
հէնց վերնագրից երևում է, որ նրա-
նում գլխատը տեղը բռնելու է կին,
մի հանգամանք, որ մարդի ոտի-
պում է առանձին հետաքրքրու-
թեամբ սկսել երիտասարդ վիպասանի
աչա նոր երկի ընթերցումը: Թէև
ի հարկէ նշա վէպերում պակաս չեն
կանաչք, բայց երբ վէպի հերոսուհին
ինքը կին է, մարդ սպասում է նրանում
գտնել կնոջ բնատրույթեան բազմա-
կողմանի վերլուծումը, հեղինակի
հաջեացքը կնոջ մասին, նրա բռնե-
լիք դիրքի և հասարակական նշա-
նակութեան մասին: Այս իրաւ, այս
բոլոր բաներից մենք գտնում ենք
«Վերժինում»:

Վէպը Կ. Պոլսի կեանքից է, թէև
ալատեղ դուրս բերած երիտասարդ-
ները, օրիորդները որքան էլ պու-
սական են կամ նույն իսկ հաշկական,
նոյնքան և ռուսական են կամ եւ-
րոպական: Գուցէ ասեն—աւելի լաւ,
ուրեմն հանրամարդկային են: Բայց

ալդ էլ սխալ կը լինէր, որովհետև
նոքա չունին աչն մե՜հ, համամարդ-
կային, ընդհանուր գծերը, ինչպիսիք
ունին Համլէտը, Լիրը, կամ Վիլհէլմ
Տէլլը: Բայց մեր սպասածը, ախար,
ալդ էլ չէ. ալ հաշկական կեանքի
տիպեր: Բայց անցնենք բուն վէպին:

Վէպի գործողութիւնը կատար-
ւում է Կ. Պոլսում, ամառ ժամանակ:
Արշակը և Տիրանը, «որոնք իրարու
հանդիպեցան Ղալաթիա, Կենտրո-
նական վարժարանը, զրեթէ նոյն
տարիքի պատանիներ, նոյն դասա-
րանէն, երկուքն ալ տաք բնաւորու-
թեան տէր, բան մը դառնալու,
գործ մը տեսնելու տենչով բռնկած»
չուտով լարեցան իրարու և մտերմա-
ցան»: Արշակը զեռ չաւարտած գնում
է արտասահման իւր հօրեղբոր մօտ,
պատրաստւում է և մտնում համա-
լսարան. նախապէս բնադիտութիւն
է սովորում և ապա անցնում է ու-
ցիալական գիտութիւններին, իսկ
Տիրանը փող չունենալով ոտիպած
է լինում մնալ Պոլիս, և մի քանի
դպրոցների բարձր դասարաններում

աշխարհաբառի և գրականութեան դասեր է աւանդում, չոյս ունենալով աղպիստով ժողոված փողով շարունակել ուսումը։ Դէպքի ամառը Արշակը, համալսարանի բարձր կուրսերից մինի ուսանող, վերադարձել է տուն ամառը հանգստանալու։ Տիրանինց տանը հանդիպում է նրանց ծանօթ մի ընտանիքի, բժիշկ Պղտի կեանին և նորա քույր Վերթինին։ Խօսակցութեան ժամանակ Վերթինը խնդրում է Արշակին պատմել Եւրոպայի կանանց մասին, «անոնց ձգտումներու և գործունէութեան մասին»։ Պէտք է ասել, որ Տիրանը արդէն սկսել էր գրաւել Վերթինով և նրա մասին երազել։ Արշակի վրա Վերթինը տպաւորութիւն է անում իւր քննադատող և բողոքող չափաւորութիւնների չնորհիւ. «մեր սին ու անտարբեր ընտանեկան կեանքի մէջ այս դժգոհութեան ու բողոքի ծաղիկը ուրկէ է բուսեր» մտածում է նա։ Վերթինն էլ իւր կողմից գրաւում է Արշակով, նորա գեղեցիկ գաղափարներով։ Նրան հիացնում են Արշակի մէջ եղած գործունէութեան աչն մեծ ծաւալը և հռանդի ահագին պաշարը։ Արշակի խօսքերից կողմնակի կերպով ազդելով Վերթինը վճռում է վարժուհի դառնալ, որի մասին չափնում է իւր մօրը և եղբորը, բայց նրանցից հասգին ընդ զիմութեան է հանդիպում։ Սակայն Արշակը նրան խորհուրդ է տալիս չախապէս իւր սեփական կրթութեան վրա հոգալ—«նախ սիրտեմական, գիտական, լաւն զարգացում ստանալ»։ Նոցանում առաջանում է փոխադարձ համակրութիւն, որը

փոխում է սիրոյ։ Բայց Արշակը իւր քույր Մաննիկի հետ մի անգամ խօսակցութեան ժամանակ լսում է նրա կարծիքը Տիրանի ու Վերթինի մասին, թէ նրանք իրար սիրում են։ Արշակը զլխի է ընկնում։ Իրեն համարում է ընկերոջ ձեռքից սիրոյ առարկան խլող, ինքն իրան դատապարտում է և, որովհետև Վերթինից ղեռ ոչինչ չէր լսել նրա զգացմունքների մասին, վճռում է հեռանալ քաղաքից մի քանի ժամանակով մօրաքրոջ մօտ, կղզիներից մինը, որպէս զի աչպիստով խեղդէ իւր մէջ հետըհետէ աճող զգացմունքը։ Իսկ Տիրանը Վերթինի կողմից դէպի ինքը անտարբերութիւն նկատելով և իւր ընկեր նկարիչ Էդուարդի հետ ալը Նիւթի մասին խօսակցութիւն ունենալով համոզւում է, որ իւր զգացածը սէր չէր—«չիտակը, հիմա ինքս ալ կը զարմանամ, ինչպէս ալը զգացումներս մէկէնիմէկ ընդհատեցան մէջս»։ Բայց Արշակը երկար չի կարողանում համբերել կղզում, վերադառնում է, տեսնում է աղջկաչ հետ, սիրոյ բացատրութիւն է ունենում իւր կամքին հակառակ։ Ալըքան թուլութիւն կար նրանում! Բայց աչն միտքը, որ նա խլում է իւր ընկերից նրա սիրոյ առարկան, Արշակին հանդիստ չի տալիս։ և ահա իւր բացատրութիւնից չնտոյ մի տոմսակ է գրում Վերթինին—«մոռցէք մեր մէջ եղած պղտիկ անցեալը»։ Վերջում նա զղջում է, բայց ուշ էր արդէն, որովհետև Վերթինում, իբրի աչս նամակի հետեանք, մի հոգեբանական պրոցէս է կատարւում, որի ընթացքում աղջիկը համոզւում է, որ Արշակը նրան չի սիրում

որովհետև ինքը, Վերթինը արժանիք չունի զրա համար, և վճռում է նրանից վրէժ առնելու համար իր վրալ առանձին ջանքեր գործադրել և «մեծ, մեծ կին մը դառնալ»։ Վէպը վերջանում է նրանով, որ Արշակը գնում է իւր ուսումը չարունակելու, իսկ Վերթինը վճռում է գնալ համալսարան իւր կրթութեան թերութիւնները լրացնելու և «մեծ, մեծ կին մը դառնալ»։

Վէպի կենտրոնական անձը Վերթինն է. նրա «հալըը գաւառական առողջ դատողութեան, գործունեալ և ձեռներէց մարդ մըն էր. ուսումէ զուրկ, բայց ուսման ուժը գնահատող՝ ուզած էր իւր զաւակներուն ընդարձակ կրթութիւն տալ»։ Վերթինը իւր սկզբնական կրթութիւնը ստանում է ամիրիկական մի գլխիւրօթիկ դպրոցում, որտեղ նա իւր առաջադիմութեամբ աչքի է ընկնում։ Նա իւր ընկերուհիների մէջ որոշ գիրք էր ձեռք բերել, նրանց իւր շուրջն էր ժողովում. իւր տեսչութեան ստացել էր «հալ իշխանուհի» անունը։ Դպրոցում նրա վրալ առանձին ազդեցութիւն է անում նրա մի երիտասարդ վարժուհին, Միսս Փեթըրս, որը նրանում առաջացնում է հետաքրքրութիւն դէպի գրական և պատմական խնդիրները։ Ընթերցանութեան ազդեցութեան տակ նրանում զարթում է քննական վերաբերմունք դէպի շրջապատը. նա հետաքրքրւում է հալ գրականութեամբ։ Եւ աչս բոլորը աւելի՛ որոշում են նրանում, երբ հանդիպում է Արշակին։ Նրա տենչանքն էր «լարւած գործի մը չարել»։ Եւ աչս բոլորի հե-

տեանքն աչն է լինում, որ նա վճռում է Արշակի դպրոցում դասեր տալ։ Արշակի խօսքերին, որ նա շատ արգելքներ կ'ունենալ իւր առաջ ալդ նպատակին հասնելու ձգտման մէջ, որ նրա ծնողները, ազգականները կ'ընդդիմանան, պատասխանում է. «միթէ իրաւ լուրջ կը կարծէք, որ ալդ բոլորի դատողութիւնները ինծի համար մեծ կարեորութիւն ունին. բարեբախտաբար բաւական ազատ եմ մեծցած ալդ կողմէն»։ Ինչպիսի չաւառութեամբ նա մօրն ու եղբորը համոզում է, որ իրեն չարգելքն վարժուհիութիւն անել՝ Նա մինչև անգամ բարկութեան լուրջում ասում է՝ «անատէն չեմ ամուսնանար», երբ եղբայրը նրա առաջ է բերում աչն հանգամանքը, որ նա կարող է վերջապէս մալր դառնալ, որը կը խանգարի դպրոցին։ Սակայն վերջը շատ իրաւացի կերպով գլխի է ընկնում և ասում է. — «Ա՛յ, թող, հիմա ալդ հեռաւոր քաներուն խելքս չի հասնել. թող լինի ապագային, ինչ որ լինելու է. իսկ հիմա ես պարապ եմ. ու չարժման մէջ լինելու, չուզման մէջ լինելու պահանջը ունիմ. աչս կը հասկընաս դուն, բժիշկ ես ոչ բարով»։

Վերթինը դուած է երկու ընկեր երիտասարդների, Տիրանի և Արշակի մէջ տեղ. նա իւր սիրող ծարաւը նրանցից միւսով պիտի չաղեցնէ։ Նա Տուրգենևի Ելենալի դրութեան մէջ է. — Բերսենևի և Լյուսաբելի մէջ ընտրութիւն անելու ստիպաւ։ Աչս տեղից, ինչպէս և առհասարակ պ. Շանթի գրածքներից, իսկ մասնաւորապէս Վերթինից Տուրգենևի հոտ է

գալիս, երևում է նրա Насануѣ վէպի ազդեցութիւնը, սակայն գրա մասին չետու։ Աերծինը չատ հեշտութեամբ չափում է գէպի Արշակը— նա աւելի համապատասխան էր նորա ձգտումներին։ Արշակը անողոք կերպով գիտէր քննադատել մեր կեանքի երևութները, նա չօղւածներ էր գրում լրագրերում «Ներսիսական համակներ» վերնագրով «Սլաք» ստորագրութեամբ, պատրաստում էր «Տիրապետող կարծիքներ» խորագրով մի շարք չօղւածներ, որոնցում պիտի քննադատէր հասարակութեան ունեցած մի քանի թեր ու սխալ հակացները և նրանց տեղը դնէր զուտ գիտութեան տւած ֆակտերի հիման վերաջ հաստատւած մտքեր։ Արշակը բռն ռեկորութեամբ գիտէր ներքէն իւր գործին, նրանով կլանւել, նրան ներքէն իրեն ամբողջապէս։ Նա ալ լաւէնը աշխարհի շատութիւններ էին, որոնք Վերծինին սերտ կերպով կապում էին նրա հետ, նրանում էին տեսնել տալիս իւր իղէալը, նա նրանում էր կարծում զտնել իւր ձգտումների մարմնացումը։ Նա իրեն չատուկ վճռականութեամբ նա իւր նախկին վարժուհի Պետերսին ասում է. «ոչ, ես ալսպէս երկար համբերել չիմ կըրնար, լուել, ծածկել անկարող եմ. տանջանք է ալդ»։ Արշակի չորհորները համալսարան գնալու և ուսումը լրացնելու նրա համար մի ուրիշ ծառայութիւն են անում։ Արշակի մերժողական համակից չետու, երբ նրա «մերժւած ու անպատասխան մնացած սրտի կծու ցաւին կը միանար միւս կողմէն ամօթի խաթը», նա աւուր բռնեց ալդ բանից, իրբն

փրկարար միջոցից իւր գառն դրութիւնից դուրս գալու։ «Ա՛, տղան իր արտաքինէն հրապուրւած էր ու կապւած՝ ալ ատոր կասկած չի կար. բալց ալդ, միայն ալդ հերքէ էր Արշակի համար։ Յիշեց տղու աշխարհ անգամ դժած գործունէութեան, հասարակական աշխատանքի ծրագրները, անոր պահանջները կնոջ զարգացման, դերի ու գործունէութեան մասին. եթէ ուրիշ կանանց վերաբերմամբ աղջապի պահանջկոտ էր, որ չափ աւելի լինելու էր զգացումներու. գործունէութեան ընկերուհին չետու։ Նա կարծում էր, որ Արշակը նրա համար է նրան խորհուրդ տալիս համալսարան գնալու, իւր մասին բոլորն էլ կարծում են, որ նա անպէտք է. բալց նա կարող է լաւանալ. «Ու մէկէն իղձ մը, պահանջ մը, վճիռ մը գաս. եցաւ. զլիւռն սէջ.— մեծ, մեծ կին մը դառնալ. բոլորի կարծիքին հակառակ»։ Ինչ ասել կուզէ, որ նրա երևակաւած իւր վերաբերմամբ ալս ալսականութիւնը նրան մեծ ծառայութիւն արաւ. նա վճռեց մեծ կին դառնալ։ Նա ալս համոզմունքով էլ սառնութեամբ պատասխանեց Արշակի զղջմանը և չին չարաբերութիւնները վերականգնելու փորձերին, իրբն պատասխան Արշակի համակին նա նրան գրեց. «բոլորի փոխարէն ընդունեցէք իմ խորին շնորհակալութիւնս»։ Իհարկէ, ինչո՞ւ շնորհակալ չըլինել. փոխանակ սիրալին չագորդների մասին հոգսեր անելու, նրանում առաջացել էր հաստատու վճիռ «մեծ, մեծ կին մը դառնալու»։ Վերջինի ընտելութեան սէջ մի բան միայն մի քիչ անհարթութիւն է

առաջացնում, ալն որ նա իւր ալդ-
քան լրջութեամբ, ալդպիսի ձգտում-
ներով և համոզմունքներով համա-
պատասխան արտաքին շարժումներ
չունի, նա է, վաղվղում է մի
դատարկ ինստիտուտունու նման, եր-
բեմն մինչև անդամ կոքէտութիւն-
ներ է անում երիտասարդների երե-
սին մի առանձին տեսակ ժպտալով, և
ալն: Նա իւր բռնած գիրքով թոյլ
է տալիս Տիրանին իւր հետ կատակ-
ներ անել և կարծես ինքն էլ տրա-
մադիր է կատակաբանութիւնների:
«Ահա, ալս ալն օրիորդ Վերթինն, որու
մասին քիչ մը առաջ քեզի ալդչափ
գէշ բաներ պատմեցի» ասում է Տի-
րանը Արշակին՝ նրա հետ ծանօթա-
ցնելիս: Սրան Վերթինը պատասխա-
նում է «թեթև մը ոտքը գետին թո-
փելով—ուհ, ձեր ալդ շաղակրատելը»:
Նւ կամ Տիրանի հետ խօսելիս նրա
բանաստեղծութիւնների մասին—«ու
թեթև աչրանքով մը զլուխը թեքած՝
սկսաւ խնդալ տղու գէմքին»:
Բալց
ինչ արած, թէ Վերթինի լաւ գա-
ղափարների, թէ նորա լրջութեան և
թէ ալդ բանի արտաքին անհամա-
պատասխանութեան պատճառը ին-
քը պ. Շանթին է, իւր ծալրալեղ
սուբեկտիւիզմով:

Վէպում երկրորդ գլխաւոր անձը
Արշակն է: Դրա մասին Վերթինի
իւր նախկին վարժունուն արած պատ-
մութիւնից խմանում ենք, որ «որո
շած է, աւարտելուն պէս գալ ու Պո-
լիս գիտական ամսագրի մը հրատա-
րակութեան ձեռնարկէ իւր ընկեր-
ներուն հետ. լուրջ, սարգ ու զուտ
գիտական թերթ մը, որուն նպա-
տակը պիտի լինի մեր արդի նորա-

հաս երիտասարդութեանը դրդել, օ-
ժանդակել և առաջնորդել ժամանա-
կակից գիտութիւնները լրջօրէն իւ-
րացնելու, աշխատանքի թէ նիւթը
և թէ եղանակը մատակարարելով...»
Նւ ալդ բանի համար նրան չեն պա-
կասում թէ նախապատրաստութիւն,
թէ ձեռներեցութիւն—մանաւանդ որ
դեռ կատարելագործւելու է իւր ընտ-
րած ուղղութեան և մասնագիտու-
թեան մէջ: Նա մերժում է Վերթինի
սէրը օգուտ իւր ընկեր Տիրանի, որ-
պէս զի ուրիշներից չնախատել իր-
րե ընկերից նրա երջանկութիւնը
խլող. «ալդ մտածումներուն տակ
(ընկերից խելու մասին) կարող է
սէր ու համակրանք աճել: Չէ, ալս
կապը ոչինչ բաղդաւորութիւն չի
կրնար բերել ոչ իրեն, ոչ աղջկան»:
Սակաւն վերջը միաւն գլխի է ընկ-
նում, որ իւր արածը չափազանց էր,
որ պէտք է ինքը լետ կանգնէր իւր
ընկերով համար, երբ իւր և Վեր-
թինի սրտերը միմեանց էին ձգտում:
մանաւանդ որ դրանից չետոյ Տիրա-
նի և Վերթինի մէջ կապ անհնարին
էր: «Է՛հ, ինչ զո՛հ էր ալդ, ինչ աղ-
նըւութիւն, ընկերը չաքացելու հա-
մար, աքացեր էր ընկերունին» իրա-
ւացի կերպով բացականչում է նա:
Նւ, ի հարկ է, չնաչելով Վերթինի
մերժման նրա հետ առաջաւ չարա-
բերութիւնները վերականգնելու, մի
բան, որ վէպում արդէն չափազան-
ցութեան է հասցրած, пересянба-
нիё, նրանով, որ, Վերթինը ամենա-
մեծ չամառութեամբ շարունակում է
խօսել «բանաժքի» մասին, երբ Ար-
շակը փորձեր է անում իրանց ան-
ցեալ չարաբերութիւնների մասին

խօսելու, չնայելով այդ բոլորին, առում ենք, վէպի վերջաւորութիւնը լանգում է նրանում, որ դրանք արտասահմանում կը միանան անշուշտ. «...լաջորդ կիսամեակին... կաշխատեն ալ միասին ձեռք ձեռքի. ինքը անձամբ թեւ առած կը տանի դասախօսութիւններուն իւր հետը, իւր քակը...» մտածում է Արշակը: Եւ վէպի ամենաբնական վերջաւորութիւնը այս պիտի լինէր. սակայն մէջ են գալիս սիրոյ աչն թիւրիմացութիւնները, և նոքա բաժան են գնում արտասահման: Բայց երևի հեղինակի նպատակն ուրիշ է, կը տեսնենք:

Վէպի միւս անձնաւորութիւնն էր են Տիրանը, բանաստեղծ, գրում է Պոլսի թերթերում վէպիկներ և պատկերներ. երիտասարդական սրտին չատուկ կերպով տանջւում է, թուլանում և լքում, երբ նկատում է, թէ իւր համակրած աղջիկը ալիւմ չալուում է Արշակի կողմը: Բայց նրան այդ դրութիւնից դուրս է հանում նրա երիտասարդ նկարիչ ընկեր էդուարդը, որը իւր սառը դատողութեամբ և ֆակտային ապացոյցներով համոզում է Տիրանին, որ նա ոչ թէ լուրջ կերպով է սիրել, այլ երիտասարդի սրտի սիրոյ ծարաւին բաւականութիւն տալու մի թույլ միջոց էր դա: Էդուարդը, ամուսնիցից վիրաւորւած աղջկու վհատւած և թուլացած երիտասարդների մօտ, մի թարմացուցիչ աղբեղութիւն է անում մարդու վրայ, և բաւական չափով գծւած մի անձնաւորութիւն է:

Բժիշկը, Վերթինի եղբայրը, արդէն «փուքը ճտած» մի մարդ է. երբ

բեմն սիրում է «փիլիսոփայութիւն» անել, վիճել երիտասարդ մարդկանց հետ: Սակայն նա իւր ամբողջ ծանրութեամբ մի թեթեւ անգամ աղբեղութիւն չի կարողանում անել Վերթինի որոշումների վրայ, ինչպէս ամեն անգամ սառը խելքը և փորձը անդոր են գտնւում ամենայն տեղերում, ուր կա երիտասարդական համոզմունք ոգևորութեամբ և գործելու ցանկութեամբ զինաւորած: Մաննիկը, Արշակի քոյրը, իւր տան և վեց տարեկան հասակից աւելի զարգացած, խօսում է իւր հղբօր ջողածիների հասարակութեան վրայ արած աղբեղութեան մասին, հղբօր ապագայ գործունէութեան մասին և այլն. զբաղւում է երաժշտութեամբ:

Վերնում ասացինք, որ «Վերթին»-ից կարելի էր սպասել պոլսական կեանքին չատուկ կողմեր և տիպեր. բայց դրանց կատարեալ բացակայութիւնն է երևում նրանում: Սակայն «Վերթինը» մի աւելի մեծ, համահալկական նշանակութիւն ունի: Տեսնենք մեր կեանքը ինչո՞ւ է ստեղծում Վերթիններ, այսինքն անձնաւորութիւններ, որոնք պիտի ունենան սլացն-գիտական զարգացում և ձգտին շուտով, շուտով հոն, ուր մարդ իր ուժերուն տէր դառնալ կրնայ... աշխատելու և զարգացման: Դա կարծում ենք շատ պարզ է իւրաքանչիւրի համար: Մեր երկիրը, և մասնաւորապէս մենք-հայերս, քաղաքակրթութեան մի աստիճանի ենք հասել, երբ արած ենք համարում առաջին քաջիկը: Մեր երկիրը արդէն որոշ չափով վալելում է համաշխարհային քաղաքակրթութեան բա-

րիքները և, որ գլխաւորն է, նա կանգնած է մի ճանապարհի վրայ, որը տանում է դէպի ալդ բարիքների վերջնական հաստատումը նրանում: Մեզանում նորութիւն չէ կըլթիւթեան միջոցաւ հասարակական բարիքի հասնելու հնարաւորութեանը վերաբերեալ միտքը. մեզանում շատերը հասկանում են, որ սոցիալութիւնն է մեր հասարակական մի շարք ցաւերի սկզբնապատճառը, և աշխատում են լուսաւորութեան միջոցաւ ալն վերջացնել: Մեզանում նորութիւն չեն եւրոպական կրթութիւնն աւող դպրոցներ, զրադարաններ, թատրոն, մամուլ, զրքերի հրատարակութիւն և ալլն, մի շարք բաներ, որոնք ձգտում ունին մեր կեանքի ամենավատ թընամին՝ սոցիալութիւնը նրանից առաջացած խտւարը հալածելու, որի հետեանքը կը լինի աղատ ինքնաքննութիւն, սեփական հիւանդութեան մասին գաղափար, նրան բժշկելու վերաբերեալ տեղեկութիւններ և ալլն: Մեր քաղաքացիք, մեր գիւղացիք անգամ կամաց-կամաց սկսում են հասկանալ ազատ ինքնավարական հիմնարկութիւնները արժէքը, իրանց իրաւունքներն են սկսում ճանաչել, դէպի կեանքը շրջապատը աւելի գիտակցական վերաբերմունք են ցոյց տալիս: Մի խօսքով մեր կեանքը ալծմ մի ալնալիս սոսկալէզ է, որտեղ գործելու համար մարդ աւելի մեծ նախապատրաստութեան կարիք է զգում, քան կըզգար սրանից 40, 50 տարի առաջ: Ալծմ հասկանալի է, որ ինչպէս Արշակն է ասում, «մեզի լուրջ, սխտեմատիկ և

զրական գործ պէտք է, ոչ թէ ցանցեր և ոգևորած յօդածներ»: Տօրգեննի Наканунѣ վէպի մասին քննադատականի վերջում ռուս կրիտիկոս Դորբուլիւրովը չիւնալ վէպի միտքը գտնելով նրանում, որ «մեծ գաղափարների և մեծ համակրութիւնների համար մեզանում (Ռուսաստանում) տեղ չկայ», իւր կողմից աւելցնում է. «սակալն մենք կարծում ենք, որ այժմ մեր հասարակութեան մէջ մեծ գաղափարների և մեծ համակրանքների համար տեղ կայ. և հեռու չէ ալն ժամանակը, երբ ալդ դաղափարները կարելի կը լինի արտալատել գործով»: Մենք կ'ասենք նոլն բանը մեր հասարակութեան վերաբերմամբ ալս առթիւ, բալց առանց «սակալն» ի, որովհետեւ պ. Շանթի վէպի միտքը ալն չէ, որ պէտք է արտասահման հեռանալ, որովհետեւ մեզանում անելու բան չկայ, ալլընդհակառակը, մեզնում անելու բանը ալն տեսակիցն է, որին ծառայելու համար բաւական չեն ցան ու ցրիւ տեղեկութիւններ, ալլ հարկաւոր է լուրջ, սխտեմատիկ, զրական և գիտական նախապատրաստութիւն՝ սկսած քաղաքակրթական գործը լաջողութեամբ և խոշոր քալլերով առաջ տանելու համար: Եւ ալս պատճառով մենք կատարեալ համակրութեամբ ենք վերաբերում պ. Շանթի վէպի մտքին, որը մեր հասկացածով ալս է—նախ քան մեր հալրենիքում գործելը՝ լուրջ դիտական նախապատրաստութիւն ձեռք բերել:

Յիշեցինք Наканунѣ-ի մասին. մենք ասեցինք, որ Վերծինի» վրայ

երևում է **Наканунѣ**-ի ազդեցութիւնը: Վերժինը, մեզ թւում է, լինեալի, աւսպէս ասած, մի վարիացիան է, նրա նման ինչ որ ձգտումներով, սակաւն դրանք աւելի որոշ են, քան լինեալում: Նրա նման զըրւած է երկու երիտասարդների մէջ, նրա նման չափում է գրանցից մտաւորապէս և առհասարակ հոգեպէս զօրեղին: Նրա նման հեռանում է հայրենիքից, սակաւն ոչ թէ չը վերադառնալու, այլ աւելի զօրեղացած վերադառնալու նպատակով: Երկու ընկերներով արարեալութիւնները, մէկի զոտոգութիւնը չօգուտ միւսի և ալ չեն: Թէև ոչ խիստ գոյներով, բայց երևում է **Наканунѣ**-ի ազդեցութիւնը: Սակաւն ոչ միայն ալս վէպում, այլ նաև նրա միւս վէպերում էլ: «Գուրեգիցիներում» հերոսուհին դարձեալ մի քանի երիտասարդների մէջ ստիպւած է ընտրութիւն անել և չափում է նրանցից աւելի զօրեղին: Անտեղի վասակը, միթէ Տուրգենևի Բազարովի մի օրինակը չէ: Անտեղ ընկերների չարաբերութիւնները դարձեալ նոյնն են—մինը միւսի հիւանդութեան ժամանակ հոգ է տանում ճիշտ աչնպէս, ինչպէս Բերտենը ինսարովի վրաջնիւնում էք «Նրազօրերի» մէջ երիտասարդը օրիորդի հետ իրենց ընթերցանութեան համար ընտրել էին Տուրգենևի «Նախընթաց իրիկունը», ինչպէս ասած է աչնտեղ, վերջապէս աչնտեղ սիրոյ բացատրութիւնը լինում է ճիշտ աչնպէս, ինչպէս **Наканунѣ** վէպում, մատուռի մէջ: Բայց ալս բոլորի հետ միասին պ. Շանթը կարեղացել է իւր վէպերի վրայ իւր սեփական հոգու

կնիքը աչնպէս որոշ դնել, որ մարդ ալս նմանութիւնները դտնելու համար ստիպւած է լինում բաւական քրքրել, չեա տանել չանթակաւն զլօշմը, և նոր միայն հնարաւոր է լինում, աչն էլ ոչ աչնքան ուելիէֆ կերպով, տեսնել նմանութիւններ, աւելի ճիշտ՝ ազդեցութիւն: Բայց ալք բոլորը, ի հարկէ, ոչ ինչ, քանի որ նոր սկսող հեղինակները մինչև կատարելապէս ինքնուրոյնանում են, բաւական ժամանակ է անցնում:

«Վերժինը» մի ալ նշանակութիւն էլ ունի, չէնց իրեն, պ. Շանթի անձնաւորութեան տեսակէտից՝ իբրև մի աստիճան նորա բարոյական պատկերի կազմակերպութեան ընթացքում: Պր. Շանթը խիստ սուրբ կեկտիւ հեղինակ է. նորա բոլոր անձնաւորութիւնների խօսակցութիւններում, վէճերում աչքի է զարնում աչն բանը, որ նոյն բաները մի ժամանակ զրաղեցրել են իրեն, պ. Շանթին: «Նրազօրերում» նա մեզ ներկայանում է իբրև մի մարդ, որ ունի արդէն իւր համոզմունքները, որոնք դեռ ոչնչով վրդովւած չեն: հանգիստ է ծա, քիչ է տանջւում: «Գուրեգիցիներում» Վասակի և Բազարատի գաղափարները կարծես հաւասարապէս զրաղեցնում են նրան, նա կարծես դեռ տատանւում է՝ զրանցից որի կողմն անցնել: Բայց երևում է համակրանք Բազարատի կողմը: «Վերժինում» ալք փոխանցումը ակներև է: Արշակը նոյն Բազարատն է, միայն աւելի որոշած, աւելի հիմնաւորւած: Եւ նրա կարծիքներին հաւասար ուժով ընդդիմադրող հայեացքներ կամ կարծիք-

ներ չկան. բովիւր նրան չի կարողանում փոխել, Տիրանը համարեա նրան է հետեւում. իսկ Վերթինը բոլորովին անձնատուր է լինում: Այս տեսակէտից պ. Շանթը, իրաւ որ, մի քաջ առաջ է գնացել, ինչպէս նկատած էր ալի «Մուրճի» խմբագրութեան կողմից: (Տես «Մուրճ» № 1. «Վուրեր»):

Գեղարեւոտական տեսակէտից «Վերթինը» բարձր է «Դուրսեցիներին», բայց ոչ «Ներազ օրերին»: Նրանում գեղարեւոտական համաչափութիւնը խախտուած է Արչակի, Վերթինի և Տիրանի մէջ սիրալին պրոցէսի չափազանց ընդարձակ վերլուծութեամբ: Թէև սրանք շատ հոգեբանական են և գեղեցիկ, մանաւանդ՝ պարզ հետեանք անձնատուրութիւնների բնատուրութեանց, բայց դրանից վնասուում է վէպի գեղեցիկ համաչափութիւնը:

Այսպիսով՝ «Վերթինի» համար կարելի է շնորհաւորել պ. Շանթին, իբրև մի գրածքի համար, որով նա մի քաջ էլ առաջ է գնում: Չմո-

ռանաճք ասել, որ պ. Շանթին պակասում են մեր կեանքի «պատճառ-երևութներին» անմիջական արդիւնք «հետեանք-երևութներին» և անձնատուրութիւնների տիպար պատկերացումը: Դրա համար հարկաւոր է մեր կեանքը լաւ ուսումնասիրել, թող լինի դա միայն Տաճկաստանի հալոց կեանքը, հող չէ. բայց լինի կեանքի պատկեր, կեանքի զառնութիւններ և ուրախութիւններ, ժողովուրդ, հասարակութիւն: Գուցէ ալի ամենը պ. Շանթի ու պերտուարից զուրս են: Բայց չուշուշ, որ հրեանքէ նա կը դադրի մարդկանց մոտաւոր տուրնիրների նկարագրութիւնից և կ'անցնի կեանքին, իրական, կոնկրետ կեանքին:

Մար. Յար.

Ծան. խմբ.: «Վերթինի» մասին Մուրճին չանձնւած է մի գրախօսական ևս պ. Գր. Վարդանեանից, և խոստացած է մի աւելի ընդհանուր քննադատական պ. Ն. Աղբալեանի կողմից: Դո՛քա կը տպագրուեն:

ՔԱՍԻՄ.— Կեանքի տեսարաններ. 1897 թ. Քիֆլիս, տպ. Մ.

Ռոտինեանցի, Հրատ. Թ. Հ. Հրատ. Ընկ. 272 էջ, գինը 50 կ.

Ճիշտ որ «կեանքի տեսարաններ»... Դո՛ք կանգնած էք, և կեանքը հոսում է ձեր առաջ թաւալելով իր կոհակները և ձեր աչքին զարկելով իր աչս կամ աչն կողմը, աչս կամ աչն արտաշափութիւնը, երևույթը: Դո՛ք ման էք գալիս փողո-

ցում ու մարդիկ տեսնում, մտնում էք աչսինչ վաճառականի տունը, միւսի խանութը, երրորդի վարմունքէք դիտում, չորրորդի խօսակցութիւնը լսում. վկայ էք մէկի չուսախաբութեան, միւսի զղջումին, երրորդի խղճուկ դրութեան... Մեծ-

մասամբ ձեզ տեսարաններ են հանդիպում ալս գրքում՝ հատաձական, մանր տեսարաններ՝ երբեմն տխրառելի, չաճախ՝ ծածկւած ծաղրի շղարշով: Ամեն տեսարան ալստեղ հասարակ, շատ անգամ չնչին սկիզբ ունի, բայց գնալով՝ վերջում ձեզ հարկադրում է կանգ առնել, մտածել... Նրանք ձեր առաջ են դնում վաճառականների, ուսուցիչների, գործակատարների և գրողների կեանքից զանազան իրողութիւններ:

Տեսէք, օրինակ, ալս մօրը, որ իրանից կտրել՝ աղջկայ կրթութեան վրայ է դրել. միակ հոգսի առարկան իր աղջիկն է, որին ուզում է բարեկիրթ և երջանիկ տեսնել: Նա ուրախ է. հասել է նպատակին: Աղջիկը ոչ միայն վախելուչ շարժւածք ու ձևեր ունի, ալ և մի քանի լեզուով կարողանում է ազատ խօսել, դաշնամուր նւագել, լաւ պարել, կարծիք չալտնել, դատել ու վիճել. կարճ՝ ժամանակակից կրթութիւնն ունի: Ամենքին հիացնում է իր գեղեցկութեամբ ու շնորքով, տեսողների խելքը գնում է. երիտասարդները գովում, բարձրացնում են, բայց ոչոք կնութեան չի առնում՝ որովհետև փող չունի: «Խաբւած մայրը» ստիպւած է աղջկալ տարիները փոքրացնել, որ նրա համար ամուսին գտնի. նոր է հասկանում, որ եթէ աղջկան կրթութիւն տալու տեղ՝ փող հաւաքէր, հիմի փեսալ չատ վաղուց կը լինէր գտած:

Կամ ահա մի երիտասարդ. աչնքան են մօտը բաղդաւոր ամուսնական գործերի մասին խօսել, որ համոզւել է թէ իր նմաններին 18 տա-

րեկան սիրուն աղջիկ ու 600 ոսկի տուող շատ հալր ու մալր կը գտնուի. և ալդ մտածումով պաշարւած՝ աղջիկ է փնտռում: Զաջողութեան չուսով՝ աւելի ունեոր է ձեանում, քան թէ կալ, ու վերջն աչն է լինում, որ թէ գործից է զրկւում, թէ հարսնացուից և թէ ամուսնաւալու չուսից: Միայն նոր է գլխի ընկնում, որ «եթէ ես (ինքը) փորձառու մէկը ըլլալի՝ տասը ոսկի ամսական առած ատենս կ'ամուսնանալի աղջկան մը հետ, որ իմ պարզ գրագիր ըլլալս գիտնալով կը սիրէր զիս և երջանիկ ընտանիք մը կը կազմէինք»...

Իսկ ալս գործակատարը, որ մտերիմ խօսակցութեան մէջ է խանութի եկած տիկնոջ հետ. ինչպէս է նրան չուում, հարուստ փեսացու ձեանում: Ալդ է նրա գործը. սրան նրան խաբելով՝ փող է աշխատում իր ու տիրոջ համար: Հարուստ փեսացու ունենալու տենչով բռնւած կանանց վրալ մէկն երկուսով ապրանք է սաղացնում և օգուտի մեծ մասը գրպանը դնում:

Նախցէք ալս ծերունուն, սուրբ լինի կարծէք՝ միշտ ջերմեռանդ, միշտ աղօթող, միշտ Ս. Գրքի կտորները շրթունքին: Գործ ու պարապմունք չունի, բայց լաւ է ապրում: Ինչո՞վ—կը հարցնէք: Կարօտ ու անօգնական մարդկանց անուշով փող է հաւաքում, գաղտնի բարերար ձեանում, չքաւորների բարեկամն ու հոգածուն երևում ու... նրանց անունով հաւաքած փողերը կ'աւանդում, ապրում:

Եւ ալսպէս՝ մի շարք տեսարաններ...

Գրեկու ձևն էլ համապատասխան է ներթիւն հատւածներ են, կեանքի էջեր. մեծ մասամբ առանց հոգեբանութեան, հանգուցի և լուծումի. ղէպերի արձանագրութիւններ են: Ինչ են խօսում տանը մարդ ու կին, թնչ է անում ու մտածում աղջկատէր մալրը, թնչպէս է պարում ալս ցրիչը իր նկուղում, թնչպէս պաշտօն գտաւ ալս երիտասարդը, և ալն. ալս տեսակ ղէպեր է դիտում ու արձանագրում հեղինակը: Նրբնմ երկու ներթ զալիս-հիւսում են իրար և մի «տեսարան» կազմում՝ վնասելով գրւածքի ամբողջութեան և ամփոփութեան: Այդպէս են օրինակ, «Աստուականներու ճանճը», «Թէ ինչու ամեն ժամատէր քրիստոնեալ չէ», և ալն: Առհասարակ պէտք է նկատենք, որ ամբողջացրած «տեսարաններ» քիչ ունի. երկի սկզբնակ լինելն է պատճառը: Ամբողջ գիրքը էսքիզների ժողովածու է, և ուրիշ ոչինչ:

«Կեանքի տեսարաններում» ուր լազնում են ղէպերի, դուրսիւններ, վարք ու բարք, անձնաւորութիւններ. մատիտով շտապ գծած թերանկարների են նման այդ հատւածները: Հեղինակը ցույց է տալիս թէ ինչ օրի են Պոլսում հասարակ մահկանայութեանը. ձեզ ծանօթացնում է նրանց շարժւածքի, նիստ ու կացի, չնչին շահերի, մանր կրքերի, անձնական կարիքների հետ: Ձեր առաջն է դնում կեանքի վիտալիզմը, քաղմաթիւ և բազմատեսակ երեւութներ, ինքն իր իրականացէ՛ք թափանցէ՛ք ալ մարդկանց ներսը, աշխատէ՛ք տւած իրողութիւնները ընդհանրացնելով՝

հասնել նրանց հիմքին, ճանաչել բոլորին շարժող զսպանակը, նրանց առանցքը. մարդկանց վարմունքներն ու գործերը տեսնելով՝ զաղափար կազմէ՛ք նրանց դրդիչների մասին. մտէ՛ք նրանց հոգին: Հեղինակն ալդ ամենը ձեզ է թողնում: Արձանագրելով իրողութիւնը, ղէպը, իր ուշադրութիւնը գրաւա՞ւ «տեսարանը», նա իր պարտքը կատարած է համարում ու մի կողմ քաշւում:

Գրքից երևում է, որ հեղինակը մտած-ղուրս եկած մարդ է. կարողանում է դիտել և շատ բան է դիտել. բալց կեանքը խորը չի ուսումնասիրել. նա տեսնում է երեւութներ, բալց ոչ երեւութները շաղկապող ու զուգորդող իսկական պատճառները: Խիստ արտապատած՝ նա աւելի աչք ունի, քան միտք, որ և կը տեսնենք: Առ ալժմ հեղինակը սաղմալին դուրսիւն մէջ է. նա դու չի զտել. նրա հոգին երկու տարր ունի՝ խրատական, իր մերկ դրութեամբ, և երգիծական: Այս միտքը պարզ կը լինի ընթերցողի համար, եթէ ի նկատի առնենք նրա հետեւալ «տեսարանները»: «Թէ ինչու պէտք չէ ընկծիլ (էջ, 87) և «Գրագէտներու յուրջը» (էջ, 208), կամ «Անգլիական սխիւթեմով դրագիր մը» (էջ 189): Առաջինում ծագը չկայ, երկրորդում ու երրորդում նա գերակշռում է. մէկի մէջ փալում է մերկ, անսքող խրատը, միւս երկուսում՝ ծաղրը. մէկը պարզ խրատական գրւածք է, միւս երկուսը իւրատեսակ երգիծանք: Անշուշտ ամեն երգիծանք աւելի կամ պակաս չափով խրատական է, խրատի տարր ունի իր մէջ. նա ծաղրում է, որ

ուղղի. բացասականը ցուց տալով՝ դրականի վրայ է մատնացուց լինում, ծաղրելով եղածը՝ ցուց է տալիս թէ ինչ պիտի լինի. Բայց երգիծանքի այդ հիմնական գիծը կարող է դառնալ տաղտուկ բարոյախօսութիւն՝ «մորալ» և կարող է հալել երգիծանքի տողերում. Բայց Քասիմի «տեսարաններում» շատ տեղեր դրանք բաժանւած են իրարից: Ի՞նչ կը դուրս գալայս երկբնութ սաղմից՝ չգիտենք. գուցէ երգիծաբան. ալդ հաւանական էլ է:

Որպէս երգիծաբան Քասիմը մի քանի պակասութիւններ ունի. հիմնականն ահա է՝ որ լուրջ չէ. Երգիծաբանին ծիծաղել ու ծաղրել ստիպող դրդիչները անկասկած լուրջ դրդիչներ են. մէկը ծաղրում է վշտից, միւսը՝ չգոհացած լինելուց, երրորդը՝ բարկութիւնից, չորրորդը՝ կեանքի թերութիւնները տեսնելուց. նրանցից ամեն մէկն ունի մի դրական իդէալ, որ զգացւում է ծաղրի ու ծիծաղի միջից, բայց չի երևում. Երևալու դէպքում նա փչացնում է դրածքը. երգիծանքը դրամի մի երեսն է, որ գուշակել է տալիս միւս երեսի մասին: Աղպէս չեն Քասիմի «տեսարանները», նրանք լուրջի ու ծաղրելիի խառնուրդ են, որ վատ տպաւորութիւն է անում. Բացի այս հիմնական պակասը, նրա ծաղրը սուր չէ և լեզուն ծանր է. Գուք նկատում էք, որ նա ծաղրելու համար ջանք է գործ դրել, որ նրա ծաղրը չի գալիս սրընթաց զիւջում, ալ գալարելով դժարութեամբ դուրս է սողում նախադասութեան կամ պարբերութեան միջից: Պարոնեանի նման

պարզ ու սրտաբաց հոգի չէ հեղինակը. սրա հոգին աւելի ծանրաշարժ է, ուստի և լեզուն ծանր է և ծաղրը մեծ աղղեցութիւն չի անում. Բայց անկասկած է մի իրողութիւն, որ և արձանագրում ենք. Քասիմը զրելու շնորք ունի, թէև ոչ մեծ և ոչ փալլուն:

Ամեն հեղինակի՝ կեանքը մի տեսակ է երևում, մի կարգի երևութներ են նրա ուշքը գրաւում. Ի՞նչպէս է այս կողմից Քասիմը. Կեանքի մէջ նրա աչքովն է ընկնում ապրուստի դժարութիւնը, անձնական կեանքի անապահով վիճակը, խսկ կեանքը երևում է նրան իրար կտրող և բազմազան ուղղութիւնների մի խումբ, որ սակայն չի ուղղւած դէպի ապրուստի խնդիրը: Մի կողմից ապրելու նման առաջնակարգ կարիք ամեն տեղ կանգնում է մարդկանց առաջ, միւս կողմից մարդիկ մտածում են ինչ որ «բաների» մասին, որոնք շատ քիչ կամ բոլորովին առնչութիւն չունին ալդ կարիքի հետ:

Դպրոցն ու դպրոցի ղեկավարները, փոխանակ մտածելու. «թէ սողաք ինչպէս պատրաստելու է դրամ չահելու» համար, փոխանակ նրանց պատրաստելու կեանքի համար՝ դատարկախօսութիւններով են զբաղւած. մտածում են «տղուն հոգին ագնւացնելու, դեղարեւոտական ճաշակը զարգացնելու, բանաստեղծական երեակալութիւնը սրելու» և ալ ալպիսի բաների մասին: Եւ ահա ձեզ ձեր զաւակներից մէկը, «անզլիական սխիւթմով գրագիրը», որի ձեռքից «եռանկիւնաչափութեան ամենակնճռոտ խնդիրները չեն կրճար իրենց օձիքը ազատել», բաւդ որը չի

կարողանում 250 ֆրանկը անգլիական սթերլինի վերածել. անց գիտե՞ որ կեանքում պէտք չի գալու, հաց չի տալու, իսկ աչս կարևոր բանը չգիտէ: Զգիտէ մի կտոր կարգին նամակ գրել, բալց ճրճուան խօսքեր՝ ինչքան ուղէք: Ահա մի ուրիշ գրագիր, որ խօսքի գլխին ու տակին նշանաւոր մարդկանց անուններով է հարւածում, բալց որը մի հասարակ միտք չի կարող հասկացնել ուրիշի («Վլաճառականներուն ճանճը»): Այս օրիորդի ստացած կրթութիւնը ամենեկին համապատասխան չէ նրա հասարակական փիճակին. կրթութիւնը պահանջներ է փաթաթել նրա վզին, որոնց կարող են գոհացում տալ միայն «քանկիրներն ու գիւանագէտները». մի աղջիկ, որ հազիւ է ապրում, լեղուններ գիտէ, պարել, նւագել—բալց ապրուստի միջոց չկալ ձեռին և մինչև վերջն էլ անամուսին է մնում. ալ, թէ ուր են տանում սաներին ձեր միթողները («Պարւած մալը մը»): Բալց կեանքում հազար ու մի պատահարներ կան. աղքատութիւն, ալորիութիւն. թնչ պիտի անէր աչս ալորին, եթէ «իբր զարդ մը, կամ դուստանք մը սովորած ձեռագիտութիւնը» չիմանար. հօ կը փշանար, կը կորչէր կեանքի մէջ... («Թէ ինչու պէտք չէ ընկճիլ»): Պարոններ! դպրոցը կեանքին չարմարեցրէք, մարդկանց ապրելու ճամբալ սովրեցրէք—լսում է Քասիմի ձալնը ամեն ալդ տեսակ «տեսարանի» արանքից: Համեցէք, ահա ձեր միւս սանը, «դարավերջիկ գրագէտը». տեսէք, ինչ են դարձրել սրան ձեր «սիրտ աղնւացնող», «ճաշակ կրթող» «երևակայութիւն սրող»

մեթողները. սա սնապարծութեան, մեծամտութեան, ինքնագովութեան և թեթեւութեան մի խառնուրդ է. անտանելի անդամ է ընկերութեան և զգուանք ու զլիաքաւանք շրջապատողներին համար: Եթէ հին դպրոցը ապուշներ էր պատրաստում, եթէ նա ոչինչ չէր տալիս գիտութեան և ապրուստի միջոցների մտքով, եթէ հին «վարժապետը» անընդունակ էր ժամանակի պահանջները հասկանալու, նորերը աչս էլ չեն զանազանում հներից. կորիզը նույն է մնացել՝ կեղևն է փոխել: («Մեր վարժապետը», «Սօր դպրոցն ու աղգալին դպրոցը»): Ալթման դպրոցն ու ուսուցիչներն էլ հոտառութիւն չունին կեանքի պահանջները զգալու: Եւ վերջապէս, պարոններ, միք մոլորել ու կարծիլ թէ ձեր մեթողները աչս են տալիս ինչ սպասում էք. դուք տալիս էք միայն արտաքին փալլառանց էութիւնը փոխելու. ձեր պատրաստած սերունդը աւելի և շատ աւելի վատ է քան նահապետական հին սերունդը. նրանք մարդիկ էին, ձերոնք թութակներ ու կապիկներ են. («Շւարած հալը մը եւրոպական քաղաքակրթութեան առջև»): Քասիմի «տեսարանների» մեծ մասը պտտում է դպրոցի և կեանքի վրալ նրա արած աղքեցութեան շուրջը մատնացուց լինելով աչս անօգուտ ու միասակար ուղղութեան վրալ, որ բռնել են դպրոցները և ծաղրելով նրանց տւած պտողները:

Ակամալ վիշում եմ վ. փափաքեանի «Զխտի» պատմածքից մի խօսք «ապրիլ է պէտքը». աչս, աչս, ապրիլ է պէտքը, գոչում է Քասիմը:

իր «տեսարաններով»։ մեծ է աչս խնդիրը, և պէտք է լուրջ մտածել ու հոգալ նրա մասին։ Ամեն հիմնարկութիւն ապրելու խնդրին պիտի ծառայի. դեռ մարդկանց ապրուստի միջոց տւէք, չետոյ ինչ կ'ուզէք՝ արէք. դպրոցն ու կրթութիւնը դրանից աւելի առաջնակարգ և կարևոր նպատակ ու ձգտում պիտի չունենան։ Լաւ բայց արէք ձեր աշքերը, նախնայէք ձեր չորս կողմը. տեսէք ինչ է կատարուում կեանքում, ամեն մարդ ապրուստի ետևից է ընկած. ինչէր ասես որ չեն անում մարդիկ ապրելու համար... Տեսէք Կունծիկ ազան ինչպէս ճահիճ է կտրել. նա հազիւ տեղ է բռնել կեանքի մէջ և իր չնչին բաց ապահով դիրքը նոյն իսկ չաջողութեան պայմանով չի թողնի։ Աչս լրագրի ցրելը, որ սիրելի շան հետ կուչ է եկել իր նկուղում, զիտէք ինչ օրեր է քաշել... Նրան չուն ընծաղող սիրելի փիւլին, իր մօր չետ, ապրելու համար դրանց խեղճ Մուսիօ Ղուկիկին, ծծեց նրա փոքրիկ վաստակը՝ խոստանալով սէր ու երջանկութիւն. բայց չետոյ դուրս արաւ անամօթաբար, երբ աւելի հարուստ երիտասարդ ձեռք գցեց («Թէ ինչու կը սիրեմ Ժողին և ոչ Ժիւլին»)։ Գիտէք թէ աչս սկսուողը ինչ բարեհամբուր ու հոգատար կին էր երևում, երբ հարսի հօր կարողութիւնն ուղղում էր ձեռք գցել, և հիմա ինչ անպատկառ ու դաժան է դարձել, երբ զրկելով հարսի հօրը կարողութիւնից՝ անդամալոյծ է արել նրան, և ինչպէս ամեն օր թաւէն դրած խաչում է խեղճ հարսին, որի համար առաջ հոգի տալ էր ձեռ-

ցնում («Հարսի մը պատրանք»)։ Իսկ աչս խաբերաչ խլաւուզները (միջնորդ, մոցիքուլ), որ սրան նրան լաւ-լաւ փեսացուներ խոստանալով փոր են պահում, որ փող չահելու համար մարդիկ են զժքախտացնում ու սեփական գոյութիւնը հիմնում ուրիշների դժբախտութեան վրայ («Աղջիկ տես»)։ Մինչև անգամ քրիստոնէութեան ու Սուրբ Գրքի անուշով ստեր են խօսում, ողորմածի դիմակի տակ մարդիկ թալանում, որ ապրեն։ Մերկեր աղան ձեզ օրինակ («Թէ ինչու ամեն ժամասէր քրիստոնեայ չէ»)։ Այո, հանաք չէ ապրուստի խնդիրը. պէտք է մարդ զգուշ լինի, իր չափը ճանաչի, ուժերը լաւ կշռի և ապա մի գործի ձեռնարկի. ով դործ ունի՝ թող գործը չփոխի առանց լաւ մտածելու, որովհետև «գործ փոխելը կեանքի պաշարներուն ամենէն սոսկալինէրէն է. կամ կը լաղթէ մարդ ու չաջողութեան ծալքը կը հասնի, և կամ լաղթելով կը գլտորի, անգամ մ'ալ չկրնալ կանգնելու պայմանով» («Թէ ինչու չեմ չաջողիր»)։

Աչսպէս՝ Գասիմը ամեն ինչ չափելով ապրուստի, աչս օրաչ հացի ապահովութեան, կեանքում կաշուն մնալու տեսակէտից, ծաղրում է մի կողմից աչս ամենը ինչ չեղում է դէպի ալդ կենտրոնը տանող ճանապարհից, միւս կողմից՝ մի շարք «տեսարաններով» ապացուցներ է տալիս, որ ալդ կարիքը ահագին դեր է խաղում կեանքի մէջ։

Դուք տեսնում էք, որ ախտեղ ներկան՝ ախօրը սքողում, ծածկում է ապագան՝ վաղը. որ հեղինակը հա-

ցին տալով ասպարէզը, հոգու համար տեղ չի թողել, որ ազդեած ասպարէզը կարիքի մեծութիւնից, նրա արած ահագին ազդեցութիւնից՝ հեղինակը ծաղրալեզուութեան մէջ է ընկել: Փորի և հոգու հարցը աչքքան էլ հակադիր բաներ չեն, ինչպէս թուում է հեղինակին, և բնաւ ներելի ու խելացի բան չէ առաջինի գերաւելի ու նշանակութիւն տալը: Մարդկանց գործառնութիւնները աչք չափով պիտի չարմարին ներկային, որքան անհրաժեշտ է, որ նրանք կարողանան գործել ապագայի համար, որովհետև բացի ալսօրից՝ կալ վաղը, բացի մեղանից՝ կան ուրիշ մարդիկ, կալ լառաջգիւմութիւն, բարձր ձգտումներ, մեծ նպատակներ, վարդապետներ... Բաւական չէ սահմանափակել մեր ու մեր ընտանիքի ապահովութեան նեղ շրջանակում, մարդ աչքքան աւելի մտք է, որքան լալն են նորա շահերը: Այո, կեանքում անհամար կարիքներ կան, բայց ոչ՝ միայն հացի կարիք: հացի կարիքը նշանակութիւն ունի, բայց ոչ աւելի, քան միւս կարիքները, որովհետև «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»: Մենք ամենքս պարտական ենք մեր ջանքերի մի խոշոր մասը ապագայի, ոչ-մեզ համար գործ դնել... Ստացել ենք և պիտի տանք:

Քասիմի բողոքները տիրապետող կրթական ձևերի դէմ նշանակութիւն ունին ոչ որպէս դրական իդէալի կոչնակներ, ալ որպէս բողոքներ նրանց ծաղրալեզուութիւնների դէմ, որովհետև չի կարող կրթութիւն համարուել աչք կրթութիւնը, որի նպատակն է ստղաքը դրամ շահելու պատ-

րաստելը»: Քասիմի ձգտումները, պահանջներն ու բողոքները արդիւնք են մի սղմած, սահմանափակ, ստորակ և ճնշած կեանքի ծանր պայմանների, մի կեանքի, ուր բաղմաղան գործունէութիւն չկալ, ուր ամեն բան ահ ու գողով է լինում, ուր կեանքը համարեա թէ լծացած է... Մի կեանք, որ լի է տաքնապնդով, աչքնեղ մնում է կալիւ ունեցածից, չարմարել եղածին և ամեն բան չարմարեղ գողութիւնը ապահովելուն... Բայց հէնց աչքտեղ է երևում Քասիմի մտքի թուլութիւնը և պատճառներ ըմբռնելու ընդունակութեան պակասութիւնը: Աւելի խորը մտածող ուղեղը երեղութիւնի վրալ ուրիշ ձրագ կը բռնէր և ուրիշ կողմից, աւելի լալն կողմից կը լուսաւորէր նրանց...

Ով ուղում է իմանալ թէ ինչ է նշանակում փորձնական միտք, գործնական խելք, թող կարդալ Քասիմի դրքովը: Գործնական խելքը երեւոյթներ է տեսնում, կարիքներ է դիտում, պակասութիւններ նշմարում և իսկոյն, ամենակարճ ճանապարհով ու թեթևակի հասնում նրանց առաջ բերող պատճառներին, որոնք սակալն թուում է թէ պատճառներ են: Գործնական խելքը ալսօրը գերադասում է վաղանից. իրական օգուտը՝ դալոց օգուտից, և ամեն բան ձգտում է ստորադասել իրականութեան: Քասիմը բախտի՝ իրողութեան մարդ է, «կեանքի» մարդ է: Նրա միտքը թափանցել ու լալն ընդհանրացումներ անել չգիտէ. մարդաստղանութեան պատճառը, օրինակ, նա կը համարի լանցաւորի բնաւորութեան փչացած լինելը, անգործ մնալու պատճառը՝

ծուրութիւնը. նա առելի վեր չէ բարձրանում. Նորա խելքը փիլիսոփայական չէ:

Այս տպաւորութիւնն ենք ստացել Քասիմի զրքից. ալս է մեր կարծիքը նրա մասին:

Խորհուրդ ենք տալիս ամենքին ձեռք բերել Քասիմի գիրքը. ոչ ոք չի ակոստալ կորցրած ժամանակը. դեռ շնորհակալ էլ կը լինի:

Ն. Աղբալեան

ԵԿՄԱԼԵԱՆԻ ներդաշնակած «Պատարագի երգեցողութեանց առթիւ.

Պ. Եկմալեանը գովելի հեռատեսութեամբ իւր պատարագի արարողութեան մի օրինակը նւիրել է Բերլինի երաժշտական ճեմարանին: Մենք առիթ ունեցանք ալդ մեծահասորը և բազմավաստակ երկը դիտելու և մի քանի անգամ նորանից հատուածներ լսելու: Դա մի նոր նշան է հալի առաջադիմութեան քուլտուրական մի նոր ասպարիզում, ուր մենք միանգամայն օտար ենք և ոչ մի նշանաւոր բան չենք արտադրել մինչև օրս:

Իսկ վեհափառի կոնդակը ալդ գործի ճակատին և նորա ընդունելութիւնը հալ եկեղեցու կողմից մի հատուտ ուղիով հասնողն է, որ մեր եկեղեցին թէև դանդաղ, բայց հաստատուն քալելով առաջադիմելու ընդունակութիւնից դեռ զուրկ չէ: Նրբ ժողովրդի ականջը սովորի աւելի կիրթ երգեցողութեան, երբ նորա գեղարւեստական պահանջներն աւելի զարգանան ու կազմակերպւին, անլուսալի չէ, որ դաշնամուրն ու օրգելն էլ տեղ գտնեն հալ եկեղե-

ցու մէջ, որովհետև ընտիր երաժշտութիւնը մարդկային զգացման վեհագոյն արտայայտիչն է դէպի երկնայինը, իսկ հալ եկեղեցին սկզբունքով երբէք հակառակ չէ եղել ոչ կանոնաւոր հոգևոր երգեցողութեանը, ոչ էլ երաժշտութեանը:

Անցնելով մեր նիւթին, թող ներելի լինի մեր համեստ դիտողութիւններն անել Գէորգ կաթողիկոսի ձաջնագրել տւած պատարագի երգեցողութեանց մասին ընդհանուր-գեղարւեստական տեսակէտով, որ պարոն Եկմալեանը ներդաշնակել է շատ չնչին փոփոխութիւններով.— Դիտել ենք տալիս, որ մեր խօսքը պ. Եկմալեանի գործի մասին չէ անմիջապէս ալլ նորա առթիւ:

Ամին մի արեւստագէտ, որ ձեռնարկում է մի գործի, որի վերալ տարիներով քրտինք ու ջանք է թափում, ինկատի ունի, որ ալդ գործից ծագելու է մի գեղարւեստական ամբողջութիւն, որի մասերը օրգանապէս շաղկապւած են միմեանց հետ և ամեն մի մասը տրամաբանական

արդիւնք և զեղարւեստական անհրա-
ժեշտութիւն է մնացեալ ամբողջու-
թեան. ալդ է ամեն մի ստեղծագոր-
ծութեան իղէալը, եթէ նա իրօք
ստեղծագործութիւն է ուզում լինել:

Գէորգ Աթ. ձայնագրել տւած
պատարագը ունի ալդ օրդանական
կապը, արդեօք նա մի հասուն գե-
ղարւեստական դործ է, կարող է նա
ստեղծագործութիւն կոչուիլ, մեր քուլ-
տուրական կացութեան մէջ միթէ
մենք կարող էինք մի ալդպիսի դործ
ունենալ, որ գլթ չափաւոր կեր-
պով համապատասխանէր գեղարւես-
տօրէն զարգացած ականջի և մտքի
պահանջներին. ոչ և դարձեալ, ոչ պի-
տի պատասխանէ անտարակոյս ինքը
Պ. Եկմալեանը: Ալդ տեսակէտով ու-
րեմն նորա ընտրած յիւթը չունե-
նալով գեղարւեստական ամբողջու-
թիւն, նորա անսխալ ներդաշնա-
կութիւնն էլ զուրկ է բնականօրէն
նոյն ամբողջութիւնից: Պ. Եկմալեա-
նից անտարակոյս չէր կարելի պա-
հանչել, որ ամբողջովին վերակազ
մէր պատարագի երգեցողութիւնը,
քանի որ նա ստեղծագործող հեղի-
նակ չէ, ալ միայն եղածը մշակող.
սակաւն, մշակողի իղէալն էլ աջնքսն
աւելի գնահատելի կը լինի, որքան
նա մօտեցած կը լինի վերեւ դրած
պահանջներին ¹⁾).

¹⁾ Պր. Մակար Եքմալեանի ալս
գրախօսականի առիթով մեզ տւած
բերանացի բացատրութիւնից երևաց,
որ նա, ներկայ դէպքում, իւր գլխա-
ւոր վաստակը համարում է եղանակ-
ների ամբողջութեան նկատմամբ
եղածին հաւատարիմ մնացած լինելը
և սեփական ստեղծագործութեան

Սորանով չենք ուզում ասել թէ
մեր պատարագի երգեցողութիւնը
զուրկ է առհասարակ արժանիքից,
քան լիցի.— ընդհակառակը, նա ունի
չնոյն ընտիր, տեղ-տեղ նոյն իսկ հիա-
նալի կտորներ... Ալդ չնոյն լաւ է
զգացել պ. Ներդաշնակողը, որ երբեմն
չի խնայել իւր ջանքը հիանալի կեր-
պով ներդաշնակելու համար, երբեմն
էլ բաւականացել է միայն ընդհա-
նուր ձայնապահութեամբ:

Էջմիածնում ձայնագրած պատա-
րագի մի ալ մեծ պակասութիւնն էլ
ալն է, որ նա չնոյն մասերով հալե-
րէն և հալ հոգու արտաշատութիւն
չէ: Ալդ անլայտ չէ պ. Եկմալեանին,
որ իւր առաջաբանում լիջում է նորա
կրած աղղեցողութիւնը քուլտուրայէս
մեղանկից բարձր կանգնած աղղերից.
Հալրին էլ իւր կոնդակի մէջ ցա-
կութիւն է լստնում բուն հայկականը
գտնելու:

Մենք որպէս հալ ժողովրդի ան
մասի զաւակ, որ դեռ չէ կորցրել
հայերէն երգելու, հայերէն ողբալու,
ուրախանալու և աղօթելու անհատա-
կան լատիւթիւնները, կարող ենք
պնդել ալդ կարծիքը, որ պատարագի
երգեցողութիւնը չնոյն է ենթարկած
օտար աղղեցողութեան... Թող մաս-
նագէտը որոշէ թէ նորա ո՞ր մասը
պարսիկ, արաբական և կամ չոյն
ծագումն ունի և ո՞ր մասը տղէտ ու

անճաշակ տիրացուների կամաւակա-
նութեան արդիւնք է. իրողութիւնն
ալն է, որ ալս տեսակէտով էլ փոք-

րանում է պ. Եկմալեանի գործի նշա-

Ման. Մուրճի Խմբ.

Նակութիւնը, Երգեցողութիւնը և երաժշտութիւնը արւեստներից ամենա-անհատական և ազգայիններից ամենա-ազգայինն են. նոքա մի ազգի անհատականութեան ցոլատկերն են (Spiegelbild). մեր պատարագի երգեցողութիւնը շատ մասերով զուրկ է աղջ լատութիւնից, որ անդրադառնում է և պ. ներդաշնակողի գործի վերաջ:

Առհասարակ Պ. Նկմալեանի իրան կրաւոր դեր է լատկացրել, որ շատ էլ ներելի չէ մի արւեստագէտի համար. ցանկալի էր, որ նա ներգործաբար երևար ալն տեղերը, որոնք խորթութեան և օտարութեան ակընդաւորի հետքեր են կրում կամ զուրկ են գեղարւեստական արժանիքից:

Սակալն դուցէ մենք պահանջում ենք անկարելին, աղջ գուցէ ապագայի և քուլտուրայի գործ է, երբ մի հաջ վաղէր բլրեղացնելով իւր մէջ իւր ազգի զգացումները, բովէր ալն իւր հանձարի բոցով և անհատական կնիքը ճակատին՝ լուս աշխարհ հանէր որպէս մարդկին ստեղծա-

գործութեան հրաշալիք... ...այո՛, աղջ ամենը հեռաւոր քուլտուրայի գործ է:

Ո՞րն է ուրեմն ալս գործի արժանիքը ¹⁾. եղածը, սովորականը քիչ թէ շատ ներդաշնակել, աղատել տիրացուների կամայականութիւնից, մտցնել կրթած ականջի համար քիչ թէ շատ տանելի տարր. ամենտեղ առաջացնել միատեսակութիւն և կանոնաւորութիւն:—Ահա զորա արժանիքը:

Ի նկատի ունենալով գործի առաջնութիւնը և նորութիւնը, մեր նկատած պակասութիւնները ներելի մասամբ և հասկանալի են. Պ. Նկմալեանին մենք ցանկանում ենք լիասիրտն աջողութիւն և եռանդ նոր և աւելի լաւ գործերի համար:

Բերլին 1898 յունւար.

Գր. Վանցեան

¹⁾ Բերլինում մի հմուտ և ձեռնհաս անձի կողմից պատրաստում է քննադատութիւն աղջ գործի ներքին և արտաքին առաւելութիւնների և պակասութիւնների մասին:

ՁՈՒՍ, Էմիլ.—*երեք քաղաք*. «Պարիզ» ZOLA, Emile.—Paris. Les trois villes. 1898 թ. 608 էջ, գինն է 3 ֆրանկ, 50 սանտիմ:

Պարիզ վէպը կարդալիս մենք ծանօթանում ենք հիմնովին հեղինակի ալն աշխարհայեացքի հետ, որ նա ունի արդի եւրոպական հասարակական կաղմակերպութեան մասին: Զուլի հալեացքի ամբողջութիւնը արդիւնք է հասարակական երևութ-

ների ուսումնասիրութեան և համակարգութեան: Նորա թափանցող և հաւաքօրէն ըմբռնող միտքը մեզ տալիս է մի պատկեր հասարակական կական իրերի դրութեան մասին, որոնցից բղխում են լուրջ խնդիրներ մարդկանց սոցիալական կատարելու-

թեան վեյտերմամբ: Այլպի հերոսի մտածողութիւնը խկապէս մի բանաձև է, որով արտապատում է բողոք ալն վատթար հետեանքների դէմ, որ լառաջ է բերել ներկալ արեմտեան Արոպալի սոցիալական կազմակերպութիւնը: Պարիզ վէպում մենք դարձեալ հանդիպում ենք նոյն հռչակաւոր Պիէրին, որը, «Լուրդ» վէպում իբրեւ կաթոլիկ հոգևորական, գնացած էր նախ Փրանսիական Լուրդ քաղաքը՝ աշխտել կաթոլիկ հասարակութեան ուխտադնացութեան բարքերը դիտելու համար: Յառաջողէմ և ազատ մտքերով տոգորւած Պիէրը հիւսթափում է՝ տեսնելով, որ ուխտադնաց հասարակութիւնը սպասում է իր ֆիզիկական ցաւերի բուժումը սուրբերից, մինչդեռ, նորա աչքում, միայն գիտութիւնը պիտի կատարէր ալդ մարդկային պաշտօնը: Հաւատը մարդկութեան համար ոգեկան կեանքի պահանջ է: Իսկ կրօնը պիտի ներշնչէ մարդկանց ալդ սնհուն հաւատը դէպի ճշմարտութիւնը և արդարութիւնը, որոնք մարդկային կատարելութեան իդէալն են: Սորա հակառակ նա հանդիպում է Լուրդում ֆանատիկոսութեան, որ ստորացնում է մարդկային արժանապատւութիւնը: Պիէրը բացասում է ներկալ կաթոլիկ կրօնի աւանդումը, որը ազաւազում է հաւատի իսկութիւնը, որով տոգորել էր մարդկանց քրիստոնէութիւնը իր սկզբնական յիշմաներում:

Պիէրը գնում է Հռոմ նորից ստուգելու համար թէ օր աստիճան իր փափալած գաղափարական հաւատը արձագանք կը գտնի կաթոլիկ կրօնի

պետի մօտ «Հռոմ» վէպում: Պիէրը գրած էր մի գիրք Նոր Հռոմ վերնագրով, նա ուր պաշտպանում էր սկզբնական քրիստոնէութեան վեհ սկզբունքները, ինչպէս եղբայրասիրութիւնը հաւասարութիւնը և արդարութիւնը, որոնք պիտի փրկէին մարդկութիւնը և դարձնէին նորան դէպի ճշմարտութեան շաւիղը: Պապը ալս գիրքը արգելել էր ենթարկել, նորա մէջ արծարծած համարձակ մտքերի պատճառով, և Պիէրը եկել էր Հռոմ իր դատը պաշտպանելու և ապացուցանելու թէ ինչպէս է նա հասկանում ճշմարտութիւնը: Պիէրը մերժում է պապից, և ալդ նորան չգարմացրեց, որովհետև Պիէրը Հռոմում ևս ներկալ էր մոլեռանդ ուխտադնացութեան, որից բորբոքում են հիւանդոտ, առողջ մտքերի հակառողերակալութիւնները: Անսխալական համարւած պապը Պիէրի աչքում իշխող ուժ էր ձեռք բերել, շնորհիւ կրօնական մոլութիւններով վարակւած հասարակութեան, մի ուժ, որը քողարկելով քրիստոնէական ձևականութիւններով իշխում է մարդկանց ոգիների վրայ, տալովսոցա աշխ ուղղութիւնը, որ լարմար է իր տիրապետութեանը: Քրիստոնէական կրօնի աղաւաղւած հասկացողութիւնը չի կարող լոյս սփռել անթիւ անարդարութիւնների վրայ, որ կուտակւել են դարերի ընթացքում, չի կարող ճշմարտութեան դուռը բանալ մեր ցաւերի և սխալների մասին: չի կարող մեր մտաւոր, բարոյական և սոցիալական կատարելութեան իսկական գաղափարին ծառայել, որը միայն կոչւած է մարդկային գոյու-

թեան իմաստը ալն բարձրութեան վրայ պահելու, որ նրան չատկացրել է բնութիւնը:

Պիէրի չոսերը Հռոմում ի դերն ելան չըզտնելով իր դաւանած մըտքերի արձագանքը պապի մօտ, որ խկապէս չիտադէմ և խաւարամիտ է, բայց վախենալով իր իշխանութեան փառքի կորստից և զրդւած չիտ չըմնալու ճախանձից՝ խառնուում է զանազան քաղաքական և սոցիալական խնդիրների մէջ: Պապը ալիւ անում է առ երես, իսկ սրտանց վախենում և սարսափում է չիշեալ աշխարհական խնդիրներից, որոնք իրանց լուծումովը մեծամեծ հարածներ կը հասցնէին պապականութեան: Այս բնաւորութիւնը կրող կրօնական աշխարհում Պիէրի գաղափարները անշուշտ կը հալածէին: Պիէրը դառնացած և ցաւած սրտի բողբոջով թողնում է Հռոմը և վերադառնում Պարիզ, իր հալընիքը, որ նախաձեռնող ստեղծագործ և լառաշարի մող է և խոստանում է բաւարարութիւն տալ իր գաղափարական տենչանքներին: Պիէրի հաւատը դէպի կաթոլիկ կրօնը արդէն երերում է, թէն նա ազնւութեամբ կատարում է իր հողերական պաշտօնը:

Այս ամենը պատմած էր Լուրդ և ապա Հռոմ վէպերում, որոնց հետ, նոցա ամեն մէկի լոյս տեսած ժամանակ՝ Մորձ'ի ընթերցողներին ծանօթացրել ենք:

«Իրեք քաղաքների» վերջին օղակը կազմում է ահա Զոլայի Պարիզ վէպը, որին և դառնում ենք:

Նրկու տարի շարունակ Պիէրը Պարիզում քաջ ծանօթանում է հա-

սարակական կազմակերպութեան հետ: Ամենից առաջ նրա աչքն է զարնում հասարակական խնամատարութեան գործը, որ հոգս է տանում չքաւորների և խեղճերի վրայ: Հասարակական խնամատարութիւնը, ինչպէս նա ալժմս կազմակերպւած է, շատ անբաւարար և հակասող հիմնարկութիւններից մինն է: Պիէրը ինքը վկայ է քաղցածութիւնից առաջ եկած մարդու մահւան մի դէպքի, որից Պարիզի խնամատարութիւնը նորան չէ փրկում: Նոյնա-նման օրինակներ հարկւրաւոր և հաղարաւոր են: Մարդիկ համոզում են ալն բանի մէջ, որ ալի տեսակ խնամատարութիւնը անկարող է ալն վէրքը բուժել, որ հետզհետէ մեծանալով, վարակում է ամբողջ հասարակական մարմինը: Քրիստոնէութեան սկզբնաւորութեան օրերից անցել են:

19 դարեր միշտ քարոզելով ողորմութեան և կարեկցութեան սկզբունքը՝ չենւած բարձր բարոյական օրէնքի վրայ, թէ մարդ պարտաւոր է օգնել և պաշտպանել իր նմանին, եթէ սա չքաւոր և կարօտ է: Սակայն դարաւոր փորձերը ցոյց են տալիս, որ ողորմութեան սկզբունքը ապարդիւն և անհետեանք է մնում: Ներկայ հասարակական և տնտեսական կազմակերպութիւնը լառաջ է բերել Նւրոպայում ալնպիսի պալմաններ, ուր գոլութեան անհաւասար կռիւ է մղւում հրկու դասակարգերի՝ կապիտալիստների և բանւորների մէջ: Այնթիւ բանւորներ բանում են օրավարձով սակաւաթիւ զրամատէրերի մօտ, տալով սոցա իրանց քրտնաթոր աշխատանքի հա-

մարեալ ամբողջ արդիւնքը: Ստացած օրավարձը ոչ միայն չի բաւում անգամ բանւորի կենսական պիտուքները լրացնելու, այլ և անկարելի է դարձնում ալն պարտաւորութիւնները կատարելու, որ մարդկային բնութիւնը դնում է նորա վրայ: Այսպէս ուրեմն բանւորները զրկւում են շատ և շատ բարիքներից սերնդէ սերունդ աղքատանալով, իսկ դրամատէրերը հարստանում են շարունակ օգտւելով օրինական պաշտօններից, որոնք տալիս են նոցա ձեռքը բանւորի ամբողջ արդիւնքը: Այս պաշտօնները չլացնում են երկու դասակարգերի մէջ նախանձ, ատելութիւն և թշնամութիւն, որոնցից գոյանում են հասարակական չանցանքներ, որոնց ինքը Պիէրը սարսափած ակա՛նատես է քաղաքակրթութեան առաջնորդող կենտրոնատեղում, Պարիզում:

Աղքատութեան դրան չէմքում ընկած անթիւ մարդկանց դրութիւնը բարւոքել կարող է արդեօք խնամատարութիւնը: Ոչ երբէք, Պիէրը չի հաւատում խնամատարութեան գործին, չի հաւատում ողորմութեան սկզբունքին, նա ոչ մի բանի և գործի չի հաւատում, որ պիտի պահպանի ամբողջ չքաւոր դասակարգի ներկայ աննախանձելի դրութիւնը: Ֆրանսիական 1789 թ-ի չեղափոխութիւնը վերածնեց և վերակազմեց ոտնատակ արած և ճնշւած մարդկային հիմնական իրաւունքները: Նա լուս սփռեց քրիստոնէական աշխարհի վրայ՝ տալով նորան անհատական ազատութեան իրաւունքը: Բայց այս անհուն բարիքների հետ

նա առաջ բերաւ և մեծամեծ չարիքներ, Դասակարգերի կռիւց չաղթող հանդիսացաւ միայն նա, որ վաղուց լի վեր կուի էր մղում հողատիրական դասակարգի դէմ իր սոցիալական և քաղաքական գոյութիւնը ապահովելու համար: Այդ չաղթող դասակարգը սահմանեց օրէնքներ և սլալ մաններ ի պաշտպանութիւն իր շահերի, ալնպէս որ ալնահետեւ կազմւող ազատ անհատական տնտեսութիւնը սկսեց տիրապետել, հասցնելով եսականութիւնը իր զարգացման գաղաթնակէտին: Անհատական տնտեսութեան վրայ չենւած կապիտալիստ հասարակութեան մէջ բանւոր դասակարգը մնաց անմասն ալն սոցիալական օգուտներին, որով օժտեց ֆրանսիական չեղափոխութիւնը հրորդ դասակարգին: Բանւորը արեւմտեան Նւրոպալում մնաց զուրկ սեփականութիւնից, Նա ներկայացաւ իբրեւ ազատ վարձկան, որի աշխատանքը առնւում է չնչին գնով քոգուտ կապիտալի, որ անխնայ, եսամոլ և բռնի է բոլոր ալն գործաւորութիւնների մէջ, ուր իր շահը ամենակարեւորն է: Կապիտալի բռնութեանը ենթակալ բանւորները զուրկ են նոյնպէս ալն ազատութիւնից, որ նոյն չեղափոխութիւնը չաւտարարեց իբրեւ միակ նպատակ, բայց որ չիրականացաւ սպասածին համեմատ և սոսկ անւանական դարձաւ եւրոպական հասարակութեան չորրորդ (բանւոր) դասակարգի համար: Սա ընկաւ նեղ և համարեալ անտանելի դրութեան մէջ, որ ստրկութեան է նմանում: Այսօր բանւոր դասակարգը սպասում է իր բարւոքման խնդրի

շումանը: Այժմս նորա հերթն է՝ արդարութիւն և սորա վրայ փնւած հասարակական և տնտեսական պաշտօններ պահանջելու: Եթէ այս պահանջը խաղաղ և օրինական կերպով չլրացնւի կամ չէ կարող լրացել, աչն ժամանակ կապիտալիստ դասակարգը մատնւած է կորստի, որով արդէն նորան սպառնում են կազմող հակառիշական կուսակցութիւնները:

Կորցնելով իր հաւատը դէպի կաթոլիկութիւնը, որ ի զուր է ջանում ամօքել կապիտալիստ հասարակութեան վէրքերը ողորմութեան հաստատութիւններով, Պիէրը խորատուգում է անուրջների մէջ ապագայ, նոր, վերափոխւած կրօնի մասին: Կլանւած աչս մտքով, նա հանդիպում է իր վաղուց չտեսած նշա նաւոր գիտնական եղբօր Գիլլոմին, որ քիմիական վերլուծութիւններով է պարապում, որոնելով մի գիւտ: Գիլլոմի հայեացքը սոցիալական կազմակերպութեան մասին պատմական է: Նա բոլորովին կողմնակից չէ գոյութիւն ունեցող սոցիալական պաշտօններին և հակառակ է սոցա ջատագովող և փաստաբանող շկոլալին, որ պնդում է իբր թէ կապիտալիստական պաշտօնների կացութիւնը բնական է և բնական օրէնքներով ղեկավարում և որ իբր թէ աչդ իսկ պատճառով աղատ հասարակական և տնտեսական գործառնութիւնները, բնականապէս ներդաշնակ են: Գիլլոմը սլընդում է, որ աչս հայեացքը հիմնովին սխալ է, անգիտնական և անպատմական է, լի հակասութիւններով մի խռնուրդ է, որ չէ բացա-

տրում տիրապետող երևոյթների պատճառները: Սոցա մշջ ոչինչ բնական չըկալ, ամեն ինչ զարգացման հետեանք է և ենթակալ պատմական օրէնքների: Դարերով տեղող ստրկութեանը փոխարինեց նոյնպէս դարաւոր ճորտութիւնը: Սորա տեղը բըռնեց կապիտալիզմը, որ ճորտութեան վերածեց աղատ բանտրականութիւնը: Հարկաւ կապիտալիզմը պիտի տեղ տալ կազմութեան մի ալ ձևի, որ, ինչպէս թուում է, հասարակական և հանրական է լինելու: Միաչն թէ աչս սպասելիք կերպարանափոխութիւնը ժամանակի խնդիր է: Արդէն նոյն իսկ կապիտալիստական շրջանի մէջ հաստատութիւններ են ծագում, որոնք նշաններ են պարունակում, որ ապագան վերապահւած է հանրականութեան սիստեմին: Գիլլոմը իր աչս կարծիքը չալտնելով իր եղբօր՝ չատ ցաւում է և խղճում Պիէրին, որ սա բացասում է ամեն բան, որ նրան շրջապատում է, որ նա կորցրել է հաւատը, սէրը և չոքը դէպի մարդկալին կեանքը, որին մենք կոչւած ենք ծառայելու մեր բարոյական բախտաւորութեան և փրկութեան համար: Գիլլոմը յորդորում է իր եղբօրը և համոզում սիրել կեանքը և աշխատել հէնց աչն բարիւաւութեան համար, որ պահանջում են արդարութեան և ճշմարտութեան սկզբունքները: Արդարև Պիէրը համոզւում է իր եղբօր չալտնած հայեացքին՝ իրերի պատմական զարգացման մասին և հաշուում է վերջնականապէս կեանքի հակասող և հիասթափեցնող երևոյթների հետ, որ պէտք է համակարգել, քննել և ուսումնա-

սիրել մի ճշմարիտ եզրակացութեան զալու, որ շատ կարևոր է լուրջ հասարակական գործունէութեան համար: Պիէրը գնում է իր եղբոր սունը և աչտեղ, հանելով հոգևորական զգեստը, պատրաստուում է աշխարհական կեանքի համար, պահելով իր կրօնի մէջ իր բոլոր իղէալները:

Մտաւոր և հոգեկան բաւարարութիւն չտալով կաթոլիկ հոգևորականութիւնից անցնելով աշխարհական ասպարէզ՝ հէնց աչք ժամանակ Պիէրը ենթարկւում է մի անսպասելի և սարսափելի տեսարանի: Գիլլոմը պատրաստուելիս է եղել Պարիզի մի նորակառոյց եկեղեցի՝ տաս հազար աղօթող մարդկանցով՝ չօղս ցնդել ամենաուժեղ պալթուցիկ վառօդով, որ իւր գիւտն էր: Պիէրը, հսկելով եղբոր վրայ, չանկարծ սրա ձեռքից բռնում է և արգելում աչք սարսափելի լանցանքը գործել: Խոկապէս Գիլլոմը աչք վառօղի գիւտը արել էր՝ ֆրանսիական կառավարութեանը լանձնելու համար: Սա պիտի զորանով կարողանար մի երոպական պատերազմում տապալել կուռղ թշնամիներին և աղղպիտով, միայն իր նախաձեռնութեամբ, հաստատէր ընդհանուր մշտական խաղաղութիւն: Պատերազմը, ըստ Գիլլոմի, ահնահետև կուռղներէ ց ոչ մէկին չաղթանակի դրոշակը չի տալ, որովհետև ամենքը հաւասար կերպով զինւած են և, հետեաբար, իրարից սաստիկ վախենում են բոլորովին ոչնչանալու վտանգից, որ և ստիպում է ցետաձգել կռիւր: Անշուշտ հարկաւոր է վերջ տալ շարունակ զինւելուն, որ կուլ է տալիս ժողովրդի խնայողութիւնը և

կատաղի թշնամի է սոցիալական լառաջդիմութեան՝ ալլասեռելով ժողովուրդների մտքերը և սրտերը: Միայն ընդհանուր զինաթափութիւնը ընդունակ է ժողովուրդներին մտածել տալ իրանց սոցիալական բաղդաւորութեան մասին: Միայն աչք պալմաններում մարդիկ կարող են իրանց իղէալին մերձենալ լանուն բարձր բարոյական պատկերանքի, որով մարդիկ լոյս աշխարհ են եկել: Պիէրի ջանքով Գիլլոմը չետ է դառնում ցնորամիտ լանցանքից, որով նա ուղեցել էր, իբրև վրէժ, սթափեցնել հասարակութեան՝ կատարուող անարդարութեան մասին, որ Պարիզի միլլիոնաւոր բանւոր ազգաբնակութիւնը անտես առնւած և մերկ դրութեան մէջ է պահում: Յետ մղելով Գիլլոմին ցնորքից՝ Պիէրը փրկում է Պարիզի հասարակութիւնը սոսկալի փորձանքից: Պիէրը հոգեպէս բուժում է իր գիտնական եղբորը ահպէս, ինչպէս ինքը Գիլլոմը բուժել էր իր կրտսեր եղբոր Պիէրին թերահաւատութիւնից՝ լանձնելով սորան աշխարհական կեանքին, ուր նա աւելի մեծ պատրաստութեամբ կընկրկի լառաջդիմութեան գործին, որ պահանջում է աշխատանք և լըրջութիւն: Նոյնպէս Գիլլոմը վերագառնում է գիտնական աշխարհ՝ ալթմա իր գիւտը գործադրելով գործնական նպատակների, որով պիտի խնայէր մարդկային ֆիզիկական աշխատանքը:—

Վէպի հերոսների գործունէութիւնը լարում է ընթերցողի ուշքը ղէպի աչն նշանաւոր միտքը որ արծարծւել է մեր դարի ընթացքում

սոցիալական խնդրի առիթով: Սա ժամանակիս ամենամեծ խնդիրն է, որ իր լուծման է սպասում: Եթէ նկատոււմ է մարդկանց մէջ ցանկութիւն լուրջ կերպով սոցիալական խնդրով զբաղելու, աչդ ցոյց է տալիս նոցա գիտակցութիւնը խնդրի ծանրութեան վերաբերմամբ: Երբէք չպիտի հերքել Եւրոպային սպառնացող վտանգը, որ ծագել է դասակարգային շատ անհասարգ դրութիւններէ: Այդ պատճառով սոցիալական շարաքերութիւնները կերպարանափոխումը իշխող և հպատակող դասակարգերի մէջ անհրաժեշտ և անխուսափելի է: Սակայն երբէք չպիտի կարծել, որ կատարեալ արդարութիւն կը վերականգնի, եթէ բռնութեամբ ձեռք բերի: Նոյն խոսքի մի ցանկալի կազմակերպութիւն: Եւրոպական սոցիալական գիտութեան արդի տեսակէտը ունեցել է ահադին ազդեցութիւն ժողովուրդների մտքերի ուղղութեան վրայ չիչնալ խնդրի նկատմամբ: Օրէնսդրութիւնները, իբրև ժողովրդական կարիքները արտայայտիչներ, շտապել են գիտութեան խօսքը լսել՝ տալով սոցիալական խնդրին լուրջ և արժանաւոր նշանակութիւն: Այն ինչ որ օրէնսդրութիւնները մինչ աչժ աւել են բանւորների լաւտնի ապահովութեան համար, դա անկասկած համեմատական բարիք է, որ իսկապէս ոչ ալ ինչ է, եթէ ոչ թերես կուր կապիտալի աւերիչ բռնութեան դէմ: Այլ ևս չի կարող հոսանքը կանգ առնել սոցիալական խնդրի լուծումը չառաջ մղելու համար: Այս շաւղով արած ամեն մի քաջ կը նշանակի

համեմատական բարիք, որ կարելի է սպասել:

Ձուան տեղ ալս մեծ խնդրին վիպական հանճարեղ ձևակերպութիւն՝ չիչնեցելու իր հալոյնիքի հասարակութեանը աչն իրողութիւնը, որ Ներկայ կազմակերպութիւնը խճճաւ և հիւսաւ է ազադակող անարդարութիւններով, որ պիտի ջանալ մի կերպ վերացնել ի փրկութիւն մարդկային արժանաւորութեան: Ձուան իր «Լուրդ» վէպում բողոքեց Ֆրանսիայի կրօնական մոլեռանդութեան դէմ, որ ամօթանք է բերում դարուս քաղաքակրթութեանը: Յանձին Պիէրի հաւաքական բողոք լալունեց մոլորեցնող կղերականութեան դէմ, որ ճշմարտութիւնից լետ է մնացել և խոս է տալիս բանական մտքի պատիրանքից: «Շուրմում» Ձուան սպասում էր միկնութիւն կաթոլիկ հոգևորականութիւնից կրօնի աւանդման ներկայ ձևերի մասին, որոնք չեն ցոյց տալիս լուսաւորող վերակազմութեան ուղիղ ճանապարհը, ալ խոչնդոտ են դնում դրական նպատակներին, որ հասարակութիւնները առաջ են դրած ի հաստատութիւն մեծ ճշմարտութեան, որ ահա 19 քրիստոնէական դար առաջ աւետաւ է: Ձուալին «Պարիզ» վէպում դրաւում է սոցիալական ամենաառաջնակարգ խնդիրը: Ձուան իր երեք վէպերով ընթերցողներին մասնակից արաւ դարիս ցաւերը կաղմող խնդիրներին, որոնց լուծումը պիտի վերականգնի ճշմարտութիւնը և արդարութիւնը:

Գ. Վարդանէանց:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գաւառական քաղաքների ինքնավարութեան միամնայ գործունէութեան առթիւ

Քաղաքային ինքնավարութեան համար Անդրկովկասում անցեալ 1897 թւականը նշանակեց մի նոր տարեթիւ. մինչև այդ ժամանակ ինքնավարութիւն վայելում էին միայն նահանգական քաղաքները, մինչդեռ բոլոր մնացած քաղաքները կառավարւում էին այն հին եղանակով, ուր կառավարչական իշխանութիւնները ունէին առաջնակարգ նշանակութիւն. այդտեղ քաղաքների կառավարութիւնը գերակշիռ կերպով ոստիկանական էր: Դռքա գաւառական մեծ ու փոքր քաղաքներն էին, որոնք այդ տարւանից կոչեցին իրենց ներքին գործերը կառավարելու քաղաքային կրճատ ինքնավարութեան եղանակով, մինչդեռ նահանգական քաղաքները կառավարւում են լիակատար ինքնավարութեան օրէնքներով:

Պէտք էր սպասել որ ինքնավարութիւնը մեր երկրի այդ երկրորդական և երրորդական քաղաքներին նոր կենդանութիւն տար, քաղաքների ժողովուրդները, քաղաքացիական լայնացրած ճանապարհի վրայ կանգնելով՝ նոր ոգի առնէին և իրենց ներքին գործերին նոր միտք, նոր իմաստ ներշնչէին: Սակայն այժմ, երբ դոցա ինքնավարական կեանքը երկրորդ տարեդարձի մէջն է մտել, չենք կարող վկայել, թէ մենք զգում լինենք այդ կեանքի եռումը, չենք կարող վկայել թէ գործերի այդ ձեւափոխւած կառավարութիւնը աներկբայելի նպաստաւոր արձագանքներ տալիս լինի մեր երկրի կեանքի մթնոլորդի մէջ:

Պատճառը, հարկաւ, այն է, որ քաղաքային ինքնավարութիւնը, որպէս շատ ուրիշ տեղեր, նոյնպէս և մեղնում չգտաւ դարիս լուսաւորութեան համապատասխան կրթւած քաղաքային հասարակու-

Թիւններ, որոնք կարողանային ինքնավարութեան հիմքում դրած սկզբունքները ամբողջ ծաւալով ըմբռնել և գնահատել: Եւ ո՞վ պիտի տւած լինէր այդ կրթութիւնը. նախկին Թրքական խանութիւնների աւանդութիւնը, այն խանութիւնների, որոնք, նոյն իսկ իրենց փոքրութեան մէջ՝ մի-մի բռնակալ պետութիւններ էին, թշնամի ամեն մի հպատակի մտքի անկախութեան և ամեն հպատակի բարօրութեան նոյն իսկ արտաքին փայլին? Թէ՛ այդ կրթութիւնը պիտի տւած լինէր այդ ռեժիմը փոխարինող ոստիկանական կառավարութիւնը, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ դեռ ևս մեր երկրի վրայ, չնայած նորանում ներմուծած քաղաքացիական կարգերին, դեռ ևս գերակշիռ կերպով իշխում էր զինւորապետական կառավարութեան ոգին:

Տեղական ինքնավարութիւնը, թէ՛ և մեր տեղական հասարակութիւնները նորան հասկանալու մտաւոր կարողութիւնն ունին, բայց և այնպէս այն հաստատութիւններիցն է, որոնք պահանջում են որոշ վարք ու բարքեր, ոգու որոշ ուղղութիւն, գործելու եղանակի մէջ յաջորդականութեան ոգի, որը ստեղծւում է և զարգանում միայն լուրջ հասարակական կրթութեան միջոցով. դա է որ սովբեցնում ու վարժեցնում է անհատներին իրենց եսական ձգտումները ստորադրել հանրային շահերին և, որ գլխաւորն է, ծնեցնում է հանրային շահերի զաղափարներ ու դոցա անձնէր մարդիկ ու խմբեր, որոնք և, վերջ ի վերջոյ, կազմակերպւում են իբր իրար լրացնող, իրար հրսկող, բայց և իրար հետ մրցող կուսակցութիւններ, որ կատարելապէս անհրաժեշտ է ամեն մի ներկայացուցչական ժողովում, որպիսիներէից մէկն է նաև քաղաքային խորհրդարանը (գումա):

Եթէ մեր երկրի քաղաքները ինքնավարութեան ասպարիզում մեծամասնաբար անկենդանութիւն են ցոյց տալիս այժմ, այդ պէտք է վերագրել մեր քաղաքների հասարակութիւնների անվարժ լինելուն հասարակական գործերում, այն մտքով, որպէս ասացինք վերև:

Բայց մեր մտադրութիւնը միայն այն չէ, որ երևոյթը վկայէ և հիմնական պատճառները ցոյց տանք. այս յօդւածով մենք ունինք գործնական նպատակ, այն է՝ միջոց ցոյց տալ որ մեր գաւառական քաղաքների ինքնավարութեան գործունէութիւնը յառաջդիմական շաւղի վրայ դնել:

Գործնական միջոցը՝ քաղաքների գործունէութեան հրապարակական քննադատութիւնն է: Հրապարակական քննադատութիւնը մի անբաժան մասն է բոլոր հասարակական հաստատութիւնների կանոնաւոր կեանքի: Բայց հրապարակականութեան համար պէտք են մամուլի հասարակական օրգաններ, որոնցից զուրկ են Անդրկովկասի բոլոր քաղաքները, բացի դրեթէ միայն Քիֆլիսից, որովհետեւ նոյն իսկ Բաքուն ու Բաթումը ունին հասարակական թերթեր միայն մի-մի հատ, որ ասել է թէ դոքա չեն կարող զանազան ուղղութիւնների թարգման հանդիսանալ:

Քաղաքային ինքնավարութիւն— առանց հրապարակականութեան անհրաժեշտ միջոցի— դոքա զաղափարներ են, որոնք իրար բնաւ չեն բռնում: Քաղաքային խորհրդարանները միմիայն իրենք բաւական չեն այդ գործի համար, որովհետեւ մամուլի զբաղելը քաղաքային գործերով կատարում է աւելի լայն հայեացքների համաձայն, քան այդ սովորաբար կատարում է խորհրդարանների սահմանափակ շրջաններում, ուր հատ-հատ եսական անձերի ազդեցութիւնը սովորաբար խեղղում է ամեն անաչառ քննադատութիւն, բացի այն, որ առանց մամուլի աջակցութեան՝ խորհրդարանում եղած պայքարները լսելի չեն լինում մեծ հասարակութեան. հետեւապէս նաքա չին կարող ստեղծել հասարակական կարծիքի հոսանքներ, որոնք անհրաժեշտ են հանրական գործերին որոշ բայց և ուժեղ ուղղութիւն տալու համար:

Փաւառական մամուլի գրեթէ կատարեալ բացակայութիւնը մեզնում մի ցաւ է սակայն, որին չի կարող դարմանել անհատների լոկ բարի կամքը. հետեւապէս լոկ ցաւելով մենք պործնական խորհուրդ տւած չենք լինիլ: Մնում է, ուրեմն, որ Քիֆլիսում հրատարակող թերթերը ստանձնեն մեր երկրի բոլոր քաղաքների ինքնավար գործունէութեան արձագանք լինելու, որպէս նաեւ նորան քննադատելու պաշտօնը:

Այդ պաշտօնը ներկայումս կատարում է շատ թերի կերպով, աննշան չափով և պատահական տեղեկութիւնների ձևով: Մինչդեռ մեր սպասելիքը այն է, որ տեղական թերթերը զաւառական ինքնավարութեան մասին տեղեկութիւնների համար աւանձին բաժին չատկացնեն ու ամենայն յրջութեամբ հետեւեն զաւառական քաղաքների ինքնավար կեանքին:

Այն, ինչ տեղական ռուսաց թերթերը կատարում են Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան համար (հայոց թերթերը այդ խնդրով գրեթէ բնաւ չեն զբաղւում), այդ նոյնը, թէև աւելի նւազ չափսերով, սահմանափակելով կարևորագոյն շահերի շրջանակի մէջ, բայց և այնպէս սիստեմատիկական կերպով պէտք է կատարւի Անդրկովկասի մնացեալ քաղաքների համար, որոնք զուրկ են իրենց յատուկ տեղական թերթերը ունենալու հնարաւորութիւնից:

Դրդւած այդ կարիքին բաւարարութիւն տալու անհրաժեշտութիւնից, մենք հրաւէր ենք կարդում մեր գաւառական գործիչներին՝ հետեւել իրենց քաղաքի ինքնավարութեան գործին և ըստ կարելւոյն ֆակտային տեղեկութիւններ հաղորդել մեզ՝ այդպիսի բաժին սիստեմական կերպով տանելը հնարաւոր դարձնելու համար:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

ԾՈՎԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

(Շ. ԱՅՎԱԶԱՎՍԿԻ)

(ՏՊԱՌՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

ԱԼԷԶԱՆԴՐ ԺԱՏՈՒՐՆԱՆԻ

Ծով, ծով և անվերջ ծով ..

Ծովն արևածագին, երբ առաջին ոսկեշող ճառագայթները կախարհական զոններով խաղում են նրա կամ անդորր, կամ մեղմ լուզող մակերևութին.. Ծովն արևամուտին, երբ վերջին ճառագայթները հրաժեշտի ջերմ, ալրող համբուրներ տալով մաքուր, հալելանման ջրերին, կարծես, ամօթխածութեան զգացմունքից, ծովի երեսն սկսում է կրակել, շառագունել... Ծովը կատաղած ու վրդոված՝ լեռնանման ալիքներ իրար վրա գիզելիս և սպիտակ փրփուրով առազոտ ավերն ու կարծր ժաշուրը լիզելիս... Ծովը լուսնեակ գիշերին՝ կաթնաշող լոխի տակ քաղցր նրբհեղիս... Վերջապէս, ծովն անշարժ, կաշկանդւած, ծովը շարժուն, կեանք առած... Ահա աչն անվերջ, աչն անհուն և զարմանալի պօէզիան, որ իւր փալլուն տաղանդով և զօրեղ վրձինով աչնալէս կենդանի պատկերացնում է մեր աչքի առաջ հռչակաւոր Ալիազուլսկին—ծովի ալը մեծ բանաստեղծը, Մանելով՝ Ալիազուլսկու պատկերահանդէսը, որ բացւած է Մոսկւայում, զիտելով նրա պատկերները, կարծես, քեզ ծովի վրա էս զգում. զու տեսնում ես բնութեան ալի հզօր տարերքի ամբողջ ուժն ու մեծութիւնը, նրա բոլոր փալլն ու գեղեցկութիւնը՝ Յ' սարսուռ ազդող զալրութ, և՛ կախարդիչ անդորրութիւն, և՛ ալիքների անզուսպ, մոլեգին չարութիւն, և՛ ծովի անհուն, լարի տրամագրութիւն կամ ջրերի պօէտիկական խաղ, թեթև ծփումն—ալը բոլոր, ասես կալէդոսկոպում, չաջողաբար դալիս անցնում են աչքիդ առաջից՝ Հանճարեղ ծովանկարիչը հանդէս է զրել 32 մեծ ու փոքր պատկերներ, որոնք արդիւնք են միաչն երկու տարւալ աշխատութեան—պատկերների մեծ մասը գրւած է 97 թւականին, իսկ մնացեալը՝ 96-ին։ Որպիսի անօրինակ բեղմնաւորութիւն։ Նկարիչն արդէն բոլորել է իւր

կեանքի ութսունամեակը—մի հասակ, որ առհասարակ թուլութեան և ապիկարութեան կնիք է դնում մարդու և՛ մտքի, և՛ տաղանդի վրայ: Սակաւն ալեգարդ նկարչի տաղանդն իւր զարմանալի ուժով դեռ կուր է մղում ժամանակի աւերիչ ժանիքի դէմ: Ծովի բանաստեղծի ոգևորութիւնն անվերջ է և անլստակ, որպէս և ինքը ծովը: Յալտնի է, որ տաղանդով օժտւած ամեն մի մարդու կեանքում—լինի նա բանաստեղծ թէ վիպագրող, նկարիչ թէ արտիստ—վերջապէս, հասնում է այն մոմէնտը, երբ տաղանդը իւր զարգացման զագաթնակէտին հասած՝ ալ ևս չէ զօրանում, չէ առաջադիմում, ալ ընդհակառակը՝ սկսում է թուլացումն, լետագնացութիւն: Եւ սուտ չեն ասում, որ բախտաւոր է տաղանդի այն ներկալացուցիչը, որ կարողանում է կանգ առնել ալդ սահմանակէտի վրայ: Սակաւն զառամեալ նկարչին, կարծես, օտար է ալդ սահմանակէտը: Որպէս հանճարեղ պօէտ Վիկտոր Հիլգօն, որպէս մեծանուն հռետոր և մտածող Գլադստօն, նա չլիտէ ինչ ասել է ծերութիւն, Նրա մի քանի պատկերները, ինչպէս օրինակ՝ «Ծովափնեալ յորձանք Բիարրիցի մօտ», «Կնեպըը գիշեր ժամանակ», «Սաֆօի ժալօը» և այլն, նկարւած են ալնպիսի ուժով, ալնպիսի երիտասարդական խանդով ու աւելնով, որ ուղղակի կախարդում և ապշեցնում են նաւորդին: Ալվազովսկին խրիմի զաւակ լինելով, լալտնի է, որ ալդ բանաստեղծական թերակղզին, որ գիշեր-ցերեկ պճնաղարդ հարսի նման նաւում է Սև ծովի հալւուն, շատ անգամ է ոգևորել իւր մեծ զաւակին: Սև ծովն ամենասիրած մոտիւն է եղած միշտ ծովի բանաստեղծի համար: Այս անգամ էլ նրա պատկերահանդիսում նշանաւոր տեղ է բռնում ալդ թերակղզին իւր ծովափնեալ հրաշալի տեսարաններով—«Ծովափն անդորրութիւն խրիմի ափերի մօտ», «Եալթալի սարերը», «Ալ-Պետրին ծովի կողմից», «Լուսնեակ գիշեր Եալթալի մօտ» և այլն:

Տողերիս գրողն առիթ է ունեցել մի ամառ ապրելու խրիմում և աչքով տեսնելու ալդ թովիչ պատկերները: Որպիսի կենդանութեամբ, որպիսի փալլով և յառուռուն գոյներով մեծ նկարչի վրձինը պատկերացրել է նրանց անբարբառ կտաւի վրայ: Ալդ վրձինի հետ ալս դէպքում թուլ կերպով մրցում է միայն լեհայոց անւանի բանաստեղծ Միցկևիչի քնարը, որ բաղմամբիւ «Սոնետներում» ալնպիսի գեղեցիկութեամբ և պօէտիկական փալլով երգել է խրիմի թերակղզու բոլոր հրաշալիքները:

Ալվազովսկին գեղարուեստական աշխարհի հսկաներից մինն է: Եւ մենք չենք վստահանում ու նպատակ էլ չունենք նկարագրելու ալստեղ նրա մէկը միւսից շիւղեցիկ ստեղծագործութիւնները, որոնք զարդարում են նրա պատկերահանդէսը: Ալդ ստեղծագործութիւնները պէտք է աչքով տեսնել, պէտք է ժամերով կանգնել ու նայել նրանց՝ զգալու համար թէ որքան ուժ ու խորութիւն կալ նրանց մէջ: Իսկ նկարագրել—անկարելի է և ապարդիւն: Այս պատկերահանդէսը նման չէ այն պատկերահանդէսներին, որ

մէկ կամ երկու նկար միշտ կաղմում են բոլոր պատկերներին «աչքը» կամ, ինչպէս ռուսերէն ասում են, «ГВОЗДЬ ВЫСТАВКИ»: Հանճարեղ ծովանկարչի պատկերահանդէսն ընդհանուր առմամբ ինքը «աչք» է:

Պատկերահանդէսում կան մի քանի նկարներ, որոնք ծովի բանաստեղծի ժանրից դուրս են և համեմատաբար թույլ են, օրինակ՝ «Ալե-Պետրի վրա», «Ոչխարներ», «Սալգիր և Չաթըրդադ»: Ասում ենք, համեմատաբար, որովհետեւ հէնց այդ պատկերները, գուցէ, պատիւ բերէին ուրիշ շատ անւանի նկարիչներին: Բայց երբ նրանց համեմատում ես նոյն նկարչի միւս աչնպիսի դեղարեւոտական մեծ-մեծ պորձերի հետ, որպիսիք են «Արեւածազը ս. Հեղինէի կղզում», «Բրիտտոսի ման գալը ջրի վրայ», «Փոթորիկը Կովկասեան ավի մօտ», «Բոսֆորը գիշերուաչ ժամին», «Եւրոպական նաւախումբը Կրետէ կղզու մօտ» — զգում ես նկատելի տարբերութիւն:

Ալլադովսկու պատկերահանդէսում բացի մեր չիշածներից և ուրիշ փոքրադիր նկարներից, կան էլի երկու բաւականին մեծ պատկեր, որոնք ընդհանուր հետաքրքրութիւն են զարթեցնում, բայց ցանկալի բաւականութիւն չեն տալիս աչդ հետաքրքրութեան: Առաջինը կոչւում է «Երազ», որը պատկերահանդէսի հէնց երրորդ օրը, ինչպէս տեղական լրագրերը հաղորդեցին, նկարչի հեռազրի համաձայն՝ ծածկւեց կարմիր մահուդով և ալցեւողներին ցոյց չէր տրւում: Դա Ռուսաստանի ներքին կեանքից առած ալաբանական մի պատկեր է, որ ներկայացնում է իրեն՝ նկարչի առած ալաբանական մի պատկեր է, որ ներկայացնում է իրեն՝ նկարչի տանկարից, որ զուած է պատկերի կեղքին, զղայինք աչն, որ աչդ «Երազը» աչքան սուրեկտիւ մի գործ է, որ միաչն իրան նկարչին է հասկանալի և և կողմնակի մարդուն ոչ մի որոշ գաղափար չէ տալիս: Դաւով երկրորդ պատկերին, որ կոչւում է «Տրապիզոնի կոտորածը» և վերաբերում է վերջին տարիների աղէտներին, իրան ասած, մեղ վրաչ չիսղեց աչն ճնշող և սրտաչոյղ տպաւորութիւնը, որին սպասում էինք: Դեռ պատկերը չտեսած, մենք մեղ երեակաչում էինք անզուսպ բարբարոսութեան մի արիւնաներկ, սրտախորով տեսարան, որ վերջին անպատմելի աղէտների տպաւորութեան տակ՝ իւր հզոր վրձինով պատկերացրել է հանճարեղ հաչաղղի նկարիչը: Այսպէս մեր երեակաչութիւնը միաչն երեակաչութիւն մնաց: Պատկերի աջ կողմը, հեռում երևում են լեռներ, որոնց ստորոտում փռած է կաշաչի մէջ թաղած և մինչև ծովափը տարածած քաղաքը: Աջ կողմը հանդարտ ու անչարժ. ծովն է: Ծովի ավին տեղի է ունենում կոտորածը. երևում է խառնիճաղանձ բազմութեան պէս մի բան և ինչ որ իրարանցում. թէ ինչ է կատարում աչնտեղ — աչդ անկարելի է պարզ աչքով տեսնել. ոչ կոտորածներն են երևում, ոչ էլ կոտորողները, կոտորածի մասին թույլ կերպով գաղափար է տալիս միաչն աչն արիւնը, որ ավից հոսելով զէպի ծովը, տեղ-տեղ ներկում է ջուրը: Միաչն աչդ արիւնին նաչելով, որ

Ներկել է անհուն ծովի եզրը միայն, և ֆանտազիան օգնութեան կանչելով՝ զգում ևս թէ արեան ու արտասուքի որպիսի փոթորկալից ծով պէտք է բացւած լինի անտեղ կոտորածի տեղը—մի ծով, որը պատկերացնելու համար հարկաւոր է հանճարաւոր նկարչի կարող վրձինը. սակաւն աչս անգամ վրձինը տրամադիր չէ եղած ցոյց տալու իւր զարմանալի ուժը: Որքան նկարչի ընտրած նիւթը սրտաւոյզ և սրտառուչ է, նոյնքան հանդարտութիւն և մի տեսակ սառնութիւն է փչում պատկերից, Նա չէ կրում խորին ոգևորութեան և հոգեկան լուզմունքի աչն կնիքը, որ կրում են մեծ նկարչի միւս գործերը: Այդ պատկերը անդորր տրամադրութեան ծնունդ է...

Տեղական ամբողջ մամուլը, ինչ ասել կ'ուզէ որ, ընդհանուր զարմանքով և հիացմունքով է խօսում ծովի բանաստեղծի ահագին, անվիճելի տաղանդի մասին: Բայց իւր զարմանքից և հիացքից, մամուլը ոչինչ չէ գտնում ասելու: Եւ ինչ ասի: Ալվազովսկին վաղուց արդէն հասել է փառքի, մեծութեան աչն կէտին, երբ կրիտիկան նրա վրա ոչ թէ վերելից ներքև է նայում, այլ ներքելից վերև:

Պատկերահանդէսը բացւած է բարեգործական նպատակով:

Մոսկա

20 մարտի, 1898 թ.

(Այս լօղւածի առթիւ խմբագրութիւնս դիմեց մեր աշխատակից Նկարիչ պ. Դ. Բաշինջաղեանին, խնդրելով մեզ չափանել գեղարեստական շրջանների մէջ կազմւած կարծիքը Ալվազովսկու մասին, և ստացանք հետեւեղ գրութիւնը):

«Ալվազովսկու հանճարը իւր գագաթնակէտին հասաւ լիսունական թւականներին և տեւեց մինչև հոթանասունական թւականները: Նա իւր «Խններորդ կոյտ» գեղեցիկ ծովանկարը արտադրեց 1858 թւին, «Ջրհեղեղը», որը պէտք է համարել նրա գլուխ գործոցը, Նկարեց 1864 թւին: Ունի նոյնպէս հրաշալի գործեր, որոնք պատկանում են 1848, 1856, 1868, 1870 թւերին: Նրա երկու շատ մեծագիր նկարները՝ Կոլումբոսի կեանքից, որոնք աւարտւեցան 1880 թւին, զգալի կերպով թուլ են առաջիններից: Աչնուհետև նկատելի եղաւ ծերութեան դրոշմը նրա բոլոր պատկերների վրա և տարեցտարի աճելով վերջերումս պարզ կերպով չափանի եղաւ վրձինի դաւաճանութիւնը: Եթէ առաջ տասը նկարից ութը գերազանց էր լինում, աչմաս տասից հազիւ երկուսը լինեն աղպէս: Եւ շատ հասկանալի է. 40—50 տարեկան առողջ տղամարդ և 80 ամնաջ ծերունին չեն կարող միևնոյն տեսակ ոգևորւել, լուզւել, սիրել, հրապուրւել:

Թէպէտ Ալվազովսկու հանճարը դեռ շարունակում է բաղմաթիւ Նկա-

րիչները հախանձը չարժեք, սակայն այդ հսկան իր բարձր պատանդանից
այժմ մի աստիճան իջած է: Բայց զարմանալին այն է, որ նա իր ութ-
սուն տարեկան հասակում կարողանում է աշխոյժով և զւարթ մտածելով
աշխատել:

«Գիւսեղորթի երեւելի մարինիստ Ախենբախ, Պետերբուրգի Գեղար-
ւեստ Ակադէմիայի հախկին պրոֆեսոր պէլզափիստ բարոն Կլոդտ և
նրանց նման շատ չափնի հկարիչները ծերանալով ընկել են, գեղարւեստի
համար մեռել են: Այս տեսակէտից Ալվադովսկին բացառութիւն է կաղ-
մում, չնայած որ նա միւսներից անհամեմատ առաջ է ծնւել:

«Գ. ԲԱՇԻՆՁԱՎԵԱՆ»

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. ՍԵՒԵԱՆԻ

XVIII

Հայերէն ներկայացումներ Թիֆլիսում.—Ներկայացումներ օտար երկիրներում.—Տիգրան Զոհմեան.—Գերասանների ճանապարհորդութիւնը.—Պ. Մանգինեանի 25-ամեակը.—Սիսիական բեմ Բաղում:

Հանգող ճրագի վերջին ցումունքների նման Թիֆլիսում Բաքալ խումբի ներկայացումներից չետոյ զեռ էլի երևում են հատ ու կտոր ներկայացումներ, որոնք—անկեղծ լինելու համար պէտք է ասենք—բոլորովին աւելորդ էին: Այսպիսի եղբակացութեան հասանք տեսնելով վերջերս խաղացած «Գաղտնի ուժ» և «Խեղագար»-ը, նույնը զգում ենք կարդալով «Ռճարագործի ընտանիքը» գրամալի աֆիշը, գլխաւոր դերը՝ Կորրադօ—պ. Աղաքեանի դերակատարութեամբ:

Վերջերս ուշադրութիւն է գրաւում աչն հանգամանքը որ օտար-երկրեալ հաջ գաղթականութիւններում, ինչպէս Տաճկաստան (Զմիւռնիա-ցում), Նոնպէս և Նգիստոյ և Ամերիկայում, հայերէն ներկայացումներ և հրեկութեան են կազմակերպւում: Մանաւանդ մեծ հետաքրքրութիւն է գրաւել Զմիւռնիայում ներկայացւած պ. Գ. Սունդուկեանցի «Թաթարալան»: Սունդուկեանցի անունը արդէն ծանօթ է տաճկահայերին աչն օրից՝ երբ 1890 թ. Կ. Պոլսում ներկայացւեց իշխալ հեղինակի «Պէպօն», ժողովրդա-կան բարբառի վերածւած, և ալզ երեկութը իւր ժամանակին թէ մամուլի և թէ հասարակութեան կողմից համակրանքով ողջունեց: Յանկալի էր որ հալոնիքից զրկւած ալզ պանդուխտների շրջանում ստէպ կրկնէին ներկայացումներ, որի համար անհրաժեշտ է կազմակերպւած թատրոնա-սէներին խումբ ունենալ, ինչպէս, մեր լսածին հայելով, կալ մի ալզպիսին Ամերիկայի հայերի շրջանում:

Մարտի սկզբներում Զմիւռնիալում թռքախտից վախճանեց մօտ 60 տարեկան հասակում հռչակաւոր հալ կոմպոզիտոր Տ. Չուհաճեան: Թէ Տաճկաստանում և թէ Ներսիսյանում նա միակն է իբրև կոմպոզիտոր տրեւելեան հղանակներին: Դժբաղդաբար Կ. Պոլսի հալ դերասանական խումբերը, նիւթականը աչքի առաջ ունենալով անշուշտ մեծ մասամբ թուրքերէն խաղալով, ալդ պատճառով էլ հռչակաւոր երաժշտի բոլոր աչքի ընկնող գործերը թուրքաց կեանքից վերցրած օպերէտներ են: Նրա քաղցրալուր եղանակները լսող արեւելցին անկարելի է որ միանգամից չհափշտակւի և աչնուհետև Չուհաճեանի եղանակները կը լինեն ամենամօտիկը իւր սրաին: Որքան քիչում ենք, նրա բեղմնաւոր գրչի արտադրութիւններն են 70 ական թաւաններից սկսած «Լէրլէրիջի Հօրհօր», «Ձէլէլէլէր», «Արիֆին հելլէսի», «Քէօսէ քէհեա» և Նգիպտական կեանքից իւր վերջին երկասիրութիւնը «Ձէմիրէ»: Բացի վերջինից, որ չէ խաղացած, նրա բոլոր աշխատութիւնները, բոլոր արեւելեան երկիրներում, որտեղ խաղացած են, ինչպէս Աթէնքում և Նգիպտոսում՝ բուն համակրանքի են արժանացել: Բացի մի քանի հատ ու կտոր հալ երգերի եղանակներից ունի մի խոշոր աշխատութիւն «Արշակ Բ.» օպերան, որ մեզ չալմի չէ խաղացած է երբ և իցէ թէ ոչ: Զմիւռնիալում, որտեղ անչափ մեծ է լուսնական ազդեցութիւնը և քաղաքը կարելի է լուսնական համարել, ալիսի տպաւորութիւն էր թողել Չուհաճեանի «Լէրլէրիջի Հօրհօր» օպերէտը, որ երբ նրա ներկայացումից չհետոյ 1889 թ. Ագամեան զնաց Զմիւռնիաներկայացումներ տալու, չոյնեբը չփոթելով «դերասան» և «լէրլէրիջի» բառերը Ագամեանի համար ասում էին:

— Իշտէ, լէրլէրիջին եկաւ:

Չուհաճեանի «Լէրլէրիջի Հօրհօր» գեղեցիկ օպերէտից Կովկասում ծանօթ են երկու կտորներ «Վանեցւոց խրախուզ» և «Ձմեռն անցաւ» վերնագրերով և «Ձէլէլէլէր» օպերէտից մի կտոր «Ձէլթուհոց մարչ» անունով և երգում են աղճատաւ:

Աւելորդ է քիչելը, որ Չուհաճեան մեռաւ վերջին ծալր չքաւորութեան մէջ: Վերջերս ստանում էր հալոց դպրոցից իբրև երաժշտութեան ուսուցիչ 3 ոսկի (մօտ 26 ռ.):

Չուհաճեանի բոլոր դժբաղդութիւնը նրանումն էր որ նա Տաճկաստանումն էր ծնւած և ալետեղ ապրած:

Բագաւալ դերասանական խումբը Կովկասի երկու մեծ կենտրոններում՝ ներկայացումները վերջացնելուց չհետոյ ձեռք առաւ ճանապարհորդական զաւազանը: օր. Ախաչեան, տ. Փառանձէմ, պ. պ. Արէլեան, Արաքսեան, Ստեփանեան և ուրիշներ մեկնած են Նրեան և ալետեղից՝ հիւսիսափն:

Կովկաս: Իսկ օր. օր. վարդիթեր, Մարի-Հրանուշ, պ. վրուր և ուրիշներ՝ Ալէքսանդրով, Կարս, և ապա միանալով օր. վարդուհու պ. պ. Պետրոսեանի, Յարութիւնեանի, Օհանեանի և Մամիկոնեանի հետ՝ Շուշի մի շարք ներկապցումներ տալու:

Մի որոշ շրջանում մեծ իրարանցում կալ պ. Ամիրան Մանդինեանի բնական գործունէութեան (?) քսանհինգամեակը տօնելու: Պր. Ա. Մանդինեանին համակրող լինելով հանդերձ, նկատենք հետեւեալը: Ճիշդ է, նա եղել է նախ սիրողների խմբում և ապա 2—3 տարի էլ իբր ղերասան՝ «Ճշտական» կոչւած ժամանակաւոր խմբում, և ցոյց է տւել մի որոշ տեսակի դերերում ընդունակութիւն: Ապա ամեն մի թատրոնական գործի հետ 1882 թւից եղել է իւր չարաքերութիւնները՝ միմիայն մնալով իբրև սիրող—amateur—դերասան և մասնակցելով սիրողների երբեմնակի տրուդ ներկապցումներին. որքան մտաբերում ենք և չէ խաբում մեր լիչողութիւնը, 1882 թ. մինչև 1898 թ. տառն և վեր տարաւ ընթացքում չենք կարծում որ պ. Ամիրան Մանդինեանը 16 անգամ բեմ դուրս եկած լինի... Նշել են ամբողջ տարիներ որ չէ լսւել նրա անունը: Այն համոզմունքը, թէ բեմ դուրս եկած օրից քսան և հինգ տարի քստու անպատճառ լօբեկեան պէտք է կատարել, կրկնում ենք, աչք սխալ համոզմունքը երևի հէնց առիթ եղաւ չարգելի տ. Ս. Չմշկեանին հրաժարւելու իւր քսան և հինգամեակը տօնելու գաղափարից: Կարող էինք էլի մի քանի անուններ մէջ բերել, ինչպէս կամենում էք, ինչ-չափով ուզում էք վարձատրեցէք պ. Ա. Մանդինեանին, բալց ոչ ի վարձատրութիւն նրա «քսանհինգամեակ բնական գործունէութեան *»):

Բաղուն եկող թատերաշրջանի համար կաղմակերպելով իւր խումբը, ալժմ էլ մտածում է—իբր թատրոնի չարատեսութեան գլխաւոր գրաւական—սեպհական թատրոնական շինութեան մասին:

Կովելի միտք, և որքան շուտ իրագործւի՝ այնքան լաւ գործի համար:

*) Յօբելեանական ներկապցումը տեղի ունեցաւ Ազնւականաց թատրոնում 30 ապրիլի: Ներկապցորին՝ Քանդաժ օջախ (II գործողութիւն), Սիրտ (II գործ.) և Օսկան Պետրովիչը դժոխքում: Թատրոնը լիքն էր. չօբելեանին տրեցին մի շարք թանկագին ընծաներ և ողջունեցին ուղերձներով:

Ման. Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իսպանո-ամերիկական պատերազմը: — ծարագոյն Արեւելք

Իսպանիան ներկայումս պատերազմի մէջ է Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների մեծ հանրապետութեան դէմ, Կուբա կղզու պատճառով, որի մէջ ծագած ապստամբութիւնը Իսպանական տիրապետութեան դէմ ահա երեք տարի է պատերազմական դրութեան մէջ է պահում կղզին, առանց որ կարելի լինէր նախատեսնել թէ երբ պիտի այդ դրութիւնը վերջանայ: Կուբա կղզին ամենամեծն է Անտիլեան կղզիներից և գտնուում է Հիւսիսային Ամերիկայի Ֆլորիդա թերակղզուց ընդամենը հազիւ 250 վերստ հեռավորութեան վրայ: Նա Իսպանիայի ամենանշանաւոր կոյոնիան է և իւր կողքի մանր կղզիներով 118.833 քառակուսի կիլոմետր է, այսինքն այնքան մեծ, որքան Անդրկովկասի կէսը և մի փոքր էլ աւելի (Անդրկովկասը 222, 625 քառակուսի կիլոմետր, Հիւսիսային Կովկասը 224,221 քառ. կիլոմետր), մեծ մասը լեռնային է և ունի միայն 1.700.000 բնակիչ. երկիրը արտադրում է շաքար, ծխախոտ, սուրճ, բամբակ, կակաո, ինդիգո, եգիպտացորեն, բրինձ, թանկագին փայտեր: Առևտուրը մեծ մասամբ Հիւսիսային Ամերիկայի և ապա Անգլիայի և Գերմանիայի հետ է: Գլխաւոր քաղաքն է Հաւանա: Կուբայի գտնողն էր Կոլումբոս 1492 թ.: 1511-ին Իսպանիան նւաճեց կղզին, հիմնեց քաղաքներ, խրախուսեց որ Ամերիկայից նեգրներ բերեն կղզին, իբր ստրուկներ. յետոյ Իսպանական տնտեսական վատ սխտեմներով կըղզու ծաղկումը կանգ առաւ, մինչև որ 1765-ին թույլատրեց ազատ չարաբերութիւն Իսպանիայի հետ: Աւելի մօտ ժամանակներս Հիւսիսային Ամերիկան քանիցս ձգտումներ է ցոյց տուել Կուբան նւաճելու. մի աւարառու արշաւանք Լոպէցի առաջնորդութեամբ 1851 թ. անաջող վերջացաւ և Լոպէցը բռնեց ու կախեց Հաւանայում:

1868-ից մինչև 1878 թվականը Հիւսիսային Ամերիկայից խրա-
խուսուած մի ապստամբութիւն նոյնպէս ճնշւեց. 1880 թվականին
վերացւեց կզզում ստրկութիւնը. վերջապէս 1895 թվականին ծա-
ղեց մինչ այժմ տեղը աշխտամբութիւնը:

Այս վերջին ապստամբութիւնը դրդեց Իսպանիային ամենամեծ
զոհողութիւններ անել: Ապստամբներին ընկձելու համար Իսպանիան
ուղարկեց Կուբա մինչև 120.000 զօրք և զործը յանձնեց իւր կա-
րևորագոյն զօրապետներին, որպէս մարշալ Մարտինէց Կամպոս,
Վէյլէր և այժմ Բլանկո: Բայց մանաւանդ Վէյլէրի խստութիւն-
ները աւելի բորբոքեցին ատելութիւնը իսպանական տիրապետու-
թեան դէմ, որ և պատճառ եղան հանգուցեալ Կանովաս պահպա-
նողական մինիստր նախագահի անժողովրդականութեան (նա սպան-
ւեց), որից յետոյ յաջորդեց լիբերալ Սագաստայի մինիստրութիւնը,
որի օրօք արդէն ներկայ պատերազմը ծաղեց:

Կուբայի մօտ է և Պորտորիկօ կղզին, նոյնպէս Անտիլեան կղզ-
ղիների խմբից, Իսպանիային պատկանող, Կուբայից յետոյ ամենա-
կարևորը (9.144 քառ. կիլոմէտր, 750.000-ից աւելի բնակիչներով,
որոնցից 325.000-ից աւելի նեգրներ. իսկ Կուբայում 1 միլիոն
700.000 բնակչից մօտ կէս միլիոն աւելի նեգրներ են, մնացեալը
իսպանացիք կամ կրէօլներ, այսինքն խառնուրդ): Պորտորիկօյի
քաղաքական վիճակը սերտ կապուած է Կուբայի հետ:

Հիւսիսային Ամերիկայի ու Իսպանիայի մէջ պատերազմը պաշ-
տօնապէս ծագեց առաջին պահանջից, որ Կուբացիք լինեն ազատ: Այդ
մասին վերջնագիր հաղորդեց Իսպանիային, որը մերժեց. պա-
տերազմը սկսեց ապրիլի 22-ին, առանց պաշտօնական յայտարարու-
թիւնների: Հիւսիսային Ամերիկայի սենատը վճռել էր յայտարարել նաև
որ «Կուբան լինի անկախ». բայց պատգամաւորների ժողովը այդ
վերջին պահանջը դուրս գցեց: Իսպանիան, սակայն, Սագաստայի
լիբերալ մինիստրութեան օրօք, արդէն պատրաստել էր Կու-
բայի «ինքնավարութեան» ծրագիրը, որ և ապա յայտարարւեց,
երբ արդէն պատերազմը սկսել էր, այն է ապրիլի վերջը. դորա
համաձայն Կուբայում գեն. Բլանկօն ընտրութիւններ նշանակեց,
որոնք և կազմեցին կուբական պարլամէնտը, ուր միաձայն որոշւեց
ընդդիմանալ Հիւս. Ամերիկայի ներս խուժելուն դէպի կղզին: Բայց

ապստամբները վճռել են այլ ևս ոչ մի բանակցութիւն չունենալ խաղանական կառավարութեան հետ և պատերազմել ընդունելով Հիւս. Ամերիկայի օգնութիւնը:

Իսպանո-ամերիկական պատերազմի ելքը տարակուսական չի կարող լինել. Հիւս. Ամերիկան երեք անգամ աւելի բնակիչ ունի, քան Իսպանիան, և շատ էլ աւելի հարուստ. ամերիկական հնարագիտութիւնն էլ յայտնի է աշխարհքին. Բացի այդ՝ Կուբան զրեթէ կաած է Ամերիկային, մինչդեռ Իսպանիան Ատլանտեան ովկիանոսով Կուբայից անջատւած է:

Ձեռյաճ դորան՝ Իսպանիան յանձն առաւ պատերազմը, պատուոյ խնդիր նկատելով այն. ամերիկացիք իրենց արշաւանքը տարածեցին նաև Ֆիլիպինեան կղզիների վրայ, ծայրագոյն Ասիայի ջրերու: Բայց ուր մի երկու ժամուայ ընթացքում, Մանիլա քաղաքի մօտ կործանեցին խաղանական ամբողջ նաւատորմը:

Կուբայում ամերիկացիք հաղորդակցութիւն են հաստատում ապստամբների գլխաւոր Գոմէցի հետ, օգնելով սորան. բայց ամերիկացոց ռազմագիտական պլանը դեռ ևս բաւականաչափ պարզւած չէ այս ապրիլի վերջը:

Եւրոպական պետութիւնները առայժմ բռնած են չեղօք դիրք, թէև սրտանց նոքա կը կամենային օգնել Իսպանիային, իբրև մի եւրոպական պետութեան, որը կալւածքներ ունի Ամերիկայում, ինչպէս որ իրենք ունին նման կալւածքներ: Բայց Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան տնտեսական մեծ կապերով կապւած են Հիւս. Ամերիկայի հետ, որը, նոցա իրական կողմնապահութեան գէպքում յօգուտ Իսպանիայի, առևտրական անբուժելի հարւածներ կարող է տալ նոցա, առանց ինքը հաւասար փնասներ կրելու նոցա վրէժինդրութիւնից. և իրօք, Հիւս. Ամերիկան արտահանում է Եւրոպա գլխաւորապէս ցորեն, բամբակ, կերոսին, որոնք անփոխարինելի են եւրոպացոց համար, հետևապէս եւրոպացիք այդ նիւթերը իրենց երկիրները ներմուծելու դէմ արգելք չեն կարող դնել: Բացի այդ, Հիւս. Ամերիկան մշտական վտանգ է սպառնում եւրոպացիներին՝ Ամերիկայում ունեցած կալւածքների նկատմամբ, և միշտ պատրաստ է խրախուսելու կամ ջառաջացնելու ապստամբութիւններ ընդդէմ իրենց եւրոպական մայր-երկիրներին:

Եւրոպացիք չեն միջամտում, բաց, բարոյապէս, Անգլիան Հիւս. Ամերիկայի կողմն է, Ֆրանսիան՝ Իսպանիայի կողմը, իսկ Վերմանիան իւր հակումները դէպի Իսպանիան որոշապէս չի արտայայտել, թէև ոչ մի կասկած չկայ որ նախապանիայի կողմն է իւր շահերով և զգացմունքներով:

Վերմանիայի կողմից չինական Վիսո-Չժոու փորտի գրաւումը սկիզբ դրեց քաղական մի իրարանցման, որի հետևանքը եղաւ հաւասարադօր չինական փորտերի գրաւումը Ռուսիայի և Անգլիայի կողմից Պիչիլեան ծոցում և Ֆրանսիացիների պահանջներին բաւարարութիւն տալը հարաւային Չինաստանում, որը սահմանակից է Ֆրանսիային պատկանող Տոնկինին և Աննամի թագաւորութեան: Պիչիլեան ծոցը, որ այդպիսով ընկնում է երեք եւրոպական մեծ պետութիւնների տիրապետութեան ներքոյ, մերձաւոր ջրային ճանապարհն է Յապոնիայի դէպի Չինաստան: Այդ հարաւանները որ կրում է Չինաստանը, առանց որ և է նիւթական ընդդիմադրութեան, մի կողմից վերջնականապէս հաստատում են Չինաստանի հիւսանդ դրութիւնը, և միւս կողմից՝ ազատում նորա մնացած տերրիտորիայի անւանական անձեռնելիութիւնը: Ստեղծւում է մի դրութիւն՝ նման Թիւրքիայի դրութեան, որի պետական անկախութիւնը և սահմանների անձեռնելիութիւնը շատ տարիներից ի վեր հիմնւած է եւրոպական պետութիւնների հակադիր շահերի վրայ, որի շնորհիւ ամեն մէկը հսկում է որ մի երկրորդը իրենից աւելի չշահէ, իսկ պատերազմի դէպքում՝ որ յարձակողը իմանայ թէ իւր դէմ կ'ունենայ որ և է առաջնակարգ պետութեան ընդդիմութիւն: Պիչիլեան ծոցը այն ջրային սահմանն է, որին ամենից մօտ է չինական կայսրութեան մայրաքաղաք Պեկինը. հէնց այդ կողմից է որ Յապոնիան միշտ կարող էր սպառնալի լինել Չինաստանին: Եւ Յապոնիան այսուհետև չի կարող յարձակում գործել Չինաստանի վրայ, առանց դաշնակից ունենալու որ և է մէկին կամ երկուսին այն պետութիւններից, որոնք ոտք են դրել Պիչիլեան ծոցում. նոյնպէս և այդտեղ ոտք դրած պետութիւններից ամեն մէկը չի կարող ազատ քայլեր անել դէպի կայսրութիւնը:

առանց իւր դէմ զինւած տեսնելու միւսին: Բայց Եսայիայի շահերին ամենից մօտն է Կորէան, որը սահմանակից է Զինաստանին և Ռուսիային և որի հարաւային ափը ողողում է Պիշիլեան ծոցը: Կորէայում Եսայիայի ունի բազմաթիւ հպատակներ և առևտրական գործեր: Ազատելով Կորէան չինական կաշարութեանը ստորադրած դրութիւնից, որի համար և Եսայիայի պատերազմ մղեց Զինաստանի դէմ, Եսայիայի յոյս ունէր իւր ազդեցութեան տակ զցել Կորէան: Իսկ դա կը փակէր Ռուսիայի ծաւալելիլ Խաղաղ ովկիանոսում: Դորա համար է որ Կորէայի կաշար Լի, երկրի խռովութիւնների միջոցին, ապաստան գտաւ ոռւսաց ղեսպանատան մէջ՝ Կորէայի Անուլ մայրաքաղաքում, ուր Ռուսիան մի վաշտ զօրք զրկեց կաշսեր անձը պաշտպանելու համար: Այժմ արդէն կաշարը վերադարձել է իւր պալատը. Ռուսիան պայմանաւորել է Եսայիայի հետ որ Կորէան պիտի մնայ անկախ պետութիւն, և որ եթէ Կորէան հարկ զգայ դիմելու իրենցից որ և է մէկի խորհրդին, օգնութեան և պաշտպանութեան՝ ոչ մէկը առանց միւսի համաձայնութեան գործ չբռնի Կորէայի նկատմամբ: Միւս կողմից՝ Ռուսիան պարտաւորել է չխանգարել Եսայիային Կորէայում իւր առևտրական և արդիւնաբերական գործերը զարգացնելու: Այս վերջին համաձայնութիւնը ստորագրեց Եսայիայի Տոկիօ մայրաքաղաքում ներկայ ապրիլի 13 ին: Կայացած համաձայնութեան վերջին կէտը զգացնել է տալիս, որ Եսայիային խոչնդոտ չպիտի դնւի Կորէան քուլտուրապէս «եսայիացնելու». իսկ Կորէան, եթէ մի շատ փոքրիկ սահմանագծով կպած է Ռուսիայի սահմանին, բայց և Եսայիայից բաժանւած է միայն Կորէյեան նեղուցով (շուրջ 250 վերստ ջրային հեռաւորութիւն): Այս պայմաններում Կորէան կարճ միջոցում ամբողջապէս կ'ընկնի Եսայիայի քուլտուրական ազդեցութեան ներքոյ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃ'Ի ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵՆՈՒ ՀԱՄԱՐ. (Տես սկիզբը Մուրճ № 1 և 2—3). Պր. Համալսապ խօշայեանց, արհեստաւոր, մեքենայապետի օգնական Թիֆլիսի Աւճալեան ջրանցքի, ուղարկելով խմբագրութեանս 1 ռ. 50 կոպէկ, իբր 50/0 իւր ամսական ռոճկի, խոստանում է նոյնը շարունակել մինչև ներկայ տարւոյ վերջը, խնդրելով իւր աչք լումաները Մուրճ'ի պարտքերը հանդցնելու գործին լատկացնել: Այսպիսով Մուրճ'ի պարտքը մնում է 5.148 ռուբ. 50 կոպէկ:

«ՄՈՒՐՃ» ՆԻՒՐՈՂՆԵՐ. (Սկիզբը տես 1897 № 11-12 և 1898 № 1 և 2-3). պ. Յակ. Յակոբեան՝ Թաւրիզի արհեստաւորներին, Նիկ. Տէր-Օւանէսեանի հասցէով. (Խմբագրութեան ընտրութեամբ):

ՊՐՈՖ. ՄԱՐՐԻ ՅՕԴԻԱՄԸՆ ոտն համարում տալիս ենք մեր ընթերցողներին իւր լիակատար թարգմանութեամբ, որ մի պատասխան է վրաց լալանի բանաստեղծ Ակակի Մերեթելի թեթեամիտ չարձակումներին հայերի վրայ: Յօդւածը, թէև նորա գրողը արեւելագէտ գիտնական է, բայց նշանակւած է ընդհանրութեան համար: Ասելի մեծ լիակատարութեան համար չօգւածին կցել ենք պ. Մարրի երկու ամիս առաջ տպած առաջին ընդդիմախօսութեան համառօտած բովանդակութիւնը:

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ պ. Ատոմ Շահէն, ուսումնաւարտ Կ. Պոլսի Կենտրոնական վարժարանի, ուղևորեց Կերմանիա բարձրագոյն ուսում ստանալու համար, երեք ամսուայ օժանդակութեամբ պ. Առաքել Ծատուրեանի կողմից:

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ապրիլի 18-ին երեկոցեան ժամանեց Նրեան ու 19-ին Սբ. Պողոս. Պետրոս եկեղեցում քարոզ խօսեց, ցաւելով որ Ս. Էջմիածինը մինչև այժմ չուէց Աստածաշունչ զիրքը ժողովրդի ձեռքը: ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԸ: Հաղորդում են, թէ նոր կանոններով բացելիք հալոց եկեղ. ծխական զպրօցներում ենթադրւում է ամեն դասարանում լատկացնել հայոց լեզւից չաբաթական վեց դաս:

ԹԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ: Ռուսիայի 16 նահանգներում, պաշտօնական չափադրությունների համաձայն, ներկայումս տիրում է սով կամ ծալրաչեղ կարօտություն. դոցանից ամենից շատ կարօտ են 7 նահանգ՝ 14 միլիոն բնակչով: Օգնություն հասնելու գործի գլուխ կանգնել է «կարմիր խաչի» ընկերությունը, որին հետևեց նաև «Ազատ տնտեսական ընկերությունը»:

ԹԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ: Ներկայումս կովկասում ընդհանրապես հացի թանկություն է. Թիֆլիսում հացի ֆունտը մի կոպեկով թանկացել է: Լաւ տեսակի ցորենի փութը 1 ու. 40 կոպեկ է, մինչդեռ անցեալ տարի աչս ժամանակ նա արժէր 95 կոպեկ. միջին տեսակը ալժմ 1 ու. 20 կ. է, առաջ 40 կոպեկով պակաս: Շուշում ցորենի գինը հասնում է 2 ու. 20 կոպեկի:

Մանաանդ ղգալի կարօտություն կաջ Զանգեզուրի Սիսեան գաւառամասում (Բռնակոթ և ալլ գիւղեր). թանկություն կաջ և Նոր-Բալաղէղի, Ղուբայի, Գանձակի և Ղաղախի գաւառներում, Գարալագեղի լեռնային մասում, Ալէքսանդրապոլի և Ախալքալաքի վերին մասերում—Վերջին անգամ եկած ձիւները շատ կոտորածներ արին անասունների մէջ, և ալժմ նաև միսը թանկացել է: Թիֆլիսում մնալաճառութեան խնդիրը ամենահերթական խնդիրներից մէկն է դառել, որովհետև տաւարի միսը 8 կոպեկով ծախել չեն չօժարում մնալաճառները, որոնց տաւարի մսի ֆունտը ալժմ նստում է 10¹/₂—11 կոպեկ, ալնպէս որ հաշտում են, մի պուղի մէջ նոքա ստիպած են, ցալժմեան սակագնով, 80 կոպեկից մինչև 1 ու. 20 կոպ. վըաս կրել:

Գիւղատնտեսական ընկերութեան մէջ հարց չարուցեց կովկասի կարօտեալներին օգնութեան համար հանգանակություն ժողովելու թոյլտուութիւն խնդրելու մասին:

—Թիֆլ. քաղ. վարչ. անգամ իշխ. Ալ. Նրկալնաբաղով-Արղուն թեանին ուղարկած են նւէրներ 311 ու. 30 կ, որ և անյապաղ ղրկեց Ղաղախի գաւառի Վերին-Աղզան գիւղը՝ բնակիչներին օգնելու համար:

ՏԱՃԿԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ:

Պարսկաստան: Վասպուրականից փախած Սալմաստի և ալլ գիւղերում ապաստանած հալ փախստականները օգնութիւն էին տալում Թաւրիզի Հալուհեաց ընկերութիւնից և մասնաւոր անձերից: Ապրիլի սկզբները նոցանից առանձին խմբեր եկան Թաւրիզ Հալուհեաց ընկերութիւնից ապրուստ կամ գործ խնդրելու և կամ Սալմաստ գնալու ճանապարհածախս ուղեւոր: Ընկերութիւնը ալլ առթիւ դիմումն արաւ հրաժարականը տւած առաջնորդ Սարաճեան

վարդապետին, որ դպրոցի հոգաբարձութեան հետ ալդ մասին խորհնու:

— Մակուի խանութեան մէջ ապաստանած փախստականները խնամատարութիւնը իւր վրայ էր առել չեղացի Հովէր. վերջինս նոցա վրայ վերահսկող էր նշանակել մի հաշ երիտասարդի: Բաւց մարտի վերջերքը տեղական մոլլաները համոզել էին խանի որդուն, որ խանութեան տեղապահն է հօր բացակայութեան պատճառով, որ հաշ ապաստանեալները, թուով մինչև 80 հոգի, դուրս քշեն երկրից, դէպի Շահթախտ, Արաքսի ափին, Կովկասի սահմանում: Բաւց նոքա սահմանն անցնել չկարողացան, և զուրկ ամեն միջոցներից, սպասեցին սահմանի մօտ, մինչև որ լուրը, Թաւրիզի վաճառականապետ Յոնանեանցի միջոցով, հասաւ Թաւրիզի Նահանգապետ Ամիր-Նիզամին, որը հեռագրեց հալածեալներին ետ բերեն և նոցա ամեն դիւրութիւն տան:

— Ախաթալաքի ճիւղը Հաւոց Բարեդ. ընկերութեան 1897 թականին ստացել է և բաժանել հազուստ և կենսական միջերք 19 ընտանիքի՝ բաղկացած 164 հոգուց. իսկ նոյն 1897-ին տեւել է բժշկական օգնութիւն, սնունդ, հագուստ, անկողին, դրամական նպաստ և ճանապարհածախս 337 հոգու. իսկ ընկերութեան ձեռքով դրամական օժանդակութիւն տրւած էր նոցա 662 ու 50 կոպէկ:

— Բարբուս կանաչք կազմակերպել են մի գործ՝ փախստական կանանց և աղջիկներին օգնելու համար, վերջիններին բուրդ բաժանելով՝ զգելու և մանկու համար. ալ և պատրաստութիւններ են տեսնւած՝ գորգ, կարպետ, չաւն գործելու արհեստները սովորեցնելու համար: Գորգագործութեան վարպետը հրաւիրւած է Վարաբաղից:

Բարու: Զատիկի թաթախման ևրելոյեան տեղական հաւոց աղքատանոցում փախստականներին ճաշ տրւեց: Սեղանն կառավարում և սպասաւորում էին Բաքւի տիկիներ և երիտասարդներ: Աղքատանոցը հոգում է 560 հոգի փախստականների, մեծ ու փոքր:

— Աբխազիայում և Ճիբուղիյում, ուր հաշերը 6—7 տարի առաջ միայն մինչև մօտ 15 հոգի էին, ալժմ բազմացել են, չնորհիւ տաճականաջ փախստականների, որոնց թիւը մեզ առաջմ անչալտ է:

— Վառնայից (Բուլղարիա) մեզ հաղորդում են, որ խմբերով հաշ փախստականները վերադառնում են Տաճկաստան, և քաղաքը սկսում է հաշ փախստականներով դատարկել:

— Կովկասի Հաւոց Բարեդ. ընկերութիւնը, որպէս երևում է նորա նոր տպած տեղեկագրից, ստացել է նւէրներ չօգուտ տաճականաջ փախստականների և ալ տառապեալների 1896 և 1897 թականների ընթացքում 50.118 ու 98 կ.: Վերջին գումարի մէջ է Դաշիական նպաստամատուց մասնաժողովի 17.979 ու 04 կոպ. և Առա-

քել Ծառուրեանի 10.000 ռուբլի նւէրը, 1000-ական ռուբլի նւիրողներն են եղած՝ հանգ. Ստ. Գէորգեանի ժառանգները, Ն. Կրասիլնիկեանի ժառանգները (Բաքու), Նսալի Փիթոյեան ընկ. (Թիֆլ.) և հանգ. Արիստյոմեանի եղբայրը. Հ. Մելիքեան (Բաքու) տւած է 750 ռ., 500 ռուբլի տւած են՝ Ա. Զարգարեան, Փ. Վարդաղարեան և Ընկ., Յովհ. Ծովիանեան, Գր. և Մն. Փրիզոնեաներ, Ն. Ն. Կրասիլնիկեանի ժառանգները (բացի վերը չիշած 1000 ռ.), Սահարբէլեան (Մոսկւա)։—400 տւած է Ա. Բ. Ղուկասեանց. մնացածները ալդ գումարից պակաս։ Ընդհանուր գումարի մէջն է նաև Արիստ. արքեպ. Սեղրակեանի հանգանակածից 4000 ռուբլին և Արմաւիրի վարչութեան ուղարկած 1000 ռ.։

—Թիֆլիս. Տիկ. Հակոբնուշ Մարտիրոսեանի ջանքերով Թանգոյեան կոչւած եկեղեցու տան մէջ պահուում է փախստականների համար հիւանդանոց, որին օգնում է նաև Կովկասի Հայոց Բար. Ընկ.։ Վերջինիս ընդհանուր ժողովում, ապր. 28-ին, ուր հաստատուեց Ընկ. խորհրդի առաջարկը՝ 1898 թ. օժանդակել ալդ հիւանդանոցին 600 ռուբլիով, երեք ամսաւ համար, որոչեց իրաւունք տալ խորհրդին, բացի ալդ գումարից՝ շարունակել օգնել մինչև տարւալ վերջը, եթէ օժանդակութիւն կրպահանջւի։

—Ռուսական Բասնի (Կարսի շրջան) 11 հաւաքնակ գիւղերում ապրող տաճկահալ փախստական-գաղթականների թիւն է մօտ 2000 հոգի, որոնք մեծ մասամբ թիւրքաց Բասէնից են։ Նոքա մեծ մասամբ 4-5 տարի առաջ են տեղաւորւած ալդ գիւղերում։

—Հիւս Ամերիկայի Ուստր, Փրովիդէնս և շրջակալ տեղերից վաղինակ և Մաչտոց վարդապետների նախաձեռնութեամբ 1000 դոլարից աւելի հաւաքւեց ու զրկւեց Կ. Պոլսի պատրիարքարան և Խարբերդի որբանոցը։

—Նիւ Եօրք քաղաքում կազմւել է Որբախնամ Հայուհեաց ընկերութիւն, որը նպատակ ունի Հայաստանում իւր հաշւով մի որբանոց պահել, իսկ առաւօժ որոշել է վեց որբ որդեղիր պահել հայոց որբանոցներից որ և է մէկում։

—Վաղարշապատ։ Բժշկ. Գ. Թամամեան, Վաղարշապատում եղած ժամանակ, ճրի ալցիւլէլ է գիւղի և վանքի դոմանոցի հիւանդ փախստականներին ու տեղացի չքաւորներին և բժշկական օգնութիւն հասցրել աւելի քան 80 հիւանդների, իւր վրալ վերցնելով բոլոր հիւանդների դեղերի ծախքը։

Վաղարշապատ գիւղում ապաստանած փախստականների թիւը մարտի կէսին հասնում էր մօտ 100 տուն, իսկ էջմիածնի գոմանոցում ապաստանածները թիւն է 200 հոգուց աւելի։

—Ա. Լյմիածնի Արևոզը, 26 լուն, 1898 թ. վճռեց աւանդա-
դրամների տուժարի մէջ մուծանել Ալաշկերտի գաղթականների անու-
նով հանգանակած փողի մնացորդը՝ ահն է 10.250 ռ. ոսկի փողով,
որ հաւասար է 15.375 ռ. թղթադրամի:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

Գր. Ջանշիեւի հրատարակած «Ներքալական Օգնութիւն» ռու-
սերէն ժողովածուի վաճառումից պոչացած դումարից ուղարկւած է
Կ. Պոլսի ռուսաց դեսպանատունը 35.000 Ֆրանկ: Ժողովածուն, որ
տպւած էր 3.600 օրինակ, ալթմ սպառւած է, և շուտով լոյս է տես-
նելու երկրորդ տպագրութեամբ: Ի դէպ կարող ենք տեղեկացնել, որ
ալդ շքեղ, մեծածախս և բազմաթիւն հատորի հրատարակութիւնը
կարելի է եղել շնորհիւ հարուստ հաշերից ուժանց, որոնք ժողովածուն
լոյս ընծալելուց առաջ ստորագրւած են եղել ամեն մէկը մինչ տաս-
նեակ օրինակ:

Զւիցերլանտ: Նիւշատէլում լոյս տեսաւ հայերին նպաստող կոմի-
տէների զեկուցումը ալս խորագրով՝ Rapport sur l'oeuvre des co-
mités suisses de secours en faveur des Arméniens 1896-'897, Pub-
lié par le Bureau central de Newchatel. Attinger frères, 1897.
56 էջ, 13 պատկերներով. արժէ 30 սանտիմ:

Ալդ զեկուցումից երևում է, որ ամբողջ Զւիցերլանտում ալդ նպա-
տակով հաւաքւած է 1896-97 թականներին 689.044 Ֆրանկ (ալ-
սինքն ռուսաց փողով 257.000 ռուբլի):

—Չմիսնիա: «Ներսէսեան Որբասիրաց Ընկերութիւնը», հիմնւած
1897-ին մարտի 30-ին, որպէս երևում է իւր նոր հրատարակւած
տեղեկագրից, պահպանում էր 1897 թ. վերջը 34 որբ: Ընկերու-
թիւնը մուտք ունեցել էր մարտի 30 ից մինչև դեկտ. վերջը 35.083
ղրուշ:

—Ամերիկական Բորդ Ընկերութիւնը ունի որբանոցներ, ուր
պատասպարւած են 3000 ից աւելի որբեր: Ընկերութեան հաւաքած
փողերը 1897 թ. ընթացքում եղել է 2.700 ֆունտ ստերլինգ (=մօտ
27.000 ռուբլի), որից հալ որբերի համար մսխւած է 1.050 ֆունտ
ստ.: Ընկերութիւնը նաև ներկայ 1898 թ. իւր գլխաւոր հոգացողու-
թիւնը նւիրելու է հայկական կոտորածներից լաւաջացած հալ որբերին:

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՈՍՏԻԳԱՆՈՒԹԻՒՆ: Կովկ. կառավարչա-
պետի զիւանում պատրաստւած են երկու պրօէկտներ՝ աւաղակու-
թեան զէմն աւանելու համար: Պրօէկտներից առաջինը և գլխաւորն է՝
Объ учрежденіи полицейской стражи въ Закавказскомъ краѣ:
Ալդ օրինագծով մտադրութիւն կալ փոխել 1861 թւին հաստատւած
գաւառական պահապանութիւնը (զեմսկայա ստրանժա), որը կամենում

էին բարեփոխել զեռ. ևս 60-ական թւականներէ վերջում: Մի պրոէկտ կազմեց նաև 1838-ին: Նոր պրոէկտը ի նկատի ունի ամբողջ Անդրկովկասը, ի բաց առած Սևծովեան նահանգը, ուր 23 մայիսի 1896 թւի օրէնքով հաստատուած են զաւառական (զեմստաւին) ուրեւադնիկներ: Ծրագրուած պահնորդութիւնը (ստրանժա) կոչուելու է ոչ զեմստաւին, այլ ոստիկանական պահնորդութիւն, և զա պիտի ստորագրուի ոչ թէ զինւորական վարչութեան, այլ ոստիկանութեան (նահանգապետի). բայց նա կազմուելու է աշխարհի անձերից, որոնք զինւորական վարժութիւն են ունեցած, ընդունակ վարելու հրացան և ձի, և նորա մէջ պիտի մտնեն զօրաց սպաներ առանձին տեսակի: Այդ ոստիկանական պահնորդութեան մէջ ընդունուելու համար առաւելութիւն տրուելու է ռուսներին և մանաւանդ նոցա, որոնք զինւոր են եղած, և կարելիին չափ խուսափելու են ընդունել տեղացիներ աշխարհից, ուր պէտք է ծառայեն: Պահնորդութեան մէջ բարձր աստիճան ունեցողները կոչուելու են ուրեւադնիկ: Նա կատարելու է աշխատանքները ստրանժայի քոլոր պարտականութիւնները, բայց իշխանութեանը իրաւունք է տրուում ուրեւադնիկներ նշանակել աշխարհում, որոնց ժողովուրդը առանձնապէս շատ գողեր ու աւազակներ է տալիս: Այդ ուրեւադնիկների պարտականութիւնները մօտաւորապէս նոյնն են լինելու, ինչ որ ունին ուրեւադնիկները Սերպական Ռուսիայում, և զեմսկիչէ ստրանժայի՝ Լեհական թագաւորութեան մէջ: Այդպիսի ուրեւադնիկներ իրաւունք ունին կալանաւորել, խուզարկել, հարց ու վործի ենթարկել որոշ դէպքերում: Այդ կարեոր է դատուած աշխատողով, որ Անդրկովկասում կատարելապէս բացակայում է զիւղական ոստիկանութիւնը:

Պահնորդութեան ծառայողները, իրենց ծառայութեան միջոցին, պիտի վաշելեն նոյն իրաւունքները, որպէս պահապան զինւորները (չասովնոյ), աշխատէ որ նոցա հասցրած վիրաւորանքի համար մեղաւորները պիտի ենթարկեն աշխատիքների, որպէս նոքա, որոնք վիրաւորում են և ընդգրկմանում կարաւուններին և չասովնոյներին: Նոյն կարգն է և Լեհաստանում: Բայց և ապահովութեան ոստիկանութեան ծառայողը իւր լանցանքների և զեղծումների համար դատուում է զինւորական դատարանով:

Ռոճիկներ ծրագրուած են՝ ոստիկանական պահնորդութեան ինսպեկտորին 2500 ռ. և 300 ռ. ևս զիւրանական ծախքեր. օֆիցերին 1,200 ռ., աւագ ուրեւադնիկներին 600 ռ., կրտսեր ուրեւադնիկներին 480 ռ., աւագ ստրանժայիկներին 360 ռ., կրտսերներին 300 ռ. Աւագ օֆիցերներին և ձիււոր ստրանժայիկներին, բացի ալ, ևս ձիււր ֆորաժի համար 100-ական ռուբլի: Ծրագրուած է ունենալ աւագ

ուրեաղնիկներ 122, կրտսեր ուրեաղնիկներ 244, աւագ ստրաժնիկներ 1027, կրտսեր ստրաժնիկներ 3.107: Ծախքը հաշւած է 2.387.540 ռուբլի տարեկան:

Պրոէկտի 37-րդ լոգւածը պարտաւորեցնում է ոստիկանական ստրաժի ծառայողներին «աշխատել սովորել տեղական բնակիչների լեզուն»:

ՆԼՆԵՆԴՐՈՐՖԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՐ, Գանձակի Նահանգի Ներքին գործի աւանի հաջ գաղութի լանտն վեհ. կաթողիկոսի տւած խնդրի համեմատ՝ Ս. Եջմիածնի Սինոդը ներկաջ տարւաջ չունւ. 23-ին վճռեց հրամայել Գանձակի հոգևոր կառավարութեանը՝ օրինական ճանապարհով պալման կապել Ներքին գործի հաջ գաղութի հետ, տալով նոցա Գանձակի Ս. Գովհաննէս եկեղեցու «Արաբլու» կալւածքից երևոտն դեսեատին հող, 25 տարի ժամանակով, տարին 300 ռ. վարձով: Պալմանը պէտք է լինի, որ Ներքին գործի հաջերը բնակութիւն հաստատեն ալի հողի վրայ և 25 տարին լրանալուց չետոյ, եթէ կամենան նորից 25 տարի ժամանակով վարձել ալի կտոր հողը, աւելացնեն 100 ռուբլի նախկին 300 ռ. վրայ:

Նկատելու է, որ ալի պալմանագրութեամբ ստեղծում է աջ գրութիւնը, որ վարստանում ունին ալսպէս կոչւած «խիզմները», որ բնաւ ցանկալի չէ. միթէ չիտուն տարուց չետոյ կարելի է առաջարկել գլւղացիներին, որոնք վարձու տրւա՜ հողի վրայ բնակութիւն հաստատած կը լինեն, դուրս գալ ու հեռանալ, և կամ վճարել տալ նոցա աջ վարձը, որ չիտուն տարուց չետոյ հաճելի կը լինի հողատիրոջը պահանջել գլւղացիներից: Ալի հասկացողութիւնը ներկայումս հնացած է, որովհետև նա ստեղծում է անապահով գրութիւն գլւղացիների համար, և ալի պատճառով դա հակա-հասարակական պալման է: Առաջարկում ենք Սինոդին փութալ և փոխել պալմանը, ապահովութիւն տալով, որ գլւղացիները առմիշտ կարողանան մնալ վարձու տւած հողի վրայ, առանց որ հողատէրը (Հայոց հոգևոր վարչութիւնը) կարողանաջ նոցա վռնտել իրենց բնակատեղից:

Հայոց հոգևոր կառավարութիւնը լաւ կ'անի, եթէ իւր ընդարձակ հողերում գաղութների հաստատի, յրինակելի գլւղեր հաստատելով և հոգ տանելով նաև թէ գլւղի կանոնաւորութեան, թէ չինելիք տների ճարտարապետութեան վրայ և ալլն:

ՄԻ «ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ» ԵՒՍ ՄՇԱԿԻՆ.—Մենք ստացել ենք Բալխանուց հետեւալ նամակը Մուրճ'ում տպագրելու խնդիրքով:

«Յարգույ խմբագիր!

«Թույլ տւէք ձեր պատւական «Մուրճ» ամսագրի մէջ զետեղել հետեւալ երկտողը:

«Մշակ»ի № 41-ում «Ներքին լուրերի» մէջ, Բալախանուց, չորս հոգու ստորագրութեամբ շնորհաւորութիւն կար տպւած «Մշակ»ի ամենօրեայ դառնալու առիթով: Մօտ ընկերներիցս մէկը—պարոն Խուրչիդ Մէլիք Աղամիրեանցը, ալդ ստորագրութիւնների մէջ տեսնելով իւր և իմ անւան սկզբնատառերը և ազդանունները ամբողջովին՝ կարծում է թէ ես դրած կըլինեմ: Բաւց միենոյն ժամանակ շատ զարմանում է և, չիմանալով թէ արդեօք լրջութեամբ թէ կատակով (իւր վերայ ծիծաղելու դիտումով) գրւած է՝ դիմում է ինձ հեռախօսով և բացատրութիւն պահանջում: Ես, իհարկէ, նույնչափ զարմացած և վրդովւած, նախ հաւատացրի նրան որ ես բոլորովին տեղեկութիւն չունիմ. երկրորդ, նրա հետ միասին աշխատեցինք դռնել ալդ մեղ «արջի ծառայութիւն մատուցանողին»: Անդ չաջողեց այստեղ գտնել: Ես խնդրեցի նույն ընկերիս մի փոքրիկ նկատողութիւնով «Մշակում հերքել ալդ մեր անունով շնորհաւորութիւնը: Նա էլ մեր երկուսիս անունով մարտի 17-ին գրում է «Մշակ»ի խմբագրութեանը ալդ հերքումը: Բաւց տեսնելով որ չի տպագրում, ութ օրից չետոյ մասնաւոր նամակով խնդրում է պր. Ա. Բալանթարից դոնէ ուղարկել մեզ ալն չորս հոգու ստորագրութեամբ Բալախանուց ուղարկած շնորհաւորական նամակը, որպէս զի նամակից կարողանանք իմանալ և գտնել հեղինակին: Բաւց մինչև այսօր մեր խնդրի պատասխանը չստանալով «Մշակ»ի խմբագրութիւնից, ստիպւած ենք զիմեկ Ձեզ, չարդոյ խմբագրի, չալտնելով որ մենք ամեննին դիտաւորութիւն չենք ունեցել շնորհաւորելու «Մշակ»ի ամենօրեայ դառնալը, և որ երբէք մեր «միակ բաղձանքը» «Մշակ»ի ամենօրեայ դառնալը չէ, ինչպէս գրել է երեւի մի մանկամիտ երիտասարդ:

«Ընդունեցէք խորին չարգանքս՝ Դաւիթ Յարութիւնեանց»:

«ՄՈՒՐՃ» և «ՄՇԱԿ» կամ «Մի ՊԱՏԱՍԽԱՆ»: Մշակ'ը իւր սեփականատէրերից ու խմբագիրներից մէկի ստորագրութեամբ տպել էր մի չօղւած, ուր նա դէմ առ դէմ էր դնում Մուրճ'ի խմբագրին և Մուրճ'ի աշխատակիցներին, միանգամաջն պարզ դիտաւորութեամբ անհամերաշխութեան սերմ ցանել Մուրճի և նորա աշխատակիցների մէջ, մի ձգտում, որ սակաջն նոր չէ: Ալդ առիթով մենք տպեցինք Մուրճի անցեալ համարում մեր աշխատակիցներից պ. Գ. Վանցեանի նամակը, Դորանից չետոյ մենք ստացել ենք մի ալ նամակ՝ մեր աշխատակից պ. Ա. Աղեւեանից, որ կը բռնէր ւսմագրիս երեք էջը: Շնորհակալութիւն չալտնելով ալդ գրութեան մէջ արտապաշտած զգացումների համար գէպի Մուրճը, մենք բաւական ենք համարում մեր աշխատակցի գրութիւնից միմիայն ալս վերջին սողերը տպելով:

«...Բաւց մի բան ձեզ համար» (Մշակի կամ «Մալումեանի») «հա-

մար) մուլթն է մնում. ալն համերաշխութիւնը, որ կալ Մուրճի խմբագրի և նրա աշխատակիցների մէջ, որը, ըստ երևութիւն, ձեր աչքն է ծակում: Իմացէք, որ ալլ համերաշխութիւնը ծառայում է լանուն Մուրճի խոր արմատներ զցելուն մեր հասարակական կեանքի բոլոր խաւերում և լանուն ալն դորժի, որի նպատակներից մինն է Մշակի մնուցած թուլթակների հոսհոսների և դատարկապորտ ֆրադէօրների ահագին լէգէօնները (ըստ Մշակի՝ նորա աջ թեւը) դէպի նոր մտքի ու մտաւոր լուրջ աշխատանքի ճանապարհը ուղղելու: Հասարակութիւնը Մշակին ուղղած շնորհաւորութիւնների միջոցին առիթ ունեցաւ տեսնել ալլ լէգէօնի պատկերը: (...) Այս էլ իմացէք, որ, հալոց մամուլի փոքրիկ ընտանիքի համար, պ. Մալումեան, դուք մի արատ էք, որից մեր մամուլը մաքրելը, ալ՛, մեր պարտականութիւնն է: Ասածս նոր բան չէ. և նրա իսկութիւնը ստուգելու համար կարող էք դիմել մեր գրականագէտների, երիտասարդութեան և ուսանողութեան մեծամասնութեանը:

«Ռիգա, մարտի 29. Ա. Աղեւեան»

ՆԻԷՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ:

—Ալլահվերտի Ալլահվերտեանց (Գուլթալիս) կտակով թողել է 500 ռ. լանուն վեհ. կաթողիկոսի:

—Տիկ. Եկատերինէ Նադիրեանց (Թիֆլիս) Նւիրել է վեհ. կաթողիկոսին 1000 ռուբլի:

—Յովնանեան ամուսիններ (Օդեսսա) Նւիրեցին Օդեսսայի աղքատաց հոգաբարձութեան 500 ռ., և եկեղեցու երգեցիկ խմբին եկեղեցական չապիկներ մօտ 300 ռ. արժողութեամբ:

—Աւետիք Պողոսեան (Հին-Նախիջևանցի) Մոսկուայից ուղարկել է 10.000 ռուբլի Թիֆլիսի Հալոց Հրատ. ընկերութեան, որպէս զի 3000 ռ. անձեռնմխելի թողնելով՝ մնացածով չորս տարւալ ընթացքում մանկական գրքեր տպւեն, ու ապա՝ ծախած գրքերի արդիւնքը և 3000-ի տոկոսները նոյն գործին չափաւեան:

—Պր. Սմբատ Շահաղիզեան (Մոսկուայից) Նւիրել է 350 ռ. Կովկ. Բարեգ. Ընկ. իւր իսկ հիմնած «Աբրուեան-Նաղարեան» գրական. ֆոնդին:

—Ալէքս. Անանեան (Թիֆլիս) Նւիրել է Կ. Հալոց Բարեգ. Ընկ. 1000 ռուբլի, ծածկելու համար ընկերութեան 1896 թւի գեֆիցիտը:

ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԳՐՈՒԹԻՒՆԸ: Մենք ստացանք մի բրոշիւր 36 էջ, որ կազմել են Սանասարեանի կտակակատարները, զեռ ևս 1895 թւին. դորա զխաւոր կէտերի հետ ծանօթացնելը չահեկան ենք գտնում: Մկրտիչ Սանասարեան վախճանեց 1890 թ. մայիսի 19-ին, թողնելով կտակ, որի գործադրող կտակակատարներ Նշանակւած էին՝ Կարապետ Եղեանց, Գէորգ Եւանգուլեան և հանգուցեալի քեռորդի:

ու ժառանգ Լևոն Տիգրանեան: Իւր ժառանգութիւնը ստանալուց՝ կարճ միջոց չեալ, սակաւն, պ. Լ. Տիգրանեանցը հրաժարեց կտակակատարի պարտաւորութիւններէն, չափարարութեամբ 26-ից մարտի 1891 թ., որով կտակակատարներ մնացին առաջին երկուսը: Կտակակատարների ներկալ բացառութիւններից երևում է որ պ. Տիգրանեանցը խոչնդոտ է եղել կտակակատարների դործողութիւնների կանոնաւոր ընթացքին: Սանասարեանի կտակի համաձայն «այն ամեն դրամագլուխները, որ ինքը կտակել է իւր անունը կրող Տաճկաստան գտնւած վարժարանին, պէտք է տոկոսաբեր թղթերի վերածւեն և նոյն վարժարանի (Սանասարեան վարժարան Կարինում) անունով պահեն կամ Ռուսիայի պետական բանկում և կամ Եւրոպայի պետական բանկերից մէկում»: Այդ տոկոսաբեր թղթերը կարող են վաճառւել միայն կտակակատարների ձեռքով և այն էլ քանի որ նոցանից ոչ պակաս քան երկուսը կենդանի լինեն. իսկ երկուսի մահից չետոյ ոչ ոք իրաւունք չունի վաճառել այդ թղթերը կամ ծանրաբեռնել այդ թղթերը պարտքերով: Տոկոսաբեր թղթերը տրւեցին Ռուսիայի պետական բանկը, որը պալմանները ինչ-ինչ փոփոխութիւնների ենթարկելուց և միմիտորի վաւերացումը ստանալուց չետոյ ընդունեց նոցա 1893 թ. դեկտ. 3-ին: Վեհափառ Կաթողիկոսը առաջ ուղարկեց կտակակատարներին իւր օրհնութիւնը, իսկ միմիտորին՝ իւր շնորհակալութիւնը:—

Պարտսմուրհակներով պահանջելիք կար 205.894 ռուբլի, որից ստացւել է կտակակատարների ձեռքով 35.328 ռ. 63 կ., անյուսալի են համարւած 58.494 ռուբլու մուրհակներ, ստանալու է մնում 112.071 ռ. 82 կ.: Տասնամեակը լրացած (օրինական ուժը կորցրած) մուրհակները ներկայացնում էին 50.000 ռուբլուց աւելի:

Կանխիկ թողած արժեթղթերը, փոխանակելով, գնւել են կտակակատարների ձեռքով ալ տոմսեր, աւելի բարձր արժէք ներկայացնող, իսկ մի մասը մնացել է չփոփոխւած: Սանասարեան վարժարանին կտակած ամբողջ գումարը ներկայումս, իբրև անձեռնելի դրամագլուխ, դրւած է արժեթղթերի և բաժնետոմսերի մէջ, մասամբ Սանասարեանի ձեռքով գնած, և մասամբ կտակակատար Կ. Նզեանցի ձեռքով գնած, որոնց բոլորսպին արժէքը 30 դեկտ. 1894 թ. ներկայացնում էր 262.237 ռ. 50 կ. + 197.420 + 6.028 ռ. 12 կ. + 6.235 ռ. 63 կ. = 471.921 ռ. 25 կ.

Սանասարեանցը, բացի ընդհանուր պարտականութիւններ դնելուց կտակակատարների վրա՝ առանձնապէս Կ. Նզեանցին էր լանձնարարել կտակի տրամադրութեանց հիման վրա: Սանասարեան վարժարանի համար կանոնադրութիւն կազմելը՝ ամենաուշը մինչև երեք

տարի կտակողի մահից չետու, և երկրորդ՝ վարժարանի վերին տեսչութիւնը: Կանոնադրութեան ծրագիրը պ. Նզեանց 1890 թ. տարաւ Կ. Պոլիս, որ աչնտեղ քննէ «հեղինակութիւն վաւելող մեր հայրենակիցներին հետ և համաձայնեցնէ տեղալին օրէնքների ու կանոնների հետ»: 14 ապրիլի 1891 թ. նա ներկայացրեց Պոլսի Պատրիարքարանին, ուր քննելուց և փոխադարձ համաձայնութեամբ մի քանի խմբագրական փոփոխութիւններ անելուց չետու, Ս. Պատրիարքը 1892 թ. չուլիսի 16 ի գրութեամբ չաւտարարեց Նզեանցին թէ առաջարկած է ի գործադրութիւն:

Այդ օրից, համաձայն կտակի, սկսեց կազմել ուսուցիչներ պատրաստելու դրամագլուխը (կտակած գումարների եկամտի 10% -ից). սկիզբ դրեց նաև վարժարանի պահեստի դրամագլխի, որը կազմուած է տարեկան եկամուտների մնացորդներից:

Մինչև 1895 թ. չունւարի 1-ը ուսուցչական դրամագլուխը մուտք էր ունեցել 9.832 ռ. 13 կ., ծախս՝ 3157 ռ. 90 կ., որով պատրաստուել են արհեստի երկու ոտսուցիչ (նախ Թիֆլիս, ապա Պետերբուրգ), որոնք և պաշտօն են վարում վարժարանում. երկու ալ հոգի ևս, վարժարանի ընթացաւարտներից, ուսուցչութիւն են սովորում Ներոպալում. մի ուրիշն էլ օժանդակութիւն է ստանում լեզւագիտութիւն սովորելու և վարժարանում ուսուցիչ լինելու համար:

Սանասարեան վարժարանին կտակով առկոսաբեր թղթեր է թողել նաև Նզեանցի մօրաքույր հանգ. Մարիամ Մարտիրոսեան խաղակեանց. ալդ թղթերը 1-ն չունւ. 1895 թ. բորսային գնով արժէին 16.500 ռ.: Նզեանցը հանգուցեալի կտակակատարն է:

Բացատրութիւններ են տրած Սանասարեանի մահարձանների վերաբերեալ (կանգնեցրած Թիֆլիսի վանքի գաւթում և Սանասարեան վարժարանում):

Հաշիւը վերջանում է մանրամասն հաշւետւթիւնով մուտքի և ելքի ց1-ն չունւար 1895 թ. (էջ 17-36). Նէքի հաշւետւթիւնից քաղում ենք հետեեալ մի քանի թւանշանները. Լևոն Տիգրանեանցին (ըստ կտակի) 100.000 ռ., Վանի Ս. Սանդիստեան զպրոցին 10.000 ռ. Սանասարեանի թաղման համար եղած ծախսեր 7.042 ռ. 85 կ. (որից Պարիզում 2.100 ռ., Պարիզից Թիֆլիս բերել տալը 4.767 ռ. 85 կ.), մահարձանը Թիֆլ. վանքի գաւթում 2.720 ռ. 54 կ., մահարձանը Կարինի Սանասարեան վարժարանում 1.069 ռ. 68 կ.: Սանասարեան վարժարանի պահպանութեան համար ուղարկւած է (ց1-ն չունւ. 1895 թ.) 61.965 ռ. 3 կ., բնագիտական և արհեստանոցի գործիչների համար 1952 ռ. 49 կ., ուսուցիչներ պատրաստելու համար 2 781 ռ. 57 կ., Սիւմեօնեանցին ի հաշիւ կենսաթոշակի 161 ռ. («Սի-

մէջօնեանց» անունը բրոշիւրի մէջ չիշուում է մի քանի տեղ, և ոչ մի անգամ հարկ չեն համարել չիշել նորա անունը լրիւ, որ կ'լինէր «Պետրոս Ումէջօնեանց»։ Նույնպէս մի քանի տեղ կրկնուում է «պ. Գրիգորիանց» աղգանունով ոմն, առանց երբէք լրիւ չիշելու)։

Վերջացնելով մեր համառօտութիւնը, մենք կ'սսենք, որ եթէ մի բան պակաս է այս հաշւետութեան մէջ, դա ինքը Սանասարեանի կտակն է, որ հարկաւ պէտք էր դնել հաշւետութեան մէջ և կամ առանձին հրատարակել։ Առանց կտակը հրատարակելու՝ ամեն հաշւետութիւն կ'վրիպի իւր ամենակարեւոր նպատակից։ Առանց գորան՝ մութ են մնում նաև աջակիսի տողեր։ «Այս հաշի հետ անմիջական կապ ունեցող վաւերագրերը և նոցա պատճենները, համաձայն կտակի տրամադրութեան, կ'ուղարկւին ըստ պատկանելոյն»։ (Ալսինքն ուր?)։ Հաշիւը ընդհանրապէս լաւ տպաւորութիւն է թողնում։

ԱՅՈՎԵԱՆ-ՆԱԶԱՐԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ։ Պր. Սմբատ Շահաղիզ, իւր գրական և մանկավարժական գործունէութեան 30-ամեայ չորեքեակին հաւաքւած գումարները, որոնք տոկոսներով 8000 ռուբլու են աճել, ուղարկել է ալդ գումարը Հայոց Բարեգ. Ընկերութեան խորհրդին, որպէս զի ալդ գումարը հիմք լինի «Աքովեան-Նազարեան գրական ֆոնդին» և գործնով Բարեգ. Ընկերութիւնը օգնութեան դաշկարօտ գրագէտներին։

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐ. Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ ներկայ ապրիլի 26-ին և 28-ին, քաղաքային խորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ, առաջին անգամ մինչև 751 երկրորդ անգամ 68 անդամներ և ներկայութեամբ բաղմաթիւ ալ հանդիսականներ։ Առաջին երեկոն (ժամ 7-ից մինչև մօտ 1-ը գիշերաւ), կարելի է կատարելապէս կորած նիստ համարել, որովհետև այն հարցերը, ընկերութեան գրամական հաշիւների մասին որոնք ալդ նիստում տրւեցին (անդամներ Ա. Արասխանեանցի և Շիրինեանցի կողմից) աւելորդ կըլինէին, եթէ ընկերութեան երկամեալ (1896 և 1897 թ.թ.) տպագրւած հաշիւները կազմւած լինէին պարզ ու հասկանալի կերպով։ Խորհուրդը, ալդ չարաքաւտիկ տեղեկագրի կազմելը և նորան ընդհանուր ժողովում պաշտպանելը լանձնել էր իւր քարտուղար պ. Համբարձում Առաքելեանցին, որի անբաւարար պատասխանները պատճառ եղան ժողովի տարակուսանքներին և ժողովի ապարդիւն հետեանքներին։ Ալդ ժողովում քննուեց նաև վերաստուգող մասնաժողովի տպագրւած զեկուցումը և խորհրդի բացատրութիւնները ալդ առթով։ Ժողովը բաւականաչափ լրջօրէն չվերաբերեց դէպի զեկուցադրի մի քանի շատ կարեւոր կէտերը և բաւականանում էր խորհրդի նույն իսկ շատ վաւր ի վերոյ պատասխաններով։ Օրի-

Նախներ. վերաստուգող մասնաժողովը չափանեց թէ խորհուրդը՝ ընկերութեան պատկանող արժեթղթերի բոլոր կտրոնները (արժողութեամբ մի-երկու տասնեակ հազարներին) կտրել է և պահ տել իւր անդամներին մէկին, փոխանակ ալդ կտրոնները պահպանելու բանկերում աւանդ դրած արժեթղթերի հետ, եւ կամ՝ հոկտեմբերի վերջը 30 հատ արժեքաւոր խաղատոմսեր է ծախել խորհուրդը, մինչդեռ չափն է, որ նոյն թղթերը դեկտեմբերի վերջերքը ամեն մէկը մինչև 15 ռուբլի աւելի արժեն, որով կորուստը հասնում է 400-450 ռուբլու: Վերաստուգող մասնաժողովը, ի միջի ալլոց, դանդաղում էր աչն զժաւորութիւնների համար, որ նա կրել է վերաստուգութեան գործը կատարելիս. և զարմանալի էր չէր. ալդ մասնաժողովը ամեն քաջափոխում պէտք է գործ ունենար խորհրդի քարտուղար պ. Ն. Առաքելեանցի՝ հետ... և ալլն:

Երկրորդ անգամ, ապրիլի 28-ին, շարունակեց նախահաշի քննութիւնը: Յիշելու են հետեւեալները. 1897-ին կապցած ընդհանուր ժողովում վճռւած էր, որ ինչ մնացորդ մնալու լինի ալդ տարին՝ չատկացւի ընկերութեան գրադարան-ընթերցարանին: Մինչդեռ Խորհուրդը, 1898-ի համար նախահաշիւ կազմելիս՝ անուշադիր էր թոնել ընդհանուր ժողովի ալդ վճիռը, սորա գլխի վրալից անցնելով: Անդամ Ա. Արասխանեանց պահանջում էր, որ ալդ վճռի համաձայն՝ 1897-ից զուգացած շուրջ 1.700 ռուբլի մնացորդը աւելացնէի գրադարան-ընթերցարանի վրա՝ սովորապէս միսւող գումարի վրալ, բայց աչնպէս որ ալդ 1700 ռուբլին բաշխւի ոչ միաչն կենտրոնի գրադարան-ընթերցարանի ալ և ճիւղերի գրադարան-ընթերցարանների վրալ՝ Ախալքխալում, Նուխում և ալլն: Ժողովի մեծամասնութիւնը սակայն վարեց աչնպէս, որ միաչն ձեականապէս չարգւած լինի նախկին վճիռը. 1898-ի նախահաշիւ կենտրոնի գրադարան-ընթերցարանի համար չատկացրած լինելով մօտ 1400 ծախք՝ ժողովը վըճուեց ծախքը հասցնել մինչև 1700 ռ. լրանալը, բայց աչնպէս որ 200 ռուբլի տրւի Թիֆլիսում գուրութիւն ունեցող (ոչ ընկերութեան պատկանող) էժանագին գրադարանին, իսկ մնացածը աւելանալ ընկերութեան գրադարան-ընթերցարանի նախահաշիւ վրալ:

Ապա զեկուցեց պ. Ս. Շահ-Աղիզի Նւիրած 8000 ռուբլու մասին, որով ընկերութիւնը հաստատում էր, Նւիրողի կամքի համաձայն, «Աքովեան-Նաղարեան գրականական ֆոնդ», որպէս զի Նւիրած գումարի և ալդ ֆոնդի անուճով ուրիշների Նւիրելիք գումարների տոկոսներով կարօտեալ գրականներին օգնեն: Ալդ խնդրի մասին որ և է խօսակցութիւն արգելեց ժողովի նախագահ պ. Բազրատ Նաւասարդեանի կողմից, նոյն իսկ աչն թէ արդեօք ալդպիսի ֆոնդ

հիմնելը որքան համապատասխան է ընկերութեան կանոնադրութեանը: Որքան փչում ենք՝ ընդհանուր ժողովի իրաւունքները արհամարելու մի ալիքան խոշոր գէպք զեռ ևս չի եղած մինչև այսօր:

Ապա զեկուցեց հանգ. Յովհ. Խուզադեանի կտակով թողած գումարների մասին, որոնք, դուրս գալով մասնաւոր անձերին հաւանելիքները, կազմում են մօտ 112,000 ռուբլու դրամազուխ, որի տոկոսներով պէտք է հիմնել որ և է հաստատութիւն Յովհան. Խուզադեանի անունով: Ընկերութեան խորհուրդը, առաջարկել էր ալիք դրամազուխի տոկոսներով հիմնել Թիֆլիսում հաւաքակերտների համար մի հանրակացարան: Անդամ Ա. Արասխանեանց առաջարկեց ալիք խնդիրը ալիք չվճռել ալ ընտրել հինգ հոգուց բաղկացած մի լանձնաժողով, որը ընթացիկ տարում կը քննի թէ խորհրդի առաջարկը և թէ Արասխանեանցի առաջարկը (կովկասեան որբերի համար լարմար գիւղում որբանոց հիմնել՝ կրթելով նոցա գիւղատնտեսութեան և արհեստների մէջ), որպէս նաև ալ առաջարկներ որ կը կամենան անել ուրիշները. ընդհանուր ժողովը ընդունեց ալիք առաջարկը և ընտրեցին լանձնաժողովի անդամներ՝ Թ. Բ. Նաւասարդեան, Թ. Արիստ. Զարգարեան, Նրւ. Լալալեան, Վասիլ Վարդանեան և Ա. Արասխանեանց:

Ժողովի վճիռներից փնէնք նաև այն, որ խորհրդին իրաւունք տրուի՝ նախահաշից դուրս, տարւալ ընթացքում իւր բարեհալեցողութեամբ մսիսել ոչ աւելի քան 2000 ռուբլի, եթէ ընկերութեան միջոցները նրեն:

Ալիք ժողովում զեկուցեց նաև անդամներից մէկի առաջարկը՝ պ. Բադր. Նաւասարդեանին պատուաւոր անդամ ընտրելու մասին: Խորհուրդը իւր եզրակացութիւնը չէր արել ալիք առթիւ, ալ միայն թել էր պ. Նաւասարդեանի ծառայութիւններից մի քանիսը. դորա հակառակ խորհրդի օրագրութեանը կցւած էր խորհրդի անդամ պ. Սամսոն Յարութիւնեանցի մի շատ երկար անձնական կարծիքը ընդդէմ առաջարկի. դորա ընթերցումը ալիքան տաղտուկ պատճառեց, որ ժողովականների պահանջմամբ ընդհատեց, թէև ալիք ընթերցումը ակնյալտնի խնդութիւն էր պատճառում իրեն պ. Նաւասարդեանին, որը օգտեց ալիք առթիւ հաստատելու, որ ինքը եղած է ընկերութեան հիմնարկելու նախաձեռնողը, հակառակ Յարութիւնեանցի, որը կամենում էր ալիք կէտը անհիմն և քէնանախանձ կասկածի ենթարկել: Բալց Նաւասարդեանց, իւր բացատրութիւնը վերջացնելուց լետո՛ւ խնդիրը հանեց օրակարգից, ինչպէս և սպասուում էր:

Պաշտօնատար անձերի ընտրութիւնը տեւց հետևեալ արդիւնքը.

1) Ընդհանուր ժողով. Նախագահ բժշկ. Բագր. Նաասարդեանց (վերընտրւած). քարտուղար՝ Ա. Ատոմեան (նոր):

2) Խորհրդի անդամներ՝ Մելիք-Ազարեանց Ալ. (վերընտրւած), Փումանեանց Մարիամ իշխ. (վերընտրւած). Արծրունի. Վ. (վերընտրւած), Զարգարեան Արիստ. (նոր), Մարտիրոսեան տ. Հակոբ-նուշ (նոր), Տիգրանեան Նազարեթ (նոր):

3) Խորհրդի փոխանդամներ՝ Նազուբեան Կար. (նոր) Մելիք-Բախտամեան Յակ. (նոր):

4) Վերաստուգող մասնաժողովի անդամներ՝ Վարդապետեան Աւետիս (վերընտրւած), Խոսրով Արզումանեան (նոր), Շիրինեան (նոր):

5) Գրադարանական լանձնաժողովի անդամներ՝ Ալ. Երիցեան (վերընտրւած), Դադրաշեան (վերընտր.), Մ. Ասիլեան (վերընտ.), Երւ. Լալալեան (նոր), Տ. Փերումեան (նոր):

6) Խուղաղեան հաստատութեան լանձնաժողովի անդամները ընտրութեան մասին արդէն չաշտնեցինք վերը:

Ի վերջոյ մի նկատողութիւն: Ժողովը, չնաչաժ որ երկու ձիգ երեկոներ տեւեց, կարող էր աւելի արդիւնաւէտ լինել, եթէ 1) Խորհրդի տեղեկագիրը կազմւած լինէր աւելի հմուտ ձեռքով. 2) եթէ ժողովի Նախագահը թողնէր իւր սովորութիւնը շարունակ խօսելու և շատ անգամ բողբոլին անտեղի կերպով ընդհատելու խօսել հանկա-ցողներին:

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ունեցաւ իւր տարեկան: Ընդ-հանուր ժողովը մարտի 28-ին, քաղաքային տան ղաչիճում, մաս-նակցութեամբ 50 անդամներու: Նիստի համար տպագրւած էր 1897 թւականի Տեղեկագիրը: Տեղեկագրից երևում է, որ ընկերու-թիւնը տպել է 1897 թ. ընթացքում 22 անուն գիրք, որոնց ընդ-հանուր արժէքն է 10 և 50 կոպէկ, աչխնքն մի փոքր աւելի պա-կաս քան 1895 թւականին, երբ տպւած գրքերի արժէքն էր 10 ո. 58 կոպէկ: Ընկերութիւնը իւր տպագրական գործունէութիւնով չառաջ-դիմութիւն չի անում 1892 թւականից դէս: Աչապէս՝

1892-ին տպւեց	18 գիրք, արժողութեամբ	8 ո. 25 կ.	} 13 ո. 95 կ.
1893-ին »	12 գիրք, » »	5 ո. 70 կ.	
1894-ին »	12 գիրք, » »	5 ո. 35 կ.	} 15 ո. 93 կ.
1895-ին »	14 գիրք, » »	10 ո. 58 կ.	
1896-ին »	12 գիրք, » »	3 ո. 74 կ.	} 14 ո. 24 կ.
1897-ին »	22 գիրք, » »	10 ո. 50 կ.	

Այս թւերից պարզ երևում է, որ ընկերութիւնը կանգուն գրութեան մէջ է. հաշւելով 2-2 տարւաչ գործունէութիւնը, կրտսնենք որ այս վերջին երկու տարում նա տպել է 14 ո. 24 կոպէկի գրքեր, նա-

խորդ երկու տարիներում՝ 15 ա. 93 կոպէկի գրքեր, դորանից էլ առաջ երկու տարում 13 ա. 95 կ. ալսինքն մօտ 14 ռուբլու գրքեր:

Ուրեմն ալս երկու տարիները նոյն իսկ ետ են նախորդ երկու տարիներից և գրեթէ հաւասար են հինդ և վեց տարի առաջ եղածին:

Այսպիսի չինական անշարժութեան դիմաց ժողովի նախագահող պ. Սամսոն Յարութիւնեանց առաջարկեց ժողովին շնորհակալութիւն լստնել վարչութեան: Որ և կատարեց ոգեւորած ծափահարութիւններով...

Աւելի միութարական չէ գրքերի շատկութիւնը. քիչ թէ շատ պատասխանատու գրքերը, ուր հեղինակից կամ թարգմանչից մի փոքր հմտութիւն է պահանջուում, ուղղակի վատ են. այսպէս, 1897-ին տպած գրքերից Լուսկիչի «Յրկրի և երկնքի մասին», որ պատկանում է հանրամատչելի ժողովրդական գրքերի սերիալին, ուղղակի անպէտք գիրք է, ինչպէս ալգ ցուց է տրւած Մուրճի անցեալ տարւոյ ՁՅ 10-ում, գրախօսութեան մէջ: Վիպական գործերից միայն երկու թարգմանութիւններ է տեսել ընկերութիւնը, Ալֆոնս Գոդէից և Մուպասանից. և այնուամենայնիւ՝ այն, որ վերաբերում է վերջինիս (Մուպասանին) — դորա թարգմանութիւնը կատարւած է Համբ. Առաքելեանցի ձեռքով, որ ասել է թէ ընկերութիւնը քնաւ հոգս չի տարել որ Մուպասանը մեր գրականութեան սեփականութիւն դառնալ: Տպւած վեց մանկական գրքուկներից ոչ մինը չի թարգմանւած իրենց հմտութիւնով լստնի գրողների ձեռքով:

Մեր նկատողութիւններից դուրս պէտք է համարեն խան Մասեհեանի թարգմանած «Վենետիկի վաճառականը» Շեքսպիրի, Պոստեանցի թարգմանած «Գաւիթ Կոպերֆիլդը» և Ղազ. Աղալեանցի թարգմանած «Գուլիւէրի ճանապարհորդութիւնը», Գոքա ինքն ըստ ինքեան հարկաւոր գրքեր են. և դոցա թարգմանութիւնները, որքան էլ մարդիկ որոնեն նոցա մէջ ալս ու ալն թերութիւնները կամ սխալները գտնել, — միշտ կմնան գանձ հաւոց գրականութեան համար շնորհիւ նոցա թարգմանիչների լեզւական հմտութեան: Գրեթէ նոյն չափով մենք գնահատելի ենք համարում Վ. Փափաղեանի թարգմանած «Ալֆ. Գոդէի ընտիր պատմածքները»:

Իսկ ինչ վերաբերում է ընդհ. ժողովին, վերին ատիճանի աչք էր զարնում 1897-ի ընդհ. ժողովի արձանագրութիւնը, որի դէմ անդամ Ա. Արասխանեանց բողոքեց իբր անարժան արձանագրութեան դէմ, ուր թուէ են տրւած աղաւաղումներ ակնյալտնի գիտաւորութիւններով և անձնական նկատումներով: Օրինակ, Լուսկիչի ալն խօսքը, որ մենք տպագրեցինք Մուրճում (1897 թ. ՁՅ 3-4 կերպարանափոխւած էր ալն ձեռով, որ ալգ խօսքերը արտասանողից ամօթան-

քը Զնչւի. իսկ, օրինակ, Ա. Արախանեանցի կարծիքը, թէ հարկ չկտլ տալագրել Բելինսկու գրած քը ռոմանտիզմի մասին, որովհետև ալդ նիւթերի վրա կան աւելի նոր գրած քներ եւրոպական լալտնի հեղինակների, արձանագրւած էր այսպէս, «թէ չպէտքէ տալագրել որովհետև Բելինսկին Ներոպալում լալտնի կրիտիկոս չէ»։ Նւ ալն և ալն, Ժողովի մէջ տալագրած գրքերի հիման վրա նաև ապացուցւեց ճշդութիւնը ալն քննադատութեան, որին անցեալ տարի ենթարկւեց խմբագրական մասնաժողովի ծրագիրը ապագալում տալագրելու գրքերի ցուցակի մասին։

Ժողովը, չնայած վարչութեան որոշման և վարչութեան նախագահ Ալ. Բալանթարի կամակորութեան, ճիւղղ մեծամասնութեամբ դատաւարտեց վարչութեան վարմունքը, որով վերջինս 1898-ի լունւարից զաղարեցրել էր ուղարկել Մուրճի խմբագրութեանը ընկերութեան հրատարակութիւնները և պարտաւորեց ղրկել զոցա բոլոր խմբագրութիւններին։

ԱԽԱԼԲԱԼԱՔԻ ԱԻԻԳԸ Հայոց Բարեգործ. Ընկ. ուղարկել է մեզ իւր հաշիւցիցը 1897 թ. համար, որից երևում է թէ ճիւղը ունեցաւ. մուտք՝ 60 անդամից (330 ռ.), Նւէրներ ստացել է 531 ռ. 17 կ., տաճկահալ փախստականների օգտին՝ ղանխական դումարից ստացել է 250 ռ., երոկոլթից 124 ռ. 26 կ. Ներկալացումներից 121 ռ. 23 կ., դրամագիրի տոկոս 56 ռ. 67 կ., 1896 թ.ից մնացորդ կալ 1026 ռուբ. 24 կոպ. ընդամէնը մուտք հաշւած է 2419 ռ. 57 կ. Մախք՝ 1057 ռ. 52 կ., որից դպրոցներին 250 ռ., գաւառի և քաղաքի տաճկահալ փախստականների համար 662 ռ. 50 կ., տեղական տառապեալնեւրին բժշկի օգութիւն և սնունդ հասցնելու համար 80 ռ. 50 կոպ., գաւառի գիւղական հալ աղգարնակութեան մէջ էժանագին հանրամատչելի գրքեր տարածելու համար 42 ռ. 36 կ., Ֆոնդի օգտին 50/0-ը, 17 ռ. 67 կ., դիւանական ծախքեր 4 ռ. 49 կ., Մնացորդ 1362 ռ. 5 կ. ճիւղը ունի արհեստանոց։

ԹԻՖԼ. ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ընդհանուր Ժողովը կալացաւ. մարտի 3-ին, ընկերութեան կար ու ձևի ուսումնարանի զանլիճում, ներկալութեամբ չուրջ 50 հոգու, նախաղահութեամբ, սրբ. առաջնորդի փոխարէն, հալր Արսէն քհ. Բագրատունու. Խորհրդի քարտուղար տիկ. Սոփիա Բաբալեան կարդաց ընկերութեան անցեալ տարալ ընդհ. Ժողովի արձանագրութիւնը և 1897-ի հաշիւը։ Հաշիւից, որը տալած էր, երևաց, որ ընկերութիւնը ունեցել է մուտք 1) մնացորդ անցեալ տարիներից 15.669 ռ. 35 կ., 2) 1897 թւականի մուտք 6.271 ռ. 91 կ., որոնք զոլացած են ա) նւիրաբերութիւններից 940 ռ., բ) անդամակցական վճարներից 1218 ռ., գ)

պարահանդէսներից և ալլն 1882 ռ. 69 կ., դ) ընկերութեան գումարների տոկոսներից 728 ռ. 05 կ., մնացածը կարուձևի դպրոցի ալլ և ալլ արդիւնքներից, եւթը կազմել է 4.522 ռ. 11 կոպէկ, որի մեծագոյն մասը դնացել է կարուձևի դպրոցին (3689 ռ. 84 կ.):

1898 թ. ին վարչութեան առաջարկով ընդհ. ժողովը ընդունեց հիմնել նաև լացանոց (սեպտեմբերից), և աչնպէս որ աշակերտուհիները սովորեն ոչ թէ լացք անել, ալ լացած ձերմակեղէնը օսլալել և ութուել. այդպէս չարմար դատուեց աչն պատճառով, որ լացքի առաջին գործողութիւնը՝ լանալը՝ դրեթէ միաչն ֆիզիկական աշխատանք է պահանջում, որ կատարում են քաղաքում շատ կանաչք, մինչդեռ օսլալելն և ութուելը մի արհեստ է, որ պէտք է մասնագիտօրէն սովորել: Այսպիսով ընկերութիւնը ներկալ տարում ունենալու է 1) կարուձևի դպրոց, 2) խոհարարական դպրոց և 3) լացարան: Այդ ամենը նշանակած է դպրոցի աշակերտուհիների համար, թէև կողմնակի անձեր ևս կարող են երկու վերջինները սովորել՝ բալց առանձին վճարով: Նկատենք, որ խոհարարական կուրսերը առաջ անցնում էին առանձին, 2—3 ամսում, իսկ ալժմ ալդ անցնելու են կար ու ձևի դպրոցի աշակերտուհիները երկու տարում, աչն է՝ երկրորդ և երրորդ տարում, (դպրոցում մնում են չորս տարի) և սովորելու են պատրաստել ոչ, որպէս առաջ էր, թանկագին ալլ հասարակ կերակուրներ:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. հաշիւը 1897 թ. համար: Մեր ստացած տպագիր հաշիւից երևում է հետեւեալը: Ընկերութիւնը 1897-ին ունէր 243 տարեկան անդամներ, որոնցից ստացւեց 1.215 ռուբլի. պահեստի 59.000 ռուբլու դրամագլխի տոկոսը կազմեց 2.356 ռ., հիմնական 4000 դրամագլխի տոկոսները 160, ընթացիկ հաշուվ պահած 2.214 ռուբլու տոկոսները 15 ռ. 96 կ., ապառիկներ 1896-ի համար ստացւած էր 50 ռ., տասը հոգուց, որ մշտնջենաւոր անդամ գրեցին՝ 1000 ռ.: Մուտքը ալդպիսով կազմեց 5.024 ռ. 96 կ.: Ծախքը՝ 4.914 ռ. 49 կ., որից երկու սեւից աշակերտների ուսման վարձ 809 ռ. 33 կ., նոցա ալլ պիտուքների համար՝ 2.840 ռ. 71 կոպ., չքաւոր ընտանիքներին 512 ռ. 6 կ., դիւանական ծախք, ընկերութեան պահեստի և արքունական 5% 742 ռ. 31 կոպ.:

Նախահաշուվ 1898 թ. համար ենթադրւած է 4010 ռ.: Ընկերութեան անձեռնելի (հիմնական և ալլ) գումարները առ 1%-յուն. 1898 թ. կազմում էին 65.325 ռ. 24 կ. որոնք գրեթէ ամբողջապէս պահւում են պետական արժեթղթերում:

Ընկերութիւնը ունի խորհրդարանի հոգաբարձութիւն, բաղկացած 24 ընտրւածներից, և խորհրդարանի վարչութիւն, բաղկացած եօթ հոգուց:

Ընկերութիւնը ունի մշտնջենաւոր անդամներ (որոնք ամեն մէկը տեւել են միանւագ 100 ու.)։ Դոքա թւով 278 են (որոնցից 83-ը հանդուցեալ)։ Իսկ տարեկան անդամներ ալժմ ունի 276 հոգի (որոնցից 215-ը Ն. Նախիջևանում, մնացեալները ալ տեղեւորում)։

Ընկերութեան օգտին կտակներ արածների թիւն է 24 հոգի։ (Ցանկալի է հաշիւ մէջ ամեն մի անւան դիմաց նշանակած տեսնել կտակած գումարի քանակը)։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՒՂՆԱՅ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. հիմնւած 1895 թ., իւր եռամեալ գործունէութեան ընթացքում հիմնել է Թաւրիզում մի մանկական պարտէզ և մի արհեստանոց կար ու ձևի համար, և օգնել է տաճկահալ փախտականներին Սալմաստում։ Ընդամենը ընկերութեան մուտք եղել է երեք տարում 32.037 դռան և 7 կոպէկ. եւք նոյնքան։ Փախտականներին ալդ հաշիւից տրւած է 2.200 դռան (440 ու.)։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՒՂՆԱՅ ԸՆԿ. Ալդ ընկերութիւնը, որ նոր է հաստատւած, իւր առաջին ընդհ. ժողովը ունեցաւ մարտի 12-ին, նախագահութեամբ տ. Մ. Էլզարեանցի։ Ընկերութեան նպատակն է օգնել տեղացի չքաւոր հաւերին, մանաւանդ կանանց, անդով, հագուստով, դրամով, ծառայութեան տեղ գտնելով, արհեստների գործիքներ հալթալթելով, ձեռագործի վաճառքին օգնել նպաստելով, բժշկական օգնութիւն տալով, որբերին խնամելով և դաստիարակելով, ժողովրդի մէջ բարոյական գրքեր տարածելով և վերջապէս հաւերներ վերադառնալու։ միջոցներ տալով։ Ընկերութիւնը պիտի կարողանալ բանալ ճաշարաններ, օթեաններ, հիւանդանոցներ, կար ու ձևի, ձեռագործի և խոհարարական կուսեր, ընթերցարաններ և գրադարաններ։ Անդամները վճարում են տարին 5 ու.։ Ժողովի օրը գրեցին 75 կին անդամ։ Ապա կատարեցին պաշտօնատար անձերի ընտրութիւններ։

ԹԱԻՐԻՋԻ ԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿ. հաստատւած 1 մարտ 1898 թ., ուղարկած է մեզ իւր կանոնադիրը։ Նպատակը որոշւած է ալսպէս. «Տասն և հինգ օրը մի անգամ հերթիւ և պարբերաբար թէ Ղալալի և թէ Լիլաւալի դպրոցների սրահում հալ հասարակութեան տալ ծրի դասախօսութիւններ, զանազան հետաքրքիր, շահեկան և օգտակար նիւթերի վրայ, ինչպէս՝ գիտական, գրական, առողջապահական, պատմական, մանկավարժական և ալլն։ Նիւթերը, դասախօսութիւնից չետուլ, կ'ենթարկեն հասարակական վիճաբանութեան»։

Տարեկան անդամակցական վճարն է 6 դռան արծաթ։ Ընդունւում են նաև նւերներ դրամով և գրքերով և զանձանակադրամ։ Ընդհանուր ժողովներին նախագահում է Ատրպատականի թեմի առաջ. նորդը կամ նորա փոխանորդը։

(Ընկերութեան կանոնադիրը (բաղկացած 31 խումբից) վաւերացրել է Ատրպատականի առաջնորդ Յովս. վարդ. Սարաճեան 15 մարտ 1898 թ.)

Անդամ են գրած 2 հոգեւորական, 20 կանաչք և օրիորդներ ու 39 տղամարդ, ընդամենը 61 հոգի:

Վարչութիւնը կազմւած է ալսպէս՝ նախագահ բժշկ. կար. Յ. Փաշեան. գանձապահ Մելքոն Շահբաղեան, քարտուղար՝ Վահան Բժշկեան, աւանդապահ՝ օր. Հռիփս. Փուղինեան, անդամներ՝ տիկին Վերդինէ կ. Փաշեան և Աբեղնազով Ալէքսանեան:

Հասցէ. Tauris. (Perse). Salle de Conférence Arménienne.

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԱՍԻՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՄԱՐ Թիֆլիսում Այդ անունով ընկելութիւնները Ռուսիայում հիմնւել են ներկայիս Կալսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի նախաձեռնութեամբ և գտնւում են Նորա հռովմաւորութեան ներքոյ Ալդայիսին ալժմ հիմնւել է նաև Թիֆլիսում, և նորա առաջին ընդհանուր ժողովը կազացաւ ապր. 11-ին, առաջին իրական գիմնադի դահլիճում: Կատարեց մաղթանք՝ ներկայութեամբ Ն. Բ. Սրբաղնութիւն վրաստանի Էքզարխ Ֆլաւիանի: Ներկայ էին նաճանգապիտը, Կովկ. ուսումնարանական շրջանի հոգաբարձու կ. Պ. Եանովսկի և ուրիշներ: Ապա եղան ընտրութիւններ, և վարչութեան անդամներ ընտրւեցին տ. Պ. Ի. Վէդէնէւա, տ. Մ. Վ. Կուրիւքիւնա, տ. Ն. Օ. Կլէմէնտիւա, տ. Ե. Ն. Վուրցէլ, պ. պ. Ֆ. Ա. Բըկով (նաճանգապ.), կ. կ. Սանֆանովիչ (փոխ-նաճանգապ.), Գումիլէւսկի, Եա. Ս. Մէդէդիւ և իշխ. Անդրոնիկով. անձնափոխանորդներ՝ կ. Պ. Եանովսկի, տ. Բըկովա և իշխ. Ամիրխանարի: Ապա եղան ընտրութիւններ վերաստուգող լանձնաժողովի համար, որից լիտու չնորհաւորական հեռագիր ուղարկեց Կալսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնային: Երկրորդ ընդհ. ժողովում կ. Պ. Եանովսկին ընտրեց փոխ-նախագահ:

ԿՈՎԿ. ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿ. ապրիլի 27-ին տօնեց իւր գոյութեան 25-ամեակը: Այդ առիթով ցանկութիւն չալանեց որ ընկերութիւնը հանրամատչելի զրքերով իրաւաբանական տիղեկութիւններ տալածի ժողովրդի մէջ:

ՌՈՒՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԴՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Անդրկովկասեան ճիւղը: Մենք ստացանք այդ ընկերութեան կանոնադիրը (Уставъ Закавказскаго Отдѣла Общества для вспомошествованія нуждающимся переселенцамъ. Тифлисъ, 1898 г., типогр. Петрова), որ հաստատւած է ներքին դործերի մինիստր Գորեմիկինի կողմից, 6 լունւ. 1898 թ.: Ընկերութեան ճիւղի նպատակը որոշւած է ալսպէս (§ 1) «կարօտ դաղթականներին օգնող Ընկերութեան Անդր-

կովկասեան ճիւղը ունի նպատակ՝ օգնել կառավարութեանը՝ սորա հոգատարութեան մէջ ալն անձերի համար, որոնք գաղթում են գուլթիւն ունեցող կանոնների համաձայն և պատշաճաւոր իշխանութեան թուլտութեամբ»:

«Այդ նպատակի համար ճիւղը թուլտութեամբ կովկասեան կառավարչապետի հիմնում է Անդրկովկասի ալն կէտերում, ուր հաւաքւում են զաղթականները, գիշերօթիկ ապաստարաններ, ճաշարաններ և կազմակերպում է բժշկական օգնութիւն, տալիս է կարօտեալներին՝ թէ ալդ տեղերում և թէ ուր նոքա տնաւորւում են, օժանդակութիւններ և փոխատուութիւններ փողով և իրեղէններով. մասնւոր է չարաբերութիւնների մէջ տեղական բարեգործական ալն ընկերութիւնների հետ, որոնք օգնում են զաղթականներին, և աջակցում է ալդպիսի ընկերութիւններին. նպաստում է տաճարներ և դպրոցներ շինելու գաղթականների տնաւորած տեղերում»:

Այդ ընկերութիւնը իւր առաջին ընդհանուր ժողովը ունեցաւ ապրիլի 9-ին, առաջին գլխաւոր ընթերցանութեան դահլիճում, մասնակցութեամբ շուրջ 80 անդամների. Գոցա մէջ էին երկրի կառավարչական հաստատութիւնների բարձր ծաւրերը և բարձր գիրքով ալ անձեր՝ Թիֆլիսի նահանգապետը, կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, Թիֆլիսի վերաստուգող պալատաւրի կառավարիչը, ուղղափառաց սեմինարիալի ուկտորը, կաղետների դպրոցի վերատեսուչը, նահանգական ինտենդանտը, զրաքննական տեսանի նախագահը, Թիֆլիսի փոխ-նահանգապետը, դատարանական պալատաւրի ղեկարտամէնտի նախագահը, նահանգական դատարանի փոխ-նախագահը, առաջին գլխաւոր վերատեսուչը, և ուրիշներ:

Ժողովին նախագահող ընտրւեց կովկ. ուսումն. շրջանի հոգաբարձու Կ. Պ. Նանուկին: Զիւղի հիմնադիր անդամ Վ. Գ. Բուտիրկին ծանօթացրեց ճիւղի հիմնելու պատմութեան հետ: Գաղափարը ծագած է ևղել ութ տարի առաջ՝ մի ուսւ շրջանի մէջ, որը կամենում էր օգնել ուսւ զաղթականներին, որոնք Ռուսիայից գալիս են Անդրկովկասում հաստատուելու համար: Մշակեց կանոնադրութիւն, որը սակաւն չհաստատեց ներքին գործոց մինիստրը, գտնելով ալդպիսի ընկերութիւն անժամանակեալ: Բայց երբ 1896-ին պ. Բուտիրկին Պետերբուրգում էր, ալդտեղ հիմնած ուսւ զաղթականներին օժանդակող ընկերութեան նախագահը խորհուրդ տւեց մերժած խընդիրքը նորից ներկաւացնել, բայց միայն հիմնելով ոչ անկախ ընկերութիւն, ալ իբր Պետերբուրգի ընկերութեան ճիւղ. ալդ ձևով խնդիրքը ընդունեց:

Ժողովը ապա ձեռնարկեց վարչութեան անդամների ընտրու-

թեան, Ընտրւեցին՝ Վ. Գ. Բուտիրկին (51 ձախով) Կ. Պ. Կանովսկի (40 ձ.), Բժ. Ի. Ի. Պանտիլսով (33 ձ.), առաջին զիննաղի վերատեսուչ Լ. Լ. Մարկով (30 ձ.), Կաւկազի խմբ. Վ. Լ. Վելիչկո (26 ձ.), Խիֆլիսի նահանգապետ Ֆ. Ա. Բըկով ստացաւ Նոյնպէս 26 ձախ, բայց լծարութեամբ ընդունեց միալ անձնավորխանորդ. ալ անձնափոխանորդներ ընտրւեցին՝ Ի. Ֆ. Դրբոզլաւ (վերատեսուչ 2-րդ զիմնաղի, 16 ձ.), Պ. Գ. Տարանովսկի (նահանգական ինտենդանտ, 10 ձ.), Կ. Վ. Եակիմով (7 ձ.):

Նոր կազմած կոմիտէն իւր միջից ընտրելու էր կոմիտէի նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար, և որոշելու էր բիւջէն ներկայացնելու ընդհանուր ժողովին, որը պիտի կաշառար մալխին:

— Մալխ 3-ին կապացաւ ընկերութեան 2-րդ ընդհան. ժողովը. ղեկուցումներից երեսց, որ ապրիլի 28-ին ընկերութիւնը ունէր արդէն 360 մշտական և թէ տարեկան անդամ, և 3 մալխին ունէր 4,950 ռ. գումար, որից 500 ռ. նւիրել է Ն. Կ. Բ. Թագաթառանդ Գէօրգի Ալէքսանդրովիչ: Գործադիր կոմիտէի անդամ պ. Վելիչկո կարգաց պործունէութեան մի լաւն ծրագրի նախագիծը:

ՇՈՒՇԻԱՅ ԹԵՄԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ նշանակւած է ժամանակաւորապէս Անանիա եպիսկոպոսը:

ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ: Մի քանի տարի առաջ վաղարշապատի ուղղափառ հասարակութիւնը (երեխ տեղական մի քանի ծառաւորներ) իւր լիազօրներ ի. Խ. Կանչելիի (սրտկուրոր էջմիածնում) և Վ. Ֆ. Պախոտինսկու միջոցով վրաստանի էքզարխի առջև խնդրամատուց եղաւ վաղարշապատում, որպէս էջմիածնի զաւառի կենտրոնում, ուղղափառների անկախ ծուխ հաստատել, պարտաւորւելով մինչև եկեղեցի շինելը պատշաճաւոր շինութիւնն չառկացնել աղօթատան համար, և միաժամանակ խնդրել էր թուլտուութիւն՝ կամաւոր նւերներ հաւաքելու վաղարշապատում եկեղեցի կառուցանելու՝ չանուն սրբարար հրաշագործ Նիկողայի Միրլիկիացու ի չիշատակ գահակալութեան Կալսր Նիկողայ Ալէքսանդրովիչի և Նոյն Կալսերական Մեծութիւնների ամուսնութեան: 1896 թ-ին Ս. էջմիածնին պատկանող հողերից Ն. Վհափառութիւն Կաթողիկոսը գետին նւիրեց խնդրած ուղղափառ եկեղեցու համար, զիւղի սկզբում, Ս. Շողակաթ եկեղեցու մօտ: Նոյն տարում հանւեց տեղի մակարդակը, գետինը քննեց Նրեանի նահանգական վարչութեան տեխնիկոսը, որը դտաւ թէ տեղը չարմար է մոնումէնտալին շինութեան համար, և 8 ն մալխի ուղղափառ հասարակութեան լիազօրներից մէկը ալդ հողը ընդունեց. 9-ն մալխի կապացաւ հանդիսաւոր օրհնութիւնը և

խաչադրութիւնը, և խաչը մինչև այժմ կանգնած է անտեղ միայնակ, եկեղեցին դեռ չի սկսած շինուի և ոչ էլ մինչև այժմ ստացւած է թուլտուութիւն կամաւոր նւէրներ ժողովելու համար: Սակաւն, Վրաստանի էքզարխ Բ. Ս. Վլադիմիրի խնդիրքը Վաղարշապատում անկախ ուղղափառ ծուխ հաստատելու համար՝ չարգելեց և կառավարող սրբազնագոյն սինոդի հրամանով 26-ից չունիսի 1896 թ. համարաւ 3017 պատւիրած է սինոդական ատենանին բաց անել Վաղարշապատում անկախ ծուխ, նշանակել քահանայ և տիրացու՝ 1200 և 300 ռ. տարեկան ռոճիկներով: Բայց ուղղափառ հոգևոր կառավարութիւնը, որպէս այդ մասին դաւառապետին հաղորդել է էքզարխեան ատենանը, մինչև այժմ չի կարողացել դառնել Վաղարշապատի ծուխի համար արժանաւոր քահանայական թեկնածու:

ՌՈՒՍԱՅ ՌԻՂԱՓԱՌ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԽԱՆՔԵՆԴԴՈՒՄ: Խանքենդ աւաւում (Գանձակի նահանգ, Շուշաւ գաւառ, ոչ հեռու Շուշի քաղաքից), կալ ռուս ուղղափառների ազգաբնակութիւն, որը միակն է ամբողջ նահանգում: Այդտեղ բանակ ունի առաջին Սոնժենսկո-Վլադիկակազեան գունդը: Գնդի քահանայի նախաձեռնութեամբ այժմ այդտեղ հիմնւած է «Խանքենդի ուղղափառ Պրէօբրաժենեան եղբայրութիւն» անունով ընկերութիւնը, որի կանոնադրութեան հաստատութիւնը եղաւ Վրաստանի նախկին էքզարխ Վլադիմիրի ձեռքով: Մարտի 25-ին կալացաւ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, աւելի քան 100 հոգու մասնակցութեամբ:

Ընկերութեան նպատակն է հոգալ տեղական ուղղափառ եկեղեցու բարեղարդութեան մասին, օգնել տեղական ռուսաց դպրոցին, ծուխի շրջանի աղքատներին օգնել, պաշտպանել ուղղափառների շահերը և աշխատել միացնել ուղղափառ եկեղեցուն օտարադաւաններին (հայեր, մահմեդականներ) և ռուս սեկտանտներին: Տարեկան անդամը վճարում է մի ռուբլի, մշտականը 20 ռուբլի:

ՌԻՂԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐԻՆԵՐԻ ՄԷՋ: 25 մարտի Պետերբուրգում կատարեց Սուֆրուզանի (Պարսկաստանում, Ուրմիայի նահանգում) նեստորական աւսօրինների եպիսկոպոս Մաշիոնի, Արմադաշաղի վարդապետ Նղիայի, քահանաներ Գէօրգի Բեջանովի և Սերգի Բադալովի ուղղափառ եկեղեցու դաւանութիւն ընդունելը: Մարիոն եպիսկոպոսի հետ ուղղափառութեան անցաւ նորա հօտը՝ 15000 աւսօրիններ:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԱՀԱՆԱՅԻՅ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ անունով մի ընկերութիւն է կազմել, որի կանոնագիրը որպէս տեղեկացնում են մեզ, հաստատել է Վհափառ Կաթողիկոսը: Ընկերութիւնը, որ առաջիմ բաղկացած է իննը հոգուց, նպատակ է դրել բարձրացնել քահանաների բարոյական վիճակը, քննելով քահանայական դասակարգի վերաբե-

րեալ ամեն կարգի խնդիրները՝ ժամանակիս բարոյական պահանջների համեմատ:

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԵՒԱՅԱՆԱՄ ԸՆԿ. Այդ անունով (Тифл. об-во попечения о дѣтяхъ) նոր հիմնադ թիֆլ. մի ընկերութիւն, որի պաշտօնատար անձեր ընտրւած են ընկ. ընդհանուր ժողովում հետեւեալները. նա խագահ վարչութեան՝ Ա. Մ. Կոլիւբակին (խնկերների գլխացից), փոխ-նախագահ՝ Ի. Օ. Դըրբոգլաւ (2-րդ զիննազից), անդամներ՝ տ. Մ. Ֆ. Կլաուս (1 ին իգական զիննազից), Օ. Մ. Բուտուրլինա (Անդրկովկ. աղջկանց ինստիտուցից), Օ. Ն. Սւիդեյրսկայա, Ն. Ա. Պրիսեօլկովա, իշխանի Ս. Վ. Արղութեան-Երկաչանաբաղով (սեփական պանսիոն-դպրոցից), Մ. Ֆ. Գորոշկովա (2-րդ իգական զիննազից), Մ. Ա. Զդանկեւիչ, Վ. Ն. Յեգէ-Փոն-Մանտէֆէլ, Վ. Դ. Դիկով (խնկեր. դպրոցից), բժ. Արիստ. Հալր. Զարգարեանց, գեներալ-մայոր Օ. Կ. Զչերբովիչ-Վէշոր:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ. (Շարունակութիւն).—Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը իւր տարեկան ընդհանուր ժողովում վճռեց աժմեանից նւիրել 10.000 ռ., ալ իւր յորշեց նւիրել 15000 ռ. մի քանի տարիներում ընկերութեան օգտից մաս-մաս ետ գցելով:

—Ցովհաննէ. Թաւրեան նւիրեց պոլիտեխնիկումի գործին 1.000 ռուբլի:

—Միրզաբեկեան եղբ. նախագործալին ընկերութիւնը (կենտրոնը Թիֆլիսում) իւր բաժնետէրերի ընդհանուր ժողովում վճռեց ստացած զիւր ղէնդներից տալ Թիֆլիսի պոլիտեխնիկումին իրագործման համար 25.000 ռուբլի:

—Բաքալ. նախագործների XII-րդ ժողովում, 28 ապրիլի վճռեց Թիֆլիսում հիմնելիք պոլիտեխնիկումին տալ ամեն տարի 17.000 ռուբլի:

—Նղբ. Թումաչեաններ (Բաքու) նւիրում են Նոյն նպատակի համար 10.000 ռուբլի:

—Բուժայիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը ընդհանուր ժողովում վճռեց ամեն տարւալ զուտ շահից 1% չատկացնել Թիֆլիսի պոլիտեխնիկումին:

—Կորգանեան և Պ. Ալիբէգեան Թիֆլիսի Աւճալեանի փողոցի ձիաքարշ երկաթուղու ընկերութիւնը նւիրեց 1000 ռուբլի:

ԴՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԳԱՂԹԸ Կովկասից զէպի Ամերիկա թուլատրւած է, և նոքա պատրաստում են մեր երկիրը թողնելու: Նոքա, որպէս չափնի է, չեն կամենում հպատակել զինուորագրութեան կանոններին ու սկզբունքով չեն ընդունում պատերազմը, որի պատճառով երեք ասարի առաջ Ախալքալաքի գաւառի զուխորական զիւղերի բնակիչները

կառավարութեան հրամանով ցրիւ եղան: 1885 թականի պաշտօնական ստատիստիկայի համեմատ, ամբողջ Անդրկովկասում ղուխորորները 12.448 հոգի էին. (ալժմ ենթադրարար նոքա կազմում են 15.000 հոգի): Դոցանից, Թիֆլիսի նահանգում Ախալքալաքի գաւառում բնակւում էին Անդրկովկասի ղուխորորների կէսից քիչ աւելի՝ 6.600 և Բորչալուի գաւառում 352 հոգի. Կարսի շրջանում ալն թականին նոքա կազմում էին 2.766 հոգի. Գանձակի նահանգի Գանձակի գաւառում 2.404 հոգի.

Դուխորորների Ամերիկա գաղթելու առիթով «Նովոն Վրեմյա»-ն միտք լալտենց, որ նոցա աւելի լաւ էր փոխադրել Սիբիրիա, ուսաչինական սահմանները, ուր նոքա ուսական գործին կընպաստեն: Իսկ Մոսկւայի «Ռուսսկիչա վէդոմոստի» ստորագրութիւն բացարած լինելով ղուխորորների օգտին՝ ոտացաւ երրորդ ազգարարութիւն և դադարեցւեց երկու ամիս ժամանակով:

ՋԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ: Չալնակցելով մեր հրաւերին՝ ուսանողների մասին ստատիստիկական տեղեկութիւններ տալ՝ մեր աշխատակից պ. Գրիգոր Վանցեան ուղարկել է մեզ ցուցակներ ձմեռալ կիսամեակի հալ ուսանողների Բերլինի, Հալէի, Ստրասբուրգի և Մարբուրգի համալսարաններում և Գարմշտատի պոլիտեխնիկումի՝ նոցա վերաբերեալ եօթ հարցերի պատասխաններով: Թողնելով ալց ցուցակների հրատարակումը գալ անգամին՝ առաջիմ տալիս ենք հետեւալ թւանշանները. Հալ իսկական ուսանողների թիւն է Բերլինում 26, Հալէիում 3, Ստրասբուրգում 1, Մարբուրգում 1, Գարմշտատում 3: Իսկ Լալպցիգում, որպէս տեղեկացնում է մեզ մեր աշխատակից պ. Ատոմ Շահէն, հալ ուսանողների թիւը ալժմ 7-ն է, որից 6-ը իսկական ուսանող: Սոցա մասին մանրամասնութիւնները կուսով ենք թէ կուղարկեն:

ԽԱԶ. ԱԲՈՎԵԱՆԻ մոնւան յիսնամեակը լրացաւ: ապրիլի 5-ին: Ալց առիթով մի քանի տեղ հոգեհանգիստներ կատարւեցին—և ուրիշ ոչինչ: **ՔԱՆԱՆԵԱՆԻ ՄՐՅԱՆԱԿ:** Լազարեան ձմարանի խորհուրդը (Մոսկւա) նշանակել է երկու մրցանակ 600-ական ուրլի հետեւալ նիւթերի համար.

1. Հաւաքումն և դասաւորութիւն Արարացի մատենագիրների հաղորդած տեղեկութիւնների Հալատանի և Հալերի մասին՝ մինչև ԺԳ. դարու վերջը՝ ներկայացրած նիւթերի քննական բացատրութեամբ հանդերձ:

2. Նիւթեր ժամանակակից Հալերի սովորութեան իրաւունքի կամ ազգալին իրաւարանական սովորութիւնների:

Շարադրութիւնները կարող են ներկայացւել Հալերէն կամ

Ռուսերէն, ֆրանսերէն կամ Գերմաներէն, մինչև 7-ն (19) օգոստոսի 1900 թ.

Եթէ ամեն մի նիւթի մասին ներկայացեն երկու հաւասար արժանաւոր չարագրութիւններ, մրցանակը կարող է երկու հեղինակների մէջ բաժանուիլ:

ՌՈՒՍԱՅ ՄԱՄՈՒԼ

Մոսկուայի «Ռուսակիւա վէդոմոստի» ամենօրեայ լրագրի հրատարակութիւնը արգելւած է երկու ամսով, զուխորորների օգտին հանգանակութիւն բացարած լինելու և Մոսկուայի ընդհանուր Նահանգապետի կարգադրութեանը հակառակ վարած լինելու համար:

ՌՈՒՐՔԱՍՏԱՆԻ ԸՆԴՀ. ՆԱՀԱՆԳԱՊԵՏ Նշանակւած է գեներալ-լէյտենանտ Դուխովսոյ, որ ցաթմ Ամուրեան երկրի ընդհանուր Նահանգապետ էր:

ՐՈՒՏԻՐԿԻՆՆԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ: Ապրիլի 11-ին լրացաւ վաս. Գաւր. Բուտիրկինի լիստենամեայ ծառայութիւնը օֆիցերական և ծառայողական պաշտօններում: 1868-ին Նշանակւեց կառավարիչ Նիկոլաուսի և 1875-ին Թիֆլիսի վերաստուգող պալատաւի (կոնտրոլնայա պալատա) Պէտք է ասած, որ Ռուսիայում, ուր հրապարակականութիւնը և հասարակաց կարծիքի արտապատութիւնը խիստ սահմանափակւած է, վերաստուգող պալատաւի ծառայողը ներկայանում է որպէս պաշտօնական քննադատող ալլոց գործողութիւնների և վաւելում է բաւականաչափ անկախութիւն տեղական իշխանութիւններից: Պետական կոնտրոլը Ալեքսանդր II-ի մեծ ռեֆորմների հետեանքն էր և անչափ բան էր Նախառեֆորմեան ժամանակներին: Բայց Բուտիրկինը կարեւորութիւն է ներկայացնում նաև որպէս ռուս գործիչ Կովկասում: Նա ճանաչւած է որպէս համոզւած և եռանդոտ մարտնչող զուտ ռուսական շահերի համար Կովկասում. դորա շնորհիւ նա անդամ նշանակւեց Բարձրագոյն հաստատւած լանձնաժողովի՝ Ան ծովի Կովկասեան ափերում գաղթականական օրէնքներ մշակելու համար: Շնորհիւ նորա հմտութեան Կովկասի քաղաքատնտեսական խնդիրներում՝ նախկին Կառավարչապետը խոլտութիւն լանդրեց որ Բուտիրկինը խիստ ունենալ կառավարչապետի խորհրդի մէջ՝ ձախի իրաւունքով՝ — վերջապէս վ. Գ. Բուտիրկինը առաջին հիմնադիրներիցն է գաղթականական ընկերութեան Անդրկովկասեան ճիւղի:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

— Շուշուայ քաղաքագլուխ ընտրւեց ապրիլի 9-ին մելիք Գեւրաթիմ Մելիք-Շահնազարեանց, 19 ձախով ընդդէմ 6-ի: Տարեկան ռոճիկ որոշւած է 2.400 ռուբլի:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ: Թաւրիդի մեր թղթակիցը գրում է մեղ մարտ ամսի վերջերքը:

— Խուզարկութիւնները Սալմաստում, Խոյում եւ Ուրմիում: «Անցեալ անգամ գրել էի ձեզ Սալմաստի, Խոյի եւ Ուրմիայի հալերի տներում կատարած սոսկալի խուզարկութիւնների մասին: Այժմ աւստեղ են եկել գիւղացիներ, որոնք փախել են՝ իրենց անձը դատաւորի ձեռքից ազատելու համար, որը չնչին պատճառով հրամաւած է լինում խիստ ծեծել եւ տուգանք պահանջել գիւղացիներից: Ուրմիայում խուզարկութիւնը կատարել է ալս կերպ. Թաւրիզից ուղարկած երկու մամուռները պիտի կատարէին խուզարկութիւնը չիշեալ բոլոր տեղերում: Ուրմիան խուզարկելը վիճակել էր Միրզա Մահմադ խանին, որը շատ հալասէր մէկն է. ալս բանը որ լսում է Ուրմիի դատաւորը, մինչեւ մամուռի գալը սկսում է խիստ խուզարկութիւններ անել եւ փող կորզել, եւ ալս ժամանակն է մամուռը հասնում, երբ արդէն ամեն ինչ կատարած էր. մամուռը ստիպւած թեթեւ կերպով աչքի է անցնում գիւղերը եւ դատաւորի հետ միասին հեռագրում կառավարութեան թէ ոչ մի բան չգտնեց. պատասխան է գալիս խուզարկութիւնը դադարեցնել: Ուրմիայում խուզարկութիւնները կատարեցին հետեւեալ գիւղերում՝ Նախճան թափա, Էքի աղաջ եւ Իսալու: Սալմաստում խուզարկել են՝ Հաւթւան, Մահլամ, Սաւրա եւ Սահնա գիւղերը. Խոյում խուզարկել են՝ Սէլթու եւ Վար գիւղերը: Խոյի շահբանգարը (դատաւոր), Նորին Բարձր Դահի հրամանով, պաշտօնագրով եղաւ եւ ալս օրերս սպասւում է Թաւրիզ: Պաշտօնանկ եղաւ Խոյի դատաւորը:

— Զերբակալումներ: Մարտի 15-ին նորից ձեռքակալեցին պարսից նովրուզին արձակածներից մի քանի հոգի, որոնք ուսուցիչներ են Թաւրիզի Լիւաւա եւ Ղալա թաղերի զպրոցներում. արդէն մի ամիս էր որ Լիւաւայի զպրոցը զրկւած էր իւր երկու, Ղալայինը իւր մէկ ուսուցչից, եւ մի քանի օր էր որ վերսկսեցին իրենց դաստուութիւնը, երբ նորից ձերբակալեցին:

Դասախօսութիւններ: Մարտի 14-ին, չաբաթ օր Ղալայի թատերասրահում «Թաւրիզի լսարանական ընկերութեան» առաջին դասախօսութիւնն եղաւ, որ կարգաց բժ. Փաշահան. նիւթն էր՝ «Օղջ առողջապահական տեսակէտից»: Ժողովը բացեց հալը Սառաջեանը:

— Երկաթուղային ծրագիրներ: Թեհրան է հասել պ. Նաուս, գլուխը բելղիական լաւձնաժողովի, որը սլիտի վերակազմի պարսկական մաքսատները: Նա մտածում է բելգիական եւ գերմանական կապիտալներով մի ընկերութիւն կազմել՝ Կասպեան ծովը Պարսից ծոցի հետ երկաթուղային դժով միացնելու համար, անցկացնելով դիժը Թեհրանի միջով: Այդ առթով նա Թեհրան գալիս՝ բանակցութիւններ է ունեցել Գէօրնում եւ Բերլինում:

Այդ ծրագիրները չեն կարող չանհանգստացնել Ռուսիային, որի դիպլոմատիայի պաշտպանութեամբ ուսն Պոլեակովը կոնցեսիաներ է ստացել Պարսկաստանում, բայց որը բնաւ չի օգտուում իւր ձեռք բերած իրաւունքներին:

— Հայ արհեստաւորների հարցը: Հայ արհեստաւորներից Թաւրիզում կառավարութիւնը վերջնում էր մալիա՞ն անունով հարկը, որը սակաւն ներկայիս չա՛ն, գա՛ն բարձնալիս՝ վերացրեց Բալց կառավարութիւնը աշուղամենալիս ահա կրկնորդ տարին է որ (փետրուարին) հաւաքեց մալիաթը: Հայ արհեստաւորների աւագը այդ մասին գիմեց Ն. Մ. Շահին, որը հեռագրով հրամայեց Թաւրիզում նստող դահաժառանգին աշուղետե ալ ևս հալերից մալիաթ հարկը չհաւաքել:

— Մուշտայիլի մահը: Վախճանեց Ատրպատականի ընդհանուր մուշտէլիդ Միրզա-Ահմադ աղան, 35 տարեկան հասակում: Նորանից առաջ մուշտէլիդը նորա հայրն էր՝ Հաջի Միրզա Զաւադ օղլի: Հանգուցեալը իւր ուսումը ստացել էր Քալբալաւում և Շիրազում և մեծ լարգ էր վալելում: Մահւան առթիւ Ն. Մ. Շահի հրամանով երեք օր բոլոր խանութները Թաւրիզում փակւած էին՝ թէ մահմեդականներին և թէ քրիստոնեաներին:

Ռաշտի (Գիլանի Նահանգի) նահանգապետ չա՛ն Նչանակել է Աղա Բազրին, էթզադը-Սալթանէ տիպոսով: Նա առաջ Ղազբինի ընդհանուր դատաւոր էր (հաքիմ): Նա անգրագէտ է, բայց ունի խելօք մարդու համբաւ: Իբր դատաւոր Ղազբինում նորա տեղ նշանակւած է Սիդկը-Դովլէ:

Պ. Գ. ԲԱՇԻՆՋԱՆԵԱՆԻ ՆՈՐ ՆԿԱՐԸ, մեծադիր, «Անտառ աշնան ժամանակ» գրւած էր ի ցոյց հասարակութեան «Սաքսոնիա» հիւրանոցում 15 օր: Այդ նկարը, որը ինքը նկարիչը համարում է իւր գլուխ գործօցը, զարմանալի տպաւորութիւն էր գործում դիտողի վրայ: Հարկաւոր էր նայել մի երկու րոպէ շարունակ և դիտողի աչքի առաջ բացւում է լայնատարած մի տարածութիւն, որը ամբողջապէս ծածկւած է ծառերով: Նկարի մէջ չի նկատուում ոչ կտաւի և ոչ ներկերի գոյութիւնը, այլ պարզ երևում է բնական անտառ իր բոլոր հրաշալիքներով: Պէտք է ենթադրել որ այս զեղեցիկ գործը կը տեղափոխւի մեծ քաղաքների, ուր գեղարուստը գնահատւում է ըստ արժանւոյն: Ինչպէս մեզ հաղորդում են, այժմ էլ պ. Բաշինջաղեանը ունի Պետերբուրգում մի ցուցահանդիսում դրւած երեք հատ նկարներ, բայց ականատեսների վկայութեամբ համեմատել չի կարելի աչք գործերը այս «Անտառի» հետ:

Պր. Բաշինջաղեանի «Անտառ աշնան ժամանակ» նկարը ապրիլի քսանին ուղարկւել է Բագու, ուր նոյնպէս պիտի դնէր ի ցոյց հասարակութեան մի քանի օր:

ԶՈՒԱՅԻ ԴԱՏՐ: Վճռաջինջ ատեանը բեկանեց երդեալների դատարանի դատաւճիռը Զոլալի գործի մասին, պատճառաբանելով, որ պատե-
րադմական միջոցները իրաւունք չունեն դատ բացանելու Զոլալի
դէմ՝ սորա աջն մեղադրանքի համար, որ արեւ էր Էստերհազիին
դատած զինւորական դատարանի նկատմամբ, և որ ալդ բանի հա-
մար Զոլալին դատի ենթարկելու իրաւունքը պատկանում է միայն
զինւորական դատարանին: Եւ արդարեւ, 29 յուլիսի 1881 թ. օրէնքի
մէջ ասւած է. «եթէ վիրաւորանքներ և անւանարկութիւններ անեն
դատական պալատների և դատարանների դէմ, նոցա դէմ հալա-
ծանքը կարող է սկսել միմիայն, երբ դատի ենթարկելու վճիռ կա-
լացւի նոցա ընդհանուր ժողովներում: Իսկ հետեակ դօրքի զինւո-
րական դատարանները կազմում են մշտական դատական ատեան
իրենց զինւորական շրջաններում, և ալդ պատճառով նոքա ևս մտնում
են «դատական պալատներ և դատարաններ» տերմինի մէջ:

Վճռաջինջ ատեանը, բեկանելով երդեալների դատարանի
վճիռը՝ չալտեց որ աւելորդ է համարում ալ ևս վճիռ կալացնել
Զոլալի վճռարեկ զանգատի ալ կէտերի մասին և որ հիմք չկալ որ
գործը լանձնւի որ և է ալ երդեալների դատարանի:

Գործի ալսպիսի ելքը բոլորովին անպասելի էր. Էստերհազիին
դատած զինւորական դատարանի անդամները հաւաքեցին ժողովի
և վճռեցին իրենց անունից դատ բանալ, բալց միայն պարլամեն-
տական բնտրութիւնները վերջանալուց չետու:

Գործը ալսպիսի ելք տառնալով առաջին անգամ եղած դա-
տաւարութիւնը երդեալների դատարանում կորցնում է իւր նշա
նակութեան մի մասը: Ալդ հիման վրալ մենք, որ ամապրիս ան-
դեալ հատարում տեւ էինք ալդ շատ երկար պրոցէսի սկզբի օրերի
արձանագրութիւնը, աւելորդ համարեցինք տալ պրոցէսի շարունա-
կութիւնը: Բալց մեր ընթերցողները գորանով շատ չեն կորցնում,
որովհետեւ ամենակարեւոր վկայութիւնները (գեն. Պելլիէօի, գեն.
Բուադէֆրի, գնդապ. Պիքարի, գնդ. Անրիի և ալլն) արդէն պա-
րունակում էին արձանագրութեան ալն մասում, որ արդէն տալեց
Մուրճ'ում:

Շէնկի ԳիիՏՐ: Ապր. 11-ին (նոր տոմ.) սաղմնաբան բժ. Շէնկը Վիեն-
նալում հրատարակեց իւր գիւտը առանձին գրքով, ուր նա հաղորդում
է իւր գիտողութիւնները արու և էգ զաւակներ ծնւելու մասին: Դիտելով
զղի կանանց մէջ՝ նա գտել է որ էգ ծնողների միջի մէջ առատ է լի-
նում շաքարի հիւթը, մինչդեռ արու ծնողների մէջի մէջ շաքար
չկալ, ալ առատ է մէջի թթուով և կրէատինով: Ալդ հիման վրալ
Շէնկը աւալով զղի կնոջը ալնալիս կերակուր, որ մէջի մէջ չլինի շա-

քար՝ կիճը միշտ ծնել է արու զաւակ։ Այդ պատճառով արու զաւակ ծնեցնելու համար Շէնկը տալիս է եղել շատ ազօտ պարունակող նիւթեր՝ միս, ձուկ, սպիտակուց, և դորա հակառակ նւագեցնում է եղել խմորեղենը, չաքարեղէնը։ Յանկացած արդիւնքը ստանալու համար Շէնկը պատւիրում է, որ չալտնի ձեով սնունդ ստանալը պէտք է կատարւի բեղմնաւորելուց երկու ամիս առաջ և երեք ամիս չետու։ Ըստ Շէնկի, ուրեմն, երեխի արու կամ էգ լինելը կատարւում է կնոջ լըութեան առաջին երեք ամիսներում։

Շէնկի այս գիտը դեռ ևս ալ գիտնականների կողմից քննութեան ու փորձի չէ ենթարկւած, բայց արդէն հեղինակաւոր գիտնականներ անպատկարծիք են չալտնում։

ԺԱՆՏԱԽՏԸ ԲՈՄԲԷՑՈՒՄ շարունակւում է։

ՌՈՒՍԻԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ։ Պորտ-Արտիւր և Տալիէնւան։—Սպառնալից կատարեց։ Մարտի 15-ին Պեկինում ստորագրած համաձայնութիւնով Ռուսիան կապալով է վերցրել Չինաստանի Արտիւր և Տալիէնւան փորտերը Գեղին ծովի ափին, համապատասխան երկրով և ջրի տարածութիւնով, 25 տարի ժամանակով, որ կարող է չետու շարունակել։ ալ և Ռուսիային է թողած սիբիրեան մեծ երկաթուղին միացնել ալ երկու փորտերի հետ։ Յիշեալ փորտերը անմիջապէս բռնեցին ռուսաց զօրքերով։ Ռուսիան, սակաւ, ապահովացրել է Չինաստանի ծալագոյն իրաւունքները ալ երկու փորտերի վրայ, ուր ալ ժամ ծածանում են ռուսական և չինական դրօշակները միասին։ Տալիէնւան փորտը բաց է լինելու ամբողջ աշխարհի առևտրական նաւերի համար։

ԱՆԳՂԻԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ։

—Անգլիան դաշն կապեց չին կառավարութեան հետ, որի համաձայն Անգլիան 25 տարով կապալով է վերցնում Վէլիսալէ փորտը Նոյն պայմաններով, ինչպէս Ռուսիան կապալով է վերցրել Արտիւր փորտը։ Մինիստր Բալֆուր չալտարեց ալ մարտի 23-ին և ասաց որ դա կատարել է որպէս զի հակակշիռ կազմի Ռուսիային և որպէս զի ոչ մի պետութիւն ամբողջապէս իւր ձեռքը չզցի Պիչիլեան ծոցը։ Սակաւ Վէլիսալէ փորտը ալ ժամ բռնւած է եապոնցիներով, որոնք պիտի հեռանան, երբ Չինաստանը լրիւ վճարա՝ կը լինի պատերազմական տուգանքը։ Այդ հանգամանքը լարում է եապոնացիներին՝ անգլիացոց դէմ, որովհետեւ Նապոնիան կը կամենար Վալիսալէից հեռանալ, նոյն իսկ պատերազմական տուգանքը ստանալուց չետու։ Նապոնական երկու պարլամենտական պալատների ներկայացուցիչները չալտեցին արտաքին գործերի մինիստրին՝ իրենց բողոքը Ռուսիայի, Գերմանիայի գործողութեանց դէմ և պահանջեցին Վէլիսալէը Նա-

պոնիակի օգտին. մինիստրը սակալն իւր քաղաքականութեան մասին ոչինչ չպատասխանեց:

—Շանխայի մօտ գտնուող Վուզոնգ փոքր բացւեց միջազգային առևտրի համար:

ՅՈՅՆ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ: Խաղաղութեան դաշնը ստորագրելուց չետոյ ևս տաճկական զօրքը միայն Թեսալիայում մինչև որ Յունաստանը վճարէ պատերազմական սուգանքը: Բայց եւրոպական պետութիւնները՝ Անգլիա, Ռուսիա, Ֆրանսիա պնդեցին որ զօրքերի ետ կոչելը կատարելի աւելի շուտով, քանի որ չունական փոխառութիւնը ապահովւած է: Փոխառութիւնը Պարիզում իրագործելու լուրը առնելուց չետոյ սուլթանը հրամայեց զօրքերը ետ կանչել. զօրքը բաղկացած է 153 բատալիոնից, 33 թնդանօթակին բատարէյից և 22 էսկադրոնից, ընդամենը 133.000 հոգուց:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ: Միլանում և Խոտալիայի այլ քաղաքներում լուրջ ժողովրդական շարժումներ եղան հացի թանձրութեան պատճառով. շատ տեղ արդէն պաշարման դրութիւն է չալաքարաւած:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Ներկալ ապր. 24-ին (հին տոմ.) Ֆրանսիայում կատարւեցին պարլամենտի անդամների ընտրութիւններ: Առ այժմ հեռագիրը հաղորդել է ընտրութիւնների հետևանքները աչպէս. 566 ընտրական շրջաններում ընտրւած են 193 պատգամաւոր կառավարչական-հանրապետականներ, 104 արմատական, 41 սոցիալիստ, 47 միապետական, 181 շրջանում վերընտրութիւններ պիտի կատարւեն: Չընտրւածների մէջ է սոցիալիստ ժողովը:

† **ԶՈՒՀԱՃԱՆ ՏԻԳՐԱՆ,** հալ կոմպոզիտոր, վախճանւեց Չմիւռնիայում (տե՛ս «Թատրոնի շուրջը»):

† **ԱՂԱՓԻՆԱՆ Գրիգոր** եպիսկոպոս, վախճանւեց շուրջ 65 տարեկան հասակում, Վերին Ագուլիսում 23 մարտի, ուր նա երկար տարիներ վանահայրն էր Ս. Թոմաս Առաքեալ վանքի: Հանգուցեալը համալսարանական կրթութիւն ունէր: Ունի գերմաներէնից թարգմանած երկու հատոր քարոզներ: Գործունեալ էր և ետ քաջած կիանք էր վարում, որպէս գրում է մեզ մեր թղթակիցը:

† **ՊԱՌԻՍՈՆ,** Իոսիֆ Իւանովիչ, լատինի ռուսաց մանկավարժ, վախճ. 21 մարտի, 1861-ին նա, Ն. Խ. Վէսսէլի հետ, հիմնեց Учитель (Ուսուցիչ) ամսագիրը, որի խմբագիրը եղաւ նա: Ամսագիրը ունեցաւ մեծ կարեւորութիւն: Նա կազմեց դասագրքեր, որոնք մեծ գործածութիւն գտան Ռուսիայում: Ամենամեծ չափողութիւն ունեցաւ նորա զիրքը „Книга для чтения“:

† **ՄԱՐՏԸՆՈՎՍԿԻ, Վ. Ա.,** դպրոցական գործիչ, վախճանւեց Օդեսայում ներկալ ապրիլին, երկարատե՛ս հիւանդութիւնից չետոյ, Հանգուցեալը, իւր միջնակարգ ուսումը Պոդոլեան հոգևոր սեմինարիայում աւար-

տելուց չեսույ, ուսաւ Պետերբուրգի ֆիլոլոգիական ինստիտուտում. 1878-ին նշանակեց ուսուցիչ Թիֆլիսի առաջին գիմնազում, իսկ 1885 ին տեսուչ ալդ տարի նոր բաղւած պրոգիմնազի, որը 1892-ին գիմնազի վերածւեց, ուր հանդուցեալը նշանակեց դորա վերատեսուչը. ալդ պաշտօնում նա մնաց մինչև 1896 թ., երբ կատարեալպէս քաջալուած առողջութեան պատճառով, ստիպւած եղաւ իսպառուտ քաշել ուսուցչական ասպարէզից: Հանդուցեալը չալտնի էր որպէս օրինակելի կառավարիչ դպրոցի, ալ և որպէս կազմող «Русские писатели въ выборѣ и обработкѣ для школы» անունով շատ տարածւած դասագրքի:

Մ Ո Ւ Ր Ճ Ի ՊՈՍՏԱՐԿՎ:

Ռէշտ: Պր. Ալ. Տէր-Յովսէփեան: Ձեր վերջին նամակը ստացանք այս մալիսի 3-ին, թէև նամակը թւագրած էք «7 ապրիլ» Յանկու. թիւն էք չալտնում որ մենք միամտացնենք ձեզ 21 ռուբլին ստացած լիւեկու մասին, որ, ձեր ասելով, մեզ պիտի զրկէր Բաքուից պ. Մ. Պէլլիքճեան, թէև վերջինիս հետ մենք ոչ մի հաշիւ չունինք: Դորա փոխարէն մենք ձեզ չալտնում ենք որ ձեզնից և ոչ էլ ումնից և իցէ ստացած չենք ձեր պարտքի փոխարէնը, որը ոչ թէ 21 ռուբլի է, ալ 28 ռուբլի, որպէս չորս հոգու բաժնեգիրն: Մի տարւալ զրազրութիւնով մենք չկարողացանք ձեզնից բաւարարութիւն ստանալ:

Շուրաբի: Պր. Գրիգոր Բալասեանց: Ստացանք ձեր եղբորից ձեր զրած «հերքումը», որով կամենում էք ցոյց տալ թէ «վկաներ» ունիք, որոնք տեսել ու կարդացել են ձեր «Ռոստոմ և Սալման» գրածքը՝ մէկը 1884-ին, միւսը 1885-ին, երրորդը 1886-ին, ալսինքն պ. Գ. Աստուածատրեանցի «Նրկու հսկա» պոէմալի Աղբիւրում 1888-ին լույս տեսնելուց առաջ: Ձեր «վկաներն» են՝ վախճանւած Բաֆֆի, վախճանւած Ստ. Պալասանեան, վախճանւած Բարսեղ Քամալեան, և լիչում էք մի կատարեալպէս անչալտ ոմն Ասքանազեանին, որին դուք դուրս էք կանչում հրապարակով «հաստատելու», աչն բերանացի գովասանական խօսքերը ձեր Ռոստոմ և Սալման-ի մասին, որ դուք դնում էք հանդուցեալներից առաջին երկուսի բերանները. կարծես ալդ պարոնը, տարիներ շարունակ ձեզնից անբաժան, ներկալ եղած լինէր ամեն տեղ, ուր դուք գնացել էք: Եւ դեռ կրտսն ենք թէ ով է ալդ անձը և երբ ու ինչպէս է հաստատելու ձեր ասածները: Երբ վկալ դուք լիչում էք Նաև մի պարոնի անուն, որը, հանգամանքների զօրութեամբ, չի կարող հրապարակով որ և է վկայութիւն տալ, որին ոչ դուք կարող էք դիմել, ոչ մենք, և ոչ էլ ինքը կարող է հրապարակ գալ: Ալդ տեսակ «հերքումներով» դիմեցէք ձեզ դաստիարակած և ալթմ էլ ձեզ պաշտպան հանդիսացած «Մշակ»-ին և ոչ Մուրճին, Մշակում դուք չալտարարած էիք, թէ

Մուրճի նկատմամբ դուք պիտի դիմէք գրաքննական ատեանին, որի կանոնադրութեան մի լօղաժը, որպէս բանից դուրս է գալիս, մեզ-
նից լաւ գիտէք: Իրմեցէք, ուրեմն աշնտեղ: Մենք չենք կարող
Մուրճի էջերը մեր սեփական կամքով մրտել ալն գրութիւնով, որ
դուք ուղարկել էք մեզ, գրութիւն, որը լքցրել էք Նաև խնդրին
չվերաբերող գրական և ալ դատողութիւններով, ալ և կատարելապէս
երեխազական ու անվազել նկատողութիւններով ձեզ մերկացնող Սե-
պուհի հասցէին: Դուք մի միտիֆիկատոր էք ոչ միայն գրականու-
թեան մէջ, ալ և ձեր ալս «հերքումի» մէջ, որի նմանը, ալսպէս
ասած, մենք մեր երազումն անգամ չէինք տեսած: Այժմ, «Տարազ»-ի
№ 17-ում կարգալով ձեր ալ խոշոր բանագողութիւններից նմուշ-
ներ՝ համոզում ենք, որ դուք Նաև առհասարակ գրական գողու-
թեան փեշաքաւոր էք:

Պարիզ Բժ. Գար. Սարգսեան, Ստացանք չարունակութիւնները:
Բերլին: Պր. Գր. Վանցեան: Ստացանք «Կեանքի ծագումը ըստ
Փետտէրի»:

Շուշի: Պր. Ա. Զիլինկարեան: Ստացանք «Զեռքի ու պարտի-
զպանական աշխատանքը դաստիարակութեան գործում»:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թւական չկայ — ներկայ տարւանն է)


- 1) ԹՈՓՉԵԱՆ, Ն.—Յունաստանի անցեալից: Ս. Պետերբուրգ, տպարան
Լիբերմանի. դիմն է 20 կոպէկ:
- 2) ԹՈՒՄԱՆԵԱՆ. Յարութիւն.—Ամուրին, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրո-
սեանցի. գիմն է 20 կոպէկ:
- 3) ԱՐՆԴՏ.—Մատանի, Թռչնիկ.—Չար յտքով չէ: Գերմաներէնից թարգ.
Տիրուհի Կոստանեանց, Թիֆլ., տպ. Շարաձէ, գիմն է 7 կոպէկ:
- 4) ՀՈՖՄԱՆ.—Չինուոր Յակոբ: Գերմ. թարգմ. Տիրուհի Կոստանեանց,
Թիֆլ., տպ. Շարաձէ, 1897 թ. գիմն է 7 կոպէկ:
- 5) ՀՈՖՄԱՆ.—Կեանքի դպրոց: Գերմ. թարգմ. Տիրուհի Կոստանեանց,
Թիֆլ., տպ. Շարաձէ, 1897, գիմն է 10 կոպէկ:
- 6) ԳՐԻՄՄ.—Աստղէ դրամ:—Հարուստը և Աղքատը:—Սպիտակ օձ:—
Գերմ. թարգմ. Տիրուհի Կոստանեանց, Թիֆլ., տպ. Շարաձէ, 1897.
գիմն է 10 կոպէկ:
- 7) ԳՐԻՄՄ.—Օնիկը և Մարգարիտը:—Նապաստակը և Ոգնին:—Գալն
ու Մարդը: Գերմ. թարգմ. Տիրուհի Կոստանեանց, Թիֆլիս, տպար.
Շարաձէ, 1897. գիմն է 10 կոպէկ:
- 8) ՀԵՂԻՆԱԿ ?.—Յունաց ուսուցիչ Սոկրատէսը: Ռուսերէնից թարգմ.
Տիրուհի Կոստանեանց, Թիֆլ., տպ. Շարաձէ. գիմն է 20 կոպէկ:
- 9) ՀԵՂԻՆԱԿ ?.—Չինական առասպելներ: թարգմ. Տիրուհի Կոստանեանց,
Թիֆլիս, տպ. Շարաձէ. 1895. գիմն է 15 կոպէկ:

- 10) ԽԱՆԱՎԵԱՆ, Լ.Կոն.—Գիւղատնտեսական գործիքներ և մեքենաներ, 250 նկարով, Հրատ. Թ. Հալ. Հրատ. Ընկ.—Թիֆլիս, տպ. Մն. Մնացա-կանեանցի 50 կոպէկ:
- 11) ԼՈՐՆԿԵԻԻՉ. Վ.—Կենդանիների աշխարհում, Թարգմ. ռուսերէնից: Հր. Թ. Հ. Հր. Ընկ.: Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի 30 կոպէ:
- 12) ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ, Երզնկայա.—Գիւղում: Թարգմ. ռուսերէնից: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանց. 20 կոպէկ:
- 13) ԽԱԼԱԹԵԱՆ, Կ.Բ., ռուսացապետ հալերէնի լազարեան ճեմարանում.—Մովսէս Խորենացու նորագոյն աղբիւրների մասին քննադատական ռուսամասիրութիւնք, Վիեննա, Միլիթարեան տպ. — 1 ֆրանկ (= 40 կոպէկ):
- 14) ԼԵՐՄՈՆՏՈՎ, Մ. Իւր.—Բէլա.—Թարգմ. Ա.—Բաքու, տպ. Արօր 20 կ.
- 15) ՋԵԼԻՆՍԿԻ. Ս.—Գեանանուշ (*Arachis hepogaea* L.).—Թիֆլիս, տպ. Կազլովսկու. (11 էջ). գինը՝ ձրի:
- 16) ՅԱՐՈՅ, Նիկ.—Պատկերներ. (Փաղածներ. իմ չուշտետրից): 1897 Թիֆլ., տպ. Մն. Մարտիրոսեանի 50 կոպ.
- 17) ՍԵՆԿԵԻԻՉ, Հենրիկ.—Յո երթաս: Quo vadis. վեպ Ներոնի ժամանակից: Լեհերէնից Թարգմ. Ստ. Լիսիցեան: Հրատ. Թ. Հ. Հ. Ընկ. Թիֆլ. տպ. Մ. Ռոտինեանցի. 1 ռ. 50 կ.:
- 18) ШАХЪ-НАЗАРОВЪ, С. Г, д-ръ.—Основныя положенія физиологической психологии по Вундту, Цигену и Мейнерту.—I—Теорія апперцепции В. Вундта. (Рефератъ). Москва, тип. Х. Бархударянъ, 75 կոպէկ:
- 19) ЗЕЛИНСКИЙ, С. П.—Материалы по народной медицинѣ у армянъ нѣкоторымъ мѣстностямъ Закавказья. Тифлисъ, тип. И. Мартиросянца. գինը?—

ՎՐԻՊԱԿՆԵՐ Մուրճ № 2-3:

«Օղակար և փխսակար միկրոբները» չղածում, վերջին տող էջ 276 Աւչակի (ոչ՝ Ապակի) ածխածնու.—էջ առաջին տող 279 Carpozqma (ոչ՝ sarpozym) apiculatum.—էջ 280 ուր (և ոչ՝ որ) նոքա լողում են.—էջ 282, տող 11 1,5—2,5 հազարերորդական միլիմէտր (ոչ 15-25 միլիմէտր).—էջ 283 երկու մաս ջրածին պակաս (ոչ՝ երկու մաս ջրածին) և մի մաս...—էջ 287 տող 6 ներքեից պիտի լինի՝ հերձական (նազոմիական):

Մուրճ № 2—3, էջ 392, նոր ստացւած գրքերի ցուցակում, կէտ 3-րդ, էբր գրքի հեղինակ՝ սխալմամբ տպւած է՝ Ս. Հ., մինչ-դեռ վերջինս Թարգմանիչն է, իսկ հեղինակի տեղը պիտի թողնել պարապ:





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 ռուբլի, կամ 30 ֆոանկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքնե-
րից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“.

ԲԱՔԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Ֆրիդոն Մարդանեանի մօտ (գրա-
սենեակ Ե. և Հ. Մելիքեանների):



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1898

Մ Ա Յ Ի Ս

1898 № 5

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

	երես	
1 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ.	595	Խօսէք աշխատեալ ինչպէս զրուժ էք: II.
2 ՀԱՅՆԷԻՑ՝ ԱՏՈՄ ՇԱՀԷՆ.	601	Բանաստեղծութիւններ: (Վերջ.)
3 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ.	628	Համբին. — Էն մարդիկ... (Բան.):
4 ՄԱՆԷԼԷԱՆՑ, ԼԵՒՈՆ.	630	Խորտակած կեանք (Վէպ, չար.):
5 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻԵՏԻՔ.	658	Շառաչելով. — Ես չեմ ուզում... (Բան):
6 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ.	660	Էռլիւցիայի գաղափարը (չար.):
7 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ.	682	Զինուորի երգը (Բան.):
8 ԿՈՒՍԻԿԵԱՆ, ՅՈՎՀ.	684	Հիւսիսափայլ և Ս. Շահաղիզեան:
9 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	698	Աւետիքեանի «Ղեկավարներ» և «Աս- միտարներ»:
10 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	705	Ժամանակակ. Տեսութ. — Ուրիշամ— Էւարտ Գլադստոն:
11 ԱՐԿՈՄԷԴ, Տ.	708	Քաղաքային ինքնավարութիւնը:
12 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ.	711	Կովկ. կառավարչապետի նոր լիազո- րութիւնները:
14 ԴԱԹԵԱՆՑ, ԱԻ.	714	Ամուսն. առողջապահութ. գաւառում:
15 ՄԱՐԴԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ.	719	Պալատական իկոնի խնդիրը Բաքում:
16 Շ.	723	Իսպանո-Ամերիկական պատերազմը:
17 Շ.	727	Քաղաքական տեսութիւն (Զեմբեր- լէնի ճառը. Անգլո-Ամերիկական նիզակակցութեան գաղափարը)
18 ԽՄԲ.	732	Զանազան լուրեր:

Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротшильда, Гол. пр., д. № 41

1898

